«Հաստատում եմ»

Ռեկտորի պաշտոնակատար _____ Գ. Գևորգյան

14 սեպտեմբերի 2020 թ.

Կ.Տ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
(Ուսումնական հաստատության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(Հաստատության հասցեն)

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.....3

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ.....3

ՓԱՍՏԵՐ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ 6

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 10

ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....10

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....19

ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....36

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.....50

ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ.....65

ՉԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....81

ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 95

ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....111

ՉԱՓԱՆԻՇ 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 123

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 131

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ինքնավերլուծության համակարգող հանձնաժողով	Պաշտոն
Գեղամ Գևորգյան, նախագահ	Ռեկտորի պաշտոնակատար
Էլինա Ասրիյան	Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր
Ռաֆայել Բարխուդարյան	Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր
Արթուր Իսրայելյան	Միջազգային համագործակցության և հասարակայ-նության հետ կապերի գծով պրոռեկտոր
Արմեն Բուդաղյան	Որակի ապահովման կենտրոնի տնօրեն
Էմիլ Գևորգյան	Կենսաբանության ֆակուլտետի դեկան
Անուշավան Մակարյան	Ֆիզիկայի ֆակուլտետի օպտիկայի ամբիոնի դոցենտ
Մարի Սանթուրջյան	Որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ
Դավիթ Ափոյան	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ

	Աշխատանքային խմբեր	Պաշտոն
	Չափանիշ 1. Առաքելությունը և նպատակները	
1.	Գեղամ Գևորգյան, ղեկավար	Ռեկտորի պաշտոնակատար
2.	Արթուր Վաղարշյան	Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
3.	Լևոն Հովսեփյան	Գիտքարտուղար
4.	Անահիտ Բրուտյան	Որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ
5.	Նվարդ Մելքոնյան	Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ
6.	Շուշաննա Վարդանյան	Քիմիայի ֆակուլտետի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող
	Չափանիշ 2. Կառավարումն ու վարչարարությունը	
1.	Արթուր Վաղարշյան, ղեկավար	Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի վարիչ
2.	Արմեն Թադևոսյան	Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ
3.	Վահե Հովհաննիսյան	Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ
4.	Կառլեն Խաչատրյան	Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ
5.	Գոռ Ալեքսանյան	Սերվիսի ամբիոնի դոցենտ
6.	Լեյլի Թադևոսյան	Իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող
	Չափանիշ 3. Մասնագիտության կրթական ծրագրերը	
1.	Էլինա Ասրիյան, ղեկավար	Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր
2.	Մարի Սանթուրջյան	Որակի ապահովման կենտրոնի առաջատար

		մասնագետ
3.	Նարինե Խաչատրյան	Անձի հոգեբանության ամբիոնի վարիչ
4.	Կարեն Թոչունյան	Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ
5.	Հարություն Մովսիսյան	Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի դոցենտ
6.	Գոռ Օհանյան	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող
	Չափանիշ 4. Ուսանողները	
1.	Արթուր Իսրայելյան, ղեկավար	Միջազգային համագործակցության և հասարակայ-նության հետ կապերի գծով պրոռեկտոր
2.	Ռաֆֆի Քարամյան	Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի փոխտնօրեն
3.	Լիլիթ Հակոբյան-Գալստյան	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի տնօրեն
4.	Վաչագան Գալստյան	Մինչհամալսարանական կրթության վարչության պետ
5.	Դավիթ Ափոյան	Ուսանողական խորհրդի նախագահ
6.	Խաչիկ Աբաջյան	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
7.	Ռեբեկա Գևորգյան	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող
	Չափանիշ 5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	
1.	Էլինա Ասրիյան, ղեկավար	Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր
2.	Ժասմեն Աղասյան	Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ
3.	Սերոբ Խաչատրյան	Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասիստենտ
4.	Անուշավան Մակարյան	Իջևանի մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար
5.	Մենուա Սողոմոնյան	Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ
6.	Արշալույս Ղազարյան	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
	Չափանիշ 6. Հետազոտությունը և զարգացումը	
1.	Ռաֆայել Բարխուդարյան, ղեկավար	Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր
2.	Իշխան Վարդանյան	Գիտական քաղաքականության վարչության պետ
3.	Արթուր Սահակյան	Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան
4.	Ատոմ Մուրադյան	Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ
5.	Միքայել Մալխասյան	Հայոց պատմության ամբիոնի դոցենտ
6.	Մերի Ազիզյան	Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ
	Չափանիշ 7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	
1.	Ռաֆայել Բարխուդարյան, ղեկավար	Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր
2.	Լիանա Վարոսյան	Ֆինանսական վերլուծությունների վարչության պետ

3.	Ռուբեն Աբրահամյան	Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության պետ
4.	Եզնիկ Միրզոյան	Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի տնօրեն
5.	Արմեն Սարգսյան	Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի վարիչ
6.	Անահիտ Տերտերյան	Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի 1-ին տարվա ասպիրանտ
	Չափանիշ 8. Հասարակական պատասխանատվությունը	
1.	Արթուր Իսրայելյան, ղեկավար	Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր
2.	Գևորգ Էմին-Տերյան	Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ
3.	Վահագն Հակոբյան	Հայոց պատմության ամբիոնի դոցենտ
4.	Նվարդ Մելքոնյան	Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ
5.	Կարինե Նազարյան	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի փոխտնօրեն
6.	Սիրանուշ Բաղումյան	Պատմության ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ
	Չափանիշ 9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	
1.	Ալեքսանդր Մարգարով, ղեկավար	Միջազգային համագործակցության վարչության պետ
2.	Նաիրա Մնացականյան	Միջազգային կապերի բաժնի վարիչի տեղակալ
3.	Հայկուհի Մկրտչան	Միջազգային կապերի բաժնի առաջատար մասնագետ
4.	Մարտին Թովմասյան	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ
5.	Գրիգոր Հայրապետյան	Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ
6.	Արշալույս Ղազարյան	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
	Չափանիշ 10. Որակի ներքին ապահովման համակարգը	
1.	Արմեն Բուդաղյան, ղեկավար	Որակի ապահովման կենտրոնի տնօրեն
2.	Մարի Սանթուրջյան	Որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ
3.	Անահիտ Բրուտյան	Որակի ապահովման կենտրոնի առաջատար մասնագետ
4.	Արմեն Սարգսյան	Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի վարիչ
5.	Սիլվա Պետրոսյան	Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դոցենտ
6.	Նարեկ Մարգարյան	Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող

ՓԱՍՏԵՐ ԵՊՀ-Ի ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ) հիմնադրվել է Հայաստանի առաջին հանրապետության օրոք՝ Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 16-ի որոշմամբ: Ըստ «Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999 թ.) 28-րդ հոդվածի 8-րդ կետի՝ Երևանի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է ՀՀ Կառավարությունը:

ՀՀ Կառավարության 2001 թ. դեկտեմբերի 15-ի N 1222 որոշմամբ ԵՊՀ-ն վերակազմավորվել է «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության, իսկ 2014 թ. նոյեմբերի 27-ի 1408-Ն որոշմամբ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի: Իրավակազմակերպական նոր ձևին համապատասխան՝ փոփոխություններ են կատարվել համալսարանի կառավարման համակարգում, ստեղծվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը՝ որպես համալսարանի կառավարման բարձրագույն մարմին:

Պետական առաջին հավատարմագրման գործընթացը համալսարանում մեկնարկեց 2012 թ. մարտին: Իրականացվեց մեծածավալ աշխատանք, ինչի արդյունքում՝ միջազգային և տեղական փորձագետներից կազմված փորձագիտական խումբն ընդհանուր առմամբ դրական գնահատեց ԵՊՀ գործունեությունը: Իսկ ՀՀ ԿԳՆ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովը 2015 թ. փետրվարի 21-ի թիվ 1 որոշմամբ՝ ԵՊՀ-ին շնորհեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 6 տարի ժամկետով:

ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) ավարտից հետո մշակվել և հաստատվել է ԵՊՀ նոր ՌԾ-ն (2016-2020 թթ. համար)՝ իրականացման ժամանակացույց-պլանով և համապատասխան բյուջեով, ինչպես նաև ստեղծվել են ֆակուլտետների և կրթական գործունեություն իրականացնող այլ ստորաբաժանումների ՌԾ-ները: Պարբերաբար իրականացվող մոնիթորինգի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր ուստարվա համար կազմվում է ՌԾ-ի կատարողականը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համալսարանն ունի 19 ֆակուլտետ, կրթական ծրագրեր իրականացնող 2 ինստիտուտ և 3 գիտակրթական կենտրոն, 100-ից ավելի ընդհանուր և մասնագիտական ամբիոններ, 1 մարզային մասնաճյուղ Իջևան քաղաքում՝ 4 ֆակուլտետներով: 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԵՊՀ-ում սովորողների թիվը կազմել է 14048 (11126-ը՝բակալավրիատում, 2505-ը՝ մագիստրատուրայում և 417-ը՝ ասպիրանտուրայում), որից 3061-ը՝ հեռակա ուսուցման համակարգում:

2019/20 ուստարում ԵՊՀ-ն իրականացնում է 62 բակալավրի և 120 մագիստրոսի կրթական ծրագրեր, ինչպես նաև 62 ասպիրանտական ծրագիր:

ԵՊՀ առկա ուսուցման բակալավրի ծրագիրը 4 տարի է՝ 240 ECTS կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ, մագիստրոսի ծրագիրը՝ 2 տարի՝ 120 ECTS կրեդիտ բեռնվածությամբ, իսկ հեռակա ուսուցման կրթական ծրագրերը՝ համապատասխանաբար 5 և 2,5 տարի: Մի քանի մասնագիտությունների գծով իրականացվում է նաև մեկ և մեկուկես տարի տևողությամբ (60 և 90 ECTS կրեդիտ) մագիստրոսի կրթական ծրագրեր: Համալսարանն իրականացնում է նաև

հետազոտողի (ասպիրանտական) եռամյա ծրագրեր՝ 180 ECTS կրեդիտ գիտաուսումնական բեռնվածությամբ:

ԵՊՀ աշխատողների թիվը մոտ 2800 է, որից 1116-ը հիմնական դասախոսական կազմն է (169 պրոֆեսոր, 468 դոցենտ, 479 ասիստենտ և դասախոս): Համալսարանում գիտակրթական գործունեություն են իրականացնում նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 19 ակադեմիկոս և 14 թղթակից անդամ: Ավելի քան մեկդարյա գործունեության ընթացքում ԵՊՀ-ն տվել է 145 հազարից ավելի շրջանավարտ:

Համալսարանն ունի գրադարան և հրատարակչություն, ուսումնաարտադրական բազաներ և ուսումնափորձնական տնտեսություն, հանրակացարան, հյուրերի տուն և այլն:

Իր ռազմավարական նպատակներին համահունչ՝ ԵՊՀ-ն պարբերաբար վերանայում է կրթական ծրագրերը, ստեղծում նորերը, կիրառում դասավանդման և ուսուցման արդիական մեթոդներ, ուսանողներին մատուցում արդյունավետ օժանդակ ծառայություններ: Կարևորելով կրթության որակի բարելավման խնդիրը՝ զգալի աշխատանք է իրականացվել, մասնավորապես, որակի ապահովման գործընթացների ուղղությամբ:

ՌԾ «Որակյալ կրթություն» նպատակի իրագործման նպատակով՝ ԵՊՀ-ում մշակվել, լրամշակվել կամ վերանայվել են կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումները կարգավորող չափորոշիչները և ուղենիշները: Մասնավորապես, որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ՝ մշակվել և ներդրվել են ուսումնական գործընթացի կազմակերպման վերանայված կարգը, կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող չափորոշիչները, մագիստրոսական թեզի և բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման, ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգերը: Այս բոլորը ներառված են «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթեր» ժողովածուում (2017 և 2019 թթ):

ԵՊՀ բոլոր ֆակուլտետներում և կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումներում 2019/20 ուստարվա 1-ին կիսամյակում իրականացվել է մագիստրոսի կրթական ծրագրերի մոնիթորինգ (մշտադիտարկում)՝ համաձայն «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի» (2014, 2019 թթ.):

Որակյալ կրթություն ապահովելու նպատակով ԵՊՀ-ում գործում է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանող որակի ներքին ապահովման համակարգ, որը շարունակաբար բարելավվում է: Կրթական ծրագրերն աշխատաշուկայի և հասարակության կարիքներին ու պահանջներին համապատասխանեցնելու նպատակով՝ գործում են ուսանողների և շրջանավարտների հետադարձ կապի մի շարք մեխանիզմներ:

ԵՊՀ-ում կարևորվում է նաև դասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացումը: Դեռևս 2011 թ.-ից գործողության մեջ է դրվել «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը», որը ներքին ու արտաքին գնահատումների հիման վրա պարբերաբար բարելավվում է: Օրինակ, դասավանդման և ուսումնառության գործընթացների արդիականացման նպատակով 2018 թ. հունվարից իրականացվում է ERASMUS+ PRINTeL նախագիծը, որում ներգրավված են եվրոպական և արևելյան գործընկերության մի շարք համալսարաններ:

Մշակվել և գործում է ԵՊՀ ինտրանետ համակարգը, որը դասախոսական կազմի հաշվետվողականության ապահովման նոր գործիքակազմ է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ-ն Հայաստանի խոշորագույն գիտահետազոտական կենտրոններից մեկն է: Համալսարանում հետազոտություններ են իրականացվում հասարակական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների ամենատարբեր բնագավառներում: Գիտահետազոտական գործունեության ոլորտում ընդգրկված են մոտ 407 հետազոտողներ (որոնցից 170-ը՝ հիմնական հաստիքով): Համալսարանի ներկայիս գիտահետազոտական գործունեության բյուջեն կազմում է 2.92 մլն ԱՄՆ դոլար:

ԵՊՀ-ում գործում են գիտահետազոտական 3 ինստիտուտ, 34 լաբորատորիա և 1 կենտրոն: Գիտահետազոտական լաբորատորիաների մեծ մասը ներգրավված է բնական գիտությունների տարբեր ոլորտներում իրականացվող հետազոտություններում, ներառյալ՝ ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը և ֆարմացիան: Հումանիտար գիտություններում առաջատար դիրք է զբաղեցնում հայագիտությունը:

ԵՊՀ գրեթե բոլոր ֆակուլտետներում գործում են մասնագիտական հետազոտական լաբորատորիաներ, կենտրոններ և կաբինետներ՝ ընդհանուր թվով 38:

2018/19 ուստարում ԵՊՀ-ում հրատարակվել է շուրջ 1314 գիտական հոդված և 52 մենագրություն, 26 դասագիրք և 46 ուսումնական ձեռնարկ, ինչպես նաև 323 գիտաժողովի նյութեր: Ազդեցության գործակցով պարբերականներում տեղ են գտել 191, «Web of Science»-ում՝ 220 և «Scopus»-ում՝ 224 հրապարակում: ԵՊՀ գիտական պարբերականներում տեղ գտած հրապարակումների թիվը եղել է 194:

ԵՊՀ-ում տարեկան իրականացվում է շուրջ 65 հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրեր:

Հետազոտական գործունեության գնահատման նպատակով ԵՊՀ-ում ներդրվել են գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշներ, որոնք ամփոփված են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում»:

Համալսարանը հրատարակում է «Գիտական տեղեկագիր» և «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական պարբերականները՝ առանձին շարքերով, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն գիտական հանդես է: Դրանցից զատ՝ ԵՊՀ-ում տպագրվում է ևս 20 գիտական հանդես:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել է ԵՊՀ միջազգային համագործակցության դաշտը: Այսօր համալսարանը համագործակցում է աշխարհի շուրջ 50 երկրների 250-ից ավելի համալսարանների, տարբեր հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ: Միաժամանակ, ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է մի շարք դրամաշնորհային և միջազգային ծրագրերում, ինչպիսիք են՝ ERASMUS-ը, DAAD-ն, INET-ը, FEMS-ը, ANSEF-ը,

HORIZON 2020-ը, VOLKSWAGEN-ը, NAPA-ն, ASCN-ը, ISTC-ն, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» ծրագրի դրամաշնորհ և այլն:

ԵՊՀ-ն Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սնծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ է, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ընկերակցության և Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգայի անդամ:

Համալսարանի միջազգային համագործակցության ընդլայնմանը նպաստել են Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող փոխանակման ծրագրերը, որին մասնակցում են ԵՊՀ տարբեր ֆակուլտետների սովորողներ և աշխատողներ: Էականորեն աճել է փոխանակման ծրագրերի շրջանակում արտերկիր մեկնող դասախոսների և սովորողների թիվը. 2018/2019 ուստարում արտերկիր է մեկնել ԵՊՀ մոտ 260 դասախոս և 300 ուսանող ու ասպիրանտ, ԵՊՀ է այցելել և դասախոսություններով հանդես եկել 100 պրոֆեսոր՝ արտերկրի տարբեր բուհերից:

ԵՊՀ-ում սովորում է ավելի քան 250 օտարերկրացի, որոնցից մոտ 25-ը ասպիրանտ են:

ԵՊՀ-ում հաջողությամբ իրականացվում են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում, ինչպես նաև Բելգորոդի (ՌԴ) և Լե Մանի (Ֆրանսիա) համալսարանների հետ:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄՈՒՀ) ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՐԴԵԳՐԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ՈՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ

ԵՊՀ-ն ձգտում է դառնալու այնպիսի հաստատություն, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- ուսանողներին և աշխատողներին տրամադրում է բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր,
- իր գործունեության բոլոր բնագավառներում ապահովում է որակի անընդհատ բարելավում՝ բուհի գործուն և արդյունավետ վարչարարության և կառավարման միջոցով,
- տրամադրում է լրացուցիչ շարունակական կրթության և մասնագիտական խորհրդատվության ծառայություններ՝ հանրային պահանջարկին համապատասխան:

(Տե՛ս ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր, Եր., 2015, էջ 5, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf)

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (ԵՊՀ) կրթական, գիտահետազոտական և մշակութային ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն ունի իր նպատակներն ու խնդիրներն արտացոլող առաքելություն՝ սահմանված ԵՊՀ կանոնադրությամբ (հաստատված է ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն որոշմամբ, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf), ինչպես նաև ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով (հաստատված է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2015 թ. դեկտեմբերի 23-ի նիստի թիվ 15 որոշմամբ):

ԵՊՀ կանոնադրության «Ընդհանուր դրույթներ»-ում սահմանված է, որ ԵՊՀ գործունեությունը նպատակաուղղված է հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական,

հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և կրթության շարունակականությունն ապահովող այլ կրթական մակարդակներում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

ԵՊՀ առաքելությամբ են պայմանավորված նրա գործունեության նպատակները, որոնք սահմանված են բուհի կանոնադրության 17-րդ կետում (1-11 ենթակետեր, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf) և գիտակրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումների կանոնադրություններում:

Համալսարանի առաքելությունը և նրա տեսլականի իրականացումը պայմանավորված են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf) կատարմամբ:

Համալսարանի տեսլականի իրականացման հիմքում դրված են ԵՊՀ հիմնարար արժեքները՝ ուսանողի հաջողությունը, մատչելի կրթությունը, բարձրակարգ գիտամանկավարժական կազմը, ակադեմիական ազատությունը և ազնվությունը, ժողովրդավարական միջավայրը, սոցիալական գործընկերությունը, համազգային պատասխանատվությունը:

ՌԾ-ով սահմանված 9 ռազմավարական նպատակների իրականացման համար նախատեսված է լուծել 27 խնդիր՝ նպատակաուղղված ԵՊՀ-ում որակյալ կրթության ապահովմանը, արդիական բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, որակյալ մարդկային ռեսուրսների կատարելագործմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցման ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը: Ռազմավարական ծրագրի յուրաքանչյուր նպատակի իրականացման համար առաջադրված են խնդիրներ՝ համապատասխան գործողություններով, ինչպես նաև դրանց առաջընթացի գնահատման ցուցիչներ:

Կազմվել և հաստատվել են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակցույց-պլան և համապատասխան բյուջե՝ բաշխված ըստ տարիների (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf):

ԵՊՀ-ն իրականացնում է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 3 մակարդակներին համապատասխան (բակալավր, մագիստրոս, գիտությունների թեկնածու) կրթություն:

ԵՊՀ առաքելությամբ պայմանավորված՝ բոլոր ֆակուլտետները, կրթական ծրագրեր իրականացնող ինստիտուտները և կենտրոնները նույնպես ունեն ԵՊՀ ՌԾ-ից բխող իրենց ռազմավարական ծրագրերը (տե՛ս ԵՊՀ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավելուծության հավելվածներ, Հավելված 10.2):

ԵՊՀ առաքելության և նպատակների իրականացումը գնահատելու և հետագայում դրանք բարելավելու համար գործարկվում են մի շարք մեխանիզմներ (տե՛ս 1.3 չափորոշիչը):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ԵՊՀ առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների իրականացման և վերանայման քաղաքականության հիմքում ներքոնշյալ փաստաթղթերն են.

- ԵՊՀ կանոնադրություն (2014 թ.),
- ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր:

ԵՊՀ կանոնադրության 4-րդ բաժնի 21-րդ կետով սահմանված է. «ԵՊՀ-ի շահառուները կրթական, գիտական, մշակութային, գիտաարտադրական և սույն կանոնադրությամբ նախատեսված բնագավառներին առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձինք են» (http://documentation.ysu.am/wp-content/uploads/ 2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf):

Համաձայն ԵՊՀ կանոնադրության և ՌԾ-ի՝ համալսարանի առաքելությունն իրականացվում է մասնակցականության և կոլեգիալության սկզբունքներով:

ԵՊՀ-ն ունի իր առաքելությամբ պայմանավորված ներքին և արտաքին և շահակիցների հստակ շրջանակ, որում ընդգրկված են՝

- ԵՊՀ սովորողները, շրջանավարտները, դիմորդները և նրանց ծնողները,
- ԵՊՀ դասախոսական, գիտական և վարչական կազմերը,
- գործատուները, այդ թվում՝ պետական, մասնավոր, հասարակական, ինչպես նաև ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունները/կառույցները,
- Հայաստանի գիտամանկավարժական հանրությունը, կրթության, գիտության և մշակույթի ոլորտների շահագրգիռ կազմակերպությունները,
- ՀՀ Կառավարությունը և պետական լիազոր մարմինը,
- արտասահմանյան գործընկերները, միջազգային գիտակրթական կազմակերպությունները, մասնագիտական հանրույթները,
- Սփյուռքը,
- հայաստանյան հանրությունը:

ԵՊՀ-ում գործում են վերոնշյալ շահակիցների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ:

Համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում ընդգրկված են և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների ներկայացուցիչներ (տե՛ս սույն զեկույցի Չափանիշ 2-ը):

Ուսանողները համալսարանի կարևորագույն շահակիցներն են: ԵՊՀ ՌԾ-ով հիմնարար արժեքներ են հռչակված «ուսանողի հաջողությունը» և «մատչելի կրթությունը» (տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 6, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf), իսկ նրանց կրթական կարիքների բավարարման համար ռազմավարական նպատակ է սահմանվել որակյալ կրթությունը (տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 7): ԵՊՀ-ն կարևորում է ուսանողների շահերի և պահանջմունքների բացահայտումը, որի համար գործադրվող մեխանիզմներից են ուսանողական ինքնավարությունը, համալսարանի կառավարմանն ուսանողների մասնակցությունը, համալսարանում գործող ուսանողական կազմակերպությունների գործունեությունը, ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումները և այլն: ԵՊՀ կանոնադրության համաձայն և ՈԱՇ-ի պահանջներին համապատասխան՝ ԵՊՀ սովորողներն իրավունք ունեն մասնակցելու իրենց կրթության բո-

վանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը), ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:

ՌԾ-ով սահմանված «Որակյալ ծառայություններ» նպատակի իրականացման համար խնդիր է դրվել զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով, ինչի համար նախատեսվել է 10 ռազմավարական գործողություն (տե՛ս ՌԾ, էջ 23, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/-EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf): Համալսարանի ուսանողական կազմակերպությունների կարողությունների զարգացման ու ուսանողական ինքնակառավարման խթանման համար սահմանվել է ռազմավարական 4 գործողություն (տե՛ս ՌԾ, էջ 24):

Ուսանողների հետ մշտական կապի ապահովման նպատակով արդիականացվել են ԵՊՀ էլեկտրոնային փոստի սերվերային համակարգերը, և բոլոր ուսանողներին տրամադրվել է համալսարանական էլեկտրոնային փոստի հասցե, որը նրանք կարող են օգտագործել նաև համալսարանն ավարտելուց հետո: ԵՊՀ աշխատողներին ևս տրամադրվել է համալսարանական էլփոստի հասցե, որի միջոցով ապահովվում է ինչպես բուհ-աշխատակից, այնպես էլ ուսանող-աշխատակից (մասնավորապես՝ դասախոս) մշտական կապը:

ԵՊՀ կարևորագույն շահակիցներից են դիմորդները, որոնց կարիքների բավարարմանն ուղղված ռազմավարական նպատակ է սահմանվել «Ընդունելության բազմազանեցումը և համապատասխանությունը» (տե՛ս ԵՊՀ ՌԾ, էջ 25-28, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf): Դիմորդների հետ աշխատանքն իրականացնում են բուհի ղեկավար կառույցները, Մինչհամալսարանական կրթության և Ուսումնամեթոդական վարչությունները, ֆակուլտետները, ուսանողական կառույցները:

Համալսարանի շահակից են նաև դիմորդների ծնողները, որոնց հետ կապը նույնպես ապահովում են վերոնշյալ կառույցները: Անչափահաս ուսանողներին վերաբերող պայմանագրերը համալսարանի ղեկավարությունը կնքում է նրանց ծնողների հետ:

ԵՊՀ-ն մշտական կապ է ապահովում համալսարանական ազատամարտիկների ծնողների և հարազատների հետ:

ՌԾ-ով նախատեսված է բազմակողմանի կապերի հաստատում շրջանավարտների հետ, ինչն իրականացվում է հիմնականում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով:

ԵՊՀ ներքին կարևոր շահակիցներից է համալսարանի գիտամանկավարժական կազմը, որը ՌԾ-ն սահմանում է որպես հիմնարար արժեք՝ այն համարելով համալսարանի կարևորագույն ներուժը և գործունեության հաջողության հիմնական գրավականը, որի շնորհիվ համալսարանն իրականացնում է իր առաքելությունը: Իրականացվում է ՌԾ-ով նախատեսված՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կատարելագործում:

ՌԾ-ն հաշվի է առնում նաև համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողների սոցիալական շահերը: Որակյալ մարդկային ռեսուրսները դիտարկելով որպես համալսարանի ռազմավարական հիմնական նպատակներից մեկը՝ ՌԾ-ով խնդիր է դրված բարձրացնել ԵՊՀ աշխատողների բարեկեցության մակարդակը: Այս ուղղությամբ իրականացվում են մի շարք ծրագրեր (աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող

լրավճարներ, բժշկական ապահովագրության փաթեթ, աշխատողներին և նրանց ընտանիքի անդամներին, ուսանողներին համալսարանական հանգստյան տների ուղեգրերի գեղչերի հատկացում, հաշմանդամություն ունեցող հիմնական աշխատողների համար ամենամսյա հավելավճար, հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժը համալսարանում ապահովելու համար ենթակառուցվածքների զարգացում, հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին անհրաժեշտ աջակցության և խորհրդատվության տրամադրում և այլն):

ԵՊՀ արտաքին շահակիցներից են գործատուները, ուստի ՌԾ-ն նրանց հետ գործակցությունը դիտարկում է որպես համալսարանի առաքելության իրականացման ռազմավարական խնդիր: Այս շահակիցների հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվել և հաստատվել է Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության ռազմավարությունը (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Dzern_hamagorcakcu_cragir1.pdf): Ստեղծվել է ԵՊՀ ԳԽ-ին կից Ձեռնարկությունների հետ համագործակցություն ապահովող մշտական հանձնաժողով՝ համապատասխան աշխատակարգով: Հաստատվել է Ձեռնարկությունների հետ ֆակուլտետի համագործակցության խորհրդի կանոնակարգը, որով սահմանված են խորհրդի գործառույթները:

Արտաքին շահակիցներ են ՀՀ Կառավարությունը և ԿԳՄՍ նախարարությունը: Համալսարանում իրականացվող բարեփոխումները համահունչ են գիտության և կրթության ոլորտում պետական քաղաքականությանը, այդ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերին, կրթության զարգացման ծրագրերին:

ԵՊՀ ՌԾ-ից բխում է, որ համալսարանի շահակից է հայաստանյան հանրությունը, քանի որ համալսարանի առաքելության մաս է համարվում հանրության տնտեսական, սոցիալական, հումանիտար, մշակութային կյանքի բարելավմանը նպաստելը: ԵՊՀ-ն՝ որպես հայաստանյան բուհերի առաջատար, ամրագրել է իր գործունեությամբ հանրությանը, հայությանը և հայկական սփյուռքին նվիրվելու և ծառայելու պարտավորություն:

Հանրության՝ որպես արտաքին շահակցի հետ ԵՊՀ առնչություններն ապահովվում են տարբեր միջոցներով, որոնցից է առցանց հետադարձ կապի մեխանիզմը (էլեկտրոնային փոստ, ֆեյսբուք և այլն), ԵՊՀ ռեկտորի կողմից քաղաքացիների (հանրության տարբեր շրջանակներից) ընդունելությունը՝ յուրաքանչյուր ուրբաթ:

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման, նրանց հետ գործակցության ապահովման ու զարգացման նպատակով մշակվել և ընդունվել են մի շարք հայեցակարգեր, կանոնակարգեր ու աշխատակարգեր (տե՛ս Հավելված 2):

ՀԱՎԵԼՎԱԾ 1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՊՀ-ում գործում են առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԵՊՀ ՌԾ-ի իրականացման ընթացքի գնահատման մեխանիզմներից է «ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը»: ԵՊՀ ՌԾ-ի իրականացման ընթացքում պարբերաբար անցկացվող մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքների հիման վրա կատարվում է յուրաքանչյուր ուստարվա համար նախատեսված գործողությունների իրականացման գնահատում, հրատարակվում է ՌԾ

կատարողականի վերաբերյալ զեկույց, որի նպատակն է թափանցիկ և հրապարակայնորեն ներկայացնել ԵՊՀ զարգացման ռազմավարական խնդիրների ուղղությամբ իրականացված աշխատանքները, ապահովել ԵՊՀ գործունեության հաշվետվողականությունը համալսարանական և լայն հանրության առջև: ՌԾ կատարողականի վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրել ԵՊՀ գործունեության տարբեր ոլորտների հաջողությունները և թերացումները:(http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/12/Razmavarakani_kataroghakan_2015-2016.pdf; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/12/Kataroxakan-2017.pdf; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/Kataroghakan_2018.pdf; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/05/Kataroghakan_2019.pdf):

ԵՊՀ կրթական գործունեություն իրականացնող բոլոր ստորաբաժանումները (ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ) ունեն իրենց ռազմավարական ծրագրերը/իրականացման ժամանակացույց-պլանները (տե՛ս Հավելված 10.2):

ՌԾ-ի կատարման առաջընթացի վերահսկման և գնահատման նպատակով պարբերաբար կազմվում և հրատարակվում է ԵՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը (համապատասխանաբար՝ 2003-2009 թթ., 2005-2010 թթ., 2008-2013 թթ. և 2010-2015 թթ. համար, հրատարակության է պատրաստվում ԳԱՑ-երի հերթական լրակազմը):

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար կազմվում է ԵՊՀ տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվ (բյուջե), իսկ նախորդ տարվա բյուջեի կատարման ցուցանիշների վերաբերյալ՝ եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական:

ԵՊՀ ֆինանսական պլանավորումը ոչ միշտ է համարժեք համալսարանի ռազմավարական նպատակներին և խնդիրներին, որովհետև տարեկան ֆինանսական մուտքերի ծավալները, որոնք հիմնականում ձևավորվում են ուսման վարձերից, լիովին կանխատեսելի չեն: Այդ պատճառով համալսարանը չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ՌԾ-ում սահմանված հիմնական նպատակների ու խնդիրների իրագործման ռեսուրսային բազա ապահովելու համար: Սրան նպաստում է նաև պետական ֆինանսավորման խիստ ցածր մակարդակը:

ԵՊՀ-ում կրթության որակի շարունակական բարելավմանը նպաստող մեխանիզմներից են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական կիսամյակային հարցումները, ինչպես նաև համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ ամենամյա հարցումները, որոնք իրականացվում են համապատասխան կանոնակարգի և կարգի համաձայն (http://documentation.ysu.am/wp-content/-uploads/2017/01/kanonakag4-2.pdf, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/-karg.pdf):

Համալսարանում իրականացվում են կրթական ծրագրերի արտոնում, փորձաքննություն և հաստատում, ինչպես նաև ընթացիկ մոնիթորինգ և պարբերական վերանայում՝ ըստ համապատասխան կարգերի (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Program-Approval-Regulation_26.01.2014.pdf, http://documentation.ysu.am/wp-content/uploads/-2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf): Այդ գործընթացները կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից են:

ԵՊՀ առաքելության և հիմնական նպատակների իրականացումը գնահատող մեխանիզմներից է ԵՊՀ-ում գործող վարից վեր հաշվետվողականությունը (ամբիոնների, ֆակուլտետների, ԵՊՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունները): ԵՊՀ գործունեության համակողմանի ներկայացումը և գնահատումը կատարվում են նաև ամեն տարի հրատարակվող ընդհանուր հաշվետվության միջոցով՝ ԵՊՀ բոլոր ստորաբաժանումների նախորդ ուստարվա գործունեության արդյունքների ներկայացմամբ:

Մշակվել և գործարկվում է «ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթը» (ինտրանետ համակարգը՝ www.intranet.ysu.am), որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները, աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 1-ին չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. ԵՊՀ-ն ունի իր նպատակներն ու խնդիրներն արտացոլող առաքելություն, որը սահմանված է նրա կանոնադրությամբ: 2. ԵՊՀ-ն ունի իր առաքելությունը, նպատակներն ու խնդիրներն արտացոլող զարգացման ռազմավարական ծրագիր (ՌԾ), դրա իրականացման ժամանակացույց-պլան և համապատասխան բյուջե, կրթական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների ՌԾ-ներ: 3. ԵՊՀ ՌԾ նպատակներին ուղղված յուրաքանչյուր խնդրի համար սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ: 4. Պարբերաբար իրականացվող մոնիթորինգի արդյունքների հիման վրա յուրաքանչյուր ուստարվա համար կազմվում և հրապարակվում է ՌԾ կատարողական: 5. ԵՊՀ-ն ունի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մի շարք մեխանիզմներ (հաշվետվողականության բազմամակարդակ համակարգ, աշխատողներին գիտակրթական գործունեության համար խրախուսման մեխանիզմներ և այլն): 6. Ապահովված է և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցների ներկայացուցիչների ներգրավվածությունը համալսարանի և նրա ստորաբաժանումների կառավարման կոլեգիալ բոլոր մարմիններում, տարբեր հանձ-	1. ԵՊՀ հիմնական շահակիցների կարիքների բացահայտման առկա մեխանիզմները դեռևս բավարար չեն: 2. Ոչ բավարար ֆինանսավորման պատճառով ԵՊՀ-ն չունի երկարաժամկետ ռազմավարական բյուջե՝ ՌԾ-ում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման ռեսուրսային հենքի ապահովման համար: 3. ԵՊՀ-ն չունի իր կառուցվածքի օպտիմալացման և վարչարարության արդյունավետության բարձրացման համար մշակված հստակ չափանիշներ:

նաժողովներում և աշխատանքային խմբերում:	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Գործատուների և այլ արտաքին շահակիցների առավել ակտիվ ներգրավումը համալսարանական գործընթացներում՝ մասնավորապես կրթական ծրագրերի մշակման, իրականացման, արտաքին փորձաքննության, ինչպես նաև պրակտիկաների անցկացման գործընթացներում, կարող է խթանել նրանց հետ համագործակցության զարգացումը: 2. Գործընկեր բուհերի և կազմակերպությունների հետ հանրապետական և միջազգային մակարդակներում կրթական և գիտական համագործակցության ընդլայնումը բենչմարքինգի լայն հնարավորություններ է ընձեռում, ինչը կարող է նպաստել բուհի գործունեության արդյունավետության բարձրացմանը: 3. Շարժունության միջազգային, հատկապես եվրոպական ծրագրերի հնարավորությունների լիարժեք օգտագործումը նպաստում է գիտամանկավարժական կազմի և ուսանողության շարժունության ընդլայնմանը: 4. Համաշխարհային շուկայում որակյալ աշխատուժի ազատ տեղաշարժի աճը խթանող հանգամանք է ԵՊՀ շրջանավարտների՝ համապատասխան մասնագիտությամբ զբաղվածության համար:	1. ԵՊՀ առավել արդյունավետ գործունեության ապահովման համար առկա չէ բավարար մակարդակի պետական աջակցություն: 2. ՀՀ-ում գործող բուհերի տարբեր կարգավիճակների և նրանց գործունեության կարգավորման տարբեր օրենքների առկայությունը անհավասար պայմաններ է ստեղծում մրցակցային դաշտում: 3. ՀՀ դպրոցների շրջանավարտների թվի նվազումը՝ պայմանավորված անբարենպաստ ժողովրդագրական ցուցանիշներով, վտանգում է անհրաժեշտ թվով մրցունակ դիմորդների ապահովվածությունը բուհական ընդունելության գործընթացում: 4. Բուհական կրթական գործընթացներում արտաքին շահակիցների՝ հատկապես գործատուների ոչ բավարար չափով շահագրգիռ և նախաձեռնողական ներգրավվածությունը խոչընդոտում է բուհ-գործատու համագործակցության արդյունավետությունը:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. ՀՀ կառավարության հետ համատեղ մշակել ԵՊՀ զարգացման երկարաժամկետ ռազմավարություն:
2. Մշակել և գործադրել ԵՊՀ վարչարարության արդյունավետության գնահատման և բարձրացման մեխանիզմներ:
3. Մշակել և գործադրել հիմնական շահակիցների կարիքների վերհանման, ԵՊՀ աշխատողների մասնագիտական հնարավորությունների բացահայտման և առաջխաղացման լրացուցիչ մեխանիզմներ:
4. Օրենսդրությամբ հստակեցնել բուհերի կառավարման առանձնահատկությունները, սահմանել իրավակարգավորումներ, որոնք կերաշխավորեն հավասար մրցակցային պայմաններ բոլոր բուհերի համար:

ՉԱՓԱՆԻՇ 2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՆՈՒՄՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ ԵՎ ՄԻՏՎԱԾ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ՝ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԸ

ԵՊՀ-ն պետական ոչ առևտրային կազմակերպությունից վերակազմակերպվել է պետական հիմնադրամի և կառավարման համակարգը համապատասխանեցվել է այդ փոփոխությանը: ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ-ն նախատեսել է բարելավել կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը: Այս նպատակի իրականացման համար ԵՊՀ ՌԾ-ն նախատեսել է՝ 1) ապահովել ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները, 2) զարգացնել ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, 3) կատարելագործել իրավական դաշտը և կառավարման համակարգը, 4) ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը: ՌԾ-ում ռազմավարական այս խնդիրների իրագործման համար նախատեսվել և իրականացվել են բարելավման միջոցառումներ (տե՛ս ՌԾ, խնդիրներ 8.1-8.4, էջեր 29-32)[1]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ «բուհերն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատություն»: Կառավարման հիմունքներն ամրագրված են «Կրթության մասին» (14.04.1999), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (14.12.2004) օրենքներում, 2014 թ.-ից նաև «Հիմնադրամների մասին» օրենքում (14.12.2004)[2]:

ԵՊՀ կառավարման մակարդակներն են՝ ա) պետության մասնակցությունը կառավարմանը, բ) կառավարումը համալսարանական մարմինների միջոցով, գ) կառավարումը համալսարանի ստորաբաժանումներում:

ԵՊՀ պետական հիմնադրամ իրավաբանական անձի կառավարմանը՝ ՀՀ կառավարությունը և պետական լիազոր մարմինը մասնակցում են լիազորությունների և անդամության ձևով: Կառավարման հարցերում դրանց լիազորություններն ամրագրված են օրենքներով, ԵՊՀ կանոնադրությամբ և այլ ակտերով: Պետության ներկայացուցիչներն անդամակցում են հոգաբարձուների խորհրդին. 32 անդամից 16-ը հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներն են (ԵՊՀ կանոնադրություն, 27-28 կետեր): Պետության մասնակցությունը կրթական քաղաքականության իրականացման և բուհի հաշվետվողականության միջոց է:

[1] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf
[2] https://www.arlis.am/

ԵՊՀ ռազմավարական և ընթացիկ կառավարումն իրագործում են կանոնադրական մարմինները (հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ռեկտոր, ռեկտորատ), ինչպես նաև ներհամալսարանական կառույցները (պրոռեկտորներ, վարչություններ, բաժիններ):

ԵՊՀ կառավարման մարմինների իրավասությունը, կազմավորման ու գործունեության կարգերը սահմանում են ԵՊՀ կանոնադրությունը (տե՛ս ԵՊՀ կանոնադրության VI բաժնի 23-61-րդ կետերը), «ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգը»[3] (29.04.2015), «ԵՊՀ Գիտական խորհրդի կանոնակարգը»[4] (24.09.2015), «ԵՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգը»[5] (31.01.2019), «ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգը» (22.12.2011)[6]:

ԵՊՀ ստորաբաժանումների կառավարումը տարբերակված է: Ֆակուլտետների կառավարման կարգը սահմանված են օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, 2015 թ. նորացված «ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությամբ»[7]: Դրա հիման վրա ընդունվեցին ֆակուլտետների նոր կանոնադրությունները, «ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը» (2016 թ.)[8]: 2015 թ.-ից իրականացնելով վերակառուցում ընդունվել են կառավարչական բազմաթիվ ակտեր: Ամբիոնները, կենտրոնները, լաբորատորիաները ձևավորվում ու կառավարվում են ԵՊՀ և ֆակուլտետների կանոնադրություններին, իրենց կանոնակարգերին համապատասխան: Գործում է նաև «ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը» (26.05.2016)[9]:

Իջևանի մասնաճյուղի, ինստիտուտների, կենտրոնների կառավարումն իրականացվում է ԵՊՀ և իրենց կանոնադրություններին համապատասխան (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 83-88-րդ կետերը, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի (2.07.2013)[10] և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (29.04.2015) կանոնադրությունները[11]):

Կադրային գործոնի դերը նկատի ունենալով՝ ԵՊՀ մարմինները պատշաճ ուշադրություն են հատկացրել մարդկային ռեսուրսների իրավական կանոնակարգմանը: ԵՊՀ կանոնադրությունն ամրագրում է աշխատողների և սովորողների իրավունքները, պարտականությունները (տե՛ս 126-138 կետեր): ԵՊՀ գիտամանկավարժական տարակարգի աշխատողների թափուր պաշտոնների զբաղեցումը կանոնակարգված են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական, ինչպես նաև գիտական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգերով[12]:

Կադրերի կառավարման լավարկման նպատակով ԵՊՀ-ն ընդունել է «Մարդկային ռեսուսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգ» (06.07.2017)[13] և քայլեր են ձեռնարվկել դրա կենսագործման համար: 2018 թ. մարտին հաստատվել է «ԵՊՀ անձնակազմի

---

[3] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/ashka.pdf
[4] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/11/Git_khorhurd_kanonakarg.pdf
[5] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/01/Rektori_yntrutyan_kanonakarg.pdf
[6] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/205_REKTORATIVoroshum_14.3-2011.pdf
[7] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/09/orinakeli_kanonadrutyun.pdf
[8] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/fakulteti_dekani_yntrutyun.pdf
[9] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/ambioni_varich_yntrutyun.pdf
[10] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2013/10/IAS-Kanonadrutyun-2013.pdf
[11] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/10/Ijevani_kanonadrutyun.pdf
[12] Տե՛ս http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/3.6_kanonakarg_17.12.2012.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2012/06/Dasakhosakan_kazm_election-new.pdf
[13] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/mardkayin_res_kar_zargacman_hayecakarg.pdf

կառավարման և իրավական ապահովման վարչության կանոնադրությունը»[14], որը նախադրյալ է կադրային ոլորտի հետագա արդյունավետացման ու լավարկման համար: Կառավարման ոլորտում կարգապահության, ադմինիստրացիայի ու աշխատողների հարաբերությունների բարելավմանն են ուղղված 2015 թ. նորացված «ԵՊՀ հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները»[15], ինչպես նաև 2015 թ. ԵՊՀ-ի և արհմիության նոր կնքված կոլեկտիվ պայմանագիրը[16]:

2018 թ. հունիսին ներդրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգ, որը լիարժեք կերպով սկսվեց շահագործվել 2019 թ.:

ԵՊՀ-ն մշտապես մեծ ուշադրություն է դարձրել կադրային ապահովման խնդրին: 2016 թ. հաստատվել է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը[17], որի նպատակն է ապահովել այդ տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարումը, ներառյալ հաստիքների համակարգի ձևավորման սկզբունքները և աստիճանակարգումը, վարչական պաշտոնների անձնագրերի և այլ աշխատողների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները և այլն:

ԵՊՀ գիտխորհուրդը 2017 թ. հուլիսի 6-ին հաստատել է «ԵՊՀ մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը» [18],, որը սահմանում է համակարգի բարեփոխումների տեսլականը, շեշտադրում է խրախուսման ու կարգապահության, ՄՌ կառավարման այլ խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: 2018 թ. ապրիլի 1-ից գործում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունը, որը կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ մշակել է ԵՊՀ վարչական ստորաբաժանումների աշխատողների պաշտոնի անձնագրերը և ներկայացրել ԵՊՀ ռեկտորի հաստատմանը: Վարչական ստորաբաժանումների ավելի քան 90 տոկոսն ունեն հաստատված պաշտոնի անձնագրեր: Հաստատվել են նաև պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ տարակարգի պաշտոնների անձնագրերը: Ընդունվել և 2017/2018 ուսումնական տարվանից կիրառվում է «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»[19]: Վերջինս ներառում է հստակ ձևակերպված և չափելի ձեռքբերումներ, որոնց համաձայն intranet ավտոմատացված համակարգով հաշվարկվում և տրամադրվում են լրավճարներ՝ ծավալած գործունեությանը համապատասխան: ԵՊՀ գիտական խորհրդի 2015 թ. մարտի 26-ի նիստի որոշմամբ ընդունվել է «ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները» (նոր խմբագրությամբ)[20]: Ընդունվել են նաև՝ ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը[21], ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ)[22], ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր

[14] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2018/03/kanonadrutyun.pdf
[15] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/03/EPH_nerqin_kargapahakan_kanonner.pdf
[16] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/05/paymanagir_new.pdf
[17] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/11/voroshum.pdf
[18] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/mardkayin_res_kar_zargacman_hayecakarg.pdf
[19] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2018/07/karg.pdf
[20] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/03/EPH_nerqin_kargapahakan_kanonner.pdf
[21] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/DOB_cragir.pdf
[22] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/fakulteti_dekani_yntrutyun.pdf

խմբագրությամբ)[23], ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման կարգում փոփոխություններ և լրացում կատարելու մասին որոշումը[24], ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը[25], ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը[26] և այլն:

ԵՊՀ գործունեության նյութական հիմքը նրան սեփականության իրավունքով պատկանող, ինչպես նաև նրան ամրացված գույքն է: ԵՊՀ եկամուտներն ու ծախսերը նախատեսվում և օգտագործվում են սահմանված կարգով հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան: ԵՊՀ-ն ունի եկամուտների և ծախսերի (բյուջե) տարեկան կատարողական հաշվետվություն, որը հաստատում է հոգաբարձուների խորհուրդը: ԵՊՀ-ն ունի հնարավոր կորուստների պահուստ, ինչպես նաև ավանդներ բանկում: ԵՊՀ-ում ֆինանսական աուդիտն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ կանոնադրության համաձայն սահմանված համապատասխան կանոնակարգերով: Կազմվում և ներկայացվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններ (որոնց վերաբերյալ կազմվում են անկախ աուդիտորական եզրակացությունները), որոնց համար պատասխանատու են ԵՊՀ ղեկավարությունը և աուդիտ իրականացնող իրավաբանական անձը: Ֆինանսական բոլոր գործընթացները կանոնակարգված են համալսարանական ակտերով (բոլորը փաստաթղթերը հասանելի են ԵՊՀ կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում[27]):

Որոշումներ կայացնելու գործընթացը կանոնակարգված է: Սահմանված էթիկայի կանոնների պահպանման նպատակով՝ դրա հիմքում դրված են կարգապահության, պլանայնության, թափանցիկության և շահակիցների կարիքների հաշվառման սկզբունքները (տե՛ս 1.2, 2.3, 2.4, 2.5 չափորոշիչների վերլուծությունը): Կառավարման մեջ կիրառվում են նաև մարմինների լիազորությունների ամրագրումը, հստակ բաժանումը, կոլեգիալ և միանձնյա կառավարման զուգակցումը (տե՛ս 2.5 չափորոշիչը): ԵՊՀ առաքելության արդյունավետ իրականացման, կառավարման որակի ապահովման կառուցակարգեր են ստորադաս օղակների նկատմամբ հսկիչ-վերահսկիչ գործառույթը և հաշվետվությունների համակարգը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Այս չափորոշչի պահանջներն առանցքային են եղել ԵՊՀ բոլոր ՌԾ-ներում: «Ժողովրդավարական միջավայրը»՝ ուսանողների և աշխատողների մասնակցության հիմքով, համարվում է ԵՊՀ հիմնարար արժեք (տե՛ս ՌԾ-ի 6-րդ էջը): Մասնակցայնությունը և ներգրավվածությունն ունեն իրավական երաշխիքներ՝ սահմանված «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով (17-19-րդ հոդվածները սահմանում են բուհի աշխատողների իրավունքները, սովորողների՝ կառավարմանը մասնակցության հիմունքները): Մասնակցայնության սկզբունքը կոնկրետացվում է ներբուհական տարաբնույթ ակտերով:

[23] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/ambioni_varich_yntrutyun.pdf
[24] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2012/06/Dasakhosakan_kazm_election-new.pdf
[25] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/11/voroshum.pdf
[26] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/GX_voroshum_11-3.pdf
[27] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/GX_voroshum_8-3.pdf

Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոններում, կառավարման մարմիններում ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև իրենց առնչվող հարցերի քննարկմանը մասնակցելու իրավունքները վերարտադրված են ԵՊՀ կանոնադրությունում (կետ 129): Կառավարման բոլոր մակարդակներում կարգավորված են նաև այդ իրավունքների կենսագործման կարգերը:

Պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցում է համալսարանական կառավարման մարմիններում: ԵՊՀ կանոնադրությունը սահմանում է հոգաբարձուների խորհուրդում՝ 25 տոկոս (27-28-րդ կետեր), գիտական խորհրդում (52-րդ կետ) նրանց մասնակցության համամասնությունները, իսկ ներհամալսարանական այլ ակտերը մանրամասնում են այդ կարգավորումները (տե՛ս նշված մարմինների 2015 թ. ընդունված կանոնակարգերը[28]):

ԵՊՀ բոլոր հիմնական ստորաբաժանումների ղեկավարները ներկայացված են գիտական խորհրդում, իսկ մյուս անդամներն ընտրվում են ստորաբաժանումներում՝ ըստ հատկացված տեղերի: ԵՊՀ հիմնական ստորաբաժանումների ղեկավարները ռեկտորատի անդամ են (տե՛ս «ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգը»[29]):

Պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցում է համալսարանի ֆակուլտետների կառավարման մարմիններում: ԵՊՀ-ի, ֆակուլտետների, կրթական գործունեությամբ զբաղվող կենտրոնների կանոնադրությունները սահմանում են կառավարման մարմիններում դասախոսների մասնակցության ձևերը և կարգը, ինչպես նաև դասախոսների՝ համալսարանի ամբիոններում անդամակցության կարգը:

Ֆակուլտետների գիտական խորհուրդներում և դեկանատներում պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցության սկզբունքը ներկայացուցչությունն է՝ ի պաշտոնե և ընտրովիության սկզբունքով: Ֆակուլտետների մնացած մարմիններում, օրինակ, մեթոդական խորհրդում՝ դասախոսների մասնակցությունը ընտրովի է (տե՛ս ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը[30], ԵՊՀ մեթոդական խորհրդի[31] և ԵՊՀ ֆակուլտետի մեթոդական խորհրդի նոր խմբագրությամբ ընդունված կանոնակարգերը[32]):

Դասախոսները անդամակցության միջոցով մասնակցում են ԵՊՀ ամբիոնների կազմակերպական և ուսումնագիտական գործունեությանը: Ըստ ԵՊՀ ֆակուլտետների կանոնադրությունների՝ ամբիոնի կազմում ներգրավված են ամբիոնի պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները, դասախոսները, որոնք ամբիոնի ընտրովի վարիչի ղեկավարությամբ մասնակցում են ամբիոնի կրթական, գիտական հարցերի քննարկմանը՝ ամբիոնի նիստերում: Ամբիոնի նիստերին խորհրդակցական ձայնով մասնակցում են գիտաշխատողները, ասպիրանտները, ուսումնաօժանդակ և այլ աշխատողներ:

«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի 17-րդ հոդվածն ամրագրում է բուհերի կառավարմանը ուսանողների մասնակցության իրավունքը: ԵՊՀ ակտերը երաշխավորում են ուսանողների իրավունքները՝ ա) մասնակցելու բուհի կառավարման մարմինների աշխատանքներին, բ) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (դասընթացների և մասնագիտացման ընտրությունը):

---

[28] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/ashka.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/11/Git_khorhurd_kanonakarg.pdf
[29] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/205_REKTORATIVoroshum_14.3-2011.pdf
[30] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/09/orinakeli_kanonadrutyun.pdf
[31] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/kanonakarg-met.xorhrdi.pdf
[32] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/kanonakarg-metodakan.pdf

Համալսարանի մարմինների աշխատանքներին ուսանողների մասնակցության հիմնական ձևերն են՝

ա) ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են՝ ընտրված ԵՊՀ ուսանողական խորհրդում (ՈՒԽ, տե՛ս ԵՊՀ կանոնադրության 29-րդ և 51-րդ կետերը, ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 6-րդ կետը, ինչպես նաև ԵՊՀ ՈՒԽ-ի կանոնադրության 5.17 կետը),

բ) ԵՊՀ կանոնադրության 116-րդ կետի համաձայն գործում է ուսանողների ինքնակառավարման կազմակերպությունը՝ ՈՒԽ-ն (կանոնադրությունն ընդունվել է 2010 թ.)[33],

գ) ԵՊՀ ՈՒԽ-ի նախագահը ռեկտորատի ի պաշտոնե անդամ է (տե՛ս ԵՊՀ ռեկտորատի կանոնակարգի 6-րդ կետը[34]),

դ) ֆակուլտետների և մասնաճյուղի գիտական խորհրդների 25 %-ը ուսանողներ են՝ ընտրված ՈՒԽ-ներում (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 91-րդ, 113-րդ, 114-րդ կետերը),

ե) ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահը ֆակուլտետի դեկանատի ի պաշտոնե անդամ է (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 101-րդ կետը),

զ) ամբիոնների գիտամանկավարժական կազմի նիստերին խորհրդակցական ձայնով մասնակցում են ասպիրանտները (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 108-րդ կետը),

է) ԵՊՀ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերությունը (կանոնադրությունն ընդունվել է 20.06.2001)[35]:

Ուսանողական կառույցների գործունեության երաշխիքներից է ԵՊՀ բյուջեում նրանց մասնաբաժինը: Ուսանողների մասնակցայնության կենսագործման կառուցակարգերից է նրանց իրավունքը՝ մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման արդյունավետությունը:

Կառուցվածքային ստորաբաժանումներում դասախոսների մասնակցայնության հիմքում դրված է ժամկետայնությունը. 5 տարին մեկ նրանք վերընտրվում են, ինչն ապահովում է նոր մարդկային ռեսուրսներով համալրման հնարավորությունը: Համալսարանի հիմնական գործադիր մարմինների՝ ռեկտոր, դեկան, ամբիոնի վարիչ, թեկնածուներին ներկայացվող հիմնական պահանջը արհեստավարժությունն է (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 37-րդ, 60-րդ կետերը): Ժողովրդավարական մասնակցության հաջորդ սկզբունքը համալսարանի և նրա ստորաբաժանումների գործադիր մարմինների ու պաշտոնատար անձանց ներկայացուցչական մարմինների առջև պատասխանատվությունն ու հաշվետվողականությունն է (տե՛ս 2.4. չափորոշչի վերլուծությունը):

ԵՊՀ ՌԾ-ն մասնակցայնության արդյունավետության բարձրացման համար նախատեսել է բարեփոխիչ ծրագրերի իրականացում, որոնք հանգեցրել են ուսանողների շրջանում գիտակցված, ակտիվ և լիարժեք մասնակցության համար երաշխիքների ու պայմանների ստեղծմանը: Այդ նպատակով՝ ՈՒԽ-ն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր («Ուսանողական հիմնախնդիրները ԵՊՀ-ում» սեմինար-դասընթացներ, «Ուսանողական ռեկտորատ», «ՈՒԽ զարգացման» դպրոց, «Ուսանողական ինքնակառավարում» համաժողով և այլն), որոնք միտված են ԵՊՀ գործունեության (այդ թվում նաև՝ կառավարման) տարբեր հարցերի վերա-

[33] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/12/Kanonadrutyun-Stud_council.pdf
[34] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/205_REKTORATIVoroshum_14.3-2011.pdf
[35] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/UGY_kanonadrutyun22.pdf

բերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու ներհամալսարանական կյանքին ուսանողների մասնակցության խթանմանը: Ստեղծվել և շահագործվել է «Ուղիղ կապ ՈՒԽ-ի հետ» առցանց գործիքը (http://ysu.am/studline/hy/home):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում իր առաքելությանը և նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման ու մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ԵՊՀ առաքելությամբ սահմանված հիմնական նպատակները և խնդիրներն իրագործվում են պլանավորված՝ տարբեր ուղղություններով և ձևերով:

ԵՊՀ առաքելության ռազմավարական պլանավորման գործիքակազմը ԵՊՀ զարգացման ռազմավարական հնգամյա ծրագիրն է, որի իրավական հիմքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասն է: Այս պլանավորման իրականացման, մշտադիտարկման մասին տե՛ս Չափանիշ 1-ը:

Ռազմավարական պլանավորումը ԵՊՀ-ում կատարվում է նաև կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետներ, մասնաճյուղ, ինստիտուտներ, կենտրոններ) մակարդակով (տե՛ս հավելված 10.2):

Ուսումնական գործունեության պլանավորումն իրականացվում է երկարաժամկետ, տարեկան և ընթացիկ մակարդակներում: Պլանավորման այս ձևի իրավական հիմքը «Կրթության մասին» ՀՀ օրենքն է, որի Հոդված 14-ի 1-ին մասի համաձայն՝ բուհերում կրթությունը կազմակերպվում է ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական ժամանակացույցների և դասացուցակների հիման վրա: Գործընթացը սկսվում է կրթական ծրագրերի մշակմամբ և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից դրանց հաստատմամբ: Այնուհետև, հաստատված կրթական ծրագրերը ներկայացվում են կրթության կառավարման լիազոր մարմնին, որը տալիս է համապատասխան լիցենզիա:

Կրթական ծրագրերի հիման վրա ֆակուլտետները մշակում են ուսումնական պլանները (տե՛ս Չափորոշիչ 2.6.), որից հետո մշակվում են տարեկան ուսումնական պլանները: Վերջինիս հիման վրա ամբիոնները կատարում են դասընթացների դասավանդման, դասախոսների հաստիքների և ուսումնական բեռնվածության տարեկան պլանավորում և ներկայացնում ուսումնական ղեկավարության հաստատմանը:

Ուսումնական գործունեության ընթացիկ պլանավորման ձևեր են նաև դասացուցակները և քննաշրջանների ժամանակացույցները: Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում հաստատվում է ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը, որով հստակ սահմանվում են ուսուցման, ստուգարքների և քննությունների անցկացման, պարտքերի մարման ժամկետները, տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքների սկիզբը և ավարտը և այլն:

Ուսումնական գործընթացի օպերատիվ պլանավորման, կառավարման և կատարողականի վերահսկման համար գործում է էլեկտրոնային կառավարման «SuperVision» համակարգը, որը վերջերս լրամշակվել է (տե՛ս Չափորոշիչ 2.4):

ԵՊՀ-ում պլանավորվում է նաև գիտահետազոտական գործունեությունը (տե՛ս Չափորոշիչ 6.2), պրոֆեսորադասախոսական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացը, որը կազմակերպվում է հնգամյա ծրագրերի հիման վրա՝ արդյունք-

ների տարեկան և հնգամյա ամփոփմամբ: Վերջինիս իրականացման ու մշտադիտարկման մեխանիզմները ներկայացված են Չափանիշ 5-ի 3-րդ և 5-րդ չափորոշիչներում:

ԵՊՀ ֆինանսական պլանավորման գործիքակազմ է եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, ինչպես նաև դրա կատարողականը, որոնք քննարկվում են գիտական խորհրդում և հաստատվում հոգաբարձուների խորհրդում (տե՛ս ԵՊՀ կանոնադրության 42-րդ կետի 7-րդ ենթակետը)[36]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համալսարանում կառավարչական որոշումներն ընդունվում են նրա գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների և շահակիցների կարիքների ուսումնասիրության միջոցով ստացված տվյալների հիման վրա: Այս պահանջի կենսագործման համար ԵՊՀ-ում կառավարումն իրականացվում է կանխատեսում, պլանավորում, ընթացիկ կազմակերպում, վերահսկողություն և հաշվետվություն գործառույթներին համապատասխան: Այս շրջափուլի իրականացումը հնարավորություն է տալիս հավաքագրելու անհրաժեշտ տվյալներ և հաշվի առնելու ազդող գործոնները, ինչը նպաստում է հիմնավորված որոշումների կայացմանը և հանգեցնում դրանց կատարման արդյունավետությանը:

ԵՊՀ-ն կիրառում է իր գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման և ուսումնասիրության ԳԱՑ համակարգը (գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ, տե՛ս Չափորոշիչ 1.3.): Այն հետապնդում է համալսարանի ներքին միջավայրի վերլուծության, ուժեղ և թույլ կողմերի բացահայտման նպատակ և ապահովում է ռազմավարական ծրագրի նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների գործնականությունը, ինչպես նաև կապը ԵՊՀ արտաքին և ներքին միջավայրերի հետ: ԳԱՑ-երի օգնությամբ կատարվում է ԵՊՀ գործունեության 6 կարևոր ոլորտների ուսումնասիրություն, որի տվյալներն օգտագործվում են համապատասխան ոլորտների ռազմավարությունը մշակելիս: Վերջին տասնամյակում ԳԱՑ-երի հավաքագրումը և վերլուծությունն արդեն իսկ իրականացվել են չորս անգամ հետևյալ ժամանակահատվածների համար՝ 2003-2009 թթ., 2005-2010 թթ., 2008-2013 թթ. և 2010-2015 թթ., իսկ արդյունքները հրապարակվել են առանձին գրքույկներով: Ներկայումս պատրաստվում է ԳԱՑ-երի նոր լրակազմի հավաքագրումը և հրապարակումը 2015-2019թթ համար:

Ինչպես արդեն նշվեց, ԵՊՀ-ում տարիներ ի վեր գործում է էլեկտրոնային ավտոմատացված կառավարման տեղեկատվական SuperVision համակարգը, որը թույլ է տալիս ողջ ուսումնական գործընթացը դարձնել վերահսկելի և թափանցիկ: Գործընթացի պլանավորումը, վերահսկումը և կատարողականի ապահովումն ավելի արդյունավետ դարձնելու համար համակարգը պարբերաբար լրամշակվում է: Մասնավորապես, ընդլայնվել է դրա կիրառման տիրույթը, դասընթացներին ուսանողների հաճախելիության գրանցումը կատարվում էլեկտրոնային եղանակով, ստեղծվել է էլեկտրոնային ստուգման գրքույկների համակարգը:

[36]ԵՊՀ ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթերը հասանելի են ԵՊՀ պորտալի «Փաստաթղթեր» բաժնում՝ http://documentation.ysu.am/category/%d6%86%d5%ab%d5%b6%d5%a1%d5%b6%d5%bd%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6/

Հավաստի տվյալների հավաքագրման և այդ հիմքով արդյունավետ որոշումների կայացման կառավարչական միջոց են հաշվետվողականության հետևյալ ձևերը.

1) ռեկտորի տարեկան հաշվետվությունը հոգաբարձուների խորհրդին,

2) կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների (դեկան, մասնաճյուղի կամ ինստիտուտի տնօրեն) և ամբիոնների վարիչների հաշվետվությունն իրենց գիտխորհուրդներին (Կանոնադրություն, կետ 95, 4-րդ ենթակետ),

3) պրոֆեսորադասախոսական կազմի հաշվետվողականությունը դրսևորվում է հնգամյա պարբերականությամբ տեղի ունեցող վերընտրման գործընթացով՝ համապատասխան ակադեմիական ձեռքբերումների ներկայացմամբ,

4) ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և լիազոր պետական կառավարման մարմին ներկայացվող հաշվետվությունները և վիճակագրական տվյալները, օրինակ՝ 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափերով վիճակագրական հաշվետվությունները, վերլուծությունները և այլն:

Հաշվետվությունները՝ որպես համակարգված ամփոփում, միաժամանակ գործիք են թերությունների ու բացթողումների վերհանման, մարտահրավերների բացահայտման, առաջացած դժվարությունների վերլուծության, ինչպես նաև դրանց հաղթահարման ծրագրային պլանավորման համար:

Այդպիսով, ԵՊՀ կառավարման գործընթացում կարևորվում են նրա ներքին և արտաքին միջավայրային գործոնների վերհանումը, դրանց վերլուծությունը, միտումների բացահայտումը, և համալսարանի վրա դրանց ազդեցության կանխատեսումը: Սա հնարավորություն է տալիս ստացված տեղեկատվությունը կիրառելու հիմնավորված որոշումներ և ծրագրեր կազմելու համար: Օրինակ՝ վերջին տարիներին ժողովրդագրական և մի շարք այլ գործոնների ազդեցությամբ դիմորդների քանակի անկման ու տատանումների ուսումնասիրության արդյունքում՝ ԵՊՀ ՌԾ-ում նախատեսվեց «Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» ռազմավարական նպատակը (տե՛ս ՌԾ, խնդիրներ 7.1-7.3, էջեր 25-29)[37]: Վճարովի կրթության պայմաններում տնտեսական ճգնաժամի և դիմորդների թվաքանակի նվազման բացասական ազդեցության չեզոքացման համար ԵՊՀ-ն որդեգրեց ֆինանսական կայունության ապահովման ռազմավարական գործելաոճ (տե՛ս ՌԾ, խնդիրներ 8.1-8.2): Կրթական օրենսդրության անընդհատ փոփոխությունները ԵՊՀ-ին դրդեցին ՌԾ-ում նախատեսել առանձին խնդիր՝ 8.3-ը, որն ուղղված է իրավական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.5. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Համալսարանի առաքելության իրականացման կարևոր գործիքամիջոցներից են կառավարումը և վարչարարությունը: Դրանք ուղղված են երկու կարևոր խնդրի լուծմանը՝ ԵՊՀ-ի որպես կառույցի կազմակերպական միասնության ապահովմանը և կառավարման ընթացքում որակի շարունակական բարելավմանը:

[37] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf

ԵՊՀ կառավարման ներկա կառուցվածքի հիմքերը դրվել են 2014 թ.՝ նոր Կանոնադրությամբ: ԵՊՀ-ն պետական ոչ առևտրային կազմակերպությունից վերածվեց պետության ստեղծած հիմնադրամի[38]: ԵՊՀ կառավարումը հիմնված է ինքնակառավարման, ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի գործառույթների իրականացմամբ (տե՛ս ԵՊՀ կանոնադրության VI բաժինը):

ԵՊՀ կանոնադրությամբ սահմանված վերոնշյալ ինստիտուցիոնալ կառույցի գործունեությունը և վարչարարությունը կառուցված է՝ հիմք ունենալով գործընթացների որակի շարունակական բարելավմանը միտված պլանավորում-իրականացում-ստուգում-բարելավում (ՊԻՍԲ) շրջափուլը: Որակի կառավարման շրջափուլերով են անցնում և՛ կենտրոնական կառավարման (օրինակ՝ ՌԾ-ն), և՛ ապակենտրոնացված, և՛ֆակուլտետային գործառույթները (օրինակ՝ կրթական ծրագրի իրականացման), ինչպես նաև որակի կառավարման մեխանիզմները:

1) Լուծման կարիք ունեցող ռազմավարական, ընթացիկ և այլ խնդիրների վերհանում: Այս փուլում իրականացվում է միջավայրային (ներքին և արտաքին) վերլուծություն, գործոնների և միտումների բացահայտում: Օրինակ՝ ՌԾ-ի պարագայում արված վերլուծությունները համադրվում են նախորդ պլանի իրականացման արդյունքների հիման վրա կազմված բարելավման միջոցառումների հետ, հաշվի են առնվում նաև տարբեր մակարդակներում հաշվետվությունների արդյունքները, բարձրացված խնդիրները (տե՛ս 1.2, 1.3, 2.2 չափորոշիչները):

Կրթական ծրագրերի պարագայում իրականացվում է ընդունելության վիճակագրության, աշխատաշուկայի պահանջարկի, հասարակական պահանջի և այլ վերլուծություններ, որոնց արդյունքների հիման վրա որուշում է ընդունվում նոր կրթական ծրագիր բացելու վերաբերյալ:

2) Կառավարչական որոշման նախագծի մշակում (պլանավորում), փորձաքննություն, ընդունում և հրապարակում: Կանոնակարգումը՝ ներհամալսարանական ակտերի ընդունումը, ԵՊՀ կառավարման կարևոր գործառույթներից է: Բացի ընդհանուր մարմիններից, այդ գործառույթի համակարգված իրականացման նպատակով գործում է հատուկ մարմին՝ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովը, որը մշակում և/կամ փորձաքննության է ենթարկում համալսարանական հիմնական ակտերի (կանոնադրություն, կանոնակարգ, ընթացակարգ, աշխատակարգ և այլն) նախագծերը (տե՛ս ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձանաժողովի աշխատակարգը՝ 20.04.2012)[39]: Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման համար ստեղծվում են համահամալսարանական հատուկ հանձնաժողովներ: Կրթական ծրագրերի ստեղծման գործընթացն իրականացվում է համաձայն ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի:

3) Ընդունված կառավարչական որոշման կատարման փուլում համալսարանական մարմիններն իրենց իրավասության շրջանակներում ձեռնամուխ են լինում իրենց վրա դրված

[38] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf

[39] http://documentation.ysu.am/?s=%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6+%D5%A1%D5%AF%D5%BF%D5%A5%D6%80%D5%AB+&lang=hy

խնդիրների և գործողությունների իրականացմանը: Այսպես, 2016-2020 թթ. ՌԾ-ի իրականացումը լավագույն կերպով կազմակերպելու համար դրան զուգահեռ մշակվեց նաև ՌԾ-ի իրականացման ժամանակացույց-պլան, որում նշված էին համապատասխան խնդիրներից բխող միջոցառումների իրականացման համար պատասխանատու օղակները/մարմինները, կատարման ժամանակը, առաջընթացի գնահատման ցուցիչը[40] (կատարման որպես որակի ապահովման շրջափուլի մասին տե՛ս նաև չափորոշիչներ 2.3, 2.4.): Կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն՝ սահմանված ժամանակացույցի և պլանավորված մարդկային և նյութական ռեսուրսների ներգրավմամբ:

4) Գնահատումն իրականացնում է ընդունված կառավարչական որոշման կատարման վերահսկողություն և հաշվետվություն (համալսարանական վարչարարության մեջ վերահսկողության ու հաշվետվության սկզբունքների վերլուծության մասին տե՛ս չափորոշիչներ 2.3, 2.4.): ՌԾ-ի դեպքում յուրաքանչյուր տարվա վերջում կատարվում է ՌԾ-ի կատարողականի գնահատում/ստուգում, կազմվում է կատարողականի տարեկան զեկույց, որտեղ նշվում են նաև թերացումները և բացթողումները[41]: ՌԾ-ի ավարտական փուլում կատարողական զեկույցների հիման վրա իրականացվում է ՌԾ-ի ամբողջական գնահատում:

Կրթական ծրագրի իրականացման ընթացքում ևս կատարվում է որակի և արդյունավետության գնահատում՝ ինչպես առանձին դասընթացների (ուսանողական հարցումներ կիսամյակի ընթացքում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ), այնպես էլ ամբողջական ծրագրի՝ ծրագրի ավարտին (շրջանավարտների բավարարվածության հարցումներ՝ ԵՊՀ-ում ստացած իրենց կրթությունից, կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգ և համապատասխան զեկույցի կազմում): Ավելի մանրամասն տե՛ս Չափանիշ 3:

5) Բարելավումը որպես որակի ապահովման կառավարչական գործընթացի փուլ հաջորդում է գնահատմանը և սկիզբ է դնում գնահատման արդյունքում վեր հանված խնդիրների, չիրականացված ծրագրերի բացահայտմանը: Այսպիսով, սկսվում է նոր կառավարչական ակտի մշակման գործընթացը, այսինքն՝ մշակվում է բարելավող միջոցառումների ծրագիր/ցանկ, որը հիմք է ծառայում հաջորդ ՌԾ-ն կազմելու համար:

Կրթական ծրագերի գնահատումների արդյունքում ևս կազմվում է ծրագրի բարելավման միջոցառումների պլանը, ինչը հիմք է հանդիսանում ծրագրի հաջորդ վերանայման համար (տե՛ս ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգը[42]): Ավելի մանրամասն տե՛ս Չափանիշ 10:

ԵՊՀ քաղաքականությունն ու ընթացակարգերն իրականացվում են կառավարման ընդհանուր սկզբունքներին համաձայն: ՌԾ-ում ամրագրված հիմնական նպատակները դրված են ԵՊՀ գործունեության հիմքում: ԵՊՀ կառավարումը և վարչարարությունը խարսխված են նաև օրինականության, թափանցիկության, հասարակական կարծիքի հետ հաշվի նստելու սկզբունքների վրա (տե՛ս Չափորոշիչ 1.2): ԵՊՀ-ում գործում է Հանրային կապերի

[40] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf
[41] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/05/Kataroghakan_2019.pdf, http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/Kataroghakan_2018.pdf
[42] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf

ծառայությունը, որը կատարում է ներքին և արտաքին իրազեկման, համալսարանին առնչվող հանրային տեղեկատվության հավաքագրման գործառույթներ[43]:

Համալսարանի վարչարարությունը կառուցված է նաև կառավարման ոլորտում կիրառվող կազմակերպական մի շարք այլ սկզբունքների վրա.

1. Կառավարման մարմինների գործառույթների ու լիազորությունների տարբերակման և ամրագրման սկզբունքը: Ներքին ակտերը սահմանում են բոլոր մարմինների իրավասությունը, կազմը, աշխատակարգի ու կանոնակարգի հիմունքները: Հիմնադրամ դառնալուց հետո ԵՊՀ-ն ջանացել է հնարավորինս հստակեցնել կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց տնօրինմանը ենթակա հարցերի շրջանակը և դրանց փոխգործակցությունը (տե՛ս Չափորոշիչ 2.1.):

2. Կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցման սկզբունքը: Կառավարման համակարգում գերակայում են կոլեգիալ մարմինները, իսկ միանձնյա մարմինները ընտրովի, ժամկետային, հաշվետու և պատասխանատու են:

3. Կենտրոնացման և ապակենտրոնացման զուգակցումը՝ ապահովելով ստորադասությունը: Կառավարման համակարգը ստորաբաժանումներին օժտում է որոշակի ինքնուրույնությամբ, այդ թվում նաև ֆինանսական:

Այսպիսով, ԵՊՀ-ում քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով, այն է՝ կանխատեսում, պլանավորում, իրականացում, գնահատում, վերահսկողություն ու հաշվետվություն, բարելավում: Նշված գործընթացների իրականացման համար հիմնադրամի վերածվելուց հետո ընդունվել են կառավարման մարմինների գործառույթները և աշխատակարգերը կարգավորող բազմաթիվ կանոնակարգեր, ընթացակարգեր, այլ ակտեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.6. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանզմներ:

ԵՊՀ-ում գործում են կրթական ծրագրերի և հարակից գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և արդյունավետության գնահատման հետևյալ մեխանիզմները.

ա) մասնագիտական կրթական ծրագրերի հիմնավորվածությունը և որակի ապահովումը դրանց մշակման փուլում (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը», 2014 թ.[44]),

բ) ընթացիկ մշտադիտարկում և գնահատում, որոնք ապահովում են մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը և որակը դրանց իրականացման փուլում՝ ըստ «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի»[45], 2014 և 2019 թթ. (տե՛ս նաև 2.2 և 2.5 չափորոշիչների վերլուծությունը),

[43]Կանոնադրությունը տե՛ս http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Hasarakaynutyan_het_kaperi-ev-lratvutyan_varchutyan_kanonadrutyun.pdf

[44] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Program-Approval-Regulation_26.01.2014.pdf

[45] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf

գ) պարբերական վերանայում, ինչը երաշխավորում է մասնագիտական կրթական ծրագրերի շարունակական բարելավումը, արդիականությունը և պահանջարկվածությունը (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»[46], 2014 և 2019 թթ.):

ԵՊՀ կրթական ծրագրերի արդյունավետության և որակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կիրառման մեխանիզմները մանրամասն ներկայացված են 3-րդ չափանիշում (ավելի կոնկրետ՝ 3.5. չափորոշչում), ինչպես նաև 10-րդ չափանիշում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.7. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտական կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ ու անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հաշվի առնելով մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ թարմ տեղեկատվության տարածման կարևորությունը՝ ԵՊՀ-ն արդեն 15 տարի իրականացնում է դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածման բազմաշերտ քաղաքականություն: Վերջինիս նախնական փուլը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման նպատակով կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն է (տե՛ս ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության կանոնադրությունը, 08.07.2010[47]): Այդ նպատակով պատրաստվում և տարածվում են դիմորդի ուղեցույցներ, ֆակուլտետների և մասնագիտությունների մասին պատմող տեսասկավառակներ և այլն: Այս գործառույթն իրականացվում է նաև ԵՊՀ պաշտոնական կայքի միջոցով, որտեղ զետեղված է կրթական ծրագրերին վերաբերող ամբողջ տեղեկույթը, առկա է նաև հարց և պատասխանի էջը (ավելի մանրամասն տե՛ս Չափորոշիչ 4.1):

Սակայն գործընթացը սրանով չի ավարտվում: Համալսարանի կանոնադրությունը երաշխավորում է, որ սովորողն իրավունք ունի ստանալու ամբողջական և մանրամասն տեղեկատվություն մասնագիտական կրթական ծրագրի բովանդակության վերաբերյալ, ինչպես նաև մասնակցել կրթական ծրագրի բաց և ազատ քննարկումներին: Հետևաբար քաղաքականության հաջորդ փուլը մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տարածումն է, որը կատարվում է մի քանի ուղղություններով:

1. Նոր ընդունված ուսանողների համար իրականացվում է կրթական ծրագրերի վերաբերյալ սկզբնական տեղեկույթի տարածման հատուկ քաղաքականություն: Կիրառվող կառուցակարգերից է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» փաթեթը, որը յուրաքանչյուր ուստարում նորացվում և ուսանողներին հասանելի է դարձվում ԵՊՀ կայքում[48]: Առաջին կուրսեցիների համար անցկացվում են կողմնորոշիչ դասախոսություններ: Դրան է միտված նաև ուսումնական խորհրդատուների (կուրատորների) գործունեությունը:

2. Ուսումնառության ընթացքում տրամադրվող տեղեկատվությունն ավելի է խորացվում: Մասնավորապես, գործում են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերը, որոնք ամենայն մանրամասնությամբ ներկայացնում են ծրագրի կարևորա-

[46] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf
[47] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Minchhamalsaranakan_krtutyan_varchutyan_kanonadrutyun.pdf
[48] Տե՛ս http://ysu.am/education/hy

գույն բնութագրերը՝ նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող ձևերը և մեթոդները և այլն (տե՛ս չափորոշիչներ 3.1-3.3)։ Յուրաքանչյուր կրթական ծրագրում ներառված է «Մասնագիտության ներածություն» կողմնորոշիչ դասընթացը։

Մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումների օբյեկտիվությունը և տարածման մատչելիությունը գնահատող կառուցակարգեր են.

ա) կրթական ծրագրերի պոտենցիալ շահառուների կարծիքների, շահերի և պահանջմունքների բացահայտման մեխանիզմներ են շահառուների մասնակցությունը համալսարանի կառավարմանը (տե՛ս Չափորոշիչ 2.2), ուսանողական ինքնավարությունը, ուսանողական կազմակերպությունների գործունեությունը, մինչհամալսարանական կրթության վարչության գործունեությունը (դիմորդների մասով), գործատուների հետ համագործակցության զանազան ձևերը և այլն (տե՛ս Չափորոշիչ 1.2),

բ) կրթական ծրագրերի մասին հանրային կարծիքի և գնահատականների բացահայտման կառուցակարգ է սոցիալական ցանցերում արձագանքների ուսումնասիրությունը, այդ թվում նաև՝ ԵՊՀ Հանրային կապերի ծառայության միջոցով,

գ) ուսանողների շրջանում անցկացվող անանուն հարցումները, որոնց ձևաթերթերում կան ՄԿԾ-ի որակական կողմերին վերաբերող հարցադրումներ,

դ) ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ անանուն հարցումները, որտեղ մի ամբողջ բաժին նվիրված է հենց կրթական ծրագրերին և դրանց վերաբերյալ դիմորդի իրազեկվածությանը,

ե) պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պարբերական հանդիպումները ուսանողների և ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ,

զ) ուսումնական խորհրդատուի, կրթական ծրագրի ղեկավարի, իսկ մագիստրատուրայում գիտական սեմինարավարի ինստիտուտները նույնպես միտված են կրթական ծրագրի հիմնադրույթների և առանձնահատկությունների վերաբերյալ ուսանողներին տեղեկատվություն և ուղղորդող խորհրդատվություն տրամադրելուն:

ԵՊՀ-ում կրթական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածման, դրա մատչելիության և օբյեկտիվության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման միջոցներ են նաև ԵՊՀ պորտալը և նրանում գործող զանազան բաժինները, օրինակ՝ «Հարց-պատասխանը», որտեղ ուսանողներին հուզող հարցերը, ինչպես նաև հայերեն, անգլերեն, ռուսերեն նամակները անմիջապես ստանում են իրենց պատասխանները: «Միջազգային» կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրվում է ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող տեղեկատվություն[49]:

ԵՊՀ-ում կրթական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տարածման, դրա մատչելիության և օբյեկտիվության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման կարևոր գործիք են սոցիալական ցանցերում ակտիվորեն գործող ԵՊՀ պաշտոնական էջերը: ԵՊՀ պորտալում հրապարակված նորությունները տեղադրվում են նաև ԵՊՀ «Facebook»-ի և «Twitter»-ի էջերում: «Facebook»-ի (http://www.facebook.com/ysu.am) տիրույթում բազմաթիվ

[49] http://ysu.am/international/hy

այցելուներ բուռն քննարկումներ են ծավալում, էջի հետևորդների թիվն արդեն իսկ 52.000 է, որը նախորդ ուստարվա համեմատ աճել է մոտ 10.000-ով: Շարունակվել է «Twitter» (https://twitter.com/YSU_official) սոցիալական կայքի վարումը: Մուտքագրվել է շուրջ 2.224 նորություն (եռալեզու): 2017 թ. մայիսից գործարկվել է ԵՊՀ «Ինստագրամի»՝ https://www.instagram.com/ysu_yerevan_state_university պաշտոնական էջը, որի հետևորդների թիվը 2019 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ հասել է 1.760-ի: ԵՊՀ «Youtube» տիրույթում հաշվետու ուստարում մուտքագրվել է 193 տեսանյութ: Մուտքագրված տեսանյութերի ընդ-հանուր թիվը հասել է 392-ի:

ԵՊՀ-ում կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման այս և այլ ձևերի մասին առավել մանրամասն տե՛ս 4.1-4.3., 8.1, 8.3 և 10.6 չափորոշիչների վերաբերյալ վերլուծություններում:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 2-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Նպատակների իրականացման համար ԵՊՀ-ն ունի անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների կառավարման գործուն կառուցակարգեր: 2. ԵՊՀ-ն ունի կառավարման բազմակամակարդակ մասնակցային համակարգ, ինչը շահակիցներին հնարավորություն է տալիս մասնակցելու բուհին առնչվող կարևորագույն որոշումների կայացմանը: 3. ԵՊՀ-ն ունի ռազմավարական պլանավորման արմատավորված փորձ, որը միջոց է նրա հիմնական առաքելությունը երեք կարևորագույն ոլորտներում՝ կրթություն, հետազոտություն և հանրային ներգրավում, հետևողականորեն իրականացնելու համար: 4. Հիմնական կառավարչական որոշումների ընդունում՝ հիմնված ներքին և արտաքին միջավայրային վերլուծության և շահակիցների կարիքների բացահայտման արդյունքում ստացված հավաստի տվյալ-ների վրա: 5. Ուսումնական, գիտահետազոտական և վարչարարական գործընթացների կառավարման թվային համակարգերի (SuperVision, Mulbery, Intranet և այլն) առկայություն:	1. ԵՊՀ ներքին և արտաքին միջավայրային վերլուծություններ իրականացնող մեկ միասնական ինստիտուցիոնալ կառույցի բացակայություն: 2. ԵՊՀ կառավարման համակարգի կենտրոնացման բարձր մակարդակ: 3. ԵՊՀ կառավարման մարմինների ու պաշտանատար անձանց կատարողականի գնահատման որակական և քանակական հստակ չափանիշների բացակայություն: 4. PDCA կառավարման շրջափուլի ոչ լիարժեք իրականացում ֆակուլտետների և ամբիոնների մակարդակում: 5. Կառավարման համակարգում շահերի բախումը բացառող, սուբյեկտիվ մոտեցումները կանխարգելող մեխանիզմների բացակայություն: 6. Ուսումնառության գործընթացի կառավարման թվային հարթակների (Moodle, Google Classroom, Blackboard և այլն) կիրառման ցածր մակարդակ: 7. Կառավարման համակարգում կատարողականի խրախուսման

6. Կառավարման համակարգում վերից վար վերահսկողության և վարից վեր հաշվետվողականության մեխանիզմների առկայություն: 7. ԵՊՀ կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը և ներքին շահակիցներին տրամադրվող տեղեկատվության բազմաշերտ համակարգ:	մեխանիզմների բացակայություն: 8. Որոշ կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութների կրկնություն: 9. Կայացած, կառավարչական ու գիտական պոտենցիալ ունեցող կադրերի արտահոսք, անփորձ կադրերի թվաքանակի էական աճ:
Հնարավորությունները	**Վտանգները**
1. ՀՀ և օտարերկրյա բուհերի կառավարման համակարգերի հետ բենչմարքինգի իրականացում: 2. Վարչական կազմի կառավարչական կարողությունների ու հմտությունների զարգացում վերապատրաստման ծրագրերի և դասընթացների միջոցով: 3. Վարչական կազմի վերապատրաստում և փորձի փոխանակում արտասահմանյան գործընկեր բուհերում՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակում: 4. Անցում վարչական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ձևաչափին:	1. Բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրության սպասվելիք փոփոխությունները, որոնք անորոշության մեջ են պահում ԵՊՀ ռազմավարական նոր ուղղությունները: 2. Օտարերկրյա բուհերի կառավարման համակարգերի ուղղակի ներդրման պարտադրումը՝ առանց հաշվի առնելու բուհի առանձնահատկությունները: 3. Բուհի կառավարման բարձրագույն մարմիններում դասախոսական կազմի և ուսանողների ներկայացուցիչների մասնաբաժնի նվազման միտում: 4. Ոչ մրցակցային կադրային քաղաքականության առկայություն: 5. Կառավարման շուկայական գործելաոճի/մոդելի ներթափանցումը բուհ, ինչի հետևանքով երկարաժամկետ ռազմավարական ծրագրերին փոխարինում են կարճաժամկետ մարտավարական ծրագրերը, իսկ համալսարանական հիմնարար կրթությանը՝ մարտավար-կատարող մասնագետների պատրաստումը:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիներ

1. ԵՊՀ կառավարման համակարգում ներմուծել ռազմավարական-երկարաժամկետ (10-15 տարի), միջնաժամկետ (5 տարի), ընթացիկ պլանավորման ու կառավարման համա-կարգ:
2. Ստեղծել ԵՊՀ ներքին և արտաքին միջավայրային վերլուծություններ իրականացնող միասնական ինստիտուցիոնալ կառույց:

3. Լավարկել ԵՊՀ կառավարման համակարգը, վարչարարությունը, կառուցվածքը, այն նպատակամղել որակի ու արդյունավետության ապահովմանը, մասնավորապես՝ հավասարակշռել կենտրոնացված ու ստորաբաժանումների ապակենտրանացված կառավարումը, մշակել PDCA կառավարման հիմնական շրջափուլը ստորաբաժանումների մակարդակում լիարժեք իրականացման ծրագիր, վերացնել կառավարման մարմինների ու ստորաբաժանումների միջև առկա գործառութային կրկնությունը և այլն:
4. Կառավարման համակարգում ներմուծել ԵՊՀ կառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կատարողականի գնահատման որակական և քանակական հստակ չափանիշներ, հստակեցնել հաշվետվության ձևերը, ներմուծել կառավարման համակարգում կատարողականի խրախուսման մեխանիզմներ:
5. Մշակել կառավարչական ու գիտական պոտենցիալ, մանակավարժական փորձ ունեցող կադրերի արտահոսքի կանխման միջոցառումների շուտափույթ ծրագիր:

ՉԱՓԱՆԻՇ 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ, ԿԱԶՄՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ԵՎ ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ

ԵՊՀ առաքելությամբ սահմանված գործունեությունը, որպես բազմապրոֆիլ դասական համալսարան, նպատակաուղղված է հայագիտական, բնագիտական, տեխնիկական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների տարբեր ուղղություններով կրթական ծրագրերի, ինչպես նաև հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների իրականացմանը: ԵՊՀ-ն ձգտում է տրամադրելու որակյալ կրթություն, իրականացնելու ուսանողամետ ուսուցում և առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ հիմնված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի ու նորարարության վրա, որոնք սահմանված են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ)[1] «Որակյալ կրթություն» նպատակի խնդիրներում և համապատասխան գործողություններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.1. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ԵՊՀ-ն իրականացնում է կրթական ծրագրեր բոլոր երեք մակարդակներում (բակալավրի, մագիստրոսի և գիտությունների թեկնածու կրթական աստիճաններում) իր առաքելությամբ սահմանված գործունեության հիմնական ուղղություններին համապատասխան (տե՛ս ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ)՝ զարկ տալով ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտությունների զարգացմանը: Ընդ որում, ԵՊՀ-ն այսօր էլ մի շարք հիմնարար ուղղություններով (օրինակ, հայագիտություն, երկրաբանություն, ռադիոֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլն) մասնագետների պատրաստմամբ առաջատարն է երկրում: Համալսարանի կրթական ծրագրեր իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներում 2019/20 ուստարում իրականացվում է շուրջ 244 կրթական ծրագիր, որոնցից 62-ը՝ բակալավրի, 120-ը՝ մագիստրոսի, 62-ը՝ ասպիրանտուրայի (գիտությունների թեկնածու) կրթական աստիճաններում (տե՛ս Հավելված 3.1), ընդ որում, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական ուղղվածությամբ՝ 60, սոցիալ-տնտեսագիտական՝ 32 և հումանիտար ուղղվածությամբ՝ 82 բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրեր: Բոլոր երեք մակարդակներում իրականացվող կրթական ծրագրերը ներառում են հետազոտական բաղադրիչ, ինչն ուսանողներին հնարավորություն է ընձեռում ուսումնառությունը դարձնել հետազոտամետ և ընդգրկվել համալսարանում իրականացվող հիմնարար ու կիրառական գիտական հետազոտություններում:

ԵՊՀ-ում կրթական ծրագրերը մշակելիս հիմք են ընդունվել ինչպես ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Բարձրագույն մասնագիտական կրթության պետական ընդհանուր

[1] ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր (ՌԾ): Երևան, ԵՊՀ, 2015 http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf

չափորոշիչը»[2] և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված չափորոշիչների ձևաչափը[3], այնպես էլ՝ ՀՀ կառավարության 2016 թ. հուլիսի 7-ի N 714-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը»[4] և որոշ մասնագիտական ոլորտների (Իրավագիտություն, Ֆիզիկա, Հոգեբանություն, Սոցիոլոգիա, Մանկավարժություն և այլն) համար ընդունված (հաստատված) որակավորումների ոլորտային շրջանակները:

Ներքին (Ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց, 2013)[5] և արտաքին գնահատման արդյունքում (ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույց, 2013), ինչպես նաև վերջինիս երաշխավորությունների հիման վրա կազմված բարելավման ծրագրին և ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ին համահունչ՝ ԵՊՀ-ում իրականացվեց ծրագրային բարեփոխումների հերթական շրջափուլը: 2015/16 ուստարվանից մեկնարկեցին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և ուսումնական գործընթացի կազմակերպման նորմատիվ փաստաթղթերի վերանայման գործընթացները: Արդյունքում, մշակվեցին և ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվեցին «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2017 թ. մայիս), «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» (2016 թ. հուլիս), «ԵՊՀ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ» (2017 թ. հոկտեմբեր), «ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ» (2017 թ. մարտ), «ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգ» (2018 թ. մայիս) նորմատիվ փաստաթղթերը[6]:

Վերոնշյալ փաստաթղթերի և սահմանված քաղաքականության հիման վրա, ինչպես նաև ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ի Որակյալ կրթություն նպատակի խնդիր 1.1-ի՝ «Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ» համաձայն՝ վերամշակվեցին և նորովի մշակվեցին կրթական վերջնարդյունքների վրա հիմնված շուրջ 130 մագիստրոսի (2016/17 ուստարվանից) և 60 բակալավրի (2017/18 ուստարվանից) կրթական ծրագրեր՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային առարկայական հենանիշերը (բենչմարք):

Կրթական ծրագրերի մշակման/վերամշակման և հաստատման գործընթացներն իրականացվել են «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի»[7] (2014 թ.) դրույթներին

---

[2] ՀՀ Կառավարության որոշում N 24, 16 հունվարի 2001 թվականի // Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=49003

[3] http://www.irtek.am/views/act.aspx?aid=22040 ուժը կորցրել է հաջորդ հղման տակ գտնվող փաստաթղթի հիմքով https://www.arlis.am/documentview.aspx?docid=13646

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107371

[5] ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց, 2013թ. /http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_Inst_SER_Final_Arm.pdf

[6] Մշակված փաստաթղթերն ամփոփված են «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացը կարգավորող փաստաթղթեր» ձեռնարկում, ԵՊՀ հրատ, 2018թ., որն ամեն տարի թարմացվում է: Էլեկտրոնային տարբերակը հասանելի է http://www.ysu.am/uploaded/Bak_mag_doc.pdf հղմամբ:

[7] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Program-Approval-Regulation_26.01.2014.pdf

(ծրագրի մշակման արտոնում, ծրագրի փաստաթղթային փաթեթի ստեղծում, փարձաքննություն և հաստատում) համապատասխան: Ծրագրերի մշակման աշխատանքային խմբերի համար մեթոդական ուղեցույցեր են հանդիսացել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ» (2010 թ.)[8], «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույց» (2016 թ.),[9] «Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում. դասախոսի ձեռնարկ» (Երևան, 2017 թ.)[10] ուղեցույցներն ու ձեռնարկները, ինչպես նաև «ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»[6] նորմատիվ փաստաթղթերը:

Ներկայումս ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի բոլոր կրթական ծրագրերն ունեն սահմանված ձևաչափի մասնագրեր (օրինակելի ձևը տե՛ս Հավելված 3.2), որտեղ ներկայացված են ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները, նպատակները, կրթական վերջնարդյունքները (գիտելիք, կարողություն, հմտություն)՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող վերջնարդյունքների, կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս, ծրագրի ուսումնական պլանը (կառուցվածքը և բովանդակությունը) և քարտեզը, որի օգնությամբ ծրագրի յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք կապակցվում է այն ձևավորող դասընթացների կամ ուսումնական մոդուլների հետ, ինչպես նաև ծրագրի բոլոր դասընթացների և այլ կրթական մոդուլների նկարագրիչները: Օրինակ, բակալավրի և մագիստրոսի կրթական մակարդակներում ՀՀ ԲԿ ՈԱԾ-ի «Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ» կրթական նկարագրիչի պահանջի ապահովման համար ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքում՝ Ընդհանուր կրթական կառուցամասի պարտադիր դասընթացներում ներառված են «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ», «Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք», իսկ մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական կառուցամասի ընդհանուր դասընթացներում՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում» դասընթացները համապատասխան կրթական վերջնարդյունքներով: ՀՀ ԲԿ ՈԱԾ-ի առանձին նկարագրիչների ապահովմանն է ուղղված նաև կրթական ծրագրերի կառուցվածքում մի շարք այլ պարտադիր բաղադրիչների և դասընթացների ներառումը, ինպիսիք են, օրինակ, մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական կառուցամասում՝ «Հետազոտության պլանավորում և մեթոդներ», «Մասնագիտության արդի հիմնախնդիրներ», հետազոտական կառուցամասում՝ «Գիտական սեմինար», «Մասնագիտական պրակտիկա», բակալավրի կրթական ծրագրում՝ կուրսային աշխատանքներ[11], ուսումնական և մասնագիտական պրակտիկաներ և այլն:

Կրթական ծրագրերը մշակելիս և վերանայելիս կատարվել է առաջատար բուհերի համանման ծրագրերի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) և հաշվի է առնվել նրանց փորձը, ինչի մասին ավելի մանրամասն ներկայացված է Չափորոշիչ 3.4-ում: Այդ տվյալները ներկայացված են յուրաքանչյուր կրթական ծրագրի մասնագրի 16-րդ բաժնում: Հարկ է նշել սակայն, որ այս գործընթացը դեռևս ֆորմալ առումով հստակ կանոնակարգված չէ: Հաշվի

[8] http://ysu.am/files/quality/Guidelines_on_Program_Design.pdf
[9] http://ysu.am/files/quality/Guide_for_Program_Specification&Course_Descriptors.pdf
[10] http://armenqa.am/wp-content/uploads/2017/06/Program-Development-Guide.pdf
[11] 2020/21 ուստարվանից բակալավրի կրթական ծրագրերում կուրսային աշխատանքը փոխարինվելու է ինքնուրույն հետազոտական բաղադրիչով՝ ներդրվելով ծրագրի մի քանի դասընթացներում:

առնելով այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ նախատեսվում է ներմուծել կրթական ծրագրերի պարտադիր հավատարմագրում, ԵՊՀ-ն նախատեսում է մշակել ծրագրերի բենչմարքինգի իրականացման ֆորմալ ընթացակարգեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ԵՊՀ-ում ծրագրային վերջին բարեփոխումներն իրականացվել են «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգի» (2014 թ.)[7] և «Կրթական ծրագրի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցի» (2016 թ.)[9] պահանջներին համաձայն, ինչպես նաև հաշվի առնելով ԵՊՀ-ում գործող նորմատիվային նոր փաստաթղթերը (տե՛ս Չափորոշիչ 3.1): Այս փուլում, կրթական ծրագրերի և դրանց ուսումնական պլանների վերանայման ընթացքում անհրաժեշտություն առաջացավ նաև վերագնահատելու համալսարանում տարածված դասավանդման և ուսումնառության ավանդական ձևերն ու փորձը և ներդնելու նորարարական այնպիսի մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերումը:

«Կրթական ծրագրերի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցում» (ԵՊՀ ՈԱԿ, 2016) և «Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում. դասախոսի ձեռնարկում» (Երևան, 2017)[10] տրված են մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակման, կրթական ծրագրերի և դասընթացների նպատակների սահմանման ու կրթական վերջնարդյունքների ձևակերպման, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության սկզբունքները, որոնցով առաջնորդվել են կրթական ծրագրեր մշակող աշխատանքային խմբերը, ծրագրերն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումները և դասախոսները: Կրթական ծրագրերի մասնագրերում յուրաքանչյուր դասընթացի նկարագրության մեջ պարտադիր պահանջ է սահմանված նկարագրել դասավանդման և ուսումնառության մեթոդները՝ համահունչ ծրագրի կրթական վերջնարդյունքներին:

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 4 կրթական ծրագրերի դասընթացների նկարագրիչներում ներկայացված են կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները (տե՛ս Հավելված 3.3):

Կրթական ծրագրերի և դասընթացների բազմազանությունը համապատասխանաբար պահանջում է դասավանդման և ուսումնառության տարբեր ձևեր: Դրանք պարտադիր սահմանվում են դասընթացների նկարագրիչներում, որտեղ առանձին բաժին է հատկացված դասընթացի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների նկարագրմանը (Հավելված 3.3, դասընթացի նկարագրիչ, կետ 11): Օրինակ, մասնագիտական տեսական գիտելիքների ձեռքբերման համար հիմնականում նշվում են դասախոսություններ, սեմինարներ, դասախոսի կողմից հանձնարարվող լրացուցիչ գրականության մշակում, իսկ գործնական մասնագիտական գիտելիքների համար՝ գործնական և լաբորատոր պարապմունքներ, տարբեր տեսակի պրակտիկաներ, խմբային նախագծերի կատարում, քննարկումներ, հետազոտական բաղադրիչ, կուրսային աշխատանքներ, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստում և այլն: Ընդհանրական

(փոխանցելի) կարողությունների ձևավորման համար առաջարկվում են թիմային աշխատանքներ, էսսեներ, թեմատիկ ռեֆերատներ, բանավոր ներկայացումներ, լուսացուցադրություններ, ինքնուրույն նախագծերի կատարում և այլ մեթոդներ:

ԵՊՀ կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները տեղադրվում են ուսումնական գործընթացն իրականացնող ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցներում», որոնք հասանելի են ԵՊՀ պորտալի «Կրթություն» էջում (http://www.ysu.am/education/hy) և առանձին ֆակուլտետների էջերի կրթության բաժնում:

ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցի երաշխավորությունների իրականացման բարելավման ծրագրի և ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ի համապատասխան նպատակների հիման վրա ԵՊՀ-ում նախատեսված էր ստեղծել դասավանդման և ուսումնառության (դասավանդման աջակցման) համահամալսարանական կենտրոն: ԵՊՀ ՌԾ-ի Խնդիր 1.2-ի 2-րդ կետի՝ «Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը»[1], իրականացման նպատակով ԵՊՀ ՈԱ կենտրոնը նախաձեռնեց և ստացավ Եվրամիության ERASMUS+ PRINTeL նախագիծը «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով»[12]: Այս նախագծի հիմնական նպատակն է բարելավել ուսանողի ուսումնական փորձառությունը, օժանդակել դասավանդման և ուսումնառության զարգացմանն ու նորարարությանը, աջակցել դասավանդման տեխնոլոգիաների և հետազոտության ինտեգրացիային, ինչպես նաև լավագույն փորձի տարածմանը: Հաշվի առնելով նախագծում ընդգրկված եվրոպական առաջատար բուհերի լավագույն փորձը՝ մշակվեց և 2019 թ. փետրվարին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ հաստատվեց ԵՊՀ հետբուհական և լրացուցիչ կրթության վարչության 2019/21 թթ. գործունեության նոր ծրագիրը, որտեղ ներառվեցին դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն ուղղված 5 դասընթաց՝ Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում, Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնացում, Տեսանյութերը որպես դասավանդման գործիք, Ակտիվ ուսուցում «շրջված դասարանում», Համակցված դասավանդում և ուսուցում: Այս դասընթացները 2019 թ.-ից ներառվեցին «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում»[13]՝ դասավանդման և ուսումնառության արդյունավետ մեթոդների ընտրության հարցում դասախոսներին կողմնորոշելու և օժանդակելու նպատակով:

ԵՊՀ-ում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր կիսամյակ առցանց իրականացվում են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներ, որոնց արդյունքները մանրամասն ներկայացված են չափորոշիչ 5.3-ում:

---

[12] http://www.printel.am/

[13] «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2016-2021թթ.)», 2007թ., վերանայվել է 2011, 2016, 2019թթ. / http://extension.ysu.am/images/pdf/1473058982-3Tsragir.pdf

Հարցման արդյունքները հիմք են հանդիսանում դասավանդման գործընթացի շարունակական բարելավման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

2015/16 ուստարվանից մեկնարկած բարեփոխումների շրջափուլում վերանայվեց նաև ԵՊՀ ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման քաղաքականությունը, որը սահմանված է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից (2017 թ. մայիս) հաստատված «ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում»[6], ինչպես նաև «ԵՊՀ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգում» (2017 թ. հոկտեմբեր)[14], «ԵՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգում» (2017 թ. մարտ)[15] և «ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպման և անցկացման կարգում» (2018 թ. մայիս)[6]:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ՌԾ-ի Խնդիր 1.2-ի[1] գործողությունների իրականացման, ինչպես նաև գործող գնահատման համակարգի առկա խնդիրների վերհանման նպատակով համալսարանի ստորաբաժանումներում իրականացվել են հարցումներ և ստացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ: Ստացված տվյալների հիման վրա վերոնշյալ կարգերում սահմանվել են գնահատման և բողոքարկման նոր ընթացակարգեր: Սահմանվել է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, դրա կիրարկման հիմնական նպատակները, գնահատման բաղադրամասերը և ձևերը (տե՛ս Ուսումնական գործընթացի կազմակերպման Կարգի 3-րդ կետը)[6]: Համաձայն նշված կարգի և ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման և ուսումնառության մեթոդներից՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվել են 4 խմբի՝ եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման, առանց ընթացիկ գնահատման և ստուգարքային:

Կրթական ծրագրի մասնագրի (Հավելված 3.3) մաս կազմող դասընթացի նկարագրիչի 12-րդ կետում սահմանված են գնահատման մեթոդները և չափանիշները, որտեղ պահանջ է դրված նկարագրել տվյալ դասընթացի վերջնարդյունքների ձեռքբերման, գիտելիքների և կարողությունների գնահատման մեթոդները, ձևերը և չափանիշները: Մասնագրերի վերլուծությունները ցույց են տալիս, որ, ընդհանուր առմամբ, կրթական ծրագրի դասընթացի նկարագրիչներում մանրամասն և հստակ ներկայացված են և՛ գնահատման մեթոդները, և՛ չափանիշները՝ համահունչ ակնկալվող կրթական վերջնարդյունքներին:

Ուսանողների գիտելիքների ու կարողությունների ստուգման ձևերը, գնահատման համակարգը և ակադեմիական ազնվության խնդիրները պարբերաբար քննարկվում են կրթական ստորաբաժանումների և ԵՊՀ գիտական խորհուրդներում: 2017/18 ուստարվանից ներդրված գնահատման նոր համակարգի արդյունավետությունը պարզելու և խնդիրները վերհանելու նպատակով 2019/20 ուստարվա առաջին կիսամյակի ավարտին իրականացվեց

[14] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg-1-4.pdf
[15] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/03/magistrosakan_tezi_karg.pdf

հարցում երկու հիմնական շահակիցների՝ ուսանողների և դասախոսների շրջանում (ուսանողների շրջանում հարցմանը կամավորության սկզբունքով մասնակցել է ավելի քան 500 ուսանող, իսկ պրոֆեսորադասախոսական կազմից՝ 190 դասախոս)։ Հարցման արդյունքում պարզվեց, որ դասախոսները և ուսանողները հիմնականում ընդունելի են համարում ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման գործող համակարգը և 20 միավորանոց սանդղակը։ Սակայն գտնում են, որ այն որոշակի լրամշակումների և փոփոխությունների կարիք ունի։ Հարցված և՛ ուսանողները, և՛ դասախոսները հիմնականում անարդյունավետ են համարում ընթացիկ և եզրափակիչ քննությունների գրավոր անցկացումը։ Հարցվածների մեծ մասն առաջարկում է վերանայել գնահատման քայլի սահմանված 0.5 միավորը, հանել սահմանված 2-րդ ընթացիկ քննությունը, գնահատման համակարգում ներառել ուսանողների ինքնուրույն աշխատանքը, այդ թվում՝ էսսեների, խմբային և անհատական աշխատանքների գնահատման ձևով, բանավոր և գրավոր մասնագիտական լեզվին տիրապետելու կարողությունը և այլն։ Առաջարկվում է նաև գնահատման համակարգում վերականգնել լսարանում ուսանողի ներկայությանը տրվող միավորները։

Ուսանողների գնահատման համակարգի արդյունավետության և օբյեկտիվության վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է նաև ուսանողների և շրջանավարտների հարցումներից ստացվող (տե՛ս Չափորոշիչ 5.3) հետադարձ կապի օգնությամբ։

Համալսարանում 2017/18 ուստարվանից ներդրվեց նաև մագիստրոսական թեզերի և բակալավրի ավարտական աշխատանքների գնահատման բազմագործոն համակարգը, որտեղ հստակ ներկայացված են գնահատման չափանիշները, դրանց չափորոշիչները և հատկացվող միավորները (տե՛ս չափորոշիչ 3.1)։ Ուսանողները նախապես տեղեկացվում են, թե ինչ չափանիշներով և չափորոշիչներով են գնահատվելու ներկայացված ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը։

Ակադեմիական ազնվության մեխանիզմների ապահովմանն է ուղղված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պատրաստման և պաշտպանության կանոնակարգված գործընթացը։ ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման վերոնշյալ կարգերում ներկայացված են աշխատանքի օրինակելի կառուցվածքը, ձևավորման պահանջները, օգտագործված գրականության հղումների տրման մեթոդաբանությունը, աշխատանքի պատրաստման ընթացքը և պահանջները, ինչպես նաև պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը, գնահատման չափանիշները և չափորոշիչները, նկարագրված է բողոքարկման ձևը։ Մասնավորապես, այս գործընթացում կարևորվում է ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի ինքնուրույն պատրաստումը և նախապաշտպանությունը, ինչպես նաև յուրաքանչյուր փուլում ատեստավորվում է ուսանողի կատարած աշխատանքը։ Էական դիտողությունների առկայության դեպքում աշխատանքն ուղարկվում է լրամշակման, որից հետո այն տրվում է արտաքին գրախոսության։ Նախապաշտպանության կամ պաշտպանության ընթացքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը չի թույլատրվում պաշտպանության։

Մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքը վերահսկվում է նաև գիտական սեմինարների ժամանակ։ Ուսանողները ներկայացնում են մագիստրոսական թեզի շրջանակներում կատարված ընթացիկ աշխատանքները՝ ուսումնասիրվող հիմնախնդրի շուրջ կատարած իրենց տեսական վերլուծությունը և եզրահանգումները, հետազոտության ծրագիրը, կատարման ընթացքն ու նախնական արդյունքները և այլն։

Չնայած ներդրված բազմագործոն գնահատման համակարգին և ակադեմիական ազնվությանն ուղղված միջոցառումներին՝ գրագողության դեմ պայքարի մեխանիզմները դեռևս կատարյալ չեն և պահանջում են համակարգային լուծում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.4. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ Որակյալ կրթություն նպատակի Խնդիր 1.1-ի 2-րդ և 4-րդ գործողություններով նախատեսված է. «Վերամշակել մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան»[1]: Նշված գործողությունների իրականացման համար, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ ինքնավերլուծության արդյունքները՝ 2016/17 ուստարվանից սկսած՝ մասնագիտական կրթական ծրագրերը վերամշակվել են Որակավորումների ազգային և ոլորտային (առկայության դեպքում) շրջանակներին համապատասխան, ինչպես նաև այլ կրթական ծրագրերի բենչմարքինգի հիման վրա: Օրինակ, համաձայն «Կրթական ծրագրերի մասնագրի և դասընթացի նկարագրիչների լրացման ուղեցույցի» (ԵՊՀ ՈԱԿ, 2016)[9]՝ կրթական ծրագրի մասնագրում նշվում են այն կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք հաշվի են առնվել տվյալ կրթական ծրագրի մշակման ընթացքում (տե՛ս Հավելված 3.2, ծրագրի մասնագիր, կետ 16): Հարկ է նշել, որ մի շարք մասնագիտությունների, օրինակ, քիմիա, աշխարհագրություն, երկրաբանություն և այլն, կրթական ծրագրերը մշակվել են հիմնականում հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ այլ երկրների առաջավոր բուհերի ծրագրային փորձը, իսկ արդի կիրառական ոլորտներին առնչվող կրթական ծրագրերը՝ ոչ միայն ԱՊՀ-ի, այլ փոխառելով նաև՝ ԱՄՆ և եվրոպական մի շարք համալսարանների փորձը:

Օրինակ, «Կիրառական մանրէաբանություն» մագիստրոսի կրթական ծրագիրը մշակվել է Ամերիկայի Մանրէաբանական ընկերության և Եվրոպայի Մանրէաբանական ընկերությունների դաշնության խորհրդատվություններով, ինչպես նաև հաշվի են առնվել Գերմանիայի, ԱՄՆ-ի մի շարք համալսարաններում առկա նմանատիպ ծրագրերը, որոնք առնչվում են կիրառական մանրէաբանությանը: Արդեն 2018/19 ուստարվանից այս ծրագիրը ներդրվել և գործում է ԵՊՀ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի և ԵՊՀ Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնի համատեղ ջանքերով:

Մեկ այլ օրինակ, «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսի կրթական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Միացյալ Թագավորության Որակի ապահովման գործակալության հոգեբանական խորհրդատվության ծրագրային կողմնորոշիչները, իսկ արևմտյան բուհերից ուսումնասիրվել են Կանադայի՝ The University of British Columbia (MA in Counseling Psychology), ԱՄՆ-ի՝ University of Minnesota (MA in Counseling Psychology) կրթական ծրագրերը, որոնք հավատարմագրված են մասնագիտական ասոցիացիաների կողմից: Բացի այդ և՛ վերոնշյալ մագիստրոսական, և՛ «Հոգեբանություն» բակալավրի կրթական ծրագրերի համար հիմք են ծառայել ՌԴ պետական հավատարմագրում ունեցող առաջատար ԲՈՒՀ-երի (НИУ Высшая Школа Экономики, Санкт-

Петербургский государственный университет, Московский Педагогический государственный университет) համապատասխան կրթական ծրագրերը:

«Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել Չեխիայի Կարլի համալսարանի ֆարմացիայի ֆակուլտետի, ԱՄՆ Կանզասի համալսարանի ֆարմացիայի դպրոցի, ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի դեղագիտության ֆակուլտետի, ՌԴ Մոսկվայի Սեչենովի անվան համալսարանի, ինչպես նաև ՌԴ Մոսկվայի պետական համալսարանի և այլ առաջատար համալսարանների համապատասխան ուսումնական պլանները: «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագիրը մշակվել է հաշվի առնելով Չեխիայի Կարլի համալսարանի ֆարմացիայի ֆակուլտետի, Կոպենհագենի համալսարանի ֆարմացիայի ֆակուլտետի, ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի դեղագիտության ֆակուլտետի և այլ առաջատար համալսարանների համապատասխան ուսումնական պլանները:

ԵՊՀ-ում աշխատանքներ են իրականացվում տարբեր համալսարանների հետ կրկնակի դիպլոմով նոր կրթական ծրագրեր մշակելու ուղղությամբ: 2018/19 ուստարում ԵՊՀ-ում գործել են 14 կրկնակի դիպլոմով տարբեր մագիստրոսական ծրագրեր, որոնք մասնավորապես, իրականացվել են ՌԴ Ազգերի բարեկամության ռուսաստանյան համալսարանի (ռուսաց լեզու և գրականություն, տնտեսագիտություն, ֆարմացիա, միջազգային հարաբերություններ և այլ մասնագիտություններով), ՌԴ Բելգորոդի Ազգային հետազոտական համալսարանի (կենսաբանություն և ֆարմացիա մասնագիտություններով), Լե Մանի համալսարանի, Տնտեսագիտության բարձրագույն դպրոցի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի, Բուրգոնի Ֆրենչ Կոնտե համալսարանի (Օպտիկա և Կիրառական կենսաբանություն մասնագիտություններով) հետ: Բացի այդ, երկար տարիներ գործում է Ուրալի դաշնային համալսարանի հետ «ԱՊՀ երկրների Ցանցային համալսարան» ծրագիրը՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: Հարկ է նշել, որ 2015/16 ուստարվանից մինչև 2018/19 ուստարին ընկած ժամանակահատվածում ուսանողների շարժունությանը (ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի շրջանակներում») մասնակցել է 15 մագիստրոս տարբեր մասնագիտություններից՝ Միջազգային հարաբերություններ, Միջազգային իրավունք, Սերվիս, Մենեջմենթ և այլն:

Համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, համագործակցելով տարածաշրջանի լավագույն բուհերի՝ Տարաս Շևչենկոյի անվան Կիևի ազգային, Բելառուսի պետական և Իվանե Զավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանների հետ, իրականացնում է «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացումը Կովկասում» տարածաշրջանային մագիստրոսական ծրագիրը: Արդեն իսկ ծրագիրն ունի 174 շրջանավարտ 14 երկրից: Այն ներառում է նաև օտարերկրյա ուսանողներ (30-50 %)՝ լինելով ԵՊՀ-ում օտար լեզուներով դասավանդվող եզակի ծրագրերից մեկը:

ԵՊՀ կրթական ծրագրերի նախկին «կոշտ» կառուցվածքը ուսանողներին չէր տրամադրում դասընթացների լայն ընտրության հնարավորություններ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող փաստաթղթերը մշակելիս ավելացվել է կամընտրական դասընթացների մասնաբաժինը՝ որպես ուսանողների շարժունությանը նպաստող և այն խթանող գործոն: Բակալավրի կրթական ծրագրում վերջինիս մասնաբաժինը կազմում է շուրջ 10 տոկոս, իսկ մագիստրատուրայում՝ 25, ինչը հնարավորություն է ընձեռում շարժունության

ակտիվացմանը՝ ներհամալսարանական, ներպետական և միջազգային մակարդակներում: Այսպես, օրինակ, մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կիսամյակը (երկամյա ուսուցման դեպքում), ամբողջությամբ նախատեսված է մասնագիտական կամընտրական դասընթացների համար, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողին այն ազատորեն օգտագործելու այլ բուհում (կամ կրթական ծրագրում) մասնագիտության շրջանակներում այլ դասընթացներ ուսանելու և դրանց կրեդիտները փոխանցելու համար:

Այնուամենայնիվ, այժմ էլ առկա են մի շարք խնդիրներ արտերկրում ուսանողների ձեռք բերած կրեդիտների փոխանցման համար, չնայած այն հանգամանքին, որ այն կարգավորվում է «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգով» (հաստատված ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N1240-Ն որոշմամբ)[16]:

2015/16-2019/20 ուստարիների ընթացքում ԵՊՀ-ից արտասահման է գործուղվել շուրջ 3400 անձ, որից շուրջ 1300-ը՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմից, իսկ 1000-ը՝ ուսանող և ասպիրանտ: Նույն ժամանակահատվածում ԵՊՀ-ում սովորել է մոտ 1700 ուսանող, և դասավանդել արտասահմանից հրավիրված շուրջ 50 դասախոս (ԵՊՀ ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության քանակական ցուցանիշների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Չափանիշ 9-ը): Դասավանդողների շարժունության և միջազգայնացմանն ուղղված միջոցառումներից է 2018 թվականից ԵՊՀ-ի կողմից համակարգվող “PRINTeL” նախագիծը (տե՛ս Չափորոշիչ 3.2), որի իրականացման նպատակով մրցույթով ընտրված ԵՊՀ դասախոսները, ինչպես նաև վարչական անձնակազմի մի շարք ներկայացուցիչներ, վերապատրաստվել են նախագծի գործընկեր եվրոպական առաջատար բուհերում և իրենց ձեռք բերած փորձը տարածել են համալսարանում (տե՛ս Չափանիշ 5):

Ծրագրերի միջազգայնացմանը և աշխատաշուկայի պահանջներին դրանց համապատասխանեցմանը շարունակում են նպաստել նաև գործատուների հետ համատեղ իրականացվող որոշ միջոցառումները: Սակայն պետք է փաստել, որ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորը դեռևս չունեն հստակ ձևակերպված պահանջներ բուհերի կողմից պատրաստվող մասնագետների հմտությունների ու կարողությունների վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.5. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՊՀ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներից են ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ տարեկան պարբերականությամբ իրականացվող հարցումները, որոնք 2016 թ.-ից անցկացվում են առցանց եղանակով (ՌԾ 1-ին նպատակ, 1.3 խնդրի 6-րդ գործողություն)[1]: Ամեն տարի հարցումներին մասնակցում է 2000-ից ավելի շրջանավարտ, ինչը կազմում է շրջանավարտների ընդհանուր թվի կեսից ավելին: Հարցաթերթը պարունակում է համապատասխան բաժին, որտեղ շրջանավարտները գնահատում են իրենց բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդաբանությունից: Անհրաժեշտ է նշել, որ շրջանավարտները հիմնականում գոհ են ԵՊՀ-ում ստացած կրթությունից (5 բալանոց գնահատման համակարգում՝ գնահատականները տատանվում են 4÷5-ի միջա-

[16] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70813

կայքում): Հարցումների վերլուծությունները ցույց են տալիս նաև, որ շրջանավարտների (բակալավրիատի) գերակշռող մասը ցանկություն է հայտնում շարունակելու ուսումը ԵՊՀ-ում: Հատկանշական է նաև, որ ավելացել է մասնագիտությամբ աշխատողների թիվը, ինչը փաստում է ԵՊՀ-ի կողմից տրամադրվող կրթական շատ ծրագրերի արդիականության մասին: Նշված հարցումների արդյունքներն ամփոփվում, վերլուծվում և հրապարակվում են համապատասխան տարեկան զեկույցում, որը քննարկվում է ԵՊՀ գիտխորհրդի նիստում:

Առանձին դասընթացների մակարդակով կրթական ծրագրերի որակին առնչվող գնահատումներից են ԵՊՀ-ում՝ 2002 թ.-ից յուրաքանչյուր կիսամյակ անցկացվող ուսանողական հարցումները, որոնք 2016 թ.-ից իրականացվում են առցանց (ՌԾ 1-ին նպատակ, 1.3 խնդրի 6-րդ գործողություն)[1]: Ուսանողները գնահատում են տվյալ կիսամյակում անցած դասընթացների դասավանդման որակը և արդյունավետությունը (ուսանողական հարցումներին ավելի մանրամասն անդրադարձ է արված 5.3 չափորոշչում):

Ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման, ինչպես նաև հասարակական պահանջարկվածության ու աշխատաշուկայի կարիքներին համապատասխանության գնահատման նպատակով՝ ԵՊՀ գիտխորհուրդը դեռևս 2011 թ.-ին ընդունել է «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը», որը վերանայվել է 2014 և 2019 թթ.-ին (այժմ գործում է նոր խմբագրությամբ հաստատված «ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը», 2019 թ. հունիս)[17]: Համաձայն կարգի՝ ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերը պետք է ենթարկվեն ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման: Ծրագրերի շրջափուլային մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման (իրականացման) որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին: Մոնիթորինգը նախաձեռնում և իրականացնում է ծրագիրը սպասարկող ուսումնական ստորաբաժանումը: Մոնիթորինգի արդյունքում կազմվում է ծրագրի բարելավման պլանը: Բացի այդ, ինչպես արդեն նկարագրվեց վերևում, առկա է նաև կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացը, որի պարբերականությունը բակալավրի կրթական ծրագրի համար սահմանված է 6÷7, իսկ մագիստրոսի ծրագրի համար՝ 3÷4 տարի: Ծրագրի վերանայում է պահանջվում նաև բոլոր այն դեպքերում, երբ ծրագրի բովանդակության ընթացիկ փոփոխությունները գերազանցում են նրա ընդհանուր ծավալի 10 %-ից ավելին:

Ինչպես արդեն նշվեց, 2017/18 ուստարվանից ԵՊՀ-ում գործարկվեցին վերանայված նոր մագիստրոսի կրթական ծրագրերը, որոնց իրականացման առաջին շրջափուլի ավարտին, համաձայն վերոնշյալ կարգի և ԵՊՀ ՌԾ-ի I նպատակի 1.3 խնդրի 2-րդ գործողության՝ «Գործադրել կրթական ծրարգրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար»՝ 2019/20 ուստարում մեկնարկեց մագիստրոսի կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացը: Որպես ապակենտրոնացված գործընթաց, այն իրականացրեցին կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումները՝ ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի անմիջական ուղղորդմամբ: Մագիստրոսի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգն իրականացվեց՝ համաձայն 2019

[17] «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ», 2011թ., վերանայվել է 2019թ. /http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf

թ. հունիսին գիտխորհրդի կողմից հաստատված կարգի[17] և ռեկտորի 2019 թ. սեպտեմբերի 5-ի հրամանով սահմանված ժամանակացույցի:

Կրթագիտական ստորաբաժանումներում ստեղծվեցին կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի աշխատանքային խմբեր՝ կրթական ծրագրի ղեկավարի, պրոֆեսորադասախոսական համակազմի, ուսանողների և արտաքին շահակիցների մասնակցությամբ: Այս գործընթացում նոր փորձառություն էր այն, որ ծրագրի շահակիցների արձագանքը ստանալու համար իրականացվեցին ֆոկուսխմբային քննարկումներ մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված ուսանողների հետ: Նշված ֆոկուս-խմբերի իրականացման համար պատրաստվեց համապատասխան ուղեցույց և հարցաշար: Ֆոկուս-խմբերն անցկացվեցին Սոցիոլոգիայի և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների մագիստրատուրայի 25 ուսանողների կողմից: Յուրաքանչյուր կրթական ծրագրի ֆոկուսխմբային հետազոտության արդյունքները վերլուծվել են անկախ հետազոտողների կողմից (ընտրված ասպիրանտներ Սոցիոլոգիայի և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետներից), այնուհետև համապատասխան հաշվետվությունները տրամադրվել են կրթական ծրագրի մոնիթորինգի 98 խմբերին՝ մոնիթորինգի հաշվետվությունների պատրաստման համար: Մոնիթորինգի զեկույցը ներառում է հետևյալ բաժինները. ծրագրի քանակական բնութագրերը վերջին երեք տարվա համար, ուսանողական հարցումների արդյունքները, շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները, ծրագրի շահակիցների արձագանքը (ուսանողների ֆոկուսխմբային հետազոտություններ), համագործակցային կապերը ծրագրի շրջանակներում, նախորդ շրջափուլում ծրագրի փոփոխությունները, ծրագրի ուժեղ և թույլ կողմերը SWOT վերլուծությամբ, ծրագրի նախորդ մոնիթորինգի եզրակացությունների կատարողականի գնահատականը և ծրագրի բարելավման գործողությունների պլանը:

Կատարված վերլուծությունների հիման վրա դուրս են բերվել որոշ ընդհանուր խնդիրներ: Առաջին հերթին, շատ ծրագրերի ուսանողներ նշել են պրակտիկաների անարդյունավետության հարցը, ինչպես նաև գրադարանի աշխատանքային ժամերի անհարմարությունը, գրականության հայթայթման դժվարությունները, ժամանակակից և հայալեզու գրականության սակավությունը: Բացահայտված խնդիրը հիմք հանդիսացավ «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում» կատարելու համապատասխան փոփոխություններ (2020 թ., մարտ)[18]: Միևնույն ժամանակ, ուսանողները հիմնականում նշել են, որ կրթական ծրագրերի բովանդակությունը համապատասխանում է իրենց ակնկալիքներին, իսկ կրթական ծրագրերում ներառված դասախոսական կազմին գնահատում են իրենց նվիրման և աշխատանքի համար: Առանձին կրթական ծրագրերի բացահայտված թույլ կողմերի և վտանգների հաղթահարման համար մշակվել են համապատասխան միջոցառումներ՝ մինչև հաջորդ մոնիթորինգն ընկած ժամանակահատվածում իրականացնելու համար:

Կրթական ծրագրերի մոնիթորինգի հաշվետվությունները ներկայացվում են ստորաբաժանումների ԳԽ-ներին կից ՈԱ հանձնաժողովներին, ստորաբաժանման ղեկավարին, քննարկվում ստորաբաժանման ԳԽ-ում, որից հետո մոնիթորինգի ամփոփ զեկույցները ներկայացվում են ԵՊՀ ՈԱ կենտրոն: Վերջինս ստուգում է դրանց համապատասխանությունը

[18] ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը հաստատելու մասին ԵՊՀ ԳԽ որոշում N11/3, 12.03.2020 /http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/GX_voroshum_11-3.pdf

սահմանված չափանիշներին: Մշտադիտարկման արդյունքների հիման վրա ՈԱ կենտրոնը ռիսկային ծրագրերի վերաբերյալ ներկայացնում է ընդհանուր զեկույց ԵՊՀ ԳԽ-ին, որը կայացնում է համապատասխան որոշում տվյալ ծրագրերի վերաբերյալ:

Քանի որ բակալավրի վերանայված կրթական ծրագրերը մեկնարկել են 2018/19 ուստարվանից, ապա համաձայն կարգի՝ այդ ծրագրերի մշտադիտարկումը կիրականացվի 2022/23 ուստարվանից:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 3-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող վերջնարդյունքների և համապատասխանում են ՈԱՇ-ի և ոլորտային շրջանակների նկարագրիչների պահանջներին: 2. Առկա են կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և պարբերական վերանայման մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք հետևողականորեն իրականացվում են: 3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները հիմնականում համահունչ են դասընթացի կրթական վերջնարդյունքներին: 4. Ներդրվել են նորարարական և տեխնոլոգիապես հագեցած դասավանդման և ակտիվ ուսումնառության մեթոդներ: 5. Կրթական ծրագրերի պատշաճ իրականացման համար առկա է համապատասխան կրթական միջավայր, արդիականացվել են լսարաններ և ուսումնագիտական լաբորատորիաներ: 6. Գործադրված է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատման բազմագործոն համակարգ: 7. ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը նպաստում է ուսանողների շարժունությանը և այլ բուհերում կրեդիտների կուտակմանը և փոխանցմանը:	1. Կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման միասնական մեթոդաբանության բացակայություն: 2. Բարձր տարիքի պրոֆեսորադասախոսական կազմի որոշ հատվածի մոտ դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների կիրառման կարողությունների բացակայություն: 3. Դասավանդման ընտրված մեթոդների արդյունավետության գնահատման միասնական քաղաքականության բացակայություն: 4. Ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմների անկատարություն: 5. Բակալավրի կրթական ծրագրերի կառուցվածքում ուսանողների շարժունության պատուհանի բացակայություն: 6. Որոշ մասնագիտությունների գծով պրակտիկաների իրականացման արդյունավետության ոչ բավարար մակարդակ:

8. Կրթական ծրագրերում հետազոտական մոդուլների և բաղադրիչների առկայություն:	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Բարձրագույն կրթության մասին նոր օրենքի նախագծում կրթական ծրագրի բովանդակային լիցենզավորման և պարտադիր հավատարմագրման պահանջի առկայություն: 2. Միջազգային համագործակցության շրջանակներում առաջավոր փորձի ուսումնասիրման միջոցով կրթական ծրագրերի բարելավման հնարավորություն: 3. Բարձրագույն կրթության մասին նոր օրենքում մասնակի բեռնվածությամբ ուսումնառության, կրեդիտների կուտակային գործառույթի լիարժեք իրականացման և հետևաբար ճկուն ուսումնական ծրագրերի կազմակերպման հնարավորություն:	1. Աշխատաշուկայի ներկայացուցիչների ցածր ներգրավածություն կրթական ծրագրի վերջնարդյունքների ձևավորման գործում: 2. Գրագողության հայտնաբերման սահմանափակ հնարավորություններ հայալեզու թվայնացված աղբյուրների համընդհանուր բազայի բացակայության պատճառով: 3. Բարձրագույն կրթության ոլորտում ներկա օրենսդրական դաշտի անկատարությունը, և նոր օրենքի ընդունման հետ կապված անորոշությունները: 4. Բնական աղետները, համաշխարհային վիրուսային համաճարակները (COVID-19 և այլն), պատերազմները անմիջական վտանգ են կրթական ծրագրերի բնականոն իրականացման համար:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները.

1. Բենչմարքինգի իրականացման ներքին քաղաքականության մշակում և ընդունում:
2. Դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմամբ մանկավարժական լավագույն փորձի հետագա խրախուսում և տարածում:
3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների արդյունավետության գնահատման միասնական քաղաքականության մշակում և համապատասխան մեխանիզմների ներդրում:
4. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ներհամալսարանական հայալեզու թվայնացված տվյալների բազայի ստեղծում:
5. Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի վերանայում՝ ուսանողական շարժունությանը նպաստող «պատուհանների» ներմուծման նպատակով:
6. Պրակտիկաների արդյունավետության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի իրականացում:
7. Առցանց ուսումնառության հարթակների և գործիքամիջոցների օգտագործման կտրուկ ընդլայնում և խրախուսում, համապատասխան նյութական միջոցների տրամադրում պատշաճ տեխնիկական բազայի ստեղծման համար:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ԵՊՀ հավակնությունները.

- Հետևելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին՝ էապես օպտիմալացնել համալսարանի ընդունելությունը և չափաքանակները՝ դրանք համապատասխանեցնելով աշխատաշուկայի և հանրության պահանջներին (տե՛ս ՌԾ նպատակ VII, խնդիր 7.2):
- Պարբերաբար իրականացնել և ԵՊՀ տարբեր օղակներում ներկայացնել պրակտիկ և ձեռներեցության հմտությունների ձեռքերմանն ուղղված աշխատանքների և միտումների մոնիթորինգ, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վերլուծություններ (տե՛ս ՌԾ նպատակ VI, խնդիր 6.1):
- Բուհում սահմանել ուսանողների կողմից աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ (տե՛ս ՌԾ նպատակ I, խնդիր 1.3):
- Ապահովել բուհում ուսանողակենտրոնությանը նպաստող պայմաններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված «Ընդունելության բազմազանեցում և համապատասխանություն» գերակայության շրջանակներում նպատակ է դրված զարգացնել համալսարանի ընդունելության մարքեթինգային գործընթացները, օպտիմալացնել ընդունելությունը և այն համապատասխանեցնել երկրի զարգացման կարիքներին, հանրության և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև ընդլայնել օտարերկրյա ուսանողների համակազմը (տե՛ս ՌԾ 7.1, 7.2 և 7.3 խնդիրները):

ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի ֆակուլտետների և ստորաբաժանումների աշխատանքների համակարգումն իրականացնում է Մինչհամալսարանական կրթության վարչությունը[1]: 11 տարի անընդմեջ կազմակերպվում են հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաները: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվում են համալսարանականների հարյուրավոր այցելություններ դպրոցներ և «Բաց դռների օրերի» շրջանակներում հազարավոր աշակերտների նպատակային ճանաչողական այցեր ԵՊՀ: Յուրաքանչյուր տարի պատրաստվում են ԵՊՀ-ի, այդ թվում՝ առանձին ֆակուլտետների մասին պատմող, դիմորդներին իրազեկող, կողմնորոշող և գիտակից ընտրության հնարավորություն ընձեռող տեղեկատվական նյութեր և ֆիլմեր, որոնք հասանելի են նաև համացանցում, ԵՊՀ պաշտոնական կայքում գործում է «Դիմորդ» ենթաբաժինը:

[1] Ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրների շրջանակներում 44 ավագ դպրոցների հետ կնքվել է համագործակցության պայմանագիր, ևս 42 դպրոցների հետ աշխատանքներ են տարվում կնքված համաձայնագրերի շրջանակներում: Կան համագործակցության պայմանագրեր 17 քոլեջների հետ: Ըստ ավանդույթի՝ ԵՊՀ-ի հետ համագործակցության պայմանագիր ունեցող դպրոցների աշակերտների համար կազմակերպվում են տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ»: Համալսարանը կազմակերպում է նաև դիմորդների համար նախատեսված նախապատրաստական դասընթացներ:

Դիմորդների ընդունելությունը ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգ իրականացվում է ՀՀ Կառավարության 26.04.2012 թ. որոշմամբ հաստատված «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգի» համաձայն[2]:

Չնայած վերջին տարիներին դիմորդների թվի անընդհատ նվազմանը՝ 2015-2019 թթ. ընթացքում ԵՊՀ-ն կարողացել է պահպանել բակալավրիատի առկա համակարգ դիմորդների ներհոսքի կայուն տեմպեր, որը նշված թվականներին կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում կազմել է 30-33 % [3]:

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հուլիսի 27-ի հրամանով հաստատված «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կանոններով», համաձայն որի՝ ընդունելության մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: ԵՊՀ ռեկտորի հրամանով կազմված ընդունող հանձնաժողովը կազմակերպում է ընդունելության քննությունները, որոնք վերահսկվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ընդունելության քննությունները և՛ բովանդակային, և՛ կազմակերպչական առումով լիովին համապատասխանում են բակալավրիատի առկա համակարգի պետական միասնական քննությունների պահանջներին: Նպատակ ունենալով ապահովել ընդունելության գործընթացի թափանցիկությունը՝ դիմորդներին տրամադրվում է թեստի պատասխանների ձևաթղթի պատճենը, ինչպես նաև քննության ավարտից մեկ ժամ հետո թեստի ճիշտ պատասխանները հրապարակվում են ԵՊՀ կայքէջում:

Ուսուցման հեռակա համակարգում սովորողների թիվը կազմում է բակալավրիատի ուսանողների ընդհանուր թվի մոտ 12 %-ը[4]:

Մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի» համաձայն:

Մագիստրատուրայի գրավչությունը դիմորդների համար մեծացնելու նպատակով ԵՊՀ-ն առաջարկում է բազմազան մասնագիտություններով 120 կրթական ծրագրեր (բակալավրիատի 62-ի դիմաց): 2015-2019 թթ. մագիստրատուրայի դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են Հավելված 4.1-ում:

Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. սեպտեմբերի 15-ի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգի» համաձայն:

---

[2] Համաձայն նշված կարգի՝ բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն: Տե՛ս՝ http://www.ysu.am/files/quality/kv11.pdf Ընդունելությունն իրականացվում է հանրապետական միասնական քննությունների արդյունքում: Բուհ ընդունվելու համար դիմորդները քննական կենտրոններում հանձնում են կենտրոնացված միասնական ընդունելության քննություններ: Վերջիններս կազմակերպվում և անց են կացվում «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ԵՊՀ ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է ԵՊՀ ընդունող հանձնաժողովը:

[3] Տե՛ս Հավելված 4.1:

[4] Նույն տեղում:

Վերջին տարիներին նկատվում է առկա ասպիրանտուրայում սովորողների թվի նվազում, ինչը պայմանավորված է ՀՀ Կառավարության կողմից տեղերի կրճատմամբ, իսկ հեռակա ասպիրանտուրայում արձանագրվել է սովորողների թվի աճ (2015-2019 թթ. ասպիրանտուրա ընդունվածների թվերը ներկայացված են Հավելված 4.1-ում):

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի» համաձայն: Ներկայումս ԵՊՀ-ում ուսանում է մոտ 260 օտարերկրյա քաղաքացի, նախապատրաստական դասընթացներում ներգրավված է 25 ունկնդիր (2015-2019 թթ. օտարերկրյա դիմորդների և ընդունված ուսանողների թվերը ներկայացված են Հավելված 4.2-ում):

Ուսանողների տեղափոխումն իրականացվում է ՀՀ Կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգի» համաձայն (2014-2019 թթ. ուսանողների ներհոսքի վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են Հավելված 4.3-ում): Ներկայացված տվյալներից երևում է, որ ԵՊՀ-ից արտահոսքն աննշան է, և երկրների մասով որևէ ուսումնասիրություն չի կատարվել (2014-2019 թթ. ուսանողների արտահոսքի վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են Հավելված 4.4-ում):

Ուսանողների հեռացումն ու վերականգնումն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. նոյեմբերի 17-ի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» համաձայն: 2014-2019 թթ. ուսանողների հեռացումների և վերականգնումների վերաբերյալ ցուցանիշները ներկայացված են Հավելված 4.5-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են համալսարանի մի շարք օղակներ և ստորաբաժանումներ:

Բուհում գործում է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) ինստիտուտը: ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում հաստատված «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 12-րդ՝ «Ուսումնական խորհրդատուն (կուրատորը)» կետում սահմանված են կուրատորների աշխատանքի կազմակերպման պահանջները: Համաձայն կարգի՝ առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են: Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու: Ուսումնական խորհրդատուն ուսանողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին, ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն: Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած

դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները: Այսպես, 2015/16 ուստարվա հարցման արդյունքներով բակալավրիատի ուսանողների շուրջ 46.88 %-ը, 2016/17 ուստարում՝ 55.5 %-ը, 2017/18 ուստարում՝ 56.69 %-ը և 2018/19 ուստարում 58.05 %-ը կուրատորների աշխատանքը գնահատել են արդյունավետ: Խորհրդատուների հաշվետվությունների հետ մեկտեղ այստեղ կարևոր են նաև ուսանողների և շրջանավարտների հարցումները, որոնք պարունակում են բաց հարցեր՝ նրանց առաջարկների (հետևաբար նաև կարիքների) ներկայացման համար[5]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.3. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Համալսարանական առաջարկի և հանրային պահանջարկի փոխկապակցությունն ապահովելու նպատակով[6] ԵՊՀ մի շարք ստորաբաժանումներ, ֆակուլտետներ և կենտրոններ ուսանողներին առաջարկում են լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության հնարավորություններ՝ օգտագործելով տեղեկատվական և հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներ:

Այլ մասնագիտություններից մագիստրատուրա ընդունված ուսանողների համար կազմակերպվում են կրեդիտատարություն չունեցող լրացական դասընթացներ: Բակալավրիատում ամփոփիչ ատեստավորումից առաջ ուսանողների համար կազմակերպվում են խորհրդատվություններ (ակնարկային դասախոսություններ):

Մի շարք ֆակուլտետներում գործում են տարբեր կենտրոններ և այլ կառուցվածքային միավորներ (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում՝ Չինարենի և չինական մշակույթի կենտրոն, Սոցիոլոգիայի ֆակուլտետում՝ Հեռաուսուցման լաբորատորիա, Իրավագիտության ֆակուլտետում՝ Իրավաբանական կլինիկա, Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն և այլն), որոնք ուսանողներին առաջարկում են լեզուների ուսուցման, համակարգչային հմտությունների զարգացման և կրթական այլ կարիքները բավարարելու լրացուցիչ հնարավորություններ:

2013 թ.-ից ի վեր իրականացվում է «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում» ծրագիրը՝ նախատեսված առաջին կուրսի ուսանողների համար, որի ընթացքում նրանք ծանոթանում են համալսարանի կառավարման համակարգին, դրան ուսանողների մասնակցությանը, ուսանողական հիմնախնդիրների բարձրաձայնման և լուծման մեխանիզմներին և այլն: Ուսանողական խորհուրդն իրականացնում է նաև իրազեկման հանդիպում-դասընթացներ նախաքննական շրջանում՝ իրազեկելով քննությունների բողոքարկման ընթացակարգին:

---

[5] Տե՛ս չափանիշ 3, 5 և 10:

[6] Տե՛ս ՌԾ նպատակ III, խնդիր 3.2 http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf:

2018 թ.-ից սկսած՝ Ուսանողական խորհուրդն իրականացնում է «Առաջին կուրսեցիների իրազեկում» ծրագիրը, որին մասնակցում են Երևանի պետական համալսարան ընդունված առաջին կուրսի ուսանողները (շուրջ 1500 ուսանող՝ 85 %-ից ավելի): Ծրագրի ընթացքում ուսանողները ծանոթանում են իրենց կրթական ծրագրի, ուսումնական գործընթացի, կրեդիտային համակարգի առանձնահատկություններին, իրենց իրավունքներին և պարտականություններին:

ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը աշխատաշուկայի մարտահրավերներին և պահանջներին համահունչ պարբերաբար մշակում և կազմակերպում է բազմաբնույթ սեմինարներ, դասընթացներ, խորհրդատվական հանդիպումներ կամ անհատական խորհրդատվություններ՝ ուղղված աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը[7]:

ԵՊՀ-ում գործում են նաև մի շարք այլ կենտրոններ և ստորաբաժանումներ (Ռուսական կենտրոն, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, Կիրառական հոգեբանության կենտրոն, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Չինարենի և կորեերենի կենտրոն, Հայ-հնդկական Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) գերազանցության կենտրոնը), որոնք իրենց գործունեության շրջանակներում աջակցում են ուսանողներին՝ բավարարելու իրենց կրթական կարիքները:

Լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն է իրականացնում 2017 թ. ստեղծված Ձեռներեցության զարգացման կենտրոնը: Այն իրականացրել է մի շարք հաջողված դասընթացներ և նախագծեր, որոնցից հատկապես առանձնացնում ենք «Startup Boost Weekend Vol4» խորագիրը կրող միջոցառումը[8]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.4. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու ֆորմալ կանոնակարգ և ժամանակացույց ԵՊՀ-ում դեռևս չկա, սակայն ուսանողների կողմից վարչական աշխատակազմին դիմելու պրակտիկան գործում է, ձևավորված են որոշակի մեխանիզմներ, իսկ առանձին հարցերի պարագայում՝ սահմանված են նաև համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ ժամանակացույցներ: Ուսանողներն իրենց հուզող տարբեր հարցերով ու խնդիրներով բանավոր և գրավոր կարգով դիմում են ֆակուլտետների դեկաններին (ֆակուլտետային մակարդակով լուծվող հարցերի դեպքում): Միաժամանակ նրանք հնարավորություն ունեն ամենատարբեր հարցերով դիմելու նաև իրենց ուսումնական խորհրդատուներին (կուրատորներին):

Բազմաթիվ խնդիրներ (վարձերի զեղչեր, տեղափոխություններ, վերականգնում, այլ կրթական հարցեր) լուծվում են համալսարանական ֆորմալ ընթացակարգերով: Այսպես, ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 18-ին հաստատված «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի»

---

[7] Տե՛ս չափորոշիչ 4.5:

[8] Տե՛ս՝ www.ysu.am/news/hy/Startup-Boost-Weekend-Vol-4

համաձայն՝ ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման համար ուսանողները պետք է ներկայացնեն համապատասխան գրավոր դիմումներ, սահմանված են դրանց ներկայացման կարգն ու պայմանները[9]:

Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի[10] համաձայն՝ ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև՝ ֆակուլտետի դեկանին: Ուսանողները դիմում են նաև Ուսանողական խորհուրդ, որը համապատասխան խորհրդատվություն և աջակցություն է ցուցաբերում ուսանողներին:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի նիստի № 49 որոշմամբ ստեղծվել է ԵՊՀ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի պաշտոնը, որի պարտականությունների շրջանակում ներառված են ուսանողներին առնչվող տարբեր խնդիրների լուծումը, համալսարանի միջազգայնացման գործընթացները և հասարակայնությանն առնչվող հարցերի կանոնակարգումը:

ԵՊՀ ուսանողները հնարավորություն ունեն նաև ԵՊՀ պաշտոնական կայքէջի «Հարց ու պատասխան» առցանց գործիքի միջոցով տարբեր հարցերով դիմելու ԵՊՀ վարչական աշխատակազմին[11]: Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչական աշխատակազմի (ռեկտոր, պրոռեկտորներ և այլն) ներկայացուցիչների հետ: Այդ հանդիպումների ընթացքում ուսանողները բարձրաձայնում են իրենց հուզող խնդիրները և ստանում պատասխաններ:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցաթերթում ներառված է նաև «Որքանո՞վ են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերը և մեխանիզմները» հարցը: Հարցմանը 2018/19 ուստարվա շրջանավարտներից մասնակցել է 1251-ը (տվյալ տարվա շրջանավարտների 27 %-ը), որոնց շուրջ 65 %-ը «լավ» և «գերազանց» է գնահատել ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերի և մեխանիզմների արդյունավետությունը, 14 %-ը՝ «բավարար», իսկ 7 %-ը՝ «անբավարար» (մնացածը դժվարացել է գնահատել):

2015 թ. փետրվարի 19-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թթ. համալիր միջոցառումների ծրագրի» համաձայն՝ նախատեսված է առավել հստակ կանոնակարգել և ֆորմալացնել ուսանողների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման և համապատասխան պատասխանի տրամադրման գործընթացը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.5. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

---

[9] «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում» փոխոխություններ են կատարվել 2017 թ. հուլիսի 6-ի ԵՊՀ գիտական խորհրդի N 8/3 որոշմամբ: Տե՛ս http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/npast_kanonakarg.pdf

[10] Տե՛ս Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը, 3.3.6 կետ: Տե՛ս http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/voroshum7-5.pdf

[11] Տե՛ս չափորոշիչ 8.3:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների խթանումն ամրագրված է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (Խնդիր 6.1)։ ԵՊՀ-ում ուսանողների ապագա կարիերային առնչվող խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համակարգումն իրականացնում է ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը[12]։

2006 թ. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնադրության համաձայն[13] Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կատարում է հետևյալ աշխատանքները.

- թեմատիկ բազմաբնույթ սեմինար-դասընթացներ, խորհրդատվություններ, ուսումնական ծրագրով չնախատեսված լրացուցիչ պրակտիկաների և ինտերնշիփ (փորձաշրջան) ծրագրերի (ստաժավորման) ու կամավորական աշխատանքների կազմակերպում,
- ձեռնարկությունների հետ համագործակցության ընդլայնում (հանդիպումներ, խորհրդակցություններ, ընդունելություններ, համագործակցության հուշագրերի կնքում),
- էլեկտրոնային ռեսուրսների զարգացում և վարում,
- աշխատանքային տոնավաճառների կազմակերպում և մասնակցություն։

Կենտրոնը վերջին 4 տարիների ընթացքում կազմակերպել է թեմատիկ բազմաթիվ դասընթացներ՝ տարբեր թե՛ ձևաչափով և թե՛ տևողությամբ։ Վերջին 4 տարիների ընթացքում կենտրոնի դասընթացներին («Քեյ-փի-էմ-ջի»-ի օրեր ԵՊՀ-ում, «Գաղափարից՝ բիզնես պլան», «Վարպետաց դասեր «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ում, «Ներկայացման հմտություններ», «Հուզական բանականության դերը կարիերայի զարգացման և ինքնակառավարման մեջ», «Ինչպես դառնալ հաջողակ տուրմենեջեր. TOP 5 քայլեր» և այլն) մասնակցել են շուրջ 5000 ԵՊՀ ուսանող և շրջանավարտ։

Կենտրոնի կողմից 2016-2020 թթ. կազմակերպված ուսումնական ծրագրով չնախատեսված պրակտիկաներին, ինտերնշիփերին մասնակցել է շուրջ 500 ուսանող (փորձաշրջաններ), գործատուների հետ հանդիպումներին մասնակցել է շուրջ 900 ուսանող։ Կենտրոնը ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին, և արդյունքում շուրջ 200 հոգի ստացել է աշխատանքի հնարավորություն։

Կենտրոնի միջոցով ԵՊՀ-ն կնքել է համագործակցության հուշագրեր այնպիսի ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ, ինչպիսիք են ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, «Ջի-Ար-Սի գիտելիքի կենտրոն» ՍՊԸ-ն, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն, «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամը, «Բլոքթեք» ՍՊԸ-ն, «Էյ ընդ էմ ռեյր» ՍՊԸ-ն, «Էֆ էմ դի քեյ էլ Եվրոպա» և այլն։

Կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում Կենտրոնի նախաձեռնությամբ մշակվել և իրականացվել են ծրագրեր, որոնց շնորհիվ լավագույն մասնակիցներն ընդունվել են աշխատանքի կամ ստացել կրթաթոշակ։ Սոցիալական պատասխանատվության շրջանակում 2017-2019 թթ. «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի հետ փոխգործակցությամբ իրականացվել է «Աջակցություն ուսմանը՝ ապագայի ներդրում» կրթաթոշակային ծրագիր։ Շուրջ 40 ուսանող հնարավորություն է

[12] Տե՛ս www.ysu.am/careercenter/, http://www.ysu.am/cooperation/, https://www.facebook.com/careercenterysu/
[13] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Shrjanavartneri-ev-karierayi_kentroni-kanonadrutyun.pdf

ստացել մասնակցել ծրագրի կրթական հատվածին: Արդյունքում՝ փոխհատուցվել է 24 ուսանողի 2 տարվա մագիստրատուրայի ուսման ամբողջական վարձավճար:

2017 թ. «Բիլայն Հայաստան», «Ռոսգոսստրախ Արմենիա» և «Էյչ-Էս-Բի-Սի Հայաստան» ընկերությունների հետ համագործակցության շրջանակում շուրջ 90 ուսանող և շրջանավարտ մասնակցեցին մի շարք դասընթացների, հանդիպումների, ինտերնշիփ ծրագրերի: Հաջողվածներից է նաև «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության հետ համագործակցության շրջանակում իրականացված «Տեղահանված հայ երիտասարդների աշխատանքի աջակցում» ծրագիրը: Մասնակից 51 շահառուներից 35-ը ստացել են աշխատանքի, լրացուցիչ փորձաշրջանի կամ կամավորական աշխատանքի առաջարկ: Կենտրոնը պարբերաբար կազմակերպում և մասնակցում է կարիերայի աջակցմանն ուղղված տարբեր աշխատանքային տոնավաճառների, որոնցից է «Կրթություն և կարիերա էքսպո» ամենամյա աշխատանքային տոնավաճառը: Կենտրոնը «Բրիջ» կազմակերպության հետ համատեղ 2018 թ.կազմակերպել է «Intership Hunt. Որոնի՛ր և գտի՛ր քո հնարավորությունը» խորագրով տոնավաճառը (շուրջ 20 մասնակից կազմակերպություն):

Կենտրոնը շարունակում է մշտադիտարկել ՀՀ աշխատաշուկայի զարգացումներն ու երիտասարդ մասնագետների զբաղվածությանն առնչվող միտումները: 2018 թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության («Ջի Այ Զեթ») հետ համագործակցությամբ իրականացվել է «Կանաչ աշխատաշուկայի գնահատում» թեմայով հետազոտություն, որի շրջանակում հարցումներ էին կատարվել թե՛ գործատուների, թե՛ շրջանավարտների շրջանում: Ստացված տեղեկատվությունը կարող է արդյունավետ կիրառվել մասնավորապես Կենսաբանության ֆակուլտետի և «Կանաչ աշխատաշուկայի» փոխգործակցության ընդլայնման, ֆակուլտետի հետագա զարգացման, կրթական ծրագրերի մշակման և մրցունակ մասնագետների պատրաստման հարցում: Հետազոտությունն առկա է ինչպես տպագիր, այնպես էլ առցանց տարբերակով[14]:

Կարիերայի ծառայությունների մատուցումն իրականացվում էլեկտրոնային արդյունավետ ռեսուրսների կիրառման և զարգացման միջոցով[15]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.6. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

ԵՊՀ-ն ունի մի շարք կառույցներ, որոնք աջակցում են ուսանողներին՝ ներգրավվելու համալսարանի հետազոտական լաբորատորիաների, կենտրոնների և ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում:

Ուսանողների գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելու նպատակով դեռևս 1947 թ. ԵՊՀ-ում ստեղծվել է ուսանողական կազմակերպություն՝ Ուսանողական գիտական ընկերություն (այսուհետ՝ ՈՒԳԸ)[16]: Բոլոր ֆակուլտետներում գործում են ՈՒԳԸ-ներ, որոնք ձևավորվում են ամբիոնների կողմից ներկայացված ուսանողներից: Ներկայումս ՈՒԳԸ-ի կազմում ընդգրկված են ավելի քան 146 (միջինում յուրաքանչյուր ֆակուլտետում 7 ուսանող), իսկ նրա ծրագրերին և միջոցառումներին մասնակցում են ավելի

[14] Հետազոտության մասին տե՛ս http://ysu.am/uploaded/Green_job_market_assessment_report_Arm.pdf

[15] Տե՛ս չափորոշիչ 8.4:

[16] Տե՛ս http://ysu.am/sss/hy/about-us

քան 2500 ուսանող և ասպիրանտ: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների աջակցությամբ ՈՒԳԸ-ի կողմից պարբերաբար անց է կացվում «Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցում» ուսուցողական դասընթացծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են սեմինարներ, գործնական պարապմունքներ, գիտափորձեր: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ԵՊՀ ՈՒԳԸ գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ արտաբյուջետային միջոցների հաշվին: Յուրաքանչյուր տարի ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվով ԵՊՀ ՈՒԳԸ աշխատանքների իրականացման համար հատկացվում են համապատասխան միջոցներ:

Համաձայն ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 6.2.4. կետի, այն է՝ նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքները խթանող ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, ՈՒԳԸ-ն կազմակերպել է գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունների զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնցից են «Գիտախոս» գիտահանրամատչելի զեկուցումների մրցույթը, «Գրքամարտ» ինտելեկտուալ մրցույթը, ինչպես նաև ուսանողական գիտական ճամբարները՝ կազմակերպված Կենսաբանության, Փիլիսոփայության և հոգեբանության, Ֆիզիկայի ֆակուլտետների ՈՒԳԸ-ների կողմից:

2014-2019 թթ. ընթացքում ԵՊՀ ՈՒԳԸ-ն կազմակերպել է 3 միջազգային, 27 հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներ, որոնց ընթացքում ներկայացվել է ուսանողների շուրջ 2152 գիտական զեկուցում, հրատարակվել է գիտական հոդվածների և թեզիսների 31 ժողովածու, որոնցում ընդգրկված է մոտ 2000 գիտական աշխատանք: Միևնույն ժամանակ ՈՒԳԸ անդամները հրատարակել են ավելի քան 170 գիտական հոդված և թեզիս այլ հանդեսներում և ժողովածուներում: ԵՊՀ ՈՒԳԸ-ն օժանդակում է նաև ԵՊՀ ուսանողների մասնակցությանը ՀՀ այլ բուհերում կազմակերպվող երիտասարդական գիտաժողովներին և ծրագրերին, նրանց աշխատանքների հրատարակմանը՝ ՀՀ առաջատար գիտական հանդեսներում և գիտաժողովների ժողովածուներում: ՈՒԳԸ-ն նաև տեղեկացնում է ուսանողներին միջազգային հետազոտական ծրագրերի մասին, աջակցում արտերկրում կայացող միջազգային գիտաժողովներին նրանց մասնակցությանը: Այդ նպատակով ՈՒԳԸ-ն համաձայնագրեր է կնքում տարբեր երկրների բուհերի երիտասարդական գիտական կառույցների հետ՝ փոխադարձաբար աջակցելով նրանց ուսանողների մասնակցությանը տարբեր միջազգային ծրագրերում:

ԵՊՀ բյուջեում նախատեսված է առանձին տող՝ ուսանողական գործուղումների համար, որով ֆինանսավորվում է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը տարբեր գիտաժողովներին, սեմինարներին, աշխատաժողովներին և այլ միջոցառումներին: Նախորդ ուստարում ՈՒԳԸ մեծ թվով անդամներ մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների:

Հարկ է նշել, որ դեռևս 2014 թ. հոկտեմբերի 30-ին «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուն» գրանցվել է պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման համակարգում՝ որպես պարբերաբար տպագրվող ժողովածու՝ ISSN 1829-4367 համարանիշով: 2014 թ. դեկտեմբերին «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուն» ընդգրկվել է նաև ՀՀ ԲՈԿ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրապարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

ՈՒԳԸ հոդվածների ժողովածուն անցում կատարեց տարեգրքի՝ հիմք ընդունելով 2018 թ. դեկտեմբերի 28-ի ԲՈԿ-ի N86Ա հրամանը:

Վերջին տարիների ընթացքում որոշ չափով նկատվում է ՈՒԳԸ աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի նեկայացուցիչների մասնակցության թուլացում, ինչը հաճախ ներառված չէ դասախոսների պարտականությունների ֆորմալ շրջանակում: Բավարար է ՈՒԳԸ-ի կողմից ինտերնետային գործիքների կիրառումը: Զուգահեռաբար գործարկվել է ԵՊՀ ՈՒԳԸ գիտական էլեկտրոնային հրատարակումների կայքը[17]:

ԵՊՀ մի շարք ֆակուլտետների և ինստիտուտների[18] բակալավրի և մագիստրատուրայի բազմաթիվ ուսանողներ անմիջականորեն ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում, և նրանք համալսարանն ավարտում են՝ արդեն իսկ ունենալով տպագրված գիտական հոդված ազդեցության գործակից ունեցող ամսագրերում: Բակալավրի որոշ ուսանողներ ԵՊՀ-ն ավարտելիս արդեն իսկ ունեն միջազգային կոնֆերանսներին ներկայացված աշխատանքների տպագրված թեզիսներ: Կենսաբանության և Ֆիզիկայի ֆակուլտետների ուսանողներն իրենց ավարտական աշխատանքները կատարում են համապատասխանաբար «Կենսաբանության» և «Ֆիզիկայի» ԳՀԻ լաբորատորիաներում և նույնպես ներգրավված են գիտահետազոատական տարբեր աշխատանքներում[19]: Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողները ավարտական և մագիստրոսական թեզերը կատարում են ինչպես հանրապետության, այնպես էլ արտերկրյա (Գերմանիայի, ՌԴ) դեղագործական և հարակից մասնագիտական համալսարաններում և հետազոտական կենտրոններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.7. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

ԵՊՀ ուսանողների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ («Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 49, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ), ԵՊՀ կանոնադրությամբ (հոդված 132), ԵՊՀ ներքին կարգապահական կանոններով (հոդված 27) և ԵՊՀ այլ ներքին իրավական ակտերով:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ խնդիրների լուծման համար ԵՊՀ-ում գործում է Ուսանողական խորհուրդ (ԵՊՀ ՈՒԽ): Այն ԵՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է: ԵՊՀ ՈՒԽ-ի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ[20]: ՈՒԽ-ի կանոնադրությունն ընդունվում է ՈՒԽ ղեկավար մարմնի կողմից և հաստատվում լիազոր մարմնի (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության) կողմից (ԵՊՀ կանոնադրություն, 116 հոդված):

ԵՊՀ ՈՒԽ գործող կանոնադրությունն ընդունվել է 2018 թ. նոյեմբերի 15-ին կայացած ՈՒԽ համագումարի կողմից: ՈՒԽ կանոնադրության համաձայն՝ ՈՒԽ նպատակներն են՝ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովել ուսանողների մասնակ-

[17] http://www.ysu.am/ssspub/hy?fbclid=IwAR3PTeZ3OXlUnn7MgFCYZvMEOEFMIEEY9IykRm_kg5KNdM8e_5jp7Tjawvo

[18] Որպես օրինակ կարելի է բերել ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետը, Ֆարմացիայի ինստիտուտը և Մանրէաբնական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարական կենտրոնը:

[19] Հետազոտության և ուսումնառության գործընթացի հետ փոխկապակցման մասին տե՛ս չափորոշիչ 6.5:

[20] http://ysu.am/files/Kanonadrutyun-Stud_council.pdf

ցությունը համալսարանի կառավարմանը, համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր, մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանել ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացումը, աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը և այլն (ԵՊՀ ՈՒԽ կանոնադրություն, հոդված 2.1): Բոլոր վերոհիշյալ նպատակներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են ԵՊՀ ուսանողների իրավունքներին:

Ուսանողական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է ռազմավարական ծրագրին համապատասխան (2019-2021 թթ. ռազմավարական ծրագիր՝ ընդունված ԵՊՀ ՈՒԽ նախագահության 10.09.2019 թ. նիստում), որտեղ տեղ են գտել ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության հիմնական գործիքակազմը, սոցիալական, գիտակրթական, մշակութային, ռազմահայրենասիրական ոլորտները կարգավորող ուղղություններն ու ծրագրերը: Համալսարանի ուսանողների ճնշող մեծամասնությունն իրազեկված է ՈՒԽ գործունեության մասին և անհրաժեշտության դեպքում դիմում է ՈՒԽ-ին: Առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների 70-80 %-ը մասնակցում է ՈՒԽ ընտրություններին, շուրջ 500 ուսանող ընտրվում է ՈՒԽ տարբեր մակարդակների կառույցներում, տարեկան շուրջ 500 ուսանող մասնակցում է ՈՒԽ-ի կողմից իրականացվող ամառային և ձմեռային հանգստի սոցիալական աջակցության ծրագրերից:

ԵՊՀ ՈՒԽ կանոնադրությամբ սահմանված են նրա ղեկավար մարմինները՝ համագումար և նախագահություն: ՈՒԽ գործունեությունն արդյունավետ իրականացնելու նպատակով նախագահությունում գործում են համապատասխան մշտական հանձնաժողովներ (իրավական, արտաքին կապերի, գիտակրթական, սոցիալական, մշակույթի, սպորտի և այլն):

ԵՊՀ ՈՒԽ-ի՝ ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

- կանխարգելող աշխատանքներ և իրազեկում (տեղեկատվության տարածում, հանդիպումներ, բացատրական աշխատանք և այլն),
- ոչ անհատականացված աշխատանքներ կամ ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացում (տարբեր կանոնակարգերի, ընթացակարգերի և խնդիրների քննարկում, առաջարկությունների ներկայացում և այլն),
- անհատականացված աշխատանք (առանձին հարցի վերաբերյալ ուսանողի կամ ուսանողների խմբի իրավունքների պաշտպանության իրականացում նրանց բանավոր կամ գրավոր դիմումի համաձայն):

ԵՊՀ ՈՒԽ-ն իր գործունեության ընթացքում ձևավորել է ուսանողների իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներ՝ ուսանողների խնդիրների, իրավունքների խախտումների բացահայտում, բարձրաձայնում, կառավարման մարմիններում քննարկում և այլն: Ուսանողների խնդիրները քննարկվում են նաև ֆակուլտետների ՈՒԽ-ներում, ԵՊՀ ՈՒԽ նախագահությունում, իրավական և այլ հանձնաժողովներում: Հարցի բովանդակությունից կախված՝ ընտրվում է դրան արձագանքելու արդյունավետ ճանապարհը: Գործում է ՈՒԽ

ֆեյսբուքյան էջը, որը ուսանողների հետ առցանց կապի ապահովման արդյունավետ և օգտակար գործիք է: Այն ունի ավելի քան 16000 հետևորդ:

ԵՊՀ ՈՒԽ գործունեությունը ֆինանսավորվում է ԵՊՀ արտաբյուջետային միջոցների հաշվին, ամեն տարի ԵՊՀ բյուջեում ՈՒԽ-ին հատկացվում են համապատասխան միջոցներ:

Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության համար ԵՊՀ-ում առկա է համապատասխան բազմամակարդակ համակարգ[21]: Ուսանողներն իրենց հուզող տարբեր խնդիրներով ֆակուլտետում դիմում են ֆակուլտետի դեկանին և կուրատորներին: Միաժամանակ, նրանք դիմում են ֆակուլտետի ուսանողական խորհրդին, իսկ որոշ հարցերի դեպքում՝ ուսանողական գիտական ընկերությանը: Համալսարանական մակարդակում ուսանողներն ուղղակիորեն կամ ՈՒԽ-ի միջոցով կարող են դիմել ռեկտորին կամ պրոռեկտորներին: Ուսանողների խնդիրների անմիջական լուծումն ապահովվում է ԵՊՀ ռեկտորի, համապատասխան պրոռեկտորի, Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի, իսկ անհրաժեշտության դեպքում այլ ստորաբաժանումների կողմից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.8. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և որակի ապահովման[22] համար իրականացվում են «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում» և «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցում»: Շրջանավարտների հարցումն իրականացվում է դեռևս 2010 թ. հունիսի 17-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման» կանոնակարգի համաձայն[23]: ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հոկտեմբերի 12-ի նիստում սահմանված կարգի 1.2 կետի համաձայն՝ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումն իրականացվում է առցանց[24]:

Շրջանավարտների հարցման հարցաթերթիկի մի շարք կետեր անմիջականորեն առնչում են կրթական, խորհրդատվական, շրջանավարտների զբաղվածության[25] և այլ օժանդակող ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես ներառված են հետևյալ հարցերը.

- Պատրաստվո՞ւմ եք շարունակել Ձեր ուսումը,
- Հայտնի՞ է արդյոք՝ որտեղ եք աշխատելու,
- Իսկ այժմ Դուք աշխատո՞ւմ եք,
- Որքանո՞վ են գրադարանը և ընթերցասրահները տրամադրում ժամանակակից

---

21 Տե՛ս Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/voroshum7-5.pdf

22 Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերի մասին (տե՛ս չափորոշիչ 10.3):

23 Նոր կանոնակարգը հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի2017 թվականի հունվարի 26-ի նիստում:

24 http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg.pdf

25 2015-2019 թթ. շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ կատարված հարցումների թվերը ներկայացված են հավելված 4.6-ում:

մասնագիտական գրականություն,

- Որքանո՞վ եք բավարարված գրադարանի ընթերցասրահների վիճակից և կահավորանքից,
- Որքանո՞վ եք բավարարված համացանցի մատչելիությունից,
- Համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի դերը հետագա աշխատանքային գործունեության մեջ ընդգրկվելու տեսանկյունից,
- Որքանո՞վ եք գոհ համալսարանի և ֆակուլտետի ղեկավարությունից,
- Որքանո՞վ եք գոհ պրոֆեսորադասախոսական կազմից[26],
- Որքանով եք գոհ ուսանողական կառույցներից (ՈՒԽ, ՈՒԳԸ),
- Որքանո՞վ են արդյունավետ աշխատում ուսանողների դիմումների և բողոքների ընթացակարգերն ու մեխանիզմները,
- Ձեր կարծիքը կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ:

Ուսանողական հարցումն իրականացվում է 2017 թվականի հունվարի 26-ին ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված «ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգի» համաձայն: Ուսանողական հարցման հարցաթերթիկում ներառված են հարցեր, որոնք շատ չեն ենթարկվել փոփոխության. մասնավորապես ներառված են հետևյալ հարցերը.

- Արդյունավե՞տ եք համարում ուսումնական խորհրդատուի (կուրատորի) աշխատանքը Ձեզ հետ,
- Գնահատեք Ձեր ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալ(ներ)ի՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը,
- Գնահատեք Ձեր ֆակուլտետի դեկանատի գործավարների՝ուսանողների հետ տարվող աշխատանքները:

Հարկ է նշել, որ բուհում պարբերաբար տեղի են ունենում ընթացիկ հարցումներ, որի արդյունքում ուսանողական կառույցների (ՈՒԽ, ՈՒԳԸ) կողմից վեր են հանվում ուսանողներին հուզող խնդիրները և հարցերը՝ փորձելով գտնել լուծումներ:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 4-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Հանրակրթական հաստատությունների և դիմորդների հետ տարվող աշխատանքների արդյունավետ համակարգի առկայություն: 2. ԵՊՀ բակալավրիատի առկա համակարգում դիմորդների ներհոսքի կայուն տեմպեր (կենտրոնացված ընդունելության համակարգում համալսարանի	1. ԵՊՀ ընդունելության համակարգում օտարերկրյա ուսանողների փոքր մասնաբաժին: 2. Օտարալեզու կրթական ծրագրերի փոքր թիվ: 3. Ուսանողների իրավունքների պաշտպանության հստակ իրավական ըն-

[26] Հաստատությունը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար: Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքների մասին մանրամասն տե՛ս Չափորոշիչ 5.3:

բակալավրիատի 30-33 % ընդունելության բաժնեմաս): 3. Ուսանողների կրթության հասանելիություն, ընդունելության հստակ մեխանիզմների առկայություն, ընդունելության սահմանված կանոնակարգերով աշխատանքների հստակ կազմակերպում: 4. Ուսանողական խորհրդի ֆակուլտետային ստորաբաժանումների և մասնագիտացված հանձնաժողովների առկայություն (գիտակրթական, իրավական, սոցիալական և այլն): 5. Ուսանողական խորհրդի աշխատանքների կազմակերպման ռազմավարական պլանավորման առկայություն և վերահսկողական գործառույթների իրականացում (ՈւԽ մոնիթորինգի և զարգացման հանձնախմբի առկայություն): 6. Ուսանողների ապագա զբաղվածության աջակցման մեխանիզմների առկայություն՝ ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկությունների, միջազգային կազմակերպությունների, պետական և մասնավոր հաստատությունների հետ համագործակցության շնորհիվ: 7. Աշխատաշուկայի մարտահրավերներին համահունչ նոր կրթական ծրագրերի ներմուծում:	թացակարգերի և մեխանիզմների ոչ լիարժեք կիրառում: 4. Ուսանողների հետ կապի և ինֆորմացիայի տարածման ոչ բավարար մեխանիզմներ: 5. Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ոչ լիարժեք մեխանիզմներ և ընթացակարգեր: 6. Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման մեխանիզմները դեռևս ինստիտուցիոնալիզացված չեն:
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Համապատասխան պետական մարմիններից և գործատուներից ստացված տեղեկատվության հիման վրա մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համար խիստ կարևոր միասնական տեղեկատվական համակարգի (շտեմարանի) ձևավորում: 2. Ուսանողների իրազեկվածության և իրավագիտակցության մակարդակի բարձրացման այլընտրանքային հարթակների և հնարավորությունների առկայություն:	1. Ժողովրդագրական առկա պայմաններում հանրակրթական դպրոցների շրջանավարտների թվի զգալի նվազման միտում: 2. ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում տեղական և արտասահմանյան բուհերի միջև աճող մրցակցություն՝ ընդունելության անհավասար պայմանների առկայությամբ: 3. Աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ թույլ կապ: 4. Նոր օրենսդրական փոփոխությունների արդյունքում բուհի կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածության կրճատում:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Զարգացնել գործատուների հետ առկա համագործակցությունը և նրանց ներկայացուցիչներին ներգրավել դիմորդների/ուսանողների մասնագիտական կողմնորոշման և շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացներում:
2. Իրականացնել աշխատաշուկայի հետազոտություն և մոնիթորինգ՝ ընդունելության գործընթացը աշխատաշուկայի կարիքներին առավելագույնս համապատասխանեց-նելու նպատակով:
3. Ավելացնել օտարալեզու կրթական ծրագրերի թիվը և մշակել այլ մեխանիզմներ օտարերկրյա ուսանողների ներգրավման համար:
4. Մշակել և ներդնել ուսանողների իրավունքների պաշտպանության և նրանց իրա-զեկվածության բարձրացմանն ուղղված հստակ ընթացակարգեր:
5. Մշակել և ներդնել շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշակման առցանց համակարգ՝ ներգարվելով ԵՊՀ հիմնական գոր-ծատու կազմակերպություններին:

ՉԱՓԱՆԻՇ 5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ՝ ՄՈՒՀ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՄՆԵԼՈՒ ԵՎ ՄԿԾ-ՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՎԱԾ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄՈՎ

ԵՊՀ ՌԾ-ով նախատեսված է զարգացնել դասախոսական կազմի ներուժը՝ կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերը, մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացները, սահմանել ԿԾ համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները՝ ըստ կրթական վերջնարդյունքների, և լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերը: Բացի այդ, ՌԾ-ում նախատեսված է դասախոսական կազմի վերապատրաստում ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսների կիրառման համար խրախուսման մեխանիզմների ներդրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ԵՊՀ-ում 2019/20 ուստարում իրականացվող 62 բակալավրի և 120 մագիստրոսի կրթական ծրագրերը նպատակաուղղված են համալսարանի առաքելությամբ սահմանված հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով մասնագետների պատրաստմանը: Նույն ոլորտներին են ուղղված նաև համալսարանականների կողմից իրականացվող հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունները: Այդ երկու ուղղությամբ կատարվող աշխատանքների հիմնական սուբյեկտները դասախոսներն են:

Դասախոսական կազմի ընտրության քաղաքականության սկզբունքներն արտացոլված են «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգում», որում ներկայացված են դասախոսական տարակարգերը (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս), տարակարգերի գործունեության ձևերը և տեղակալման չափանիշները:

ԵՊՀ դասախոսական կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրությամբ՝ մինչև 5 տարի ժամկետով: Դասախոսական կազմի ընտրության (վերընտրության) համար առաջնահերթ են համարվում հետևյալ մասնագիտական պահանջները՝

1) մասնագիտական կրթության որակավորումը,
2) գիտական աստիճանը, կոչումը,
3) մասնագիտական և մանկավարժական հմտությունները,
4) գիտահետազոտական գործունեության արդյունքները,
5) որակավորման բարձրացումը և վերաորակավորումը,
6) դասախոսի գնահատման այլ ձևաչափեր (ինքնագնահատում, գործընկերային գնա-

հատում, գնահատում անմիջական ղեկավարի կողմից և այլն)։

Դասախոսական տարակարգերին ներկայացվում են նաև լրացուցիչ պահանջներ. պաշտոնի հավակնորդները վերջին հինգ տարվա ընթացքում պետք է ունենան մենագրություն, դասագիրք կամ երեք հոդված՝ հրապարակված ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում» ընդգրկված պարբերականներում, վաստակեն առնվազն 30 ECTS կրեդիտ ԵՊՀ դասախոսների որակավորման բարձրացման (ԴՈԲ) ծրագրի շրջանակներում, ապահովեն ուսանողական հարցման միջոցով գնահատման արդյունքի նվազագույն շեմ (սահմանում է որակավորման մանդատային հանձնաժողովը)։

Ուսումնաօժանդակ տարակարգի հաստիքները սահմանված են «ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգ»ով»: Ցանկը հաստատվում է ռեկտորի հրամանով, իսկ իրավասությունների և պարտականությունների շրջանակը սահմանված է պաշտոնի անձնագրերով։

Դասախոսական կազմի հավաքագրման սկզբունքների կիրառման արդյունքում 2018/2019 ուստարում համալսարանի հիմնական դասախոսական կազմում եղել է 1116 դասախոս, որից պրոֆեսոր՝ 169 (15,1 %), դոցենտ՝ 468 (41,9 %), ասիստենտ և դասախոս՝ 479 (42,9 %)։ Այս կազմից 797 մասնագետ՝ 71,4 %-ն ունի գիտական աստիճան։ Հատկանշական է, որ գիտական աստիճան չունեցողների մեծ մասը սպասարկող ամբիոնների դասախոսներ են, որոնց գործառույթը հիմնականում լեզուների, ֆիզդաստիարակության և այլ օժանդակ, ոչ մասնագիտական առարկաների դասավանդումն է։

Գիտական աստիճանի և գիտահետազոտական գործունեության արդյունքների կարևորումը նպատակաուղղված է բուհի առաքելության այն բաղադրիչին, ըստ որի՝ համալսարանականների կողմից պետք է իրականացվեն հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտությունների և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով հիմնարար ու կիրառական գիտական հետազոտություններ։

Համաձայն վերջին 5 տարում դասախոսական կազմի գիտական հետազոտությունների արդյունքների՝ հրատարակվել են 155 դասագիրք, 9132 հոդված, 424 մենագրություն, 494 ձեռնարկ. 1732 թեզիս ներկայացվել է միջազգային և հանրապետական գիտաժողովներում։ ԵՊՀ գիտական աշխատանքները կազմում են ՀՀ-ում հրապարակումների 30 %-ը, ինչը վկայում է դասախոսների հետազոտական ակտիվության և արդյունավետության մասին։ Այս փաստերը խոսում են կրթական գործընթացում հետազոտող դասավանդողներ ներգրավելու քաղաքականության հաջողության մասին։

Կրթական ծառայությունների մատուցումը և տարբեր ոլորտների համար բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը ԵՊՀ առաքելության մյուս բաղադրիչն է։ Մասնագիտական կրթության որակավորումը, գիտական կոչումը, մասնագիտական և մանկավարժական հմտություններն այն որակներն են, որոնք կարևորվում են ԵՊՀ դասախոսական կազմի ձևավորման գործընթացում։ Դասախոսական կազմի մանկավարժական կարողությունների զարգացմանն են ուղղված նրանց գնահատման տարբեր ձևաչափերի կիրառումը, որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացները։

Դասավանդող կազմը, որպես կանոն, ունի դասավանդվող առարկայի կամ առարկաների ուղղվածությանը համապատասխան հենքային կրթություն, զբաղվում է ուսումնամեթոդական

և հետազոտական գործունեությամբ: Հատուկ մասնագիտական դասընթաց վարողները կամ մագիստրատուրայում դասավանդողները, որպես կանոն, ունեն գիտական աստիճան և կոչում կամ ոլորտի գործատուներ են՝ աշխատանքային մեծ փորձառությամբ:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների առցանց հարցումները ցույց են տալիս, որ նրանք ընդհանուր առմամբ գոհ են դասախոսական կազմից: 2017/18 և 2018/19 ուստարիների տվյալներով ԵՊՀ դասախոսների միջին գնահատականը կազմում է 4,68՝ առավելագույն 5 միավորից: Ընդ որում, 2018/19 ուստարվա գրանցված ամենացածր արդյունքը 4,43 է, իսկ ամենաբարձրը՝ 4,83: Այս տեղեկատվությունը վկայում է ընդգրկված դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական բարձր որակների մասին:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ 2017–2018 և 2018-2019 ուսումնական տարիների շրջանավարտների հարցման արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց գնահատմամբ ԵՊՀ-ում ուսումնառությունը՝

- նպաստում է մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը (4,37),
- ապահովում է տեսական գիտելիքներով (4,55),
- ապահովում է գործնական հմտություններով (4,12):

Շրջանավարտների 97,3 %-ը բավարարված է ստացած կրթությունից և խորհուրդ կտա իր մերձավորներին ու ընկերներին ուսումը շարունակել ԵՊՀ-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվությունների հիման վրա ԵՊՀ-ն, որպես բարելավման գործողություն, նախատեսել էր ԿԾ-ների մասնագրերում սահմանել դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր (այդ թվում՝ մանկավարժական) և մասնագիտական պահանջներ՝ ծրագրի նպատակին և կրթական վերջնարդյունքներին համապատասխան: Բարելավման գործողությունը մեկնարկել է 2019/20 ուստարում. սկսվել է ԵՊՀ ԿԾ-ների մասնագրերում դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ սահմանելու վերաբերյալ փորձնական ծրագիրը: Վերջինիս մասնակցում էին տասը ֆակուլտետ և մեկ գիտակրթական կենտրոն՝ ընդհանուր առմամբ 16 կրթական ծրագրով: Արդյունքում յուրաքանչյուր ԿԾ-ի համար սահմանվեցին դասախոսի ընդհանրական (փոխանցելի) և մասնագիտական կարողությունները:

Ընդհանուր և մասնագիտական պահանջների սահմանումը լուծում է երկու խնդիր.

1. դասախոսի հստակ պրոֆեսիոգրամմայի մշակման հիման վրա համապատասխան որակյալ ռեսուրսի հավաքագրման գործընթացի բարելավում,
2. ԴՈԲ ծրագրերն ուղղորդելու և հասցեական դարձնելու միջոցով դասախոսական կազմին իսկապես անհրաժեշտ և ՄԿԾ վերջնարդյունքին հանգեցնող մասնագիտական և ընդհանրական կարողությունների զարգացում:

Երկրորդ փուլում նախատեսվում է ԵՊՀ բոլոր ԿԾ-ների համար սահմանել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ: Դրանք այնուհետև պետք է ներառվեն «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային

ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգում» և հաշվի առնվեն ուսումնական բեռնվածության բաշխման գործընթացում:

Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականության իրականացման տեսանկյունից դրական տեղաշարժ է պաշտոնների անձնագրերի ներդրումը (2018 թ.), որոնցում սահմանված են պաշտոններին ներկայացվող պահանջները աշխատանքի կազմակերպման կարգի և պատասխանատվության, գիտելիքների և հմտությունների, աշխատանքային պարտականությունների վերաբերյալ: Այդուհանդերձ, պաշտոնի անձնագրերում սահմանված չափանիշները ընդհանրական են և անմիջաբար չեն զուգակցվում ԿԾ-ների նպատակների ու վերջնարդյունքների հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի 1-ին՝ «Որակյալ կրթություն» նպատակի («…բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ԵՊՀ-ում ստացած կրթությունից») Խնդիր 1.3–ի լուծման համար նախատեսվել են հետևյալ գործողությունները.

ա) գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում,

բ) նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցումները:

ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված «ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկով» նախատեսվում է դասախոսական կազմին գնահատել գործունեության երեք հիմնական ոլորտներից յուրաքանչյուրում (դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեություն, հասարակական և վարչական գործունեություն): Գնահատումը պետք է կատարվի գործընթացում ներգրավված հիմնական շահակիցների՝ ուսանողների, գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի (ամբիոնի վարիչի) կողմից՝ յուրաքանչյուր տարակարգի (դասախոս, ասիստենտ, դոցենտ և պրոֆեսոր) համար մշակված գնահատման չափանիշների օգնությամբ:

Ձեռնարկը, որում սահմանված են նաև գնահատման ընթացակարգը, տարբեր ձևաչափեր և դասախոսական տարակարգերի գնահատման ռուբրիկները, քննարկվել է ԵՊՀ գիտական խորհրդում և ընդհանուր հավանության արժանացել: Սակայն առաջարկվել է փորձարկել համակարգի տարբեր բաղադրիչները և, դրանց արդյունավետության դեպքում, կիրառել համակարգն ամբողջությամբ:

Շահակիցների ամենակարևոր խումբը ուսանողական համակազմն է, որի հետ կազմակերպվող հարցումները դասախոսական կազմի գնահատման հիմնական մեխանիզմներից է: Ուսանողական հարցումները համալսարանում պարբերաբար իրականացվում են 2002 թվականից՝ «ԵՊՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման կանոնակարգին» համապատասխան: Դրանք անցկացվում են առկա և հեռակա ուսուցման սովորողների շրջանում հստակ ժամանակացույցով՝ տարին երկու անգամ՝ ամեն կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո:

Հարցումները ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի բաղադրիչներից են և իրականացվում են ուսումնամեթոդական վարչության ու ֆակուլտետների կողմից, իսկ արդյունքները մշակվում են ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնում: Դրանից հետո վերլուծությունները տրամադրվում են ֆակուլտետներին և ամբիոններին, ամփոփ տարբերակով ներկայացվում ԵՊՀ գիտական խորհրդի տարեվերջյան նիստում: Նախորդ հավատարմագրումից հետո հարցումների օբյեկտիվությունը մեծացնելու և արդյունքների մշակումն արագացնելու նպատակով 2018 թ. դրանք կազմակերպվում են առցանց՝ ԵՊՀ համացանցային պորտալի միջոցով:

Հետևելով նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվություններին՝ ընդլայնվել են նաև հարցումների արդյունքների օգտագործման նպատակները, որոնք են՝

- աջակցել դասախոսների ինքնավերլուծության իրականացմանը և նրանց կողմից դասավանդման մոտեցումների ու կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը,
- ապահովել դասախոսների առաջխաղացումը և խրախուսումը,
- լրավճարներ հատկացնել դասախոսներին:

Հարցման միջոցով ուսումնասիրվում է ուսանողների կարծիքը դասախոսների մասնագիտական հմտությունների և կարողությունների, դասավանդման մեթոդների, մանկավարժական վարպետության և դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության վերաբերյալ: Ամբիոններում գնահատման արդյունքների քննարկման հիման վրա վերանայվում են ուսումնամեթոդական նյութերը, դասախոսները վերլուծում են կիրառվող դասավանդման մեթոդների արդյունավետությունը. արդյունքում ավելի շատ են սկսել կիրառվել ուսուցման ինտերակտիվ և համակցված եղանակներ, որոնք նպաստում են ուսանողների քննական մտածողության և վերլուծական կարողությունների զարգացմանը:

2015-2019 թթ. ընթացքում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ԵՊՀ ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են դասավանդողների մասնագիտական և մանկավարժական որակներով: 2017/18 ուստարվանից, երբ ներդրվեց հարցումների առցանց համակարգը, կտրուկ նվազել է հարցման մասնակիցների թիվը. օրինակ, եթե 2017/18 ուստարում հարցումների մասնակցել է առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողության 56,5 %-ը, ապա 2018/19 ուստարում՝ միայն 32,5 %-ը, որն ավելի է համապատասխանում մոտիվացված ուսանողության թվաքանակին: Սակայն դրանից չեն փոխվել դասախոսական կազմի միջին գնահատականները. և՛ 2017/18, և՛ 2018/19 ուստարիներին 5-միավորանոց սանդղակով գնահատականների միջինը ըստ ֆակուլտետների տատանվել է 4.43÷4.83 միջակայքում:

«ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգի» համաձայն՝ տեղակալման չափանիշների ցանկում մանդատային հանձնաժողովը հաշվի է առնում ուսանողական հարցման միջոցով դասախոսի գնահատման արդյունքները: Դրանք հաշվի են առնվում նաև դասախոսական կազմին գիտական կոչումներ շնորհելու ժամանակ, որը նրանց առաջխաղացման պարտադիր պահանջներից է:

Ուսանողական հարցման արդյունքները դասախոսներին լրավճարներ հատկացնելու նպատակով ԵՊՀ-ում սկսել են հաշվի առնել դեռևս 2009 թ. ներդրված տարբերակված աշխատավարձի վճարման կարգով: Մոտեցումները պարբերաբար բարելավվել են. ներկայումս գործող «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» (նոր խմբագրությամբ՝ 2020 թ.) համաձայն՝

ուսանողների հարցման արդյունքներով ԵՊՀ հիմնական դասախոսներին, անցկացվող մրցույթի արդյունքով, տարին երկու անգամ վճարվում է լրավճար:

«ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգի» համաձայն՝ ուսումնական միջավայրի և ռեսուրսների գնահատման համատեքստում 2014 թ. սկսած կարծիքներ են հավաքվում կիրառվող ուսուցման մեթոդաբանությունների և դասախոսական կազմից ընդհանուր բավարարվածության մասին: Այս հարցման արդյունքների վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ ուսանողները հիմնականում գոհ են դասավանդողների մասնագիտական պատրաստվածության աստիճանից և որակներից. 5-միավորանոց սանդղակով 2014-2019 թթ շրջանավարտները դասախոսական կազմին գնահատել են 4.58 ÷ 4.67 միջակայքում:

Պրոֆեսորադասախոսական կազմի կատարած աշխատանքները գնահատվում են նաև ուսումնամեթոդական վարչության կողմից դասընթացների ծրագրերի կատարողականի, դասամատյաններում արված գրանցումների ստուգման միջոցով: Արդյունքները զեկուցվում են ռեկտորատի նիստում:

Գնահատման այս մոտեցումներն ու ընթացակարգերը դասախոսական կազմին հնարավորություն են տալիս տեղեկանալու իր աշխատանքի բացթողումներին և ձեռքբերումներին, իսկ ղեկավարությանը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ՝ազատվել ոչ կոմպետենտ մասնագետներից, կատարել կարիքների գնահատում և դրանց հիման վրա մշակել դասախոսական կազմի մասնագիտական որակների կատարելագործման և վերապատրաստման ծրագրեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

2011 թ.-ից ԵՊՀ-ում գործողության մեջ է դրվել «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը»՝ երկու շրջափուլով (2011-2016, 2016-2021), որն իրականացնում է Հետբուհական և լրացուցիչ կրթության վարչությունը (ՀԼԿՎ):

Ծրագիրը մշակել է հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ հաշվի առնելով նախորդ վերապատրաստումների արդյունքների վերլուծությունները, ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի հիմնադրույթները և այլ առաջարկություններ: Ֆակուլտետների կարիքների գնահատման հարցում ՀԼԿՎ-ին աջակցում էին ԴՈԲ գծով ֆակուլտետների պատասխանատուները՝ ներկայացնելով ուսանողական հարցման արդյունքները:

Դասընթացների կազմակերպման ընթացքում նույնպես վերլուծվել են ունկնդիրների կարիքները: ԴՈԲ ծրագրի ներքին գնահատումը կատարվում է 3 մակարդակով՝ ռեկտորատ (ծրագրի մշակում և պարբերական գնահատում), ֆակուլտետներ (ուսանողական հարցումներ և վերապատրաստման արդյունքների փոխադրում լսարան) և դասընթացներ (ՀԼԿՎ և ունկնդիրներ): Ծրագրի նոր ձևաչափը և անհատական վերապատրաստումը դասախոսին հնարավորություն էին տալիս ձեռք բերելու անձնային հետաքրքրություններով ու կարիքներով կամ մասնագիտության ոլորտի նոր պահանջներով պայմանավորված կոմպետենցիաներ:

2015 թ.-ին «Հանրային քաղաքականության ինստիտուտ» հետազոտական կենտրոնի կողմից կատարվել է Ծրագրի արտաքին համապարփակ գնահատում՝ «Դասախոսների որակավորման բարձրացման միջոցառումների որակն ու արդյունավետությունը»:

Ներքին ու արտաքին գնահատումների հիման վրա ծրագրի 2-րդ փուլում (2016-2021 թթ.) կատարվեցին հետևյալ բարելավումները.

1. *«Կամընտրական դասընթացներ» մոդուլի* առարկայացանկի ամենամյա նորացում՝ հաշվի առնելով դասավանդողների և ունկնդիրների առաջարկությունները:
2. *«Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն»* կրթամասի հարստացում նոր դասընթացներով, որոնք նպատակաուղղված են ունկնդրի՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքների ու մեթոդների իմացության բարելավմանը և մանկավարժական ու հոգեբանական հմտությունների զարգացմանը:
3. *«Մասնագիտական պատրաստության պարտադիր դասընթացի»* զարգացում՝ ներառելով տվյալ մասնագիտության բոլոր բաղադրատարրերը՝ իրենց հիմնախնդիրներով և արդիականությամբ: Խրախուսվում է ունկնդիրների մասնակցությունը արտերկրի հրավիրյալ դասախոսների կողմից վարվող մասնագիտական արդիական դասընթացներին:
4. *Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների* մոդուլի շրջանակում MOODLE էլեկտրոնային գործիքի ուսուցում (e-learning.ysu.am), որը միաժամանակ անհրաժեշտ ռեսուրսներ է ստեղծում ԵՊՀ-ում հեռավար ուսուցման զարգացման համար:
5. *Հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասում* նոր բաղադրիչների ներդրում՝ ուսումնամեթոդական աշխատանքներ, հեղինակային իրավունքի արտոնագիր, հոդվածներին տրվող կրեդիտների տարբերակում՝ ըստ հանդեսների ազդեցության գործակցի, ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ներառվածության և այլն: Կարևորվում է նաև ուսանողների ընդգրկումը դասախոսների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքում:

Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի առաջին փուլի (2011-2016թթ.) արդյունքներով անգլերեն լեզվից վերապատրաստում է անցել և իմացության A1-C2 մակարդակ ձեռք բերել 839 դասախոս, որից ամենաբարձր՝ C1 և C2 մակարդակ՝ 214 դասախոս: Երկրորդ փուլի 1-ին եռամյակում (2016-2019թթ.) «Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» թեմայով (ներառյալ Google Classroom հեռավար կրթության համակարգը) վերապատրաստում է անցել 189 դասախոս, անգլերեն լեզվից՝ 210 դասախոս, իսկ լեզվի իմացության մակարդակը բարձրացրել է 61-ը:

Գործող ծրագիրը հընթացս մշտադիտարկվում, գնահատվում ու բարելավվում է: Այսպես, մշտադիտարկման արդյունքում բացահայտվել է 2 հիմնական թերություն՝ նորարարական կրթական տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակ և դասախոսների ժամանակակից մանկավարժական-մեթոդաբանական կարողությունների ձևավորմանն ուղղված դասընթացների ոչ լիարժեքություն: Թերությունների վերացմանն է ուղղվել ERASMUS+ PRINTeL նախագիծը:

PRINTeL նախագծով ներդրված դասավանդման նորարարական մոտեցումներ և թվային հմտություններ ներառող ներկայացված 5 դասընթացներով արդեն վերապատրաստվել է 416 դասախոս: Դասախոս ունկնդիրների շրջանում իրականացվող հարցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ ծրագիրը հիմնականում ապահովում է ակնկալվող կոմպետենցիաների ձեռքբերումը: Ներդրված նորագույն դասընթացների արդյունքում ԵՊՀ-ում աստիճանաբար

ձևավորվում են 5 ոչ ֆորմալ հանրույթներ՝ խորհրդատու դասախոսների ղեկավարությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ելնելով ԵՊՀ «Բարձրակարգ գիտամանկավարժական կազմ» հիմնարար արժեքից՝ համալսարանի կարևորագույն ներուժը և գործունեության հաջողության հիմնական գրավականը նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմն է, որի շնորհիվ ԵՊՀ-ն իրականացնում է իր առաքելությունը:

Ինչպես արդեն նշվեց վերևում, ԵՊՀ հիմնական դասախոսական կազմը ներառում է 1125 դասախոս, այդ թվում՝ 169 պրոֆեսոր, 468 դոցենտ, 488 ասիստենտ և դասախոս (2018/19 ուստարի): Ստորև ներկայացվում են վերջին հինգ ուստարիներին դասախոսական կազմի քանակական տվյալներն ըստ տարակարգերի:

Աղյուսակ 1. ԵՊՀ հիմնական դասախոսական կազմը

	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18		2018/19	
Պրոֆեսոր	162	12,6%	174	13,9%	184	14,8%	182	15,2%	181	15,1%	169	15,1%
Դոցենտ	491	38,1%	485	38,6%	496	39,9%	477	39,9%	498	41,6%	468	41,9%
Ասիստենտ և դասախոս	635	49,3%	596	47,5%	562	45,2%	537	44,9%	518	43,3%	479	42,9%
Ընդամենը	1288		1255		1242		1196		1197		1116	
Այդ թվում՝ գիտ. աստիճանով	852	66,1%	874	69,6%	852	68,6%	836	69,9%	819	68,4%	797	71,4%

Վերջին հինգ տարիներին պրոֆեսորադասախոսական կազմի 56 %-ը պրոֆեսորներ և դոցենտներ են, իսկ գիտական աստիճան ունեցողների հաշվեկշիռը կազմում է հիմնական դասախոսական կազմի 71,4 %-ը (տե՛ս Աղյուսակ 1): ԵՊՀ-ում դասավանդում են նաև ՀՀ ԳԱԱ 14 ակադեմիկոս և 19 թղթակից անդամ: Ուսումնաօժանդակ կազմի թվաքանակը պայմանավորված է ԿԾ-ներում ներգրավված ուսանողների և դասախոսների թվով: Ուսանող/դասախոս հարաբերակցությունը 13,9 է:

2013/2014-2017/2018 ուստարիներին նկատվել է հիմնական դասախոսական կազմի նվազում՝ շուրջ 7 %-ով: Նշված ժամանակահատվածում գիտական աստիճան ունեցողները կազմում են հիմնական դասախոսական կազմի 2/3-ից ավելին:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման և ձևավորման գործընթացում կարևորվում են նաև դասախոսական կազմի գենդերային և տարիքային գործոնները: 2013/14-2018/19 ուստարիներին հիմնական դասախոսական կազմում իգական սեռի դասախոսների հաշվեկշիռը տատանվում է 55-58 % միջակայքում:

Ինչպես ներկայացված է Աղյուսակ 2-ում, հիմնական դասախոսական կազմում գերակշռում են միջին տարիքի (35-65 տարեկան) դասախոսները: 2013/14-2018/19 ուստարիներին 65-ից բարձր տարիք ունեցող դասախոսների թիվը գերազանցում է մինչև 35 տարեկաններինը: Ըստ այդմ՝ նշված ժամանակահատվածում հիմնական դասախոսական կազմում նվազել է տարիքային ցուցանիշը և 2017/18 ուստարում միջին տարիքը կազմել 51,9 իսկ 2018/19 ուստարում՝ 50,4:

Աղյուսակ 2. Հիմնական դասախոսական կազմի տարիքային բաշխումը

	2013/14	2014/15	2015/16	2016/17	2017/18	2018/19
Մինչև 35 տարեկան	224	229	200	179	166	146
35-65 տ.	821	786	806	752	771	717
65-ից բարձր	243	240	236	265	260	253
Ընդամենը	1288	1255	1242	1196	1197	1116
Միջին տարիք	50,6	50,4	50,9	51,3	51,9	50,4

ԵՊՀ ԿԾ-ները համապատասխան դասախոսական կազմով ապահովելու համար նախատեսված են նաև աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն: Գործում է նաև ժամավճարային հիմունքով և հրավիրյալ դասախոսների համակարգը, ինչը թույլ է տալիս երաշխավորել ԿԾ-ների ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով: Ինչպես երևում է Աղյուսակ 3-ից, հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների թիվը վերջին հինգ ուստարիներին կազմում է շուրջ 80 %, իսկ ժամավճարային հիմունքներով դասավանդողների թիվը տատանվում է 20 %-ի շրջանում: Սա նշանակում, որ դասախոսների շուրջ 20 %-ը հրավիրյալ է, ինչը պայմանավորված է ԿԾ-ների յուրահատուկ նպատակներով և վերջնարդյունքներով: Հրավիրյալ դասախոսների թիվն առավել մեծ է մագիստրոսական ԿԾ-ներում:

Աղյուսակ 3. Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

	2013/14		2014/15		2015/16		2016/17		2017/18		2018/19	
Հիմնական և համատեղություն	1586	79,2%	1544	92,2%	1559	80,6%	1514	81,3%	1480	80,8%	1439	81,0%
Ժամավճար	417	20,8%	361	7,8%	375	19,4%	348	18,7%	352	19,2%	337	19,0%
Ընդամենը	2003		1905		1934		1862		1832		1776	

ԵՊՀ-ում գործում են մի շարք ընթացակարգեր, որոնք կոչված են նպաստելու պահանջվող մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանն ու պահպանմանը: Դրանց շարքում առանձնակի կարևորություն ունի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը:

ԿԾ-ները համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմով ապահովում են ԵՊՀ ֆակուլտետներն ու ամբիոնները: Յուրաքանչյուր ամբիոն, քաջատեղյակ լինելով իր ռեսուրսներին, կարողանում է ապահովել ուսումնական մոդուլները համապատասխան հիմնական դասախոսական կազմով, ինչպես նաև կազմակերպել նրանց կարճաժամկետ և երկարաժամկետ փոխարինումը: ԿԾ-ն սպասարկող դասախոսական կազմն ընտրվում է ծրագրի ղեկավարի և ծրագիրը սպասարկող ամբիոնի վարիչի կողմից:

ԵՊՀ-ում դասախոսական կազմով ապահովվածության կայունությունը երաշխավորվում է մի շարք նորմատիվներով և ընթացակարգերով: Դրանցից մեկը վերոնշյալ մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգն է, որը որոշակի երաշխիքներ է նախատեսում կրթական գործընթացում դասախոսական կազմի երկարաժամկետ ընդգրկվածությունն ապահովելու համար: Այսպես, ըստ ընթացակարգի՝ դասախոսների հետ աշխատանքա-

յին պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 3-5 տարի ժամկետով: Գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան հաստիքի առկայության պարագայում՝ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո դասախոսի հետ, առանց մրցութային ընտրության, մեկ անգամ կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով:

Ըստ դիտարկվող ընթացակարգի՝ կատարվում է դասախոսի պաշտոնի փոփոխություն, և դրան համապատասխան պարբերաբար բարձրացվում է աշխատավարձը: Նման քաղաքականությունը նպաստում է ինչպես պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովմանը, այնպես էլ խթանում է մասնագիտական առաջխաղացումը:

«ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգի» հիմնական դրույթները նույնպես ուղղված են դասախոսական կազմի խրախուսմանը և կայունության ապահովմանը: Գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար ԵՊՀ-ում դասավանդող մասնագետը կարող է ստանալ լրավճար՝ տարեկան մինչև 1 մլն դրամի չափով:

ԵՊՀ-ում ԿԾ-ների կադրային ապահովվածության կայունությունը երաշխավորող ընթացակարգերից է նաև «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը» (հաստատվել է ԵՊՀ գիտական խորհրդի նիստում 12.03.2020 թ.), որոնց հիման վրա ձևավորվում է տվյալ տարակարգի դասախոսի մեկ ուսումնական տարվա անհատական բեռնվածությունը: Համեմատաբար ցածր բեռնվածությունը (ԵՊՀ մեկ դասախոսի անհատական բեռնվածությունը ամենացածրերից է ՀՀ-ում և միջինում 700 ժամ է) գրավիչ գործոն է ԵՊՀ-ի համար: Բարձրորակ մասնագետների կայունություն ապահովելու համար պարբերաբար բարելավվում են նրանց աշխատանքային միջավայրը, անհրաժեշտ ռեսուրսներն ու ծառայությունները:

ԵՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կայունությունն ապահովող մեխանիզմներից է նաև նրանց ուսանող-երեխաների ուսման վճարների համար գործող զեղչերի համակարգը: ԵՊՀ-ում և Իջևանի մասնաճյուղում զեղչվում են հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողների և նրանց ուսանող-երեխաների ուսման վճարները. 2018/19 ուստարում, օրինակ, այդ հոդվածով զեղչված գումարը կազմել է 50 686 500 դրամ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը բազմաբաղադրիչ է, ինչը ներառում է ԴՈԲ ծրագիրը, դասախոսների միջազգային շարժունության ծրագրերը, գործուղումները, դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակումը, ինչպես նաև գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ֆինանսական խրախուսման մեխանիզմները:

ԵՊՀ դասախոսական կազմի ԴՈԲ գործընթացը արդիականացնելու նպատակով մշակվեց «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության 2019-2021 թթ. գործունեության ծրագիրը (համառոտ՝ PRINTel նախագիծ): Ապահովելով ԵՊՀ դասախոսական կազմի վերապատ-

բաստողների կատարելագործում եվրոպական առաջատար համալսարաններում և նրանց շարունակական համագործակցությունը՝ նախագիծը հնարավորություն ստեղծեց նոր մակարդակով կազմակերպելու ԵՊՀ դասախոսների վերապատրաստումը և կատարելագործումը:

Գործող վերապատրաստման ծրագրում կատարվեցին մի շարք փոփոխություններ (հավելված 5.1 և 5.2).

1. Ծրագրի ընդհանուր պատրաստության ՏՀՏ կրթամասում ներմուծվեց նոր մոդուլ 5 դասընթացով՝ «Ուսուցման նորարարական մեթոդներ». 416 դասախոս 2019 թ. ընթացքում ավարտել է նշված դասընթացները:

Հ/հ	Դասընթացի անվանումը	Կիսամյակը		Ընդամենը
		2018/19,2	2019-20,1	
1	Ակտիվ ուսուցում «շրջված լսարանում»	61	48	109
2	Համակցված դասավանդում և ուսուցում	41	10	51
3	Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում	60	41	101
4	Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում. մոբայլ ուսումնառություն և խաղայնացում	63	23	86
5	Տեսանյութերը որպես դասավանդման գործիք	33	36	69
	Ընդամենը	**258**	**158**	**416**

Ի դեպ, ծրագրով նախատեսվում է սկսնակ դասախոսների համար պարտադիր կրթական բաղադրիչները ներառել «ԵՊՀ-ում հետազոտողի պատրաստման գիտակրթական ծրագրի» ուսումնական կառուցամասում՝ որպես պարտադիր մոդուլ՝ ասպիրանտին մանկավարժական աշխատանքի նախապատրաստելու նպատակով:

Ծրագրով ներդրվում է նաև «խորհրդատուների» ինստիտուտը՝ մենթորական աշխատանքներ իրականացնելու համար:

2. ԵՊՀ 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրով դասախոսների կատարելագործման համար սահմանված կարևոր դրույթներից մեկը՝ «Առցանց ուսուցման տեխնոլո-գիաների կիրառում», նույնպես ներառվեց PRINTeL նախագծում՝ ստանալով նոր բովանդակություն:

«Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ» թեմայով
դասախոսների վերապատրաստման արդյունքները

Հ/հ	Դասընթացի անվանումը	Ունկնդիրների թիվը ըստ ուստարիների				Ընդամենը
		2016/17	2017/18	2018/19	2019/20,1	
1.	Առցանց ուսուցման տեխնոլոգիաներ	33	26	68	28	155
2.	Google Classroom-ը հեռավար կրթական համակարգում	0	13	8	0	21
3.	Առցանց տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում	0	0	13	0	13
	Ընդամենը	**33**	**39**	**89**	**28**	**189**

Վերապատրաստված դասախոսներից 25-ը 2019 թ. 1-ին կիսամյակում ստացել է 50.000-

ական ՀՀ դրամ լրավճար՝ ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգը (e-learning.ysu.am) կիրառելու համար:

3. 5-րդ կրթամասում ավելացել է նոր բաղադրիչ՝ «Դասավանդում արտերկրի առաջատար բուհերում» (օրինակ՝«Մասնակցություն Erasmus+ Staff Training Mobility ծրագրին»): 2013 թվականից նման ծրագրերի արդեն մասնակցել է ԵՊՀ 76 դասախոս:

4. ԴՈԲ ծրագրով առանձնահատուկ կարևորություն է տրվում պրոֆեսորադասախոսական կազմի անգլերենի իմացության բարելավմանը: 2011-2016 թթ.՝ ծրագրի 1-ին փուլում, անգլերենի C1 – C2 մակարդակի իմացություն է դրսևորել 214 դասախոս:

ԵՊՀ դասախոսների անգլերենի իմացության արդյունքները (2011-2016 թթ.)

Անգլերենի մակարդակը	A1	A2	B1	B2	C1	C2	Ընդամենը
Դասախոսների արդյունքները	291	221	17	98	127	87	839

2-րդ փուլում պահանջվում էր առնվազն մեկ աստիճանով բարձրացնել անգլերենի իմացության մակարդակը: 2016-2019 թթ. անգլերենից քննություն է հանձնել 210 դասախոս, որից 61-ը բարձրացրել է անգլերենի իմացության մակարդակը:

Դասախոսների կրթական և գիտամանկավարժական գործունեությունը խթանելու նպատակով ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից գործում է դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ, որը բազմիցս լրամշակվել է (վերջին անգամ՝ 2019 թ.): Հավելավճարի կարգի նպատակն է խթանել ԵՊՀ դասախոսների մասնագիտական շարունակական առաջընթացը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային աշխատանքներն ուսանողների հետ, ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները, մասնակցությունը ԵՊՀ և նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ռեկտորի պաշտոնակատարի 27.11.2019 թ. թիվ 221/120 հրամանով սահմանվեց «ԵՊՀ-ում դասավանդման գերազանցության մրցանակ ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը»: Ըստ կարգի՝ մրցույթն ունի երկու բաղադրիչ՝ մրցանակակիրների ընտրություն և լավագույն փորձի տարածման նպատակով մրցանակակրի կողմից առաջարկված մեկ դասընթացի տեսաձայնագրում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակի Խնդիր 4.2-ի («Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ») լուծման համար նախատեսվել են հետևյալ գործողությունները.

1. Մշակել մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ:

2. Իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր:

3. Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար:

4. Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար:

5. Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ:

ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական
տարակարգերի աշխատողների թիվը վերջին 3 տարիներին

Աշխատակազմ	2017/2018	2018/2019	2019/2020
Վարչական	235	305	299
Ուսումնաօժանդակ	371	360	357
Ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողներ	128	135	146
Ընդամենը	618	800	802

2016 թ. ԵՊՀ գիտական խորհուրդն ընդունել է «ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների դասակարգման կանոնակարգը»:

Կանոնակարգի նպատակն է ապահովել ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և արտադրական տարակարգերի աշխատողների կադրային ներուժի արդյունավետ կառավարումը: Փաստաթուղթը սահմանում է ԵՊՀ վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների համակարգի ձևավորման սկզբունքները, վարչական պաշտոնների, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական հաստիքների աստիճանակարգումը, նշված հաստիքների աշխատանքի նկարագրության հիմնական դրույթները, աշխատողների իրավասությունների շրջանակները, կանոնակարգում է սահմանված համակարգի կազմակերպման և բնականոն գործունեության ապահովման հետ առնչվող այլ գործընթացներ:

ԵՊՀ գիտխորհրդի կողմից 2017 թ. հաստատվել է «ԵՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացման հայեցակարգը»: Վերջինս ներառում է ԵՊՀ-ում մարդկային ռեսուրսների (ՄՌ) կառավարման համակարգի բարեփոխումների տեսլականը, շեշտադրում է աշխատողների աշխատանքի ընդունման, խրախուսման ու կարգապահական տույժի ենթարկելու, աշխատանքային պարտականությունները սահմանելու, աշխատանքի արդյունքները գնահատելու և ՄՌ կառավարման այլ խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Համաձայն հաստատված հայեցակարգի՝ 2018 թ. ապրիլի 1-ից գործում է Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությունը, որը կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ մշակել է ԵՊՀ վարչական ստորաբաժանումների աշխատողների պաշտոնի անձնագրերը, որոնք հաստատվել են ԵՊՀ ռեկտորի կողմից: Վարչական ստորաբաժանումների ավելի քան 90 տոկոսն ունի հաստատված պաշտոնի անձնագրեր: Հաստատվել են նաև ուսումնաօժանդակ տարակարգի պաշտոնների (լաբորատորիայի վարիչ, ավագ լաբորանտ/լաբորանտ, ուսումնագիտական կաբինետի ավագ լաբորանտ/լաբորանտ, ամբիոնի գործավարության գծով ավագ լաբորանտ/լաբորանտ, ուսումնական վարպետ, դեկանատի օպերատոր, ամբիոնի պրեպարատոր) անձնագրերը: Դրանցում տրվում են աշխատանքի կազմակերպման կարգը և պատասխանատվությունը, աշխատողին ներկայացվող գիտելիքների և հմտությունների պահանջները, ինչպես նաև աշխատանքային պարտականությունները: Մշակման գործընթացում են պրոռեկտորների, գրադարանի, գնումների վարչության աշխատակիցների պաշտոնի անձնագրերը: Այդպիսով, կկատարվի ռազմավարական ծրագրի Խնդիր

4.2-ի («Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգ») 3-րդ գործողությամբ նախատեսված պահանջը («Մշակել պաշտոնի անձնագրեր վարչական աշխատողների համար»):

Վերոնշյալ խնդրի 4-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել աշխատանքի նկարագրեր ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական և այլ տարակարգերի աշխատողների համար»: 2018/19 ուստարվանից աշխատանքի նկարագրերը, որպես անքակտելի հավելված, կցվել են աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերին: Ընթացքի մեջ է ինժեներատեխնիկական համակազմի աշխատողների աշխատանքի նկարագրերի մշակումը:

Խնդրի 5-րդ գործողությամբ նախատեսված է. «Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ»: ԵՊՀ ռեկտորի 18.01.2018 թ. հրամանով հաստատվել է ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի հաստիքների ձևավորման նորմերը և ատեստավորման կարգը, որը աշխատողների որակի գնահատման մեխանիզմներից է: Կարգի համաձայն՝ ուսումնաօժանդակ համակազմի հաստիքները համապատասխանեցվել են հաստիքների ձևավորման նորմերին: Ամեն տարի հունիսի 15-25-ը անցկացվում է ուսումնաօժանդակ համակազմի աշխատողների ատեստավորում՝ որոշելու նրանց համապատասխանությունը զբաղեցրած պաշտոններին: Վարչական և ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների ատեստավորման և վերապատրաստման ուղղությամբ դեռ քայլեր չեն ձեռնարկվել: Իրականացվել են անգլերենի, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների և մասնագիտական վերապատրաստումներ ԵՊՀ վարչական աշխատողների և որոշ ստորաբաժանումների աշխատողների համար: Այդուհանդերձ, վերապատրաստման համակարգված մոտեցում դեռևս ներդրված չէ:

Ուսումնամեթոդական վարչության ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի կողմից անցկացվել են հարցումներ ուսանողների շրջանում՝ առանձին գնահատելով ֆակուլտետների դեկանների, դեկանի տեղակալների և դեկանատների աշխատանքը: Վերջին 3 տարիների ընթացքում գնահատման միջին արդյունքները եղել են 4.6 միավորի սահմաններում:

Ուսանողների կողմից դեկանի, դեկանի տեղակալների և դեկանատների աշխատակիցների գնահատման արդյունքները (5 միավորանոց համակարգով)

Ուսումնական տարի	**Դեկան և դեկանի տեղակալներ**	**Դեկանատներ**
2016/2017	4.6	4.5
2017/2018	4.6	4.6
2018/2019	4.6	4.6

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 5-րդ չափանիշի

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. ԵՊՀ-ն ունի հիմնական հաստիքով աշխատող բարձր որակավորում և հետազոտական ներուժ ունեցող պրոֆեսորադասախոսական համակազմ: 2. Դասավանդման գործընթացում ներգրավված են նաև մասնագիտական համապատասխան ոլորտում աշխատող բարձրակարգ մասնագետներ աշխատաշուկայից: 3. ԵՊՀ-ում առկա են դասախոսների որակավորման բարձրացման և կատարելագործման շարունակաբար թարմացվող համակարգ և այն իրականացնող ենթակառուցվածք, որի գործունեությունը պարբերաբար արդիականացվում է: 4. Դասախոսների ԴՈԲ ծրագրում իրականացվում է նորարարական ինտերակտիվ կրթական տեխնոլոգիաների կիրառում և առաջավոր փորձի ներդրում: **5.** ԵՊՀ-ում իրականացվում է դասախոսների գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության ֆինանսական և բարոյական խրախուսման քաղաքականություն, և առկա են համապատասխան ընթացակարգեր: 6. Առկա է դասախոսական կազմի գնահատման գործուն համակարգ՝ պարբերաբար իրականացվող ուսանողների և շրջանավարտների հարցումների միջոցով: 7. Հաստատված են (գրեթե ամբողջությամբ) վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների պաշտոնների անձնագրերը և աշխատանքի նկարագրերը:	1. Ցածր վարձատրությունը բարձրորակ երիտասարդ կադրերի ներգրավմանը դասավանդման գործընթացում խոչընդոտող հիմնական գործոնն է: 2. Մրցութային կարգով դասախոսների ներգրավման գործընթացում արտաքին մրցակցայնությունը գրեթե բացակայում է: 3. Նկատվում է ուսանողական հարցումներին մասնակցության նվազման միտում: 4. Չկա ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման համակարգված ծրագիր: 5. Նկատելի է դասախոսական կազմի ինքնագնահատման և գործընկերային գնահատման համակարգերի անկատարություն: 6. Հստակ չէ կապը դասախոսական կազմի գնահատման արդյունքների և վերապատրաստումների ծրագրի միջև:
Հնարավորություններ	**Վտանգներ**
1. Միջազգային համագործակցության շրջանակներում դասախոսական կազմի շարժունության ծրագրերի բարելավում	1. ԵՊՀ-ի խիստ ցածր պետական ֆինանսավորումը կարող է հանգեցնել լավագույն կադրերի արտահոսքին:

առաջավոր փորձի ուսումնասիրման միջոցով: 2. Միջազգային առաջատար բուհերի դասախոսների որակավորման բարձրացման կենտրոնների հետ համագործակցությամբ ԵՊՀ որակավորման բարձրացման ծրագրի արդիականացում:	2. ՀՀ-ում գործող այլ բուհերի հետ մրցակցային պայմանները հստակ չեն:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Դասախոսական կազմի վարձատրության ավելացում 10 %-ով 2020-2021 ուստարվանից:
2. Ուսանողական կազմի հետ դասավանդման արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի ստացման մեթոդների բազմազանեցում (կանոնավոր ֆոկուսխմբային հետազոտություններ, խորքային հարցումներ և այլն):
3. «ԵՊՀ դասախոսական կազմի տարեկան գործունեության գնահատման ղեկավար ձեռնարկով» նախատեսված դասախոսների բազմագործոն գնահատման չափանիշների և ընթացակարգերի ամբողջական կիրարկում:
4. Դասախոսական կազմի վերապատրաստման ծրագրերի վերանայում՝ հաշվի առնելով դասախոսների գնահատման արդյունքները, նրանց կարիքների պարբերական գնահատումը, ԿԾ վերջնարդյունքների ապահովման համար անհրաժեշտ կոմպետենցիաների կազմը և այլն:
5. ԵՊՀ վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգված ծրագրի ներդրում:

ՉԱՓԱՆԻՇ 6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՊՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը, համապատասխանեցնել ասպիրանտական կրթության չափանիշները համաեվրոպական պահանջներին[1]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.1. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ԵՊՀ-ն բազմապրոֆիլ ուսումնական հաստատություն է, և հետազոտությունները կատարվում են հասարակական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար, բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների լայն սպեկտրով[1,2,3]:

Հանրապետության համար առաջնահերթ և արդիական հայագիտության աշխատանքների հետազոտական առաջատարը ԵՊՀ-ում Հայագիտական հետազոտությունների կենտրոնն է՝ իր մեկ տասնյակի հասնող բաժիններով և լաբորատորիաներով, մագիստրոսական երկու ծրագրերով, գրադարանով, «Հայագիտության հարցեր» հանդեսով և գործընկեր կազմակերպությունների ընդարձակ ցանկով:

Հետազոտական ռազմավարության առավել նշանակալի ձեռքբերումներից է կրթական, գիտահետազոտական և ներդրումային (ինովացիոն) առաքելությամբ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ստեղծումը (2017 թ.) և գործունեությունը՝ իր երեք մասնագիտական ամբիոններով և երկու գիտահետազոտական լաբորատորիաներով: ԵՊՀ ձեռքբերում է նաև Կենսաբանության և Ֆիզիկայի ֆակուլտետներում գործող բյուջետային լաբորատորիաների հենքի վրա համապատասխանաբար Կենսաբանության (2015 թ.) և Ֆիզիկայի (2016 թ.) գիտահետազոտական ինստիտուտների (ԳՀԻ) կազմակերպումը: ԵՊՀ-ում հաջողությամբ գործում են գիտակրթական կենտրոններ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը՝ 3 մագիստրոսական ծրագրերով, 2 բաժիններով և 2 լաբորատորիաներով, Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը, Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ գործող Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնը (2017 թ.): Ավելացնենք նաև մուլտիմեդիա կուրսերի մշակումը, որը ֆինանսավորվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի կողմից:

Ի հավելումն՝ ԵՊՀ գրեթե բոլոր ֆակուլտետներում գործում են մասնագիտական հետազոտական լաբորատորիաներ, կենտրոններ և կաբինետներ՝ ընդհանուր թվով 37: Նշենք վերջին կազմակերպվածները՝ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական

1. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր (2016-2020 թթ.), 2015թ., էջ 12-15: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf
2. ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան, 2015թ., էջ 16-23: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf
3. ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն, (24 սեպտեմբերի 2015թ.), էջ 3, կետ 24. 7: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/09/orinakeli_kanonadrutyun.pdf

կենտրոնը Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում (2016 թ.), Կլիմայական տեխնոլոգիաների հայկական ուսումնագիտական ցանցը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում (2017 թ.), Նանոպլազմոնիկայի գիտահետազոտական (գ/հ) լաբորատորիան Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում (2017 թ.) և Բրիտանական գրականության և լեզվամշակույթի գ/հ լաբորատորիան Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում (2017 թ.): Նորարարական հետազոտությունները խթանելու նպատակով բնագիտական ֆակուլտետների մագիստրատուրայի և ասպիրանտուրայի հենքի վրա ստեղծել են Start-Up լաբորատորիաներ:

Աշխատանքների որակի և արդիականության վերահսկումը կատարվում է ինչպես ներքին ընդունված կանոններով, այնպես էլ ֆինանսավորման արտաքին աղբյուրների կողմից ներկայացվող պահանջներով:

Միջազգային բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակումների խրախուսման համար ԵՊՀ-ն պարբերաբար վերամշակում է լրավճարների հաշվարկման և վճարման կարգը[4]: Կանոնակարգված են պրակտիկայի, ավարտական աշխատանքները բակալավրիատում,[5,6] գիտական սեմինարի, հետազոտական աշխատանքի[7] կատարման, մասնագիտական պրակտիկայի ու մագիստրոսական թեզի պատրաստումը և գնահատումը մագիստրատուրայում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.2. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հետազոտության ոլորտում համալսարանի երկարաժամկետ ռազմավարությունը տարիների ընթացքում ձևավորված գիտական դպրոցների պահպանումն ու զարգացումն է, ինչպես նաև նոր, արդիական գիտական ուղղություններով հետազոտական խմբերի ստեղծումն ու կայացումը:

Համալսարանի հետաքրքրությունները և հավակնությունները հետազոտության ոլորտում արտահայտող միջնաժամկետ ծրագրերը հիմնականում արտացոլված են ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: Այդ ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի խնդիր 2.1-ով սահմանված է. «Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախո-

4. ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ (նոր խմբագրությամբ) : http://documentation.ysu.am/%d5%a5%d5%ba%d5%b0-%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d5%bf%d5%b8%d5%b2%d5%b6%d5%a5%d6%80%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%b7%d5%ad%d5%a1%d5%bf%d5%a1%d5%b6%d6%84%d5%ab-%d5%b8%d6%80%d5%b8%d5%b7-%d5%bf%d5%a5%d5%bd-4/
5. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ, 04 մայիսի 2017 թ., կետ 8: http://publishing.ysu.am/files/YSU_zhoghovatsu.pdf
6. ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգ, 12 հոկտեմբերի 2017 թ.: http://ysu.am/files/karg-1-4.pdf
7. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը հաստատելու մասին. Որոշում № 11/2, 13 մարտ 2020 թ/: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/GX_voroshum_11-2.pdf

սական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը», և նախատեսված է, մասնավորապես՝

ա. մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար,

բ. բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:

Ռազմավարական ծրագրի խնդիր 2.3-ով սահմանված է խթանել համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացումը, և նախատեսված է՝

ա. ամրագրել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանման գործունեության անհրաժեշտ բաղադրիչ,

բ. խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում համալսարանի աշխատողների հրապարակումները,

գ. ավելացնել օտար լեզուներով հրատարակվող ԵՊՀ գիտական հանդեսների թիվը:

Համալսարանի հետաքրքրությունները և հավակնությունները հետազոտության ոլորտում արտահայտող կարճաժամկետ (1-2 տարվա) ծրագրերը բխում են միջնաժամկետ ծրագրերից, կազմվում են ամբիոններում, ինստիտուտներում, կենտրոններում և լաբորատորիաներում գործող գիտական բազային կամ թեմատիկ խմբերում և ֆինանսավորվում են հիմնականում Գիտության կոմիտեի, ինչպես նաև միջազգային դրամաշնորհների կողմից:

«Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պահպանում ու զարգացում» երկարաժամկետ ծրագիրը նախատեսում է լայնածավալ հետազոտություններ հետևյալ ուղղություններով՝ Հայոց պետականության պատմության հիմնահարցեր, Հայաստանի պատմական աշխարհագրություն-քարտեզագրություն, հայ-վրացական, հայ-քրդական, հայ-օսմանական առնչություններ, հնագիտություն, վիրտուալ հայագիտություն և տեղեկատվություն, ցեղասպանագիտություն, սփյուռքագիտություն:

Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀԻ ծրագրի շրջանակներում իրականացվում են պոտենցիալ դեղաբանորեն ակտիվ սինթետիկ և բուսական ծագման ֆարմակոֆոր միացությունների սինթեզի և դրանց հենքի վրա տարաբնույթ դեղապատրաստուկների ստացման մեթոդների մշակում, դրանց հակավիրուսային, հակաքաղցկեղային, մանրէասպան, հակաբակտերային և այլ հատկությունների ուսումնասիրում, ինչպես նաև հանրապետությունում արտադրվող և ներկրվող դեղապատրաստուկների որակի հսկմանն ու մոնիտորինգին ուղղված հետազոտություններ:

«Ֆարմացիայի ինստիտուտի պահպանում և զարգացում» ծրագրի նպատակն է տարբեր էկոլոգիական և կարգաբանական խմբերին պատկանող սննդային և դեղաբանական արժեքով օժտված ազարիկոմիցետային սնկերի կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը և մաքուր կուլտուրաների մասնագիտացված հավաքածուների ստեղծումը, դրանց կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը և կենսաբժշկագիտության ոլորտում կիրառման հեռանկարների բացահայտումը:

«Մաթեմատիկական հետազոտությունների կենտրոնի պահպանում ու զարգացում» ծրագրի նպատակն է խորացնել և զարգացնել ֆունկցիոնալ տարածությունների տեսությունը, հետազոտել մասնակի պարբերական խմբերի մի շարք ընդհանրական հատկությունները, դրանց վերաբերյալ գտնել ալգորիթմներ:

Կենսաբանության ԳՀԻ ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության կենդանի օրգանիզմների բազմազանությունը և հետազոտել նրանց գործունեության բջջամոլեկուլային մեխանիզմները, մշակել մանրէների միջոցով կենսաջրածնի ստացման կենսատեխնոլոգիաները, կատարել բանջարաբոստանային կուլտուրաների սնկաբանական ուսումնասիրություններ:

Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտի ծրագրով նախատեսված են հետազոտություններ քվանտային երևույթների մոդելավորման, մակրոմոլեկուլների ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, օպտոէլեկտրոնիկայի և ֆոտոնիկայի, գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի, աստղաֆիզիկայի բնագավառներում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի ծրագրի նպատակն է հետազոտել ոչ հստակ տեղեկատվության վրա հիմնված որոշում կայացնող համակարգերի ու տվյալների բազաները, ինչպես նաև մեծ տվյալների ինտեգրման համակարգերի ապահովության և անվտանգության հարցերը, մշակել ծրագրային միջոցներ և դրանց վրա հիմնված էլեկտրոնային ուսուցման ռեսուրսներ:

Նանոպլազմոնիկա գ/հ լաբորատորիայի ծրագրի նպատակը ենթաալիքային չափերով համակարգերում լույսի տարածմանը նվիրված ֆիզիկական պրոցեսների հետազոտումն է:

Ֆիզիկական քիմիայի գ/հ լաբորատորիայի ծրագրի նպատակն է բացահայտել ոչ կովալենտային բնույթի միջմոլեկուլային փոխազդեցությունները:

Օրգանական քիմիայի գ/հ լաբորատորիայի ծրագրով նախատեսվում է իրականացնել նպատակային սինթեզներ, հագեցած և չհագեցած իմինոլակտոնային օղակեր պարունակող միացություններում, պոլիմերի և օլիգոմերների վերականգնումը փոքր նուկլեոֆիլությամբ օժտված վերականգնիչներով և մետաղների աղերով:

Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնի ծրագրի նպատակն է ընդլայնել էկոլոգիական իրավունքի գիտական հետազոտությունների շրջանակը, աջակցել էկոլոգիական օրենսդրության կատարելագործմանը, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային էկոլոգիական համաձայնագրերի իմպլեմենտացիային:

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի ծրագրի նպատակն է կոորդինացնել և իրականացնել գիտական և միջմասնագիտական հետազոտություններ եվրոպագիտության, մարդու իրավունքների, ժողովրդավարության մակարդակի ինդեքսի, կայունության ինդեքսի վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.3. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ԵՊՀ հետազոտական աշխատանքների քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերից, ԵՊՀ կանոնադրությունից, գիտության բազային և թեմատիկ ֆինանսավորման միջոցների բաշխման ու տնօրինման պետական կարգերից և ամրագրված են ԵՊՀ կանոնակարգերում ու ծրագրային փաստաթղթերում: Այդպիսի ծրագրային փաստաթուղթ է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը (2016-2020 թթ.)[8], որի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի խնդիր 2.1-ի 1-

8. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր (2016-2020թթ.)
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf

ին գործողությամբ նախատեսված է. «Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով»:

Աղյուսակ 1. ԵՊՀ-ում հետազոտությունների իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցների ծավալը (մլն դրամ)

Ծախսի տեսակ	2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրեր	1021	1022	1088	840	1151
Պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության մեջ սովորողների հետազոտական հմտությունների զարգացմանն ուղղվող ծախսեր	747	903	705	806	888
Հետազոտությունների իրականացմանն ուղղված ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումներ	-	97	136	5	32
Գիտահետազոտական գործունեության համար լրավճար	-[9]	-[10]	70	87	88
Գիտական գործուղման ծախսեր	36	46	50	35	39
Հրատարակչական ծախսեր (գրքերի ամսագրերի հրապարակում)	33	27	25	27	26
Այլ գիտական ծրագրեր (ներառյալ ՈՒԳԸ, Գործընկեր կազմակերպություններին գիտական ծրագրերով ֆինանսավորում)	101	152	8	19	5
Ընդհանուր	1937	2247	2081	1819	2229
Տեսակարար կշիռը ԵՊՀ ընդհանուր ծախսերի մեջ (%)	18,9%	19,9%	21,1%	19,7%	24,3%

Հետազոտական գործունեության գնահատում իրականացնելու համար ԵՊՀ-ում ներդրվել են գիտահետազոտական գործունեության գնահատման չափանիշներ, որոնք ամփոփված են «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգում»[10]: Ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար մշակվել և ներդրվել են մեխանիզմներ, որոնք պարբերաբար վերանայվում և բարելավվում են: Մասնավորապես՝ ԵՊՀ գիտական խորհրդի 28.06.2018 թ. թիվ 7/5 որոշմամբ, համաձայն վերոնշյալ կարգի (նոր խմբագրությամբ) 2.1 կետի աղյուսակ 1-ի 1-ին կետի՝ 50 %-ով ավելացվել է ազդեցության գործակցով ամսագրերում տպագրված հոդվածի համար հատկացվող լրավճարի չափը: Պարբերաբար հստակեցվում է նաև ազդեցության գործակցով ամսագրերի ցանկը՝ ըստ Clarivate Analytics գործակալության ամենամյա Journal Citation Reports (JCR) զեկուցման: Ստորև կարելի է տեսնել նշված կարգի ներդրման ազդեցությունը ԵՊՀ աշխատողների հրապարակումների վրա:

9. Մինչև 2017/18 ուստարին գիտական հոդվածների և մենագրությունների տպագրությունը, ինչպես նաև գիտաժողովներին մասնակցությունը հաշվի էին առնվում պրոֆեսորադասախոսական կազմին տարբերակված աշխատավարձ վճարելու ժամանակ: Դրա ծավալը 2015 թ. եղել է 288,315 մլն, 2016 թ.՝ 358,766 մլն, իսկ 2017 թ.՝ 240 մլն դրամ, որը ներառված չէ Աղյուսակ 1-ում, քանի որ ընդհանուրից հնարավոր չէ առանձնացնել հետազոտության համար նախատեսվածը:
10. Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ (նոր խմբագրությամբ): URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/06/lravtsar_karg-new.pdf



Պատկեր 1. ԵՊՀ հրապարակումների բաշխումն ըստ շտեմարանների

Ինչպես կարելի է տեսնել վերը նշված դիագրամից, վերջին երեք տարիների ընթացքում ԵՊՀ աշխատողների տպագրած հոդվածների ընդհանուր թիվը նվազել է՝ 1368-ից հասնելով 1131-ի, սակայն ավելացել է միջազգային շտեմարաններում (Web of science, Scopus) ինդեքսավորվող ամսագրերում հրապարակումները:

Գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացումը տարբեր ոլորտներում ունի շարունակական բնույթ, մասնավորպես՝ համատեղ ծրագրեր են իրականացվում ԵՊՀ ստորաբաժանումների և ՀՀ ԳԱԱ համապատասխան ինստիտուտների կողմից, որի արդյունքում մեծ թվով մասնագետներ համագործակցում են: Այդ մասին է վկայում ՀՀ ԿԳՄՍ գիտության կոմիտեի կողմից հայտարարված թեմատիկ ֆինանսավորման մրցույթներում ԵՊՀ աշխատակիցների կողմից շահած ծրագրերում հանրապետության այլ գիտահետազոտական կենտրոնների աշխատողների ընդգրկվածության աճը:

ԵՊՀ-ի կողմից միջազգային գիտաժողովների կազմակերպումը շարունակական գործընթաց է, որն ավելի արդյունավետ է դարձել շնորհիվ «Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցություն տրամադրելու կարգի[11]»:

ԵՊՀ-ն հրատարակում է գիտական երկու հիմնական հանդեսների՝ «Գիտական տեղեկագիր» և «Բանբեր Երևանի համալսարանի» շարքեր, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն գիտական հանդես է, նրանցից զատ՝ ԵՊՀ-ում տպագրվում է ևս 20 հանդես[12]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.4. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ԵՊՀ-ում հետազոտական գործունեության միջազգայնացումը յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության գերակայությունն է, ինչը պայմանավորված է գիտության միջազգային բնույթով և հետազոտությունների ֆինանսավորման միջազգային աղբյուրների

11. Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող գիտաժողովներին դրամական աջակցության տրամադրելու կարգ, հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. մայսիս 26-ի նիստում, URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/dramakan_ajaktsutyun.pdf
12. Երևանի պետական համալսարանի հանդեսներ
URL: http://www.ysu.am/science/en/banber
http://www.ysu.am/science/en/scientific-magazine
http://publications.ysu.am/

առկայությամբ և հասանելիությամբ: Այս ոլորտում ԵՊՀ ռազմավարական խնդիրն է խթանել համալսարանի հետազոտական արդյունքների միջազգայանացման գործընթացներին և ապահովել համալսարանի հետազոտական արդյունքների ինտեգրմանը եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ հետազոտական տարածքներին: Վերջին 5 տարիների ընթացքում այս խնդրի իրագործման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ, որոնցից է միջազգային բարձր վարկանիշ ունեցող մասնագիտական հանդեսներում գիտական աշխատությունների հրապարակումը, որի արդյունքը տեսանելի է Պատկեր 1-ում: ԵՊՀ օտար լեզուներով հանդեսների հրատարակումները ներկայացված են Պատկեր 2-ում:



Պատկեր 2. ԵՊՀ հրապարակումները՝ ըստ պարբերականների և բաշխումը՝ ըստ տարածաշրջանների

Պատկեր 3-ում ներկայացված են ԵՊՀ հրապարակումներն ըստ հանդեսների, ինչպես նաև նրանց տարածաշրջանային բաշխումը, որտեղից հստակ երևում է ԵՊՀ հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված քայլերի արդյունավետությունը:



Պատկեր 3. ԵՊՀ աշխատողների հրապարակումները՝ ըստ լեզուների բաշխվածության

ԵՊՀ աշխատողների միջազգային գործուղումները (ներառյալ մասնակցությունը միջազգային գիտաժողովներին) կազմակերպվում են «ԵՊՀ աշխատողների օտարերկրյա

գործուղումները ձևակերպելու կանոնակարգ»[13]-ին համապատասխան և ֆինանսավորվում են հետևյալ աղբյուրներից՝

1. ՀՀ պետական բյուջե՝ բազային ֆինանսավորում, թեմատիկ ֆինանսավորում,
2. ԵՊՀ բյուջե՝ ֆակուլտետներին և այլ ստորաբաժանումներին հատկացված գործուղման ծախսեր,
3. դրամաշնորհներ և պայմանագրեր,
4. ֆինանսավորման այլ աղբյուրներ:

ԵՊՀ գործուղումներից զատ՝ կարևորվում է միջազգային գիտաժողովների կազմակերպումն ու անցկացումը ԵՊՀ-ում (2018/19 ուստարում կազմակերպվել է 29 տեղական և միջազգային գիտաժողով), ինչպես նաև դասախոսների և գիտաշխատողների գիտական ստաժավորումը:

ԵՊՀ հետազոտական միավորների ընդգրկումը միջազգային գիտական ու գիտատեխնիկական նախագծերում և դրամաշնորհներում վերջին 5 ուստարիներին հետևյալն է. հանրապետական դրամաշնորհային ծրագրեր՝ 132, արտասահմանյան՝ 67:

ԵՊՀ-ն 2018/19 ուսումնական տարում արտասահմանյան գործընկերների հետ կնքել է 17 պայմանագիր (տե՛ս ԵՊՀ 2018-2019 թթ. հաշվետվություն, էջ 84), նույն տարում իրականացվել է 784 անձ/գործուղում. գործուղվել է 260 աշխատող, 14 ասպիրանտ և 286 ուսանող: Համալսարանի վարչական կազմից արտասահման է գործուղվել 224 անձ (ԵՊՀ 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություն, էջ 84):

Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության հետազոտական ծրագրերի թվի աճը 2018/19 ուստարում նախորդ ուստարվա համեմատ կազմում է մոտ 24 %[14]:

ԵՊՀ սովորողները պարբերաբար մասնակցում են արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին՝ ԱՄՆ-ում, Բելառուսում, Գերմանիայում, Իտալիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Նորվեգիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Սերբիայում, Վրաստանում, Ուկրաինայում, Ֆրանսիայում և այլուր: Գիտական և ուսուցողական միջոցառումների համատեղ կազմակերպման ու միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով ՈՒԳԸ-ի կողմից համագործակցության հուշագրեր են ստորագրվել Կոլումբիայի համալսարանի հայկական ընկերության, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ուսանողական միության, Ուրալի դաշնային համալսարանի ուսանողական արհմիության, Կիևի ազգային համալսարանի ուսանողական խորհրդարանի, Ժետիսուսի համալսարանի ուսանողական միության, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողական գիտական ընկերության, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի ուսանողական խորհրդի և երիտասարդական այլ կառույցների հետ:

2019 թ.-ին ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտը շահել է Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» ծրագրի դրամաշնորհ, որի նպատակն է

---

13. Երևանի պետական համալսարանի աշխատողների օտարերկրյա գործուղումները ձևակերպելու կանոնակարգ
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/03/kanonakarg-gorcuxumner.pdf
14. Զարգացման ռազմավարական ծրագիր 2016-2020 թթ. (զեկույց 2018/2019 ուստարում նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ)
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/05/Kataroghakan_2019.pdf

ինստիտուտում կազմավորել գերժամանակակից անալիտիկական սարքավորումներով և մեթոդաբանությամբ համալրված դեղերի որակի հետազոտման վերլուծական լաբորատորիա և դրա հենքի վրա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում բացել դեղերի որակի հսկման և մոնիտորինգի մագիստրոսական ծրագիր:

2018/19 ուստարում Erasmus+ ծրագրի շնորհիվ իրականացվել են մի քանի դրամաշնորհային նախագծեր, օրինակ՝ Minerva-ն աշխատում է նորարար գործընկերների հետ՝ վերափոխելու ուսման առկա մոտեցումները, միաժամանակ մշակելով՝ «Բաց գիտության» տրամաբանությանը համապատասխան ռազմավարություններ (տե՛ս ԵՊՀ 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվություն, էջ 115, Strengthening Resarch Manangment and Open Science capacities of HEIs in Moldova and Armenia): Մյուս համագործակցությունը Modest նախագծի շրջանակներում է (տևողությունը՝ 36 ամիս, 2018-2021 թթ.), որը նպատակ ունի բարելավելու գիտահետազոտական և ուսումնական կադրերի կատարելագործված հմտությունները՝ դրանք վերապատրաստելով դասավանդման նոր մեթոդների օգնությամբ, և ստեղծելու ժամանակակից ուսումնառության և հետազոտական միջավայր: Միջազգային դրամաշնորհների իրականացմանը տրամադրվում է համապատասխան տարածք և օժանդակ տեխնիկա (Armdoct Erasmus project շրջանակներում տրամադրվելու է լսարան՝ համապատասխան զույքով):

ՉԱՓՈՐՈՇԻՉ. 6.5. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

ԵՊՀ սովորողներն իրականացնում են հետազոտական աշխատանքներ կրթական ծրագրերում սահմանված պարտադիր կառուցամասերի պահանջներին և իրենց գիտահետազոտական նախընտրությունների համապատասխան:

Հետազոտական ոլորտը ներառում է գիտական բոլոր միավորները և ուսումնական ծրագրերի որոշակի բաղադրամասեր՝ ասպիրանտական ծրագիրը գրեթե ամբողջությամբ, առանձին կրթամասը մագիստրատուրայում[15] և «Մասնագիտական պրակտիկա», «Ավարտական աշխատանք» կրթական մոդուլները բակալավրիատում[16]: 2017/18 ուստարվանից մագիստրոսական կրթական ծրագրերում ներդրվել է «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» դասընթացը: Բակալավրի կրթական ծրագրերում ավարտական աշխատանքի կատարումը դարձել է պարտադիր:

Հետազոտության ռազմավարությունը և կապն ուսումնառության հետ՝ որպես զարգացման առաջնահերթություն, ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում[2] ամրագրված է չորս խնդիրներով և դրանց իրագործման կոնկրետ գործողություններով, ինչպիսիք են՝ «Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում», «Մշակել և ներդնել համապա-

15. ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, 07 հուլիսի 2016 թ., էջ 2, 5-7, Հավելված 1, 2: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/10/mag_cragir.pdf
16. ԵՊՀ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը, 04 մայիսի 2017 թ., էջ 7-ի կետ 2.2.4-ը, Հավելված 2-ի վերջին չորս տողերը: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/Bakal_krtakan_tsragri_karucvatsqi_ev_bovandakutyan_hastatum.pdf

տասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար» և այլն:

Ռազմավարական ծրագրի իրագործման հաջող ընթացքը[17],[18],[19] թույլ է տվել գործնականում պահպանել հետազոտական ակտիվությունն ավանդական ուղղություններում և ուսումնական ծրագրերում, միաժամանակ համակարգված գործել հանրապետության համար պահանջարկի վերածվող նոր մասնագիտությունների ուսումնական ծրագրերի մշակման և համապատասխան ստորաբաժանումների կազմակերպման համար: Կրթական մոդուլների բարելավմանը զուգընթաց վերջին 3 տարիներին ԵՊՀ-ում բացվել են 8 բակալավրի և 4 մագիստրոսի նոր ծրագրեր: ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ ստորաբաժանումների կողմից համատեղ իրականացվում են բակալավրական, մագիստրոսական և ասպիրանտական ծրագրեր, ինչը նպաստում է նաև մասնագետների համագործակցությանը: 2019/20 ուստարվանից բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ներդրվել են պարտադիր հետազոտական աշխատանք ենթադրող դասընթացներ:

Բակալավրի կրթական աստիճանի շնորհման համար ամփոփիչ բաղադրիչն ավարտական աշխատանքի պատրաստումն ու հրապարակային պաշտպանությունն է: Այն ինքնուրույն, տեսական կամ կիրառական նշանակության աշխատանք է, որն արտացոլում է տվյալ մասնագիտության շրջանակներում ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ բարձրացնելու, լուծումներ առաջադրելու հմտությունները[20]: 2019/20 ուստարվանից ԵՊՀ 7 ֆակուլտետների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում փորձնական եղանակով ներդրվել է նաև հետազոտական աշխատանքի կատարման կարգը, որի նպատակն է խթանել ուսանողի անհատական կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Կիսամյակի ավարտին մշտադիտարկման միջոցով վեր են հանվել այս գործընթացի թերությունները, որի հիման վրա ընթացակարգը բարելավվել է[21]: 2020/21 ուստարում այն կլինի պարտադիր բոլոր կրթական ծրագրերում:

Մագիստրոսի կրթական ծրագրերում ներառված է պարտադիր հետազոտական կառուցամաս, որով ապահովվում է սովորողների հետազոտական հմտությունների զարգացումը:

---

17. ԵՊՀ 2015-2016 ուստարվա գործունեություն, էջ 84-90:
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/12/2015-2016_ustarva_gorcuneutyan-hashvetvutyun.pdf
18. ԵՊՀ 2016-2017 ուստարվա գործունեություն, էջ 84-91
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/12/2016-2017_ustarva_gorcuneutyan-hashvetvutyun.pdf
19. ԵՊՀ 2017-2018 ուստարվա գործունեություն, էջ 79-85
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/2017-2018_ustarva_gorcuneutyan-hashvetvutyun.pdf
20. Տե՛ս «ԵՊՀ-ում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգ», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1 նիստում, Երևան, 2017, էջ 2:
http://ysu.am/files/karg-1-4.pdf
21. ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի, փիլիսոփայության և հոգեբանության, միջազգային հարաբերությունների, ժուռնալիստիկայի, իրավագիտության, պատմության ֆակուլտետների և ֆարմացիայի ինստիտուտի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական բաղադրիչ ներմուծելու կարգը սահմանելու մասին. Հրամաններ № 153 § 69, 164/12, 169/62, 177 § 63, 229 § 15:
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/09/hraman_169-62.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/09/hraman-177-63.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/12/hraman-229-15.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/09/hraman_164-12.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/08/Hraman_153-69.pdf

Ըստ այդմ՝ հետազոտական կառուցամասը 45 կրեդիտ է և կազմում է ընդհանուրի 37,5 %-ը: Այն ունի 3 բաղադրիչ՝ գիտական սեմինար, մասնագիտական պրակտիկա և մագիստրոսական ատենախոսություն: Գիտական սեմինարի շրջանակում ամբիոնի հետազոտական աշխատանքներում ներգրավված պրոֆեսոր(ներ)ը կամ դոցենտ(ներ)ը ներկայացնում են ոլորտի հետազոտական հիմնախնդիրները, ծանոթացնում են մագիստրոսական թեզին ներկայացվող մեթոդաբանական և տեխնիկական պահանջներին, կազմակերպում թեզերի թեմաների առնչությամբ պարբերական զեկուցումներ և քննարկումներ[22]: Մագիստրոսական թեզն ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակության աշխատանք է, որն արտացոլում է ուսանողի ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև հետազոտական խնդիրներ և դրանց լուծումներ առաջադրելու հմտությունները[23]:

Կրթական հաջորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի ծրագրերում հետազոտական կառուցամասը (գիտական սեմինարներ, գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության պատրաստում) 122 կրեդիտ է՝ ընդհանուրի մոտ 68 %-ը, քանի որ գիտակրթական այս ծրագրի նպատակը հետազոտողի պատրաստումն է[24]: Վերջին 5 ուստարիներին ԵՊՀ-ն տարեկան ունեցել է միջինում շուրջ 400 ասպիրանտ:

Աղյուսակ 2. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության մեջ ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման վրա իրականացված ծախսերը (մլն դրամ) և մասնաբաժինը ընդհանուր ծախսերի մեջ

	2015 թ	2016 թ.	2017 թ.	2018 թ.	2019 թ.
ԵՊՀ ընդհանուր ծախսեր	10 259	11 307	9 874	9 232	9 167
Որից՝ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի ընդհանուր ծախսեր	3 508	3 555	3 135	3 565	3 470
Այդ թվում՝ ուսանողների հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացման վրա իրականացված ծախսեր	747	903	705	806	888

Աղյուսակ 3. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության մեջ ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման վրա ծախսված ժամաքանակը

Ուստարի / Աշխատանքի ձև	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019	2019-2020
Ասպիրանտի ղեկավարում	20740	20390	18490	18030	17960
Հայցորդի ղեկավարում	2000	1785	1850	1925	1495
Կուրսային աշխ. ղեկավարում	36390	34015	33910	35770	27965

22. Տե՛ս «ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. հուլիսի 7-ի նիստում, Երևան, 2016, էջ 2, 6, Հավելված 1, 2: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/10/mag_cragir.pdf

23. Տե՛ս «ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2017 թ. մարտի 2-ի թիվ 5 նիստում, Երևան, 2017, էջ 3: http://ysu.am/files/magistrosakan_tezi_karg.pdf

24. Տե՛ս «ԵՊՀ հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի 2010 թ. մայիսի 10-ի թիվ 3 նիստում, Երևան, 2010, էջ 1, 3: «Հետազոտողի պատրաստման կրթական ծրագրով կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի մայիսի 10-ի թիվ 3 նիստում, Երևան, 2010, էջ 6-7: «Ասպիրանտի ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլան», հաստատված է ԵՊՀ գիտական խորհրդի մայիսի 10-ի թիվ 3 նիստում, Երևան, 2010: http://ysu.am/files/phd/Karucvacqy&Bovandakutuny.pdf

Ավարտ. աշխ. ղեկավարում	81200	77130	57460	65470	64960
Մագիստրոս. թեզի ղեկավարում	74130	48505	59125	58518	52145
Այլ (Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գրախոսություն, պաշտպանության հանձնաժողովի անդամություն և մագիստրոսական ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում)	27254	22385	12782	13088	12440
Ընդհանուր	241714	204210	183617	192801	177045
Տեսակարար կշիռն ընդհանուր բեռնվածության մեջ (%)	25,4 %	22,5 %	22,6 %	25,6 %	23,9 %
Որքանով է ավել դասախոսության ժամերից (%-ով)	43,7 %	16,6 %	20,8 %	39,1 %	22,5 %

Աղյուսակ 3-ում ներկայացված է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության մեջ ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման վրա ծախսված ժամաքանակը: Ժամաքանակների նվազումը 2015-2020 թթ. ԵՊՀ-ում ուսանողների ընդհանուր թվի նվազման հետևանք է: Հատկանշական է, որ ուսանողների հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացման համար նախատեսված ժամաքանակները վերջին 6 ուստարիներին մշտապես գերազանցել են դասախոսությունների ժամերին՝ զիջելով միայն գործնական պարապմունքներին, իսկ 2018/19 ուստարում գերազանցել են նաև վերջիններիս:

Հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներից է նաև ԵՊՀ ֆակուլտետներում գործող ուսանողական կազմակերպությունը՝ Ուսանողական գիտական ընկերությունը: Կառույցի կողմից կազմակերպված միջոցառումներին 2012-2019 թթ. յուրաքանչյուր ուստարում մասնակցել է շուրջ 1500 սովորող ԵՊՀ-ից, ևս մոտ 400-ը՝ այլ բուհերից ու ՀՀ ԳԱԱ-ից: ՈՒԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցել են ավելի քան 500 դասախոսներ՝ ղեկավարելով և գրախոսելով գիտական հոդվածներ, նախագահելով գիտաժողովների նիստեր, վարելով սեմինարներ, անցկացնելով լրացուցիչ դասախոսություններ և այլն: ՈՒԳԸ անդամ ուսանողները 2012-2019 թթ. հրապարակել են 276 գիտական հոդված ՀՀ և արտերկրյա գիտական ամսագրերում: Ընդհանուր առմամբ՝ սովորողների հրապարակումները նշված ժամանակահատվածի միջին տարեկան հաշվարկում կազմում են ԵՊՀ ընդհանուր գիտական արդյունքի առնվազն 1/6-ը:

Աղյուսակ 4. ԵՊՀ ՈՒԳԸ հրապարակումները 2012-2019 թթ.

Մեթոդական ձեռնարկ և մենագրություն	Հոդվածների ժողովածու	Հոդված ՈՒԳԸ ժողովածուներում	Զեկուցումների թեզիսների ժողովածու	Զեկուցումների թեզիս
7	45	1792	3	150

Պատկեր 5-ում ներկայացված են 2017/18 և 2018/19 ուստարիների շրջանավարտների ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական մակարդակի: Պետք է նշել, որ այս գնահատականների համար տարբերությունները 2019 թ. դարձել են ոչ նշանակալի, և ըստ էության, չեն տարբերվում մագիստրոս և բակալավր շրջանավարտների համար, ի տարբերություն 2018 թ. նշանակալի տարբերությունների, երբ մագիստրատուրայի շրջանավարտները զգալիորեն ավելի բավարարված էին, քանի բակալավրիատի շրջանավարտները: Վերջիններիս գնահատականները 2019 թ.կտրուկ աճել են:



	Բակալավրիատ	Մագիստրատուրա	Բակալավրիատ	Մագիստրատուրա
	2018		2019	
գերազանց	69,9%	79,7%	76,8%	78,6%
լավ	16,6%	12,8%	12,0%	10,7%
բավարար	5,3%	4,0%	5,3%	4,9%
անբավարար	3,8%	2,0%	4,1%	3,6%
Դ/Պ	4,4%	1,5%	1,8%	2,2%

Պատկեր 5. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի գիտական ղեկավարի աշխատանքի գնահատականներն ըստ շրջանավարտների կրթական աստիճանի 2018 թ. և 2019 թ.

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 6-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Առկա են ԵՊՀ հետազոտությունների միջազգայնացման բարձր աստիճան և միջազգային շտեմարաններում հրապարակումների քանակի շարունակական աճ: 2. Ուսանողները ներգրավված են հետազոտական աշխատանքներում: 3. ՀՀ բուհական համակարգում ԵՊՀ-ն առաջատար դիրքում է գիտական հրատարակությունների քանակով և հետազոտական ծրագրերի ֆինանսավորման ծավալներով: 4. Առկա են պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ: 5. Նկատելի է գիտահետազոտական ինստիտուտների, կենտրոնների, լաբորատորիաների արտաքին աղբյուրներից անհրաժեշտ միջոցների ձեռքբերման աճի միտումը: 6. ԵՊՀ-ում հրատարակվում են ճշգրիտ, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար և հայագիտական պարբերականներ:	1. Նկատելի է գիտական տարբեր ոլորտների անհավասարաչափ զարգացվածություն ԵՊՀ-ում : 2. Ցածր է մասնավոր ընկերությունների հետ համագործակցության, հետազոտությունների և մշակումների առևտրայնացման մակարդակը: 3. Առկա է ուսումնական պրակտիկաների ծավալների մեծացման անհրաժեշտություն: 4. Ժամանակակից փորձարարական սարքավորումներով հագեցած լաբորատորիաների ոչ բարձր մասնաբաժինը:

7. Առկա են գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդներ՝ ճշգրիտ, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական և հումանիտար ուղղություններով:	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Տվյալների գիտության, արհեստական բանականության, մեքենայականուսուցման, քվանտային համակարգիչների և այլ ժամանակակից տեխնոլոգիաների հիմքում ընկած տեսական գիտելիքի ուղղությամբ գիտական դպրոցների առկայությունը ԵՊՀ-ում: 2. ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից պարբերաբար հայտարարվող մրցույթները և դրամաշնորհները: 3. Միջազգային հետազոտական դրամաշնորհները և շահառու կազմակերպությունների հետ համատեղ գիտաուսումնական ծրագրերը և հետազոտությունները: 4. Տարբեր հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների ֆինանսական օժանդակությունը:	1. ՀՀ տնտեսությունում հիմնարար գիտելիքի ցածր պահանջարկը: 2. Դասախոսների և հետազոտողների աշխատավարձի ոչ մրցունակ լինելը մասնավոր հատվածի ձեռնարկությունների աշխատավարձերի համեմատ: 3. Երիտասարդ մասնագետների ցածր մոտիվացիան աշխատելու բուհում, նրանց հետազոտական գործունեության մեջ ներգրավելու/խրախուսելու թույլ մեխանիզմները:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակումները լրավճարների հաշվարկման և վճարման կարգում համապատասխան ուղղորդող կարգավորումներով:
2. Մեծացնել պայմանագրային աշխատանքների և դրամաշնորհների ֆինանսական ծավալները 15-20 %-ով՝ բարեփոխելով դրանց բովանդակությունն ըստ շուկայական պահանջարկի:
3. Իրականացնել հետազոտական պրակտիկա անցկացնող հաստատությունների ցանկի պարբերաբար թարմացումներ և նոր ձեռնարկությունների ներգրավում այս խնդրում:
4. Բակալավրի կրթական ծրագրերի մասնագրերում հստակեցնել և առանձին ներկայացնել ծրագրի հետազոտական կրթամասը:
5. Շարունակաբար ընդլայնել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Նորարարությունների մրցակցային հիմնադրամի տեխնոլոգիական ելքով հետազոտական աշխատանքների մրցույթներին մասնակցելու աշխատանքները:
6. Իրականացնել կատարվող հետազոտությունների դիվերսիֆիկացիա դեպի կիրառական ուղղվածության ոլորտներ:
7. Հետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը զուգընթաց բարձրացնել անձնակազմի աշխատավարձերը:

ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ: Ապահովել համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը: Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը[2]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.1. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Որակյալ ենթակառուցվածքների ստեղծումը ԵՊՀ ռազմավարական 5-րդ նպատակն է[1,2,3]: Սովորողների կրթական կարիքներն ապահովելու և հագեցած կրթական միջավայր ստեղծելու համար համալսարանն ունի 1 վարչական, 1 գրադարանային և 10 ուսումնական մասնաշենք, որոնցից 8-ը գտնվում են կենտրոնական համալիրում, իսկ 4-ը՝ դրանից մինչև 8 կմ հեռավորության վրա (տե՛ս Հավելված 7.1): Բուհում գործում են գիտահետազոտական 3 ինստիտուտ, 30 լաբորատորիա, լսարանային ֆոնդը կազմում է 639 լսարան, որոնց զբաղվածությունը կառավարվում է ֆակուլտետների, ինստիտուտների և ուսումնական կենտրոնների կողմից ներկայացված հայտերի հիման վրա: Ուսումնական պարապմունքներն իրականացվում են երկհերթ սկզբունքով: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր 1390 սովորողների համար կրթական ծրագրերն իրականացնում է 4 մասնաշենքերում (որոնցից մեկը հյուրատուն է) առկա 55 լսարաններում: ԵՊՀ-ն ուսումնաարտադրական բազաներ ունի Ծաղկաձորում, Դիլիջանում, Հանքավանում և Բյուրականում[4,5]: Վերոնշյալ մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների ու այլ շինությունների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար ամեն տարի համալսարանի բյուջեով զգալի գումար է հատկացվում: Հետևաբար կահավորման և տեխնիկական հագեցվածության առումներով ԵՊՀ մասնաշենքերում այսօր առկա են բարվոք պայմաններ: ԵՊՀ-ն ունի 186 ուսումնական լաբորատորիա և մասնագիտական կաբինետ, որոնց գերակշիռ մասը՝ թվով 141-ը, գտնվում է

1. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր (2010-2014 թթ.), նպատակ V, 2009 թ.: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Zargacman_razmavarakan_cragir_2010-2014.pdf
2. ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր, 2015թ.: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf
3. ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան, 2015թ.: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հիմնական ուսումնական մասնաշենքերի համալիրներից դուրս գտնվող ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգ-ծրագիր URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/04/tcragir.pdf
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հիմնական ուսումնական մասնաշենքերի համալիրներից դուրս գտնվող ենթակառուցվածքների զարգացման հայեցակարգ-ծրագիրը հաստատելու մասին. Որոշում № 9/8.1 URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/04/voroshum_9.8.1.pdf

3 մասնաշենքերում, որտեղ տեղակայված են բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետները:

Գրադարանի զարգացումը ԵՊՀ կարևորագույն ռազմավարական ուղղություններից է (տե՛ս 2, Նպատակ V, խնդիր 5.2, գործողություն 6-10): 2007 թ.-ին ԵՊՀ գիտական խորհրդի ընդունած գրադարանի զարգացման հայեցակարգի (2018 թ.-ից շրջանառության մեջ է գիտական գրադարանի զարգացման նոր հայեցակարգը) իրականացման արդյունքում ընդլայնվել է գրադարանի էլեկտրոնային ընթերցասրահը, ստեղծվել է էլեկտրոնային ռեսուրսների համալսարանական պորտալ, ընդլայնվել է գրադարանի մասնակցությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին, բարձրացվել է ուսանողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին: ԵՊՀ գրադարանը տեխնիկական հագեցվածությամբ և տեղեկատվության տրամադրման որակի առումով մոտ է միջազգային և եվրոպական չափանիշներին: Այն ՀՀ առաջատար գրադարաններից է: Իր ավելի քան 2 միլիոն գրապաշարով այն հանրապետության 3-րդ խոշոր գրատունն է, իսկ բուհական գրադարաններից՝ առաջինն է: Գրադարանի շենքը զբաղեցնում է շուրջ 16000 քմ մակերես: Այն ունի 2 գրապահոց, որտեղ առկա է շուրջ 1,85 մլն միավոր գրականություն: Թվով 6 ընթերցասրահներում առկա է մոտ 90 հազար, առձեռն ֆոնդերում՝ շուրջ 100000 միավոր գրականություն: Այդ ընթերցասրահներն ունակ են միաժամանակ սպասարկելու 1200 ընթերցողի: Համալսարանի 9 ֆակուլտետներում գործում են ֆակուլտետային գրադարաններ՝ մոտ 10000 միավոր գրականությամբ:

Գրադարանից օգտվողների համար հասանելի են նաև մի շարք ռեսուրսային բազաներ. Elibrary.ru, mathnet.ru, SPRINGER, EBSCO, DOAJ, Mathematical Reviews Database, Գիտության հայկական վիրտուալ գրադարան, որոնք ապահովում են 375 գիտատեղեկատվական շտեմարաններ, ավելի քան 360 հազար էլեկտրոնային գիրք, 20 հազար գիտական ամսագիր՝ մոտ 9 միլիոն գիտական հոդվածներով, շուրջ 700 հազար ատենախոսություն և սեղմագիր: Գրադարանի կայքէջում տեղադրված են հաճախ օգտագործվող գրականություն, ինչպես նաև հնատիպ և հազվագյուտ գրքեր: Գրադարանում առկա է նաև էլեկտրոնային հոդվածների սպասարկման խումբ, որը գիտական հոդվածների էլեկտրոնային հոդվածներ է տրամադրում օգտվողներին[6,7]:

2001 թ.-ից ԵՊՀ-ն հայաստանյան 12 խոշորագույն գրադարանների հետ համատեղ սկսել է հայաստանյան համահավաք գրացուցակի ստեղծումը: Ներկա պահին այդ համակարգին են միացել ՀՀ գրեթե բոլոր գրադարանները (հանրապետական, մարզային, քաղաքային և այլն): Մինչև 2020 թ. վերջ ԵՊՀ ամբողջ գրադարանային ֆոնդն արտացոլված կլինի համահավաք գրացուցակում: Այն թույլ է տալիս ընթերցողներին տեղեկանալ գրադարաններում առկա գրականության մասին, ինչպես նաև ցանկացած վայրից ինտերնետի միջոցով կատարել էլեկտրոնային պատվեր: Գրադարանի տարածքում գործում է WiFi կապ: Ընթերցողների համար նախատեսված են տարբեր միջավայրեր՝ քննարկումների համար առանձին սենյակներ, փափուկ հատված, համակարգչային սրահ, պատշգամբներում սեղաններ և ճեմասրահում հատվածներ քննարկումների համար: Գրադարանն ուսումնական

6. ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվ. գրադարան, http://lib.ysu.am/:
7. ԵՊՀ գրադարանային խորհրդի կանոնակարգ
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Library_Council_Kanonakarg_10_07_2013.pdf

ֆոնդի սպասարկումն իրականացնում է բաց դարակների սկզբունքով, որտեղ ընթերցողներն ընտրում են գրքերը գրադարակներից, ապա գրանցվում էլեկտրոնային համակարգում: Օգտվողների իրերի համար նախատեսված են նաև պահախցեր: Գրադարանը տարեկան համալրվում է մոտ 13.000 միավոր գրականությամբ: Գրադարանը համագործակցում է եվրոպական մի շարք առաջատար գրադարանների հետ և անդամակցում գրադարանային միավորումներին (LIBER, IFLA և այլն):

Գրադարանի մուտքը հատուկ կարիք ունեցող անձանց համար հարմարեցված է: Կան նաև 2 սանհանգույցներում կահավորված հատվածներ նրանց համար:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում գնահատվում է նաև ուսումնական միջավայրը՝ ուսումնական տարածքները, ուսումնառության ռեսուրսները և օժանդակ ծառայությունները[8]: Օրինակ՝ 2017/18 և 2018/19 ուստարիների ԵՊՀ շրջանավարտների՝ համալսարանի ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ հարցման համեմատական վերլուծության արդյունքները ներկայացված են հավելված 7□3-ում:

Ուսանողները 4 միավորանոց համակարգով (որտեղ 2-ը նվազագույն արժեքն է, իսկ 5-ը՝ առավելագույն) առավել բարձր են գնահատում լսարանային աշխատանքային պայմանները (միջին գնահատականը՝ 4,09), մինչդեռ համացանցի մատչելիությունը և համակարգչային սրահների մատչելիությունը արժանացել են համեմատաբար ավելի ցածր գնահատական-ների (մոտ 3,9), (տե՛ս Աղյուսակ 2): 2017/18 և 2018/19 ուսումնական տարիների շրջանա-վարտների գնահատականների աստիճանակարգը փոքր-ինչ տարբերվում է անցած տարի-ների գնահատականներից, քանի որ լաբորատորիաների կահավորանքի գնահատական-ներում որոշակի աճ է արձանագրվել, իսկ համացանցի և համակարգչային սրահների վերա-բերյալ գնահատականները հակառակը՝ նվազել են:

ԵՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ստորաբաժանումները ներկայացված են Հավելված 7.1-ում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2. ՄՈՒՀ-ն իր առաքելությունը և նպատակներն իրականացնելու համար հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

ԵՊՀ-ում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ՝ հիմք ընդունելով հաջորդ տարվա վերաբերյալ կանխատեսումները և նախատեսվող միջո-ցառումները: Տարվա ընթացքում այս կամ այն եկամտային կամ ծախսային հոդվածների գծով էական փոփոխություններ առաջանալու դեպքում, որպես կանոն, ոչ ավել, քան մեկ անգամ կատարվում է նախահաշվի փոփոխություն՝ բյուջետային միջոցներն առավել նպատակային և արդյունավետ տնօրինելու համար: Ֆինասական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջեի կատա-րողականը, որը հիմնականում լինում է ոչ ավել, քան 3-5 տոկոս շեղումով:

8. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգ:
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg.pdf

Աղյուսակ 4. 2016-2020 թվականների եկամուտների և ծախսերի ամփոփ աղյուսակ[9,10]

Եկամուտներ *(հազար ՀՀ դրամ)*	2016	2017	2018	2019	2020
Եկամուտներ	11,100,000	10,172,000	9,373,000	9,458,000	9,368,000
Ուսման վար-ձավճարներից եկամուտներ	6,377,800	6,429,700	5,812,500	5,517,000	5,460,000
Պետական ֆի-նանսավորումից եկամուտներ	2,871,324	3,018,300	2,840,500	2,965,000	2,714,400
Այլ եկամուտներ	1,850,876	724,000	720,000	976,000	1,193,600
Ծախսեր	11,100,000	10,172,000	9,473,000	9,824,000	9,518,000
Աշխատավարձի ծախսեր	6,574,000	6,730,500	6,332,000	6,887,000	6,700,000
Կրթաթոշակի ծախսեր	217,000	241,000	215,000	206,000	204,000
Ծառայություննե-րի ձեռքբերման ծախսեր	428,000	553,500	557,500	503,500	502,000
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր	429,500	478,000	350,000	368,000	401,000
Հիմնանորոգման ծախսեր	1,800,500	500,000	400,000	375,000	285,000
Կոմունալ և փոս-տային վճարների ծախսեր	375,500	371,500	356,500	269,000	246,000
Այլ ծախսեր	1,275,500	1,297,500	1,262,000	1,215,500	1,180,000

Ինչպես երևում է Աղ. 1-ից, 2016 թվականի համեմատ 2020 թվականին վճարովի ուսուց-ման ծառայությունից ստացվող եկամուտները նվազել են 14.4 %-ով, ինչը պայմանավորված է

9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին. Որոշում № 62
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/12/HKH_voroshum_62.pdf
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. եկամուտների և ծախսերի նախահաշիվներ
http://documentation.ysu.am/?s=%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B7%D5%AB%D5%BE%D5%A8+&lang=hy
10. 2018 թ.-ի ԵՊՀ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/06/audit_2018.pdf
անկախ աուդիտորական եզրակացություններ
URL:http://documentation.ysu.am/?s=%D5%A1%D5%B8%D6%82%D5%A4%D5%AB%D5%BF&lang=hy

ուսանողների թվաքանակի կրճատմամբ: 2016 թվականին այլ եկամուտների մեջ ներառված է նաև ԵՊՀ հյուրերի տան օտարումից ստացված եկամուտը, այդ իսկ պատճառով այլ եկամուտները հետագա տարիների եկամուտների հետ համեմատած մեծ են: Ինչպես տեսնում ենք, 2017 թվականի այլ եկամուտների համեմատ 2020 թվականի այլ եկամուտներն աճել են 65 %-ով, որի հիմնական պատճառը համալսարանի եկամուտների բազմազանեցման ծրագիրն է, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրերի աճը:

Ստորև ներկայացվում են Աղ. 1-ի հիման վրա եկամուտների և ծախսերի համամասնություններն ընդհանուր բյուջեում՝ ըստ տարիների:





Վերոնշյալ գծապատկերներից երևում է, որ ընդհանուր ծախսերում աշխատավարձի մասնաբաժինն առավելագույնն է՝ տարեցտարի աճման միտումով՝ 2020 թվականին կազմելով շուրջ 70 %:

«Այլ ծախսեր» հոդվածում մեծ բաժին են կազմում կոմունալ, գործուղման և նպատակային ֆինանսավորումների ծախսերը, ինչպես նաև Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսերը և պետական բյուջե վճարումները:

Ստորև ներկայացվում է 2020 թվականի աշխատավարձի բաշխումն ըստ առանձին անձնակազմերի:



Ստորև ներկայացվում է ծախսերի բաշխումն ըստ ԵՊՀ 3 հիմնական նպատակների 2020 թվականի բյուջեի տվյալներով, որը համամասնության առումով էականորեն չի տարբերվում նախորդ տարիների տվյալներից: Գործառնական ծախսերի բաշխման համար հիմք է ընդունվել աշխատավարձերի զծով ծախսերի համամասնությունը:



Կրթական ծախսերն իրենց հերթին ունեն հետևյալ կառուցվածքը.



ԵՊՀ բյուջեի այլ եկամուտներում էական կշիռ են կազմում դրամաշնորհները, որոնք ստացվում են ինչպես պետական բյուջեից, այնպես էլ միջազգային ծրագրերից:

Ստորև ներկայացվում են դրամաշնորհային եկամուտներն ըստ միջազգային և պետական ֆինանսավորման և դրանց ծախսման համապատասխան ուղղությունները:





«ԵՊՀ 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում»[11] (տե՛ս Հավելված 7.2) սահմանված են այդ տարիների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ըստ առանձին ռազմավարական ուղղությունների:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.3. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ԵՊՀ-ում ֆինանսական միջոցները բաշխվում են հետևյալ կերպ. բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների, ֆինանսական վերլուծությունների վարչության և գլխավոր հաշվապահի կողմից՝ հիմնվելով նախորդ տարիների կատարողականի, պլանավորվող տարվա համար նախատեսված միջոցառումների, ակնկալվող եկամուտների ու ծախսերի վրա: Առանձին ստորաբաժանումները ներկայացնում են հաջորդ տարվա համար իրենց անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ցանկը, համապատասխան օրակների հետ համաձայնեցնելու հետո, իսկ Գնումների պլանավորման վարչությունը կազմում է վերոնշյալ ցանկերին համապատասխան գնումների պլան: Բյուջեի նախագիծը քննարկվում է ԵՊՀ գիտական խորհրդի նիստում և հավանության արժանանալու դեպքում՝ ներկայացվում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը[12]:

11. ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան, 2015 թ.: URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf
URL:http://documentation.ysu.am/?s=%D5%AA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6&lang=hy
12. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2020 ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին. Որոշում № 62
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/12/HKH_voroshum_62.pdf
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. եկամուտների և ծախսերի նախահաշիվներ
http://documentation.ysu.am/?s=%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B7%D5%AB%D5%BE%D5%A8+&lang=hy

ԵՊՀ բյուջեի եկամուտները կենտրոնացվում են և այնուհետև պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների քանակին համապատասխան բաշխվում ըստ առանձին ֆակուլտետների:

Պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձը որոշվում է համաձայն զբաղեցրած դրույքի, գիտական աստիճանի, կոչման և պաշտոնի: Գործում է նաև դասախոսների տարբերակված հավելավճարի համակարգ[13]:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ֆակուլտետները ներկայացնում են իրենց ուսումնական ծանրաբեռնվածությունները, որոնց հիման վրա էլ կատարվում է պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների և համապատասխանաբար՝ աշխատավարձային ֆոնդի ձևավորումը:

ԵՊՀ ֆակուլտետներն ունեն նաև իրենց ստեղծած ֆինանսական միջոցների բաշխման որոշակի ինքնուրույնություն: Օրինակ՝ հեռակա ուսուցումից ստացվող ֆինանսական միջոցների մի մասը տնօրինում է ֆակուլտետը՝ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի լրավճարներ և ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովվածության ծախսերի համար:

Ռեսուրսների բաշխման մեխանիզմ է նաև առանձին ստորաբաժանումների հայտերի հիման վրա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը ԵՊՀ գնումների և մատակարարման բաժնի կողմից[14]:

ԵՊՀ ֆինանսական գործունեության աուդիտի անցկացումը բխում է ՀՀ օրենսդրության պահանջից («Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդված, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված): Համաձայն վերոնշյալ իրավական ակտերի՝ յուրաքանչյուր տարի լիցենզավորված աուդիտորական ընկերությունների կողմից անցկացվում է ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

Թեև համալսարանի սուղ միջոցները կառավարվում են հնարավորինս արդյունավետ, այդուհանդերձ, դրանց կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումը, լինելով ԵՊՀ ռազմավարական ընթացիկ գերակայություն, գտնվում է ԵՊՀ ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարության ուշադրության կենտրոնում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.4. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ԵՊՀ ռեսուրսային բազայի զարգացումը և դրա արդյունավետ օգտագործումը կրթական ծրագրերի շարունակական զարգացման գործում ամրագրված է ԵՊՀ 2016-20 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որտեղ խնդիր է դրվում զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբարատոր պայմանները,

13. ԵՊՀ դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի դրույքաչափերի վերանայման մասին. Հրաման 12 § 7 URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/09/druyqachap.pdf http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/08/Profesoradas_anznakazmi_ashxatavarzi_druyqachapi-popoxman-masin.pdf
14. ԵՊՀ հիմնադրամի գնումների պլանավորման և պահեստավորման վարչության վերակազմակերպման մասին. Որոշում № 51 URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/07/HKH_voroshum_51.pdf

արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները, զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները[2]: Այս խնդիրների լուծման համար ԵՊՀ-ն շարունակաբար տեխնոլոգիապես վերազինում է լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները, վերանորոգում և արդիականացնում է գիտական լաբորատորիաները, մշակում և գործադրում է տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ և այլն:

ԵՊՀ-ում նոր կրթական ծրագիր սկսելուց առաջ նախ գնահատվում է ծրագրի իրականացման հիմնավորվածությունը, անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը, ինչն իրականացվում է տվյալ կրթական ծրագրի արտոնման գործընթացով, որի ընթացքում տրվում է ծրագրի ռեսուրսային ապահովվածության նախնական գնահատականը, և բացահայտվում է լրացուցիչ ռեսուրսների անհրաժեշտությունը, իսկ ծրագրի փորձաքննության և հաստատման գործընթացում գնահատվում է նորաստեղծ ծրագրի և դրա բաղկացուցիչ դասընթացների (կրթական մոդուլների) իրականացման ռեսուրսային բազայի և ուսումնական ենթակառուցվածքի համապատասխանությունը սահմանված նորմատիվային պահանջներին[15]: Այս գործընթացի համար պատասխանատու է ոչ միայն տվյալ կրթական ծրագրի մշակման աշխատանքային խումբը, այլև ԵՊՀ ՈԱԿ-ը (տե՛ս «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ»[15]):

Իսկ գործող կրթական ծրագրերի ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմը դրանց ընթացիկ մոնիթորինգն է, որի ընթացքում պարբերաբար գնահատվում են նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ ռեսուրսների կարիքները [16]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.5. ՄՈՒՀ-ում առկա են տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Համալսարանը վերջին տարիներին այս բնագավառի բարելավմանը հատկացրել է զգալի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչի արդյունքում ԵՊՀ-ում գործող տեղեկատվական համակարգերը և համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ, գործառույթներով և որակական բնութագրերով զգալի առաջընթաց են գրանցել՝ ապահովելով համալսարանի առաջատար դիրքը Հայաստանի բուհական համակարգում: Համալսարանական բոլոր մասնաշենքերը միացված են ԵՊՀ կենտրոնական սերվերին օպտիկամանրաթելային կապուղիներով, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մի քանի տասնյակ կիլոմետր, իսկ մասնաշենքերի միջև ներքին ցանցի թողունակությունը, 2019 թ. իրականացված տեխնիկական վերազինման արդյունքում, հասել է 10 Գբիթ/վ-ի: ԵՊՀ ներքին ցանցին միացված ընդհանուր համակարգիչների թիվը մոտ է 3000-ի: Անլար Wi-Fi կապի երթուղիչների թիվը 130-ից ավելի է, որոնք սփռում են անլար ինտերնետ ԵՊՀ բոլոր մասնաշենքերի հարկաբաժիններում: Ավելին, 2019 թվականին սկսվել է ԵՊՀ ինտեգրումը Eduroam[17] համաշխարհային գիտական ռոմինգ Wi-Fi ցանցին, որի

15. ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Program-Approval-Regulation_26.01.2014.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/voroshum_4-4.pdf
16. ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf
http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/07/voroshum_12-4.pdf
17. URL: http://wiki.ysu.am/xwiki/bin/view/IT%20dep/How_to_connect_to_eduroam/

արդյունքում ԵՊՀ ուսանողները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներն ու մյուս աշխատակիցները կարող են օգտվել Wi-Fi-ով սփռվող անվճար ինտերնետից ոչ միայն ԵՊՀ-ում, այլև աշխարհի բոլոր այն գիտական կենտրոններում, որոնք միացել են այդ ցանցին: Առհասարակ, համալսարանն իր ուսանողներին և դասախոսներին անսահմանափակ ծավալով ինտերնետ տրամադրում է՝ սկսած 2013 թ.-ից: Ներկայումս բոլոր աշխատակիցները և ուսանողներն ունեն համալսարանական էլ. փոստի հասցեներ[18]:

2019/20 ուսումնական տարվա սկզբից ԵՊՀ-ում ներդրվել է փաստաթղթաշրջանառության Mulberry էլեկտրոնային համակարգը, որը բավական արագացրել և հեշտացրել է փաստաթղթաշրջանառությունը գործընթացը[19]:

Շարունակվում են դեռևս 2008 թ. (համակարգի մշակումը սկսվել է 2006 թ.) ԵՊՀ-ում ներդրված Supervision տեղեկատվության կառավարման բազմաֆունկցիոնալ ցանցային համակարգի զարգացման աշխատանքները: Այս համակարգը նախատեսված է ուսումնական գործընթացի բոլոր փուլերն ավտոմատացնելու և ուսանողների ակադեմիական տվյալների և կրթական առաջընթացի էլեկտրոնային բազա ստեղծելու համար:

Supervision-ն ապահովում է բազմաթիվ օգտագործողների՝ ֆակուլտետների, ամբիոնների և համալսարանական այլ ստորաբաժանումների միաժամանակյա հասանելիություն համակարգին: Այն թույլ է տալիս բարձրացնել աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը՝ համակարգի միջոցով ինֆորմացիայի արագ փոխանակման շնորհիվ:

Համակարգը ներառում է ուսումնական գործընթացի հետևյալ փուլերը՝

- Ուսանողների և դասախոսների հաշվառում,
- Ուսանողների շարժի կառավարում և վերահսկում,
- Ուսումնական պլանների և ամբիոնային ծանրաբեռնվածությունների հաշվարկ և վերահսկում,
- Դասացուցակի համապատասխանություն ուսումնական պլաններին,
- Քննության աղյունքների ավտոմատ գրանցում,
- Ուսանողի առաջադիմության հաշվարկ և վերահսկում,
- Ուսանողին ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ տրամադրում,
- Ուսանողների կողմից ուսումնական գործընթացի գնահատման ապահովում,
- Հաշվետվությունների արագ տրամադրում:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ավտոմատացումը թույլ է տալիս խուսափել մարդկային գործոնի հետ կապված սխալներից, բարձրացնել աշխատանքի արագությունն ու որակը: Համակարգի կատարելագործումը շարունակվում է առ այսօր և աստիճանաբար ընդգրկում է և ավտոմատացնում ավելի շատ գործառույթներ:

18. URL: http://mail.ysu.am/
ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթ (օգտագործողի ուղեցույց)
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/YSU_staff_intranet_2017.pdf
19. URL: http://mul.ysu.am/

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.6. Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները

ԵՊՀ-ում առողջապահական ծառայությունը համակարգվում է ընդհանուր հարցերով պրոռեկտորի ենթակայության տակ գտնվող բուժկետի կողմից: Բուժկետը իր ծառայությունները մատուցում է մարզահամալիրի, 7-րդ և 8-րդ մասնաշենքերում՝ այդ մասնաշենքերից յուրաքանչյուրում ունենալով մեկ բժիշկ: Բուժկետի հիմնական գործառույթն ուսանողներին և աշխատակիցներին առաջին բժշկական օգնություն ցուցաբերելն է:

ԵՊՀ ընդունված առաջին կուրսի ուսանողները տեղամասային պոլիկլինիկաներից բուժկետ են ներկայացնում առողջության վիճակի մասին քաղվածք իրենց ամբուլատոր քարտերից: Ֆիզիկական դաստիարակության առարկայի համար ըստ ներկայացված տվյալների՝ ուսանողները ըստ առողջական վիճակի բաժանվում են չորս խմբի՝ հիմնական, նախապատրաստական, հատուկ և բուժական: Բուժական խմբում ընդգրկված խրոնիկական հիվանդություններ չունեցող (հետվիրահատական շրջան) ուսանողները երկրորդ կիսամյակում կրկին ներկայացնում են առողջական վիճակի մասին ամբուլատոր քարտի քաղվածք: Վերջինից կախված՝ հնարավոր է խմբի փոփոխություն[20]:

ԵՊՀ-ում գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, որն իրականացնում է մասնաշենքերի և գույքի պահպանությունը և ուսանողների ու աշխատողների անվտանգության ապահովման գործառույթը: Անվտանգության ծառայությունը պատվիրակվում է համապատասխան փորձ և որակավորում ունեցող արտաքին ընկերություններին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Ստորև ներկայացվում են պահպանության և անվտանգության համար հատկացված միջոցներն ըստ տարիների[21]: 2019 թվականին ԵՊՀ անվտանգության ծառայությունը իրականացվել է շուրջ 60 աշխատակիցների կողմից:



20. «ԵՊՀ Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի կանոնադրությունը» հաստատելու մասին. Որոշում № 8/10
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/voroshum_8-10.pdf
21. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման գնման պայմանագիրը (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/140») հաստատելու մասին. Որոշում № 72
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/HKH_voroshum_72.pdf

ԵՊՀ-ում գործում է նաև սանմաքրման ծառայություն, որի աշխատակիցներն ապահովում են բոլոր մասնաշենքերի սանմաքրումը: Այն, ինչպես անվտանգության ծառայությունը, նույնպես պատվիրակվում է համապատասխան փորձ և որակավորում ունեցող ընկերություններին: Վերջին մի քանի տարիների ԵՊՀ-ն շուրջ 140,000 հազ. ՀՀ դրամ է տրամադրել այս ծառայության ապահովման համար, որն իրականացվել է շուրջ 80-90 համապատասխան աշխատողների կողմից:

ԵՊՀ ուսանողները և աշխատողներն իրենց հանգիստը կազմակերպելու համար կարող են օգտվել ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայից, որտեղ նրանց համար գործում են զեղչված գներ[22]: Այս տարի նախատեսվում է Բյուրականի և Դիլիջանի ուսումնաարտադրական բազաների վերականգման և արդիականացման աշխատանքների իրականացում, որի ավարտից հետո հնարավոր կլինի հանգիստը կազմակերպել նաև այդ հանգստավայրերում:

Արտակարգ իրավիճակների պայմաններում ուսանողների և աշխատողների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ԵՊՀ քաղաքացիական պաշտպանության շտաբը: ԵՊՀ մասնաշենքերում գործում են քաղաքացիական պաշտպանության մշտական շտաբներ՝ մասնաշենքերի պարետների և ֆակուլտետների դեկանների ներգրավմամբ[23]: Շտաբն իրականացնում է նաև ուսանողական փրկարար ջոկատների կազմակերպման պրոֆիլակտիկ աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում այդ ջոկատները փրկարար աշխատանքներում ներգրավելու համար: Որոշ մասնաշենքերում ներդրված է հրդեհի ահազանգման համակարգ:

ԵՊՀ-ն միջոցներ է ձեռնարկում տեսողական, լսողական, հենաշարժողական և այլ խնդիրներ ունեցող ուսանողների անվտանգ միջավայրի և ներառական կրթության ապահովման համար: Այս նպատակով ռեկտորի պաշտոնակատարի 2019 թ. հոկտեմբերի 10-ի 187/20-Ա հրամանով նախատեսվում է ֆինանսական խրախուսում տրամադրել համապատասխան ֆակուլտետներին[24]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

ԵՊՀ շրջանավարտների և ուսանողների հարցումները գործուն մեխանիզմներ են, որոնց օգնությամբ գնահատվում են ուսանողներին տրամադրող ռեսուրսների և ծառայությունների օգտակարությունը/արդյունավետությունն ու հասանելիությունը: ԵՊՀ տրամադրած ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների հասանելիությունն ու արդյունավետությունը գնահատվում են ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների

22. ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում ամանորյա ուղեգրերի գինը և ամրագրման կարգը սահմանելու մասին. Հրաման 205 § 14
URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/11/hraman-205-14.pdf
23. URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/09/hraman_165-199.pdf
24. URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/10/Hraman_187-20.pdf

բավարարվածության վերաբերյալ առցանց հարցման մեջ տեղ գտած 8 հարցերի օգնությամբ, որտեղ կա նաև կարծիքների և առաջարկների առանձին հատված[25]:

Աղյուսակ 2-ից երևում է, որ շրջանավարտները հիմնականում գոհ են ԵՊՀ տրամադրած ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների օգտակարությունից:

Աղյուսակ 5. Ուսումնառության ռեսուրսներին և օժանդակ ծառայություններին վերաբերող բնութագրիչների աստիճանակարգն ըստ ուսանողների բավարարվածության միջին գնահատականների

	2018թ.		2019թ.	
	Միջին գնահատա-կան	Միջին քառակուսային շեղում	Միջին գնահատական	Միջին քառակուսային շեղում
Բավարարվածությունը լսարանային աշխատանքային պայմաններից	4.09	0.92	4.14	0.88
Բավարարվածությունը գրադարանում սպասարկումից	4.09	0.96	4.06	0.98
Բավարարվածությունը գրադարանի կահավորումից	4.06	0.94	4.08	0.94
Բավարարվածությունը գրադարանի գրականության ժամանակակից լինելուց	4.0	0.997	3.96	0.99
Բավարարվածությունը Կարիերայի կենտրոնի դերից	3.95	1.04	3.95	1.04
Բավարարվածությունը լաբորատորիաների կահավորանքից	3.95	1.07	4.00	1.02
Բավարարվածությունը համակարգչային սրահների մատչելիությունից	3.94	1.01	3.94	1.02
Բավարարվածությունը Համացանցի մատչելիությունից	3.90	1.02	3.86	1.02

Ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատման հնարավորություն առկա է նաև դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների առցանց հարցման հարթակում, որտեղ ուսանողները կարող են կարծիքներ և առաջարկներ ներկայացնել տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների որակի վերաբերյալ:

Տարիներ շարունակ իրականացվող հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ հաճախ ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների բարելավմանն

25. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների կազմակերպման կարգ. URL: http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/voroshum-1-3.pdf / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg.pdf

ուղղված գործառույթները հիմնված են այս մեխանիզմներով ստացված տեղեկատվության վրա:

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, շրջանավարտներն առավել բարձր են գնահատել լսարանային աշխատանքային պայմանները: Այդ միտումը պահպանվում է վերջին տարիներին արված հետազոտություններում ևս: Շրջանավարտները համեմատաբար բարձր են գնահատում գրադարանի աշխատանքի հետ կապված տարբեր բնութագրերը:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 7-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. ԵՊՀ-ն ունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ ուսումնական գործընթացը պատշաճ կերպով կազմակերպելու համար, ներառյալ. • վերանորոգված և արդիականացված ուսումնագիտական լաբորատորիաներ և գրադարանային ընթերցասրահներ, • ժամանակակից ուսանողական հանրակացարան և հյուրերի տուն, • ժամանակակից պահանջներին համահունչ վերանորոգված և արդիականացված մարզադահլիճներ, • ժամանակակից պահանջներին համապատասխանող գրադարան: 2. Ներդրված են գործուն մեխանիզմներ ֆինանսական միջոցների բաշխման ու վերահսկման համար: 3. ԵՊՀ-ում առկա են արդիականացված SS ենթակառուցվածքներ. • ուսումնական փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է բազմաֆունկցիոնալ ցանցային SuperVision համակարգի միջոցով, • վարչական փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է mulberry համակարգի միջոցով, • ներդրված են տարբեր այլ SS համակարգեր, օրինակ՝ Ինտրանետ,	1. Ֆինանսական գործընթացների հաշվառման ոչ ամբողջական ավտոմատացում, 2. Շրջանավարտների հետադարձ կապի թույլ մեխանիզմներ, 3. Շենք-շինությունների ոչ օպտիմալ օգտագործում, 4. Wi-Fi-ի ցածր հասանելիություն ԵՊՀ որոշ տարածքներում, 5. Ոչ բավարար պայմաններ հատուկ կարիք ունեցող ուսանողների և աշխատողների համար:

ՀԾ և այլն: 4. Առկա է շրջանավարտների և ուսանողների հարցումների կազմակերպման առցանց հարթակ:	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Ակտիվ մասնակցություն միջազգային համագործակցության դրամաշնորհային ծրագրերին: 2. ՀՀ տնտեսության զարգացմանը զուգընթաց պետական և մասնավոր աղբյուրներից ստացվող ֆինանսավորման աճ:	1. Ֆինանսական մուտքերում մեծ է ուսման վարձավճարների մասնաբաժինը, ինչը կախվածություն է ստեղծում ուսանող-ների քանակից: 2. ԵՊՀ-ին տարածքները և շենքերը տրված են անհատույց և անժամկետ օգտա-գործման:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Սինխրոնիզացնել SS համակարգերը (ՀԾ, Intranet, Supervision, Moodle):
2. Վերազինել մասնաշենքերի և բակային տարածքները Wi-Fi ցրիչներով:
3. Հատկացնել միջոցներ և ստեղծել անհրաժեշտ ենթակառուցվածք հատուկ կարիքներ ունեցող ուսանողների և աշխատողների տեղաշարժն ապահովելու համար:
4. Համագործակցել տարբեր կառույցների՝ այդ թվում՝ տեղական և արտասահմանյան հիմադրամների ու բարեգործական կազմակերպությունների հետ, ուսումնագիտական լաբորատորիաները և գրադարանը արդիականացնելու համար:
5. Վերանորոգել և վերակառուցել ԵՊՀ Դիլիջանի ու Հանքավանի մարզաառողջարանային բազաները:
6. Տրամադրել միջոցներ ԵՊՀ վճարովի ծառայությունների, մասնավորապես՝ նոր հանրակացարանի, լեզվի կենտրոնի, նախապատրաստական և շարունակական կրթության դասընթացների և այլնի մարքեթինգային գործընթացներն ակտիվացնելու համար:
7. Ստեղծել ԵՊՀ շրջանավարտների նոր միավորում՝ ներգրավելով այն ԵՊՀ խնդիրների լուծման և զարգացման ծրագրերի իրականացման գործընթացում:

ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ԻՐ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵՏՈՒ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

ԵՊՀ հավակնությունները.

- Պահպանել ու ամրապնդել Մայր բուհի՝ որպես համահայկական նշանակություն ունեցող գլխավոր կրթական ու գիտահետազոտական հաստատության առաքելությունը:
- Վերակազմակերպել դինամիկ զարգացող, արդիական և մատչելի կրթական ծրագրեր առաջարկող ու իրականացնող հաստատություն՝ հաշվի առնելով ԵՊՀ կրթական և գիտահետազոտական գործունեության հարյուրամյա փորձը, ժառանգությունն ու ավանդույթները հարմարեցնելով արդի փուլում աշխարհում տեղի ունեցող գործընթացներին:
- Ձևավորել և ամրապնդել սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող բուհի կերպար՝ ԵՊՀ-ի ուսանողների և աշխատողների համար իրականացնելով սոցիալական ուղղվածության ծրագրեր, ինչպես նաև համազգային ու համապետական մակարդակներում ակտիվորեն մասնակցելով՝ տարաբնույթ նախաձեռնությունների ու ծրագրերի:
- Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան պարբերաբար վերանայել կրթական ծրագրերը, իրականացնել վերապատրաստումներ և գործատուների մոտ ձևավորել վստահելի գործընկերոջ վարկանիշ՝ փոխգործակցելով գործատուների հետ:
- Ձևավորել և զարգացնել պատասխանատու բուհի ու գործընկերոջ համբավ՝ օտարերկրյա ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների, ինչպես նաև արտասահմանցի ուսանողների հետ հարաբերություններում՝ առաջարկելով և իրականացնելով արդիական, որակյալ կրթական, գիտահետազոտական ծրագրեր[1]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Պատասխանատվությամբ վերաբերվելով իր առաքելությանն ու դերին՝ ԵՊՀ-ն տարիների ընթացքում ձևավորել է հաշվետվողականության որոշակի համակարգ: Ըստ ուղղվածության այն կարելի է բաժանել ներքինի ու արտաքինի, իսկ բնույթով՝ կրթական-գիտահետազոտականի և ֆինանսատնտեսականի: ԵՊՀ-ի հաշվետու լինելը սահմանված է ինչպես նրա կանոնադրությամբ ու տարբեր կանոնակարգերով, այնպես էլ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով*:

[1] Ներկայացված հավակնությունները բխում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունից (Ե., 2014,), ԵՊՀ տեսլականից ու հիմնարար արժեքներից և ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ((2016-2020), Ե., 2015) նպատակներից: Համապատասխանաբար տե՛ս էջ 3-5 և 5-6:

* Տե՛ս ԵՊՀ կանոնադրության 22-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 6-րդ կետ, 56-րդ հոդվածի 3-5-րդ կետերը http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf , «Կրթության»,

Արդեն տասը տարի է, ինչ համալսարանի զարգացման ընթացքը և ուղղությունները որոշվում են ռազմավարական ծրագրերով (ՌԾ) ու դրանց իրականացման ժամանակացույցներով: Այդ փաստաթղթերը նաև կանխորոշում են բուհի հաշվետվությունների բովանդակությունը, նպաստում կառավարման համակարգի կատարելագործմանը:

Սկսած 2009 թ. ԵՊՀ կառավարման բարձրագույն մարմինը՝ ԵՊՀ-ի խորհուրդը (2014 թ-ից Հոգաբարձուների խորհուրդը), քննարկում և հաստատում է բուհի ստորաբաժանումների մասնակցությամբ մշակված ու ռեկտորի կողմից ներկայացվող զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույցները (մինչ օրս հաստատվել են երկուսը՝ 2010-2014 և 2016-2020): Այդ փաստաթղթերում, ըստ ոլորտների և ուղղությունների, ներկայացվում են իրականացվելիք գործողությունները, պատասխանատուները, ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև իրականացման ժամկետները: Նշված հիմքով, յուրաքանչյուր տարվա վերջում, ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումները (ֆակուլտետները, գիտահետազոտական ինստիտուտները, մասնաճյուղերը, ամբիոնները, կենտրոնները, վարչությունները և այլն), իրենց կանոնադրական պահանջներին համապատասխան*, հաշվետվություններ են ներկայացնում վերադաս օղակներին, պարզաբանելով ռազմավարական ծրագրին և ժամանակացույցին համապատասխան իրենց կատարած աշխատանքները՝ մատնանշելով նաև բացթողումները: Ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետությունը գնահատելիս, բացի բուն հաշվետվությունը, կարևոր ցուցիչ է համարվում տարվա ընթացքում ՌԾ ժամանակացույցով նախատեսված ընդհանուր և տեղային բնույթի գործողությունները կատարելու ղեկավարների կարողությունն ու ստորաբաժանումների աշխատանքի բնականոն ընթացքի ապահովումը: Այսինքն՝ վերադաս օղակներ-ստորաբաժանումներ կապը, փոխգործակցությունը և վերահսկողությունը, կարելի է ասել, մշտական բնույթ է կրում: Դա կարևոր է արդյունավետ կառավարման և թերացումների դեպքում արագ արձագանքման հնարավորության տեսանկյունից:

ԵՊՀ-ում հաշվետվողականության գործընթացի կատարելագործման առումով՝ կարևոր դրական փոփոխություն էր 2017 թ. «Ինտրանետ» համակարգի գործարկումը, որի միջոցով դասախոսներն առցանց հարթակ են ներբեռնում իրենց գործունեության արդյունքները և հաշվետվությունները՝ ավելի համակարգված և դյուրին դարձնելով ԵՊՀ ընդհանուր հաշվետվության ձևավորման ընթացակարգը:

Ներքին հաշվետվողականության գործընթացն ամփոփող գլխավոր և համապարփակ հաշվետվությունը հոգաբարձուների խորհրդին ռեկտորի կողմից ներկայացվող տարեվերջյան հաշվետվությունն է, որը կազմվում է բուհի գրեթե բոլոր ստորաբաժանումների աշխատանքի մեկտեղմամբ: Այդ հաշվետվության տեղեկատվությունը հավաքելու, համակարգելու և ամփոփելու գործը կատարում է ԵՊՀ Հանրային կապերի ծառայությունը: Վերջինս համալսարանական և լայն հանրության առջև ԵՊՀ-ի գործունեության հաշվետվողականության ապահովման նպատակով հրապարակում է ԵՊՀ զարգացման ռազմա-

---

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին և այլ օրենքներ, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշումներ:

* Օրինակ՝ ֆակուլտետների տիպական կանոնադրությունների 24-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները լսում են դեկանի տարեկան հաշվետվությունները և գնահատում գործունեությունը, իսկ 50-րդ հոդվածում նշվում է ֆակուլտետների գիտական խորհուրդներին ամբիոնի վարիչների ամենամյա հաշվետվություն ներկայացնելու պարտավորության մասին և այլն: Տե՛ս ԵՊՀ օրինակելի կանոնադրության օրինակը՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/09/orinakeli_kanonadrutyun.pdf

վարական ծրագրի գործողությունների տարեկան կատարողականները[2]:

Ֆինանսատնտեսական ոլորտում ներքին հաշվետվողականությունն իրականացվում է ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունված ֆինանսական տարվա նախահաշվի, իսկ տարեվերջին դրա կատարողականը ռեկտորի ներկայացմամբ՝ Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվելու միջոցով: Այս տեսանկյունից կարևոր է նաև «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և ԵՊՀ կանոնադրության 22-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ համալսարանում ամենամյա պարտադիր ֆինանսական արտաքին աուդիտի իրականացման պարտավորությունը, որի եզրակացությունը ևս հաստատում է Հոգաբարձուների խորհուրդը:

Ինչ վերաբերում է արտաքին հաշվետվողականությանը, ապա ԵՊՀ-ն մի շարք օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջով՝ կրթական և գիտահետազոտական գործունեության վերաբերյալ, ամեն տարի տարաբնույթ հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, իսկ ֆինանսատնտեսական հարցերում՝ Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական ծառայությանը և այլ պետական գերատեսչությունների:

ԵՊՀ-ի հաշվետվողականության գործընթացը համակարգ է, որն անցել է զարգացման որոշակի ճանապարհ և այսօր էլ ունի կատարելագործման կարիք: Նշված գործընթացի վերաբերյալ պատկերացում կազմելու համար ստորև ներկայացվում են 2010-2014 և 2016-2020 թթ. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացման փուլերում նկատված հիմնական խնդիրները, կատարված փոփոխությունները, ինչպես նաև ուրվագծվում են ապագա անելիքները:

Այսպես՝ 2010-2014 թթ. ռազմավարական ծրագրի և ժամանակացույցի* ստեղծման աշխատանքներում ֆակուլտետների ներգրավածության ցածր մակարդակը հանգեցրել է նրան, որ անգամ այդ փաստաթղթերի առկայության դեպքում և դրանցում մատնանշված խնդիրների լուծման գործում ֆակուլտետները մեծ մասնակցություն չեն ունեցել և, ընդհանուր առմամբ, իներցիայով աշխատել են նախկինի նման: Դա իր հերթին որոշակի խզում է առաջացրել բուհի կառավարման կենտրոնական օղակների և ֆակուլտետների գործունեությունում: Այդ խնդիրը որոշակիորեն հաղթահարվել է 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և ժամանակացույցի ստեղծման գործընթացում, քանի որ այս

---

[2] ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2016-2020 թթ.: Զեկույց 2016-2017 ուստարում նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ, Ե., 2017, 92 էջ: ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2016-2020 թթ.: Զեկույց 2017-2018 ուստարում նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ, Ե., 2018, 88 էջ: Նշված կատարողականները ևս օգտագործվել են սույն չափորոշիչը գրելիս:
Տե՛ս՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf

* 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման զեկույցի ուսումնասիրությունը պարզ է դառնում, որ «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» նպատակի շրջանակներում, ավելի շատ փորձ է արվել բարձրացնել ֆինանսական ռեսուրսների պլանավորման, կառավարման և օգտագործման կայունությունը, իսկ 8-ի «Ե» կետում, թեև նշված է ԵՊՀ կառավարման արդյունավետության, ապակենտրոնացման և հաշվետվողականության բարձրացման անհրաժեշտության մասին, իրականում, սակայն, այդ ուղղությամբ էական քայլեր չեն կատարվել: Զեկույցում ընդամենը խոսվում է կանոնակարգերում կառավարման կենտրոնական և տեղային օղակների միջև լիազորություններն ու պատասխանատվությունը հավասարաչափ բաշխելու, ԵՊՀ գործունեության ութ ոլորտները գնահատելու և գույքագրման էլեկտրոնային համակարգ ներդնելու մասին: Տե՛ս Զեկույց ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2010-2014 թթ.) իրականացման վերաբերյալ, Ե., 2014, էջ 52-55:

շրջափուլում ֆակուլտետների մասնակցությունը զգալիորեն աճել է. Համահամալսարանական ծրագրին զուգահեռ ստեղծվել են նաև ֆակուլտետային ռազմավարական ծրագրեր, որոնցում համահամալսարանական խնդիրներին ու գործողություններին զուգահեռ ներկայացվել են նաև ֆակուլտետային նշանակության գործողություններ, այսինքն՝ տեղի է ունեցել ռազմավարական ծրագրի տեղայնացում: Այդ քայլը նպաստել է թե՛ կառավարման բարելավմանը, թե՛ ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացմանը, և թե՛ բուհի բոլոր ստորաբաժանումներում և օղակներում գործունեության միասնական ռիթմի ձևավորմանը:

2010-2014 թթ. ռազմավարական ծրագրում և ժամանակացույցում բացակայել են խնդիրների լուծման պարագայում ակնկալվող չափելի առաջընթացի ցուցիչները, որոնք հնարավորություն կտային ճիշտ գնահատելու ձեռք բերված արդյունքները և կատարված աշխատանքները, որը 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում ևս լրացվել է:

Ֆինանսավորման հարցում ևս առաջին ռազմավարական ծրագրի ժամանակացույցը զիջում է հաջորդին, քանի որ առաջինի գրեթե բոլոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրների պարագայում նշվում էր «համապատասխան ֆինանսավորում», այնինչ՝ նոր ժամանակացույցում մի շարք հարցերում արդեն մատնանշված են գումարի կոնկրետ չափեր և համապատասխան աղբյուրներ:

Այդուհանդերձ, ԵՊՀ-ն գիտակցում է իր առջև դրված խնդիրները լուծելու, զարգացման ռազմավարական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ փոփոխությունների կարիքը: Այդ նպատակով մոտակա տարիներին նախատեսվում է ՌԾ-ով նախատեսված գործողությունների իրականացման պատասխանատուների գործողություններում հստակեցնել դերաբաժանումը, հատկապես խոսքը վերաբերում է կառավարման կենտրոնական և ստորին օղակներին: Խնդիրների, գործողությունների էլ ավելի մանրամասնումը և պատասխանատուների որոշակիացումը կնպաստի դերակատարների պատասխանատվության անհատականացմանը և կառավարման օղակի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Կսահմանվեն հաշվետվություններ կազմելու չափորոշիչներ, ըստ որոնց՝ հաշվետվություն ներկայացնողները կլուսաբանեն ոչ միայն կատարված աշխատանքը, այլև պարտավորված կլինեն՝ մատնանշելու հաշվետու ժամանակահատվածում ծրագրով նախատեսված գործողությունների քանակական տվյալները և յուրաքանչյուրի ուղղությամբ կատարված քայլերը կամ բացատրելու դրանց չիրականացման պատճառները: Նշված չափորոշիչները կնպաստեն ծրագրերի իրականացման հարցում պատասխանատվության բարձրացմանը: Կարևոր է նաև զարգացման ռազմավարական ծրագրերով նախատեսված գործողությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկման ավելի կոնկրետ մեխանիզմների ներդրումը՝ խուսափելու համար ֆինանսական միջոցների բացակայության կամ անբավարարության պատճառով նախանշված գործողությունների չիրականացումից կամ ոչ պատշաճ կատարումից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Ապահովելով ՄՈՒՀ-ի հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը՝ 2006 թվականին ԵՊՀ-ում ստեղծվեց Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը, որը 26.07.2019 թ.-ին վերակազմավորվեց Հանրային կապերի ծառայության: Ծառայությունն ունի մի շարք կարևորագույն գործառույթներ՝ հասարակայնության հետ կապերի ոլորտում տարվող քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, համապատասխան ծրագրերի և միջոցառումների մշակում ու իրականացում, հայաստանյան և արտերկրի ԶԼՄ-ների հետ գործակցություն, ԵՊՀ միջոցառումների լուսաբանում, ինտերնետային ռեսուրսների զարգացում, համացանցային տիրույթում ԵՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածում, հարցումներին, նամակներին, դիմում-խնդրանքներին պատասխանում և ուղղորդում, առանձին անգլերեն և ռուսերեն էջերի կազմակերպում արտասահմանի ուսանողների և գիտնականների համար, գիտահանրամատչելի ֆիլմերի և դասախոսությունների, ինչպես նաև ՄՈՒՀ-ի բոլոր ստորաբաժանումների, կրթական ծրագրերի վերաբերյալ տեսանյութերի նկարահանում, տարեկան հաշվետվությունների կազմում, ԵՊՀ բրենդբուքի պատրաստում և ձևավորման աշխատանքների իրականացում, ԶԼՄ-ների հետ աշխատանք՝ ԵՊՀ աշխատակիցների հետ հարցազրույցների և փորձագիտական վերլուծությունների համար և այլն:

Հասարակության և ԶԼՄ-ների հետ կապի առավել խորացմանը նպաստել է նաև ԵՊՀ մամուլի խոսնակի պաշտոնի ներմուծումը, որը համատեղված է ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետի պաշտոնի հետ:

Զարգացնելով հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնելով հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը՝ վերջին տարիներին նոր հարթության վրա են դրվել ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների, ինչպես նաև ԵՊՀ ֆակուլտետների դեկանների, փոխդեկանների, կենտրոնների և վարչությունների ղեկավարների հետ աշխատանքը և պարբերաբար կազմակերպվող հանդիպումները:

Առաջնորդվելով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Հանրային ներգրավում և ծառայություններ» 3-րդ խնդրի 3-րդ գործողությամբ՝ «Ապահովել ինտերնետային պորտալի դինամիկ զարգացումը՝ հարստացնելով և արդիականացնելով դրա բովանդակային և ծրագրային բաղադրիչները»՝ իրականացվում են ԵՊՀ ինտերնետային պորտալի զարգացման ուղղությամբ աշխատանքները՝ համալսարանի ինտերնետային ռեսուրսների զարգացման գործողությունների պլանի համաձայն: ԵՊՀ պորտալում, որը ստեղծվել է 2006 թ., ընդգրկված են ավելի քան 100 կայք ու ենթակայք:

Ֆակուլտետների կայքերում թարմացվում ու տեղադրվում են դասախոսների տվյալները (հայերեն և անգլերեն), լուսանկարները, խմբագրվում և ավելացվում են գիտական հրապարակումների մասին տվյալները: Կայքում առկա է 28.688 հրապարակում:

ԵՊՀ-ն հասարակության տարբեր խմբերին ներկայանում է որպես կրթական, գիտական, մշակութային և հասարակական առաջատար կառույց, ինչն էլ նպաստում է, որ համալսարանում տեղի ունեցող քիչ թե շատ հանրային նշանակության միջոցառում արժանանում է լրատվամիջոցների ուշադրությանը: ԵՊՀ-ում տեղի ունեցող միջոցառումները

լուսաբանվում են ԵՊՀ պորտալի «Նորություններ» բաժնում: Կայքի «Նորություններ» բաժնում տարեկան հրապարակվում է 2771 նյութ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Թվայնացվել են ԵՊՀ-ում պահվող բոլոր կինո (1000 բոպե) և աուդիո (83 ֆայլ) ժապավենները, որից հետո դրանք առանձնացվել և մոնտաժվել են 55 ֆիլմի տեսքով, կատարվել է դրանց նկարագրությունը:

Ապահովելով թափանցիկության սկզբունքը՝ շարունակական աշխատանք է իրականացվում «ԵՊՀ փաստաթղթեր» (http://doc.ysu.am) կայքում. տեղադրվում են ոչ միայն ԵՊՀ կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, ծրագրերը, հրամանները, հաշվետվությունները, ֆինանսական փաստաթղթերը, այլև ներկայացվում են կոլեգիալ մարմինների (ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդ, ԵՊՀ գիտական խորհուրդ, ֆակուլտետներ և բուհում գործող այլ ստորաբաժանումներ) նիստերի արձանագրություններն ու որոշումները:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար ԵՊՀ ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում (http://www.ysu.am/entrant) տեղադրվում է համապատասխան տեղեկատվություն, այդ թվում՝ տվյալ ուստարվա առկա ուսուցման համակարգ ընդունված դիմորդների շարժը՝ ըստ օրերի, և ԵՊՀ ընդունվածների ցուցակները: Իսկ կրթական փաստաթղթերը (ծրագրեր, ուղեցույցներ, կարգեր և այլն) տեղադրված են պորտալի «Կրթություն» բաժնում՝ ուսանողների և համապատասխան թիրախային խմբի համար նշված փաստաթղթերն ավելի մատչելի դարձնելու նպատակով: Ստեղծվել է նաև «Առաջին կուրսեցու ուղեցույց» կայքը:

ԵՊՀ-ում տեղի ունեցող գործընթացների թափանցիկությունն ապահովում են նաև ֆակուլտետների պաշտոնական տեսահոլովակների նկարահանումները, ԵՊՀ-ում գործող կենտրոնների, լաբորատորիաների աշխատանքի լուսաբանումը, գիտական ձեռքբերումների մասին նյութերի պատրաստումը, ԵՊՀ կայքի «Ռետրո պատկերասրահ» բաժնում համալսարանի և համալսարանականների մասին արխիվային լուսանկարների տեղադրումը, իսկ «Պատկերասրահ» բաժնում պարբերաբար բուհում տեղի ունեցող իրադարձությունների նոր լուսանկարներով թարմացումը:

ՉԱՓԱՆԻՇ 8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ԵՊՀ զարգացման կարևորագույն խնդիրներից է հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ընդլայնումը և մշտադիտարկման համակարգի զարգացումը («ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2014-2020 թթ.», Խնդիր 3.1-ի 5-րդ գործողություն): Պետք է նկատել, որ հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոցներից մեկը համացանցն է:

ԵՊՀ-ում գործում է ՄՈՒՀ-ին հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքման համակարգ, իսկ համալսարանի վերաբերյալ բացասական բովանդակությամբ գրառումները ստանում են պատասխաններ՝ հայտարարությունների տեսքով: ԵՊՀ պաշտոնական էլ. փոստին (info@ysu.am) օրական ստացվում է շուրջ 70 նամակ, որոնց նույնպես արագ պատասխաններ են տրվում: Հետադարձ կապ են ապահովում նաև ԵՊՀ պորտալի «Միջազգային» կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրվող՝ ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող հայտարարություն-

ները: Մշակվում և վերլուծվում են էլեկտրոնային փոստով, «Facebook» սոցիալական ցանցով և ԵՊՀ պորտալի «Հարց-պատասխան» բաժնի միջոցով ստացված նամակները. տարեկան կտրվածքով ստացվում է ավելի քան 2000 հարց, որից մոտ 1800-ին տրվում են սպառիչ պատասխաններ: ԵՊՀ պորտալում հրապարակված նորությունները տեղադրվում են նաև ԵՊՀ «Facebook»-ի և «Twitter»-ի էջերում: Այս կերպ սոցիալական ցանցերի միջոցով շփումը լսարանի հետ դառնում է առավել անմիջական: Սոցիալական ցանցերում ակտիվորեն գործարկվում են ԵՊՀ էջերը, մասնավորապես՝ «Facebook»-ի (http://www.facebook.com/ysu.am) տիրույթում բազմաթիվ այցելուներ (հետևորդների թիվը շուրջ 52.000 է) բուռն քննարկումներ են ծավալում: ԵՊՀ-ի «Twitter» (https://twitter.com/YSU_official) սոցիալական կայքում տեղադրվել է շուրջ 2.224 նորություն (եռալեզու): 2017 թ. մայիսից գործարկվում է ԵՊՀ «Ինստագրամի»՝ https://www.instagram.com/ysu_yerevan_state_university/ պաշտոնական էջը, որի հետևորդների թիվն արդեն իսկ 1.760 է: ԵՊՀ «Youtube» տիրույթում մուտքագրված տեսանյութերի ընդհանուր թիվը 392 է: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել ԵՊՀ 100-ամյակին նվիրված միջոցառումները և նախապատրաստական ծրագրերը: ԵՊՀ հանրային կապերի ծառայության աշխատակիցները հանրային հետաքրքրության արժանացած միջոցառումները պատրաստի նյութի և լուսանկարների տեսքով (մեկ տարվա կտրվածքով՝ 39 հրավեր և 197 հաղորդագրություն) ուղարկում են հայաստանյան ԶԼՄ-ներին, ինչի արդյունքում աճել է ԵՊՀ-ի մասին դրական գրառումների ու հոդվածների քանակը: Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ներով հրապարակվում և լուսաբանվում են ԵՊՀ-ում կազմակերպվող իրադարձային միջոցառումները:

Հանրային կապերի ծառայության կողմից իրականացվում է հայաստանյան տպագիր ԶԼՄ-ներում, ինտերնետային կայքերում և հեռուստաընկերություններում ԵՊՀ-ի մասին հրապարակված նյութերի մոնիթորինգ, ինչպես նաև ԵՊՀ կենտրոնական և մյուս մասնաշենքերի նախասրահների հեռուստաէկրաններին տեղադրվում են համալսարանի մասին պատմող ֆիլմեր, տեղեկատվություն և հայտարարություններ կայանալիք միջոցառումների վերաբերյալ:

Պետք է նշել, որ հետադարձ կապի գործիքների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունն ամրագրված են ԵՊՀ հանրային կապերի հայեցակարգում[3] և մի շարք այլ փաստաթղթերում, և ԵՊՀ-ում առկա ներուժը նպաստում է գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵՊՀ-ի կողմից հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակներն ու քաղաքականությունը բխում են բուհի կանոնադրության և զարգացման ռազմավարական ծրագրերում սահմանված նպատակներից, տեսլականից ու արժեքներից[4]:

---

[3] Տե՛ս http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/PR_hayetsakarg_28_06_121.pdf

[4] «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրություն, Ե., 2014, էջ 3-5 (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_kanonadrutyun_Nov_201411.pdf), ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ նպատակ I, էջ 5-6 (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf):

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում սահմանված են մի շարք նպատակներ և խնդիրներ՝ ուղղված անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացմանը, քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը, բնակչության շրջանում գիտելիքների տարածմանը, հասարակության կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացի աջակցմանը, գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության արդյունքների ներդրմանը տնտեսության մեջ[5]:

ԵՊՀ-ն կազմակերպում է բարձրագույն, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթություն, իրականացնում կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում, գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքներ, մատուցում է խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ, կազմակերպում մշակութային միջոցառումներ և այլն:

ԵՊՀ ՌԾ-ից բխում է, որ համալսարանի շահակից են հանդիսանում հայաստանյան հանրությունը, հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները[6]: ԵՊՀ առաքելության մաս է կազմում նաև հանրությանը տնտեսական, սոցիալական, հումանիտար, մշակութային արժեքների փոխանցումը: Հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմներից են հանրային դասախոսությունները մարզային բուհերում և ՀՀ ՊՆ զորամասերում, հանդիպումները հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների հետ, մասնակցությունը տարբեր քաղաքացիական շարժումներին և ծրագրերին (բնապահպանական, սոցիալական, բարեգործական և այլն):

ԵՊՀ-ն մեծ ներդրում ունի հանրապետության գիտական մտքի ձևավորման գործում[7]: ԵՊՀ գիտական գրադարանը հնարավորություն է ընձեռում նաև լայն հանրությանը՝ օգտվելու գրադարանի ֆոնդերից: ԵՊՀ-ի հրատարակած գրքերը պարբերաբար նվիրատվության կարգով տրամադրվել և տրամադրվում են մայրաքաղաքի և մարզերի քաղաքային ու բուհական գրադարաններին: Կազմակերպվող ցուցադրությունների և տոնավաճառների ընթացքում ևս ԵՊՀ հրատարակչության մասնագիտական գրականությունից որոշակի քանակությամբ տրամադրվել է համապատասխան ոլորտով հետաքրքրված անձանց:

Ազգային արժեքների պահպանման և ամրապնդման տեսանկյունից կարևոր է ԵՊՀ-ի՝ որպես հայագիտական կենտրոնի դերակատարությունը, և այս առումով հարկ է նշել ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որի գործունեությունն ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, հայրենիք-սփյուռք հարաբերությունների, ինչպես նաև ազգային հիմնախնդիրների ուսումնասիրմանը: Հայրենիք-սփյուռք կապի ամրապնդման և սփյուռքի մշակութային արժեքների, մայրենի լեզվի պահպանման տեսանկյունից կարևոր դերակատարություն ունեն նաև ԵՊՀ պատմության ֆակուլտետում գործող Սփյուռքագիտության ամբիոնը, Հայ բանասիրության ֆակուլտետը և այլն:

Հասարակության տարբեր խմբերի համար լրացուցիչ կրթական նախագծեր իրականացնող օղակներից է ԵՊՀ հետբուհական և լրացուցիչ կրթության վարչությունը, որը պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերն ընդլայնելու նպատակով 2017 թ. մշակել է շուրջ 10 ծրագիր՝ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի, ՀՀ պաշտպանության նախարարության համար և այլն: 2016/17

---

[5] Տե՛ս ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ նպատակ I, էջ 7-12 (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf):

[6] Տե՛ս չափորոշիչ 1.2:

[7] Տե՛ս չափանիշ 6:

ուսումնական տարում Վարչությունում իրականացված մշտադիտարկման արդյունքում՝ 2017/18 ուստարում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվեցին վարչության լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:

2017/18 ուստարում ԵՊՀ հետբուհական և լրացուցիչ կրթության վարչության (ՀԼԿՎ) կողմից կատարվել է ուսումնասիրություն և շուկայում առկա լրացուցիչ կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ ուղղված լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի բացահայտմանը, որի արդյունքում ներկայացվել է երկու հաշվետվություն. 1. «Լրացուցիչ կրթության հանրային պահանջարկի ուսումնասիրում»[8]. 2. «Հաշվետվություն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կրթական ծրագրերի մշտադիտարկման վերաբերյալ»[9]: Աշխատաշուկայում և կրթաշուկայում լրացուցիչ կրթության հանրային պահանջարկն ուսումնասիրելու նպատակով կատարվել է հիմնականում փաստաթղթային վերլուծություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բազմաթիվ հետազոտությունների հիման վրա: Ուսումնասիրություն է իրականացվել նաև քանակական մեթոդով, որի համար հիմք են ծառայել ԵՊՀ-ում վերապատրաստվող հանրային ծառայողների հարցումների արդյունքները: Նշված հետազոտությունները բացահայտում են լրացուցիչ կրթության առանձնահատուկ դերակատարումը աշխատաշուկա-բուհ հարաբերություններում:

ԵՊՀ ՀԼԿՎ-ն լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով ստեղծել է «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» կայքը (http://extension.ysu.am), որում ներկայացված են ԵՊՀ-ում իրականացվող լրացուցիչ կրթության բոլոր ծրագրերը: Կայքն ապահովում է հետբուհական լրացուցիչ կրթության շահառուների հետ կապը և նպաստում ԵՊՀ համապատասխան ծառայությունների հանրայնացմանը: Բոլոր հետազոտությունների հաշվետվությունները տեղադրված են «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթություն» http://extension.ysu.am/ կայքում:

ԵՊՀ-ում հեռաուսուցման եղանակով իրականացվում են մի շարք դասընթացներ՝ Սոցիոլոգիայի, Սոցիալական աշխատանքի, Սոցիալական մանկավարժության, Մարդկային ռեսուրսների կառավարման, Հասարակայնության հետ կապերի, Շուկայագիտության, Փիլիսոփայության, Արևելագիտության, Միջազգային հարաբերությունների, Ասիագիտության, Անգլերենի և մի շարք այլ բնագավառներում: 2014 թ.-ից մինչև 2019 թ. ընկած ժամանակահատվածում Սոցիոլոգիայի ֆակուլտետի Հեռաուսուցման լաբորատորիան World Vision կազմակերպության պատվերով իրականացրել է համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստումներ: Իրականացվող դասընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը տեղադրվում է http://distancelearning.am/index.php/hy/ կայքում: Սոցիոլոգիայի ֆակուլտետի Հեռաուսուցման լաբորատորիան յուրաքանչյուր դասընթացի ավարտին իրականացնում է շրջանավարտների բավարարվածության գնահատում և ակնկալիքների ու առաջարկությունների բացահայտմանն ուղղված հարցումներ:

ԵՊՀ-ն լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման ուղղությամբ հանդես է գալիս նաև նոր նախաձեռնություններով: 2019 թ. դեկտեմբերի 26-ին, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամները կողմ քվեարկեցին Լեզուների ուսուցման եւ թեստավորման կենտրոն ստեղծելու մասին որոշմանը: Կենտրոնը լեզուների ուսուցման ծառայություններ կմատուցի ինչպես ԵՊՀ ուսանողներին ու աշխատողներին, այնպես էլ բոլոր այն քաղաքացիներին,

[8] Տե՛ս՝ http://extension.ysu.am/images/pdf/9LK_Hanrayin_pahanjark.pdf
[9] Տե՛ս՝ http://extension.ysu.am/images/pdf/10LK_mshtaditarkum.pdf

ովքեր կվճարեն այդ մատչելի գնով մատուցվող ծառայության դիմաց:

Համալսարանը խորհրդատվական ծառայություններ է մատուցում նաև մասնագիտական կողմնորոշման բնագավառում և աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ[10]: Համալսարանը մատուցում է նաև հոգեբանական խորհրդատվական ծառայություններ, որն իրականացնում է ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնը[11]: Վերջինիս ծառայություններից 2016-2019 թթ. օգտվել է շուրջ 80 երեխա:

Հանրությանը լրացուցիչ ծառայություններ մատուցող օղակ է նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, որը 2016-2019 թթ. ի թիվս մի շարք այլ գործառույթների, կազմակերպել է գործարար աշխարհին առնչվող գիտելիքների ձեռքբերմանը, բիզնես էթիկայի և այլ հմտությունների զարգացմանը նպաստող միջոցառումների և սեմինար-դասընթացների շարք՝ հետևյալ ընկերությունների և կազմակերպությունների մասնակցությամբ. «Բրիջ», «Բիլայն», «Արմենպրես», «Ռոսգոսստրախ Արմենիա», «Էյչ Էս Բի Սի», «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» և այլն: Արդյունքում՝ մասնակցություն է ցուցաբերել շուրջ 5000 ուսանող և նախկին շրջանավարտ[12]:

Համալսարանը կարևորում է նաև Սփյուռքի հետ աշխատանքները: ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ մինչև 2018 թ. կազմակերպվել է «Սփյուռք» ամառային դպրոցը: Սփյուռքի հետ տարվող աշխատանքների շրջանակներում իրականացվել են հայոց պատմության և ցեղասպանության հեռաուսուցման ծրագրեր, որոնց 2016 և 2017 թթ. մասնակցել է շուրջ 430 մասնակից 5 երկրից: Իրականացվել է նաև սփյուռքի ուսուցիչների համար նախատեսված «Հայոց լեզվի» և «Հայոց պատմության» վերարտակավորման ծրագիրը:

Ցանկացած կազմակերպության հեղինակությունը և դրական իմիջը պայմանավորված են նրա սոցիալական պատասխանատվության հայեցակարգով և դրա շրջանակներում իրագործվող ծրագրերով:

2017 թ. հուլիսի 6-ին, համաձայն ԵՊՀ ՌԾ իրականացման ժամանակացույցի, մշակվել և ընդունվել է միասնական՝ «ԵՊՀ հանրային կապերի, մարքեթինգային գործունեության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» հայեցակարգը[13]: Այդ հայեցակարգին համապատասխան սահմանվել և շարունակաբար ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել ապրիլյան պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքներին: Մասնավորապես, ԵՊՀ-ն 2016-ից ցայսօր զոհված 23 զինծառայողների 55 անչափահաս երեխաներին մինչև նրանց չափահաս դառնալը ամենամսյա դրամական օգնություն է ցուցաբերում[14]:

Իրականացվել են նաև արդեն ավանդույթ դարձած ամենամյա ծառատունկը Արցախում, նվիրատվությունները դպրոցներին և գյուղական համայնքներին, ֆինանսական

---

[10] Տե՛ս չափորոշիչ 4.1:

[11] Տե՛ս՝ http://ysu.am/psy/hy/1385203581

[12] Տե՛ս չափորոշիչ 4.5: ԵՊՀ 2016-2020 թթ. ՌԾ VI, խնդիր 6.1-ի 2-րդ գործողությունը (http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf):

[13] Տե՛ս՝ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/07/hayecakarg.pdf

[14] Յուրաքանչյուր զոհված զինծառայողի ընտանիքի մեկ անչափահաս երեխային ամսական վճարվող օգնության չափը 40.000 ՀՀ դրամ է, իսկ նույն ընտանիքի յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 20.000 ՀՀ դրամ: Այս ֆինանսական օգնությունը տարեկան 2016 թ. կազմել է մոտ 13.3436.000 դրամ ներառյալ ԱԱՀ, 2017 թ.՝ 25.000.000 դրամ ներառյալ ԱԱՀ, 2018 թ. հանվել է ԱԱՀ և այն կազմել է 18.000.000 դրամ, իսկ 2019 թ.՝ 18.040.000 դրամ:

աջակցություն է ցուցաբերվել «Հայաստան համահայկական հիմնադրամին»[15] և «Հայաստանի երիտասարդական հիմնադրամին»[16]:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 8-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. ԵՊՀ-ն ունի վարից վեր գործող հաշվետվողականության համակարգ, որի գործունեությունն ապահովվում է սահմանված ընթացակարգերով՝ հիմնված բուհի ՌԾ-ի, դրա իրականացման ժամանակացույցի և առաջընթացի չափելի ցուցիչների վրա: 2. Համալսարանն իր ՌԾ-ի մշակման, իրականացման, ինչպես նաև հաշվետվողականության ապահովման աշխատանքներում ներգրավում է ոչ միայն վարչական կազմին, այլև դասախոսների և ուսանողների ներկայացուցիչներին, ինչը ՌԾ-ի իրականացման հաշվետվողականության ապահովման և կառավարման արդյունավետության կարևոր ցուցանիշներից է: 3. ԵՊՀ-ի կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունները համապատասխանում են իր կանոնադրության և ՌԾ-ում սահմանված նպատակներին, տեսլականին ու արժեքներին: 4. ԵՊՀ-ի կողմից հանրությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ իրականացնող օղակների գործունեությունը պատշաճ կերպով կանոնակարգված է: 5. Հասարակության տարբեր խմբերին լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունավետությունը գնահատվում է բավարարվածության հարցումներով: 6. Առկա են բուհ-ձեռնարկություն բազմակողմանի համագործակցության մեխանիզմներ:	1. Հաշվետվություններում բացակայում են կատարողականի ցուցիչները: 2. ՌԾ-ով նախատեսված գործողություններն իրականացնող պատասխանատուների միջև դերաբաժանումներն անհատականացված չեն: 3. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների շահառուների կարիքների բացահայտման մեխանիզմներն անկատար են: 4. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություն-ների առևտրայնացման մակարդակն անբավարար է: 5. Ցածր է հանրությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործառույթի ինստիտուցիոնալիզացման մակարդակը: 6. Առկա չէ ԶԼՄ-ների ամենօրյա մոնիթորինգի տվյալների կանոնավոր վերլուծություն:

[15] «Հայաստան համահայկական հիմնադրամին» 2015-2018թթ. ցուցաբերվել է տարեկան 3.000.000 դրամ, իսկ 2019թ.՝ 4.000.000 դրամ ֆինանսական աջակցություն:

[16] «Հայաստանի երիտասարդական հիմնադրամին» 2015թ. ցուցաբերվել է 130.000.000 դրամ, 2016թ.՝ 120.000.000 դրամ, 2017թ.՝ 125.000.000 դրամ և 2018թ.՝ 25.000.000 դրամ ֆինանսական աջակցություն:

7. ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովված է կանոնավոր կերպով թարմացվող էլեկտրոնային և տպագիր տեղեկատվության տրամադրմամբ։ 8. Իրականացվում է մամուլի և սոցկայքերի ամենօրյա մոնիթորինգ՝ հանրության հետ հետադարձ կապի ապահովման նպատակով։	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ընդլայնում՝ կրթական և հետազոտական տարբեր հաստատությունների և արտադրական ձեռնարկությունների շրջանում մարքեթինգային գործընթացների ինտենսիվացման օգնությամբ։ 2. Ներհամալսարանական կյանքին և ծրագրերին ԵՊՀ շրջանավարտների ներգրավվածության ակտիվացում։	1. ՀՀ-ում գործող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններ մատուցող հաստատությունների միջև աճող մրցակցություն։ 2. Լրացուցիչ կրթության նկատմամբ հանրային պահանջարկի ու առաջարկի անհամապասխանություն։ 3. ԵՊՀ-ի նկատմամբ լրատվամիջոցների կողմից հաճախակի արտահայտվող սուբյեկտիվ վերաբերմունք։

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. ԵՊՀ հաշվետվողականության և կառավարման համակարգերի կատարելագործում ու արդյունավետության բարձրացում՝ ՌԾ-ի իրականացման գործում ներգրավված պատասխանատուների դերերի և գործառույթների անհատականացման միջոցով։
2. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հասարակության տարբեր խմբերի և տնտեսվարողների շրջանում իրազեկման միջոցառումների իրականացում։
3. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների շուկայի ուսումնասիրման և շահառուների կարիքների բացահայտման մեխանիզմների գործադրում։
4. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության և արդիականության գնահատման ներքին և արտաքին մեխանիզմների մշակում։
5. ԵՊՀ լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններից ստացվող եկամուտների ավելացման համար բիզնես և մարքեթինգային ծրագրերի իրականացում։
6. Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման գործընթացի ինստիտուցիոնալիզացում և կառավարման միասնական ծրագրի մշակում։
7. ԵՊՀ պորտալի բջջային հավելվածի ստեղծում։

ՉԱՓԱՆԻՇ 9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՄՈՒՀ-Ը ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՆՊԱՍՏԵԼՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆԸ

Միջազգայնացումը ԵՊՀ ռազմավարական խնդիրներից է, որը ենթադրում է միջազգայնացման ոլորտում ներգրավված աշխատողների վերապատրաստում, թիրախային օտարալեզու կրթական ծրագրերի և մոդուլների ներդնում, ներգնա և արտագնա շարժունության խթանում, համատեղ մագիստրոսական ծրագրերի ստեղծում, օտար լեզվով դասավանդվող առարկաների ավելացում (Տե՛ս ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագիր, Երևան, 2015, էջ 33-34):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.1. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊՀ միջազգայնացման քաղաքականությունն իրականացվում է՝ համաձայն

ա. 2017 թ. հունվարի 26-ին ԵՊՀ գիտխորհրդի 4/5 որոշմամբ հաստատված միջազգայնացման հայեցակարգի[1], որով սահմանված են համալսարանի միջազգայնացման քաղաքականության հիմնական ուղղությունները, հստակեցված և մշակված միջազգայնացման գործընթացների գնահատման տարեկան առանցքային ցուցանիշները,

բ. Երևանի պետական համալսարանի 2016-2020 զարգացման ռազմավարական ծրագրի,

գ. Երևանի պետական համալսարանի կանոնադրության:

Միջազգային համագործակցության գնահատման շրջանակներում ԵՊՀ-ն կարևորում է հետևյալ բաղադրիչները՝

- ներգնա և արտագնա շարժունության աճ,
- կրկնակի դիպլոմով օտարալեզու մոդուլներ և օտար լեզվով դասավանդվող առարկաներ, դրանց քանակը, օտարերկրյա դասախոսներ, կրթական ծրագրի միջազգայնացված բովանդակություն, ուսումնառության մեջ իրականացվող հետազոտական աշխատանքների օտարերկրյա ղեկավարներ, հետազոտական թեմաների միջազգային ուղղվածություն,
- միջազգային դրամաշնորհային ծրագրերում ԵՊՀ-ի մասնակցության աճ,
- միջազգային գիտակրթական ընկերակցություններում և կոնսորցիումներում ներգրավվածության ընդլայնում,
- միջազգային նոր գործընկերների ձեռքբերում,
- հավաքագրման և ուսուցման կազմակերպան համալիր միջոցառումների իրականացմամբ համալսարանի կրթական բոլոր աստիճաններում օտարերկրյա ուսանողների համակազմի մեծացմանն ուղղված ակտիվ գործունեության ծավալում:

ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում համալսարանի միջազգայնացմանը վերաբերող դրույթները համահունչ են ԵՊՀ առաքելությանն ու կարևորագույն

[1] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/01/hayecakarg.pdf

նպատակներին, բխում են դրանցից և կոչված են նպաստելու այդ առաքելության ու նպատակների կենսագործմանը:

Հարկ է նկատել, որ Երևանի պետական համալսարանը վերանայել է իր միջազգայնացման քաղաքականության ոլորտը: Զգալիորեն ընդլայնվել է միջազգային համագործակցության դաշտը: Ներկայումս ԵՊՀ-ն համագործակցում է մոտ 260 համալսարանների ու հաստատությունների հետ: Վերոհիշյալ թվին ավելանում է նաև Էրազմուս+ ծրագրի շրջանակում գործընկեր համալսարանների ցանկը, ինչը զգալի առաջընթաց է 5 տարվա ժամանակահատվածում: Աճել է նաև վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և ուսանողների փոխայցելությունների թիվը՝ հասնելով 784-ի: Նշենք, որ 2013/14 ուստարում փոխայցելությունների թիվը 537 էր:

Համալսարանի միջազգային համագործակցության աճին նպաստել են Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող փոխանակման ծրագրերը, որին մասնակցում են ԵՊՀ մի շարք ֆակուլտետների սովորողներ և աշխատողներ: Ի դեպ, 2019 թ. նոյեմբերին ԵՊՀ ռեկտորի հրամանով հաստատվել է Էրազմուս+ «Հիմնական գործողություն 1-ի» շրջանակներում ուսումնառության, դասավանդման և վերապատրաստման կարգը, որի հիման վրա կազմակերպվում են փոխանակման ծրագրերը:

Համալսարանի միջազգային համագործակցության, դրամաշնորհների ձեռքբերման, դրանց դիմելու մասին տեղեկատվություն ու օժանդակություն համալսարանականները ստանում են Միջազգային համագործակցության վարչության, Գիտական քաղաքականության վարչության, ինչպես նաև ԵՊՀ կայքի միջոցով:

Վերջին տարիներին ԵՊՀ կայքում միջազգայնացմանն առնչվող բաժինն ավելի տեսանելի է դարձել: Նրան հատկացվել է առանձին բաժին, որտեղ պարբերաբար թարմացվում է միջազգայնացմանն առնչվող տարբեր ուղղությունների, միջազգային հետազոտության և փոխանակումների հնարավորությունների, այդ թվում՝ Էրազմուս+ ծրագրի և միջբուհական համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը: Ավելին, փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ԵՊՀ ուսանողներն ու աշխատողները պարբերաբար ստանում են նաև իրենց էլեկտրոնային փոստերի միջոցով:

Չնայած այն հանգամանքին, որ ԵՊՀ-ում բացակայում են արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտի տարեկան գործողությունների առանձին ծրագրերը, ԵՊՀ-ն առաջնորդվում է ռազմավարական հնգամյա ծրագրով, որի տարեկան կատարողականը ներառում է նաև այս ոլորտները, ինչպես նաև միջազգայնացման վերաբերյալ ամենամյա հաշվետվությունն առկա է ռեկտորի տարեկան հաշվետվության զեկույցում[2]:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.2. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ԵՊՀ-ում արտաքին կապերի ու միջազգայնացման հարցերով զբաղվող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումը Միջազգային համագործակցության վարչությունն է (այսուհետ՝ ՄՀՎ), որը գործում է ԵՊՀ կանոնադրության և գիտխորհրդի կողմից հաստատված

[2]http://documentation.ysu.am/category/%d5%b0%d5%a1%d5%b7%d5%be%d5%a5%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%b6%d5%a5%d6%80/

ՄՀՎ կանոնադրության հիման վրա և բաղկացած է երեք՝ Միջազգային կապերի, Օտարերկրյա սովորողների կրթության կազմակերպման և Դրամաշնորհների համակարգման բաժիններից: Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, ով անմիջականորեն հաշվետու է ԵՊՀ միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին: Ի դեպ, ՄՀՎ աշխատակիցների աշխատանքային գործունեությունը կազմակերպվում է համաձայն նրանց պաշտոնների անձնագրերի:

Միջազգային կապերի բաժինը հիմնականում զբաղվում է օտարերկրյա մասնագետների և պատվիրակությունների ընդունելության կազմակերպմամբ, ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների երաշխավորությամբ՝ միջազգային գիտակրթական պայմանագրերի կողմ հանդիսացող համալսարանների և գիտական կենտրոնների հետ պաշտոնական փատաթղթերի փոխանակմամբ ու նամակագրության վարմամբ, փաստաթղթերի թարգմանությամբ և պաշտոնական վավերացմամբ, ԵՊՀ կանոնադրական նպատակներից բխող միջոցառումներին մասնակցելու նպատակով արտերկիր մեկնող աշխատողների գործուղումների ձևակերպմամբ և արտերկիր մեկնող սովորողների հրամանագրմամբ և այլն (տե՛ս ՄՀՎ կանոնադրություն, Միջազգային համագործակցության վարչության գործառույթները[3]:

Ըստ ՄՀՎ կանոնադրության՝ Օտարերկրյա սովորողների կրթության կազմակերպման բաժնի գործառույթներից են՝ օտարեկրյա ուսանողների հավաքագրումը, նրանց անձնական գործերի կազմումն ու հաշվառումը, նրանց ընդունելության գործընթացի կազմակերպումը, ուսումնառության ընթացքում օտարերկրյա ուսանողների վերաբերյալ հրամանների նախագծերի պատրաստումը և այլն:

Դրամաշնորհների համակարգման բաժնին կանոնադրությամբ վերապահված գործառույթների թվում են՝ ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին միջազգային գիտակրթական ծրագրերի, դրամաշնորհների, բուհերի կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, դրամաշնորհային ծրագրերի փաստաթղթերի պատրաստումը և դրանց կատարման ընթացքի համակարգումը և այլն:

Համալսարանի միջազգայնացման ապահովման գործընթացների իրականացումը միայն ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության գործունեությամբ չի սահմանափակվում: ԵՊՀ-ն մեծապես կարևորում է, որ միջազգայնացման գործընթացներում ներգրավված լինեն գիտակրթական ու վարչական հնարավորինս շատ ստորաբաժանումներ, ինչը կնպաստի համապատասխան ծառայությունների որակի բարելավմանը և օտարերկրյա սովորողների թվի աճին: Միջազգայնացման արդյունավետ ենթակառուցվածքի կարևոր պայման է նաև միջազգայնացման ցանցի, միջազգայնացման աջակցության համացանցային պորտալի և վիրտուալ պլատֆորմի գոյությունը:

Վերջին երեք տարիների ՄՀՎ ձեռքբերումներից կարելի է համարել մի շարք ֆակուլտետներում (օր. Իրավագիտության, Միջազգային հարաբերությունների, Տնտեսագիտության և կառավարման, Սոցիոլոգիայի և այլն) միջազգային համագործակցության գծով փոխդեկանների պաշտոնների ստեղծումը, ինչը հնարավորություն է տվել մշտական կապ ապահովելու ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության և առանձին գիտակրթա-

[3] http://documentation.ysu.am/wp-content/uploads/2006/08/5.8.pdf

կան ստորաբաժանումների միջև: Միջազգային գծով պատասխանատուներն օգնում են նաև տարբեր ծրագրերի շուրջ տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց շրջանակներում նախատեսվող միջոցառումները տեղերում կազմակերպելու և համակարգելու գործում:

Անդրադառնանք այն հիմնական խնդիրներին, որոնք խոչընդոտում են ստորաբաժանման և դրա բաժինների արդյունավետ գործունեությունը:

ԵՊՀ-ն, ունենալով միջազգային համագործակցության բավականին հարուստ փորձ, կարիք ունի վերանայելու միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգը՝ մասնավորապես շեշտը դնելով պայմանագրի շրջանակներում ամրագրված կողմերի պարտականությունների, ակնկալվող արդյունքների, կոնկրետ գործողությունների և դրանց գնահատման մեթոդաբանության վրա: Միջազգային համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է այն բարելավել ոչ միայն քանակական, այլև որակական տեսանկյունից, այն է՝ հռչակագրային փաստաթղթերից անցում դեպի պլանավորված գործողությունների, աշխատանքային պլանների և արդյունավետ գործող պատասխանատուների ինստիտուտի:

Միջազգային համագործակցության վարչության կողմից իրականացվող մի շարք գործառույթներ փոխկապակցված են այլ կառուցվածքային ստորաբաժանումների՝ Որակի ապահովման կենտրոնի, Գիտական քաղաքականության և Ուսումնամեթոդական վարչությունների, գրադարանի, ֆակուլտետների հետ, և հաճախ համագործակցության ոչ պատշաճ կանոնակարգումը հանգեցնում է որոշ խնդիրների, որոնց լուծման ուղղությամբ այժմ տարվում են աշխատանքներ:

Ներկայումս ԵՊՀ ՄՀՎ-ն գործում է տարիների ընթացքում ձևավորված աշխատանքային ավանդույթների ու ընթացակարգերի շրջանակներում: Նոր, ճկուն ու ժամանակին համահունչ աշխատանքային ընթացակարգերի մշակումն ու ներդրումը կապված է զգալի ռեսուրսների (մարդկային, նյութական, ֆինանսական և այլն), ինչպես նաև մեթոդաբանական ուղենիշների առկայության հետ, որոնց ձեքբերման ու ներմուծման հնարավորություններից է միջազգայնացմանն ուղղված միջազգային (հատկապես եվրոպական) դրամաշնորհային ծրագրերին ԵՊՀ-ի մասնակցությունը: Սակայն խիստ սակավաթիվ են դրամաշնորհային նախագծեր կազմող փորձառու աշխատողները, առկա է դրամաշնորհային նախագծեր մշակելու վերաբերյալ վերապատրաստումների անհրաժեշտություն, հատկապես ասպիրանտուրայում: Արտասահմանյան լսարանի համար ԵՊՀ-ն չունի բավարար գովազդային նյութեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.3. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

ԵՊՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 264 համալսարանների, տարբեր հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Կոննեկտիկուտի համալսարանի (ԱՄՆ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի (Ռուսաստան), Քուվեյթի համալսարանի (Քուվեյթ), Կահիրեի համալսարանի (Եգիպտոս), Մոնպելյե-1 և Մոնպելյե-3 համալսարանների, Էքս Մարսել համալսարանի (Ֆրանսիա), Մ. Լյութերի անվան Հալլե-Վիտենբերգի համալսարանի (Գերմանիա), Կարլի համալսարանի (Չեխիա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի

անվան պետական համալսարանի (Վրաստան), Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի (Չինաստան) հետ և այլն: ԵՊՀ-ն այսօր լայնորեն ներգրավված է միջազգային ծրագրերում և հանդիսանում է Համալսարանների միջազգային ընկերակցության, Եվրոպական համալսարանների ընկերակցության, Եվրասիական համալսարանների ընկերակցության, Սևծովյան երկրների համալսարանների ցանցի ընկերակցության և Համալսարանների ղեկավարների միջազգային ընկերակցության լիիրավ անդամ, Ֆրանկոֆոն համալսարանների միջազգային ընկերակցության անդամ, Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանագրի իրագործման համալսարանական լիգայի անդամ:

Բացի այդ, ԵՊՀ-ն ակտիվորեն ներգրավված է մի շարք դրամաշնորհային և միջազգային ծրագրերում, ինչպիսիք են՝ ERASMUS-ը, DAAD-ն, INET-ը, FEMS-ը, ANSEF-ը, HORIZON 2020-ը, VOLKSWAGEN-ը, NAPA-ն, ASCN-ը, ISTC-ն, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» ծրագրի դրամաշնորհը և այլն: Այսպես, Էրազմուս+ դրամաշնորհային ծրագրի շրջանակում սերտորեն շարունակվում է համագործակցությունը Լիլի, Մոնպելյե-3, Էքս Մարսելի, Լե Մանի (Ֆրանսիա), Մասառիկի (Չեխիա), Կա Ֆոսկարի, Բոլոնիայի, Ֆլորենցիայի (Իտալիա), Գրանադայի, Կադիսի, Մադրիդի Կոմպլուտենս, Վալենսիայի, Վալլադոլիդի, Ալմերիայի, Բարսելոնայի (Իսպանիա), Լյովենի Կաթոլիկ (Բելգիա), Սաարլանդի, Նյուրեմբերգի, Բեռլինի Հումբոլդի (Գերմանիա), Յասիի (Ռումինիա), Տեխնոլոգիայի Սիլեսյան, Կրակովի Յագելլոնյան, Կատովիցեի Սիլեսյան, Ռժեշովի (Լեհաստան), Զալցբուրգի, Գրացի (Ավստրիա), Վառնայի մենեջմենթի (Բուլղարիա), Մինհոյի, Ավեյրոյի (Պորտուգալիա), Միջինարևելյան տեխնիկական (Թուրքիա), Տամպերեի (Ֆինլանդիա), Օսիյեկի (Խորվաթիա), Ռոտերդամի Էրազմուս (Նիդերլանդներ), Տամպերեի (Ֆինլանդիա), Լինշոփինգի (Շվեդիա), Պորտոյի (Պորտուգալիա) և բազմաթիվ այլ համալսարանների հետ: Համագործակցության շրջանակներում ընդհանուր առմամբ միայն 2017/18 ուստարում իրականացվել է 47 ուսանողի, 25 դասախոսի և 17 վարչական աշխատողի փոխանակում:

ԵՊՀ-ում հաջողությամբ իրականացվում են կրկնակի դիպլոմով ծրագրեր ԱՊՀ երկրների Ցանցային համալսարանի կոնսորցիումի շրջանակում (միջազգային հարաբերությունների, իրավագիտության, ռուս բանասիրության, ինֆորմատիկայի, տնտեսագիտության, կառավարման, զբոսաշրջության և ֆարմացիայի բնագավառներում): Կրկնակի դիպլոմով ծրագրեր են իրականացվում Բելգորոդի համալսարանի (ՌԴ) հետ ֆարմացիայի և կենսաբանության, Լե Մանի համալսարանի (Ֆրանսիա) հետ՝ մաթեմատիկայի բնագավառներում:

Վերոնշյալ նվաճումների հետ մեկտեղ գոյություն ունեն որոշ դժվարություններ, որոնք խոչընդոտում են միջազգային համագործակցության գործընթացի արդյունավետությունը: Այսպես, ԵՊՀ-ի կողմից կնքված և ուժի մեջ մտած մի շարք երկկողմ ու բազմակողմ պայմանագրեր գործում են ոչ պատշաճ կերպով կամ առհասարակ չեն գործում: Սա կապված է երկու հիմնական խնդիրների հետ: Նախ և առաջ որոշ պայմանագրերում նշված չեն դրանցով նախատեսված կոնկրետ գործողությունները, պլանները, կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակներն ու խնդիրները, այսինքն՝ պայմանագիրն ինքնին առոչինչ է, եթե չկա դրա իրականացման տեսլականը: Մյուս խնդիրը կապված է ՄՀՎ աշխատակազմի սակավաթվության հետ: Աշխատակազմը, միաժամանակ իրականացնելով բազմաբնույթ տեխնիկական ու կազմակերպական գործառույթներ, չի կարողանում արդյունավետորեն կազմակերպել պայմանագրերի հետագա իրականացումը և մշտադիտարկումը: Ուստի, այս առումով, միջազգա-

յին համագործակցության նոր հնարավորությունների դիտարկումը պետք է համահունչ լինի դրանց իրագործման տեսլականի և անհրաժեշտ ռեսուրսների առկայության հետ:

Ընդհանուր առմամբ, վերջին 3 տարիների ընթացքում ԵՊՀ-ում զգալիորեն աճել է ինչպես առանձին ֆակուլտետների կամ կենտրոնների կողմից, այնպես էլ ԵՊՀ անունից միջազգային, տեղական ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությունների քանակը, արտասահմանյան գործուղումների, փոխանակման ծրագրերի թիվը: Սա փաստում է, որ ԵՊՀ-ում միջազգայնացման գործընթացը բավականին ակտիվ է ընթանում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ եվրոպական ու այլ արտասահմանյան հարթակներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.4. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ԵՊՀ-ում բոլոր ուսանողների և դասախոսների համար գործում է օտար լեզվի դասընթացների կազմակերպման համակարգ, որն ուսանողների պարագայում ներառում է ուսումնական ծրագրերում օտար լեզվի դասընթացի ընդգրկումը, իսկ դասախոսների համար՝ օտար լեզի պարտադիր վերապատրաստումներն ու քննությունները: Վերջիններս կազմակերպվում են Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից անցկացվող՝ ԵՊՀ դասախոսական կազմի պարտադիր վերապատրաստման հնգամյա ծրագրի շրջանակներում (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Չափորոշիչ 5.4-ում): Մասնավորապես, ԵՊՀ գիտակրթական (նաև վարչական) տարբեր ստորաբաժանումների մեծ թվով աշխատողներ ներգրավվում են «Անգլերենը ակադեմիական միջավայրում» դասընթացում: Պետք է նշել, որ դասախոսների վերապատրաստման ծրագրում ներառված մեծաքանակ դասընթացներից դասախոսների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է օտար լեզվի դասընթացներին, ինչը վկայում է բուհի միջազգայնացման միտումների մասին:

ԵՊՀ-ում օտար լեզվի իմացությունն անհրաժեշտ է նաև արտերկրի տարբեր բուհերի հետ համատեղ միջմասնագիտական ծրագրերի մշակման ու իրականացման համար: Օտար լեզվի անհրաժեշտ մակարդակի ապահովումը կարևոր նախապայման է նաև հրավիրյալ դասախոսների՝ ԵՊՀ պարբերական այցելությունների կազմակերպման համար:

Ընդհանուր առմամբ, ԵՊՀ ողջ աշխատակազմի լեզվի իմացության մակարդակը կարելի է համարել միջին: Միջազգային համագործակցության վարչության բոլոր 12 աշխատողները տիրապետում են առնվազն մեկ օտար լեզվի՝ բավարար մակարդակով: Ուսանողների լեզվի իմացության մակարդակը միջին է, իսկ որոշ ուսանողներ կատարելապես են տիրապետում լեզվին: Նրանք հիմնականում այն ուսանողներն են, որոնք ներգրավված են միջազգային ծրագրերում կամ որևէ կերպ առնչվում են միջազգային կազմակերպությունների հետ:

Այսպիսով, ԵՊՀ-ում օտար լեզվի իմացության բավարար մակարդակ ապահովելու համար իրականացվում են հ ամապատասխան միջոցառումներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Հաշվի առնելով միջազգայնացման գործընթացին լիովին ինտեգրվելու ԵՊՀ նպատակադրումը՝ նախատեսվում են այդ միջոցառումների՝ օտար լեզվով վերապատրաստման դասընթացների, ուսումնական ծրագրերում օտար լեզվի դասընթացի հետագա ընդլայնումն ու կատարելագործումը:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 9-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. Առկա է ԵՊՀ միջազգայնացման քաղաքականությունը սահմանող, թափանցիկություն ապահովող նորմատիվային բազա: 2. Իրականացվում է կայուն, երկարաժամկետ համագործակցություն տեղական և միջազգային գործընկերներ-ի հետ: 3. ԵՊՀ-ն ունի միջազգային համագործակ-ցությունն ապահովող և պարբերաբար վերապատրաստվող մարդկային ռեսուրսներ: 4. ԵՊՀ-ն մասնակցում է միջբուհական և միջազգային ծրագրերի: 5. Առկա են միջբուհական պայմանագրեր, ինչպես նաև ERASMUS + ծրագրերի իրականացման փորձ: 6. Առկա են ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության աճ, փոխանակման ծրագրերին դիմող ուսա-նողներին խորհրդատվության տրամա-դրում, շարժունության ծրագրերի վերա-բերյալ տեղեկատվության թափանցիկու-թյուն և առցանց հայտերի ներկայացման հնարավորություն: 7. Առկա է օտար լեզվով դասավանդվող առարկաների թվի աճ: 8. Իրականացվում են աշխատողների համար ակադեմիական միջավայրում օտար լեզվով դասընթացներ: 9. Գործում են միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածքներ՝ հանրակացարան և սպորտային համալիր: 10. Ապահովված են ԵՊՀ կայքում օտա-րալեզու տեղեկատվության առկայու-թյուն և թափանցիկություն:	1. Թույլ են Սփյուռքի հետ ձևավորված կապերը: 2. Միջազգային ծրագրերի և դրամա-շնորհների իրականացմանը մասնակ-ցում են սահմանափակ թվով ֆակուլտետներ: 3. Առկա է օտարալեզու կրթական ծրա-գրերի ընդլայնման անհրաժեշտություն: 4. Բացակայում են դրամաշնորհային նախագծեր մշակելուն և կառավարելուն ուղղված դասընթացները (այդ թվում առցանց): 5. Չկա Fundraising-ի և ԵՊՀ վարկանիշի բարելավման համար պատասխանատու ստորաբաժանում: 6. Ֆակուլտետների/կենտրոնների անձնա-կազմի կողմից միջազգայնացմանն ուղղված նախաձեռնություններին հանդես է բերվում ոչ բավարար ակտիվություն: 7. Փոքր է միջազգային միջբուհական համաձայնությունների շրջանակներում կատարվող աշխատանքների ծավալը: 8. Դեռևս սակավաթիվ են օտար լեզուներով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը, ինչպես նաև համատեղ/կրկնակի ծրագրերը: 9. Նկատելի է դոնոր կազմակերպություն-ներին և բազմազան ծրագրերի դիմելու պակասը: 10. Բացակայում է մշտադիտարկման և բենչմարքինգի համակարգը:

Հնարավորությունները	Վտանգները
1. Արտերկրի բուհերի, հիմնադրամների և կենտրոնների հետ համատեղ միջբուհական համագործակցության ծրագրերի մշակում, ներառյալ՝ հետազոտական խմբերի մակարդակում: 2. Միջազգային համագործակցության ցանցի առավել ակտիվ օգտագործում: 3. Միջազգային համագործակցության շրջանակներում անվանի մասնագետների, այդ թվում նաև սփյուռքի ներկայացուցիչների ներուժի օգտագործում: 4. Միջազգային շուկայում կրթական ծառայությունների (ներառյալ՝ առցանց) տրամադրում, այդ թվում՝ ավելի մեծ թվով սփյուռքահայ ուսանողների համար: 5. Միջազգային և/կամ ազգային դրամաշնորհների հայթայթում համատեղ հետազոտությունների, դասագրքերի մշակման, ուսումնական ծրագրերի իրագործման համար: 6. Ակտիվ համագործակցություն արտերկրում ՀՀ ներկայացուցչությունների հետ:	1. Պետության կողմից վարվող միջազգայնացման քաղաքականության ոլորտում առաջնահերթությունների սահմանման և ռեսուրսների տրամադրման անորոշություն: 2. Միջազգային համագործակցության վարչության որակյալ կադրերի արտահոսք: 3. Պետության կողմից միջազգայնացման ոլորտում բուհերի հետ տարվող համատեղ աշխատանքների համակարգման բացակայություն: 4. Նոր թագավիրուսի համաճարակը վտանգում է ԵՊՀ միջազգայնացումը՝ շարժունությունը, միջազգային նախագծերի իրականացումը, համատեղ հետազոտությունները, օտարերկրյա ուսանողների հավաքագրումը և այլն:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Մշակել միջազգային համագործակցության ուղղությամբ ռազմավարություն, իրականացնել գործողությունների հստակ պլանավորում:
2. Միջազգային համագործակցությունը և ծրագրերը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կազմակերպել ԵՊՀ Միջազգային համագործակցության վարչության աշխատակազմի ըստ ուղղությունների (համագործակցության ծրագրեր, դրամաշնորհներ, ֆինանսական միջոցների հայթայթում) վերապատրաստում: Ձևավորել միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազա և տարածել այդ ծրագրերի արդյունքները:
3. Պլանավորել միջազգային ծրագրերում ուսանողների և դասախոսների մասնակցության ակտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքները:
4. Պլանավորել և իրագործել օտարալեզու կրթական ծրագրերի բարելավման, ընդլայնման և նորերի ներդրման ուղղությամբ տարվող աշխատանքները:

ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-Ն ՈՒՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Համաձայն ԵՊՀ ՈԱ հայեցակարգի (հաստատված 2012 թ.)՝ ԵՊՀ ՈԱ համակարգի հիմնական նպատակներն են.

- ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի ինքնագնահատման և արտաքին գնահատման ու հավատարմագրման համար,
- ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ կրթական չափորոշիչների պահպանման, կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման համար,
- ապահովել ՈԱ գործընթացների թափանցիկությունը, դրանցում դասախոսների, ուսանողների, գործատուների և արտաքին փորձագետների մասնակցությունը՝ նպաստելով որակի մշակույթի զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգը[1], որը համահունչ է Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների[2] (ԵՉՈՒ) պահանջներին, ընդունվել է դեռևս 2012 թ.: Հայեցակարգում սահմանված են ԵՊՀ որակի ապահովման (ՈԱ) համակարգի կազմակերպական կառուցվածքը, գործող մեխանիզմները և ընթացակարգերը, ներգրավված հիմնական կառույցները և դերակատարները, որոնց միջև փոխգործակցության սխեման ներկայացված է հավելված 10.1-ում: Ինչպես երևում է սխեմայից, ՈԱ գործընթացներում ներգրավված են համալսարանի բոլոր հիմնական կառույցները և միավորները, ներքին և արտաքին կարևորագույն շահակիցները:

Համաձայն ԵՊՀ ՈԱ հայեցակարգի՝ ներկայումս ԵՊՀ-ում գործում են ՈԱ մի շարք ներքին մեխանիզմներ և դրանց համապատասխան ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են կրթական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության ռեսուրսների որակի ապահովմանը և շարունակական բարելավմանը: Այդ մեխանիզմների արդյունավետ գործադրման համար առկա են համապատասխան կառույցներ, որոնք գործակցում են ինչպես միմյանց, այնպես էլ ուսումնական ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, կենտրոններ, ինստիտուտներ) հետ: Դրանք են ՈԱ կենտրոնը[3] (ՈԱԿ), ԵՊՀ գիտական

[1] «ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգ», 2012թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Voraki_apahovum-2012.pdf

[2] Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի համար (2015) / Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG). (2015). Brussels, Belgium / https://enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf

[3] «ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն», 2012թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Voraki_apahovum-kanon1.pdf

խորհրդի (ԳԽ) ՈԱ մշտական հանձնաժողովը[4], ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ հանձնաժողովները[5], Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը[6] և Ուսումնական գործընթացի վերահսկման բաժինը[7]: ՈԱ համակարգում ընդգրկված բոլոր դերակատարներն այս ոլորտում իրենց գործառույթներն իրականացնում են ԵՊՀ ՈԱ որդեգրած քաղաքականությանը համահունչ և առաջնորդվում են ընդունված ֆորմալ ընթացակարգերով, որոնք մանրամասն ներկայացված են ԵՊՀ Որակի ներքին ապահովման համակարգի ձեռնարկում[8]:

ԵՊՀ ՈԱ նոր ռազմավարությունը ձևակերպված է ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման Ռազմավարական ծրագրի (ՌԾ) 1-ին նպատակի 1.3 խնդրում. «*Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը*»: Այս խնդրի իրագործման համար ՌԾ-ում սահմանված են համապատասխան միջոցառումներ, որոնք հետևողականորեն իրականացվել են:

ԵՊՀ նախորդ հավատարմագրումից ի վեր (փետրվար, 2015 թ.)՝ զգալի առաջընթաց է գրանցվել ինչպես ՈԱ գործընթացներում ներգրավված կառույցների ընդլայնման, այնպես էլ ՈԱ նոր մեխանիզմների և ընթացակարգերի ներմուծման և գործադրման առումով: Այսպես, ԵՊՀ ՈԱ հայեցակարգում ներկայացված նպատակներին ու խնդիրներին համապատասխան վերափոխվել է ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքը, մասնավորապես, բարձրացվել է ՈԱԿ-ի ինքնուրույնության մակարդակը, այն դուրս է բերվել պրոռեկտորների անմիջական ենթակայությունից և այժմ հաշվետու է միայն համալսարանի ռեկտորին: Ներմուծվել են ՈԱ նոր գործընթացներ և ընթացակարգեր, որոնք միտված են համալսարանում որակի շարունակական բարելավմանը: Մասնավորապես, 2012 թ.-ից ինստիտուցիոնալ մակարդակում գործող ԵՊՀ ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի հետ մեկտեղ՝ 2013 թ.-ից ֆակուլտետներում ստեղծվել և գործում են ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ հանձնաժողովները՝ ՈԱ ապակենտրոնացված գործընթացներ իրականացնելու նպատակով: 2015 թ.-ից գործադրվել է կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության և հաստատման գործընթացները կարգավորող կարգը[9], իսկ 2019 թ.-ից՝ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգը[10]: Էապես ընդլայնվել և բազմազանեցվել է 2003 թ.-ից գործող դասախոսական կազմի վերապատրաստման և կատարելագործման

---

[4] «ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ», 2012թ., վերանայվել է 2017թ./ http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/kanonakarg-ashxatakarg.pdf

[5] «ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ», 2013թ., վերանայվել է 2017թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/05/voroshum6-6.pdf

[6] «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կանոնադրություն», 2007թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Hetbuhakan_lracucich_krtutyan_varchutyan_kanonadrutyun.pdf

[7] «ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կանոնադրություն», 2010թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/Usumnametodakan-varchutyan-kanonadrutyun.pdf

[8] «ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկ», 2013թ. / http://ysu.am/files/quality/YSU_QA_Handbook_Final.pdf

[9] «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ», 2011թ., վերանայվել է 2014թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Program-Approval-Regulation_26.01.2014.pdf

[10] «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ», 2011թ., վերանայվել է 2019թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2014/01/YSU-Monitoring-Review-Regulation-2019.pdf

ծրագիրը[11,12], 2019 թ.-ից ներմուծվել են նորարարական և տեխնոլոգիապես հագեցած մեթոդներով ինտերակտիվ ուսուցման նոր վերապատրաստման դասընթացներ, դասախոսների անհատական և խմբային խորհրդատվություններ, աշխատաժողովներ և ֆորումներ[13]: 2002 թ.-ից կանոնավոր կերպով իրականացվող դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները[14] և 2008 թ.-ից իրականացվող շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումները[15] 2017թ.-ից իրականացվում են առցանց եղանակով: Էապես վերանայվել և ընդլայնվել են դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը նյութական և բարոյական միջոցներով խրախուսող գործընթացները: Ընդլայնվել է նյութական խրախուսման ֆոնդը, հստակեցվել են դրանց տրամադրման չափանիշները[16]: Ավելին, 2019 թ.-ից ներմուծվել է նորարարական մեթոդներով դասավանդումը խրախուսող, ինչպես նաև դասավանդման առկա լավագույն փորձի բացահայտմանը և տարածմանը նպաստող նոր գործընթաց[17,18] :

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների[14] օգնությամբ գնահատվում են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, ինչպես նաև առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների մատուցման որակը: Արդյունքներն օգտագործվում են ինչպես դասավանդման բարելավման համար, այնպես էլ հիմնական դասախոսական կազմի վերընտրության, առաջխաղացման և նյութական խրախուսման գործընթացներում: 2017 թ.-ից դրանք իրականացվում են առցանց եղանակով: Համաձայն ԵՊՀ աշխատողների շրջանում իրականացված հարցման արդյունքների (2019 թ., մասնակցել է 350 աշխատող, ինչը կազմում է աշխատողների ընդհանուր թվի մոտ 13.5 %-ը)՝ մասնակիցների 61,2 %-ը գործընթացը գնահատել է մասամբ արդյունավետ, իսկ 12,6 %-ը՝ լիովին արդյունավետ: Այնուամենայնիվ, հարցվածների 22,8 %-ը գործընթացը որակել է ոչ արդյունավետ, որպես հիմնական պատճառ նշելով ուսանողների ցածր մոտիվացվածությունն ու սուբյեկտիվիզմը (պահանջկոտ դասախոսները երբեմն գնահատվում են

---

[11] «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ», 2002թ., վերանայվել է 2007, 2011, 2016թթ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/05/DOB_cragir.pdf

[12] «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (2016-2021թթ.)», 2007թ., վերանայվել է 2011, 2016, 2019թթ. / http://extension.ysu.am/images/pdf/1473058982-3Tsragir.pdf

[13] «ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության 2019-2021թթ. գործունեության ծրագիր», 2019թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/03/voroshum_7.4.pdf

[14] «ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ», 2002թ., վերանայվել է 2003, 2004, 2010, 2016 և 2019թթ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/01/kanonakag4-2.pdf

[15] «ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ», 2008թ., վերանայվել է 2010, 2016 և 2019թթ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/10/karg.pdf

[16] «ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ», 2007թ., վերանայվել է 2009, 2012, 2015, 2018, 2019 և 2020 թթ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/06/lravtsar_karg-new.pdf

[17] «ԵՊՀ–ում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ, 2019թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/11/hraman-221-120.pdf

[18] «ԵՊՀ–ում դասավանդման գերազանցության մրցանակի» համակարգող հանձնաժողովների աշխատակարգ, 2020թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/02/GM-ashkhatakarg.pdf

ավելի ցածր, հատկապես ուսանողների գնահատումից հետո), հարցման արդյունքների ոչ լիարժեք օգտագործումը դասավանդման և ուսումնառության բարելավման գործընթացներում:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումների[15] միջոցով գնահատվում է նրանց բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդներից, ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ուսանողական ծառայություններից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և ընդհանուր կրթական միջավայրից: Արդյունքներն օգտագործվում են նշված ոլորտների շարունակական բարելավման նպատակով: Վերոնշյալ հարցման արդյունքներով պարզվել է, որ ԵՊՀ աշխատողների 50,8 %-ը այն գնահատել է մասամբ արդյունավետ, 15,4 %-ը՝ լիովին արդյունավետ, իսկ հարցվածների միայն 16,9 %-ն է շրջանավարտների հարցումը գնահատել որպես ոչ արդյունավետ: Այստեղ հիմնական պատճառներ են նշվում հարցման արդյունքների օգտագործման վերաբերյալ իրենց անտեղյակությունը կամ դրանց բացակայությունը, նշվում է նաև, որ այն պետք է իրականացնել ավարտելուց 2-3 տարի հետո միայն, ոչ թե ավարտման տարում: Հարցվածների մի ստվար զանգված էլ տեղյակ չէ գործընթացից (16,9 %), քանի որ ի պաշտոնե չի առնչվում դրան:

Կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության և հաստատման գործընթացներն[9] ապահովում են ԵՊՀ կրթական ծրագրերի որակը դրանց մշակման փուլում: Այստեղ գնահատվում են նոր ստեղծվող ծրագրի հիմնավորումը (հասարակական և աշխատաշուկայի պահանջարկը, ռեսուրսային ապահովվածությունը և այլն), ծրագրի համապատասխանությունը որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների և/կամ այլ կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ծրագրի մշակման որակը՝ սահմանված պահանջներին և ներկայացման ձևաչափին համապատասխան: Այս ընթացակարգերով և չափանիշներով են մշակվել ԵՊՀ բոլոր, ավելի քան 130 մագիստրոսի (2016 թ.) և 60 բակալավրի (2017 թ.) կրթական ծրագրերը, ինչը նպաստել է ծրագրերի մշակման որակի էական բարձրացմանը: Արդյունքում, դրանք դարձել են էլ ավելի հիմնավորված, արդյունահեն, ինֆորմատիվ և ընթեռնելի: Մասնավորապես, ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում ներգրավված դասախոսական խմբերի և վարչական կազմի 77,6 %-ը լրիվ կամ մասնակի հավանություն է տվել այս գործընթացների իրականացմանը, և այն համարում է արդյունավետ, և միայն 12,9 %-ն է այն գնահատել ոչ այնքան արդյունավետ: Ծրագրերի մշակման փուլում որպես հիմնական թերացումներ նշվում են՝ որոշ դեպքերում դեռևս շարունակվող դասախոսակենտրոն մոտեցումը, մեծածավալ թղթային աշխատանքները, իսկ երբեմն էլ արտաքին փորձագետների ֆորմալ մոտեցումը՝ նոր մշակված ծրագրերի գնահատմանը:

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման[10] նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված կրթական վերջնարդյունքներին, ինչպես նաև ստուգել ծրագրի շարունակական հիմնավորվածությունն ու արդիականությունը: Այս գործընթացի հիմնական արդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է: ԵՊՀ ծրագրերի մոնիթորինգն առաջին անգամ իրականացվել է 2019 թ.-ին՝ մագիստրատուրայի ավելի քան 120 կրթական ծրագրերի համար: Ծրագրերից յուրաքանչյուրի համար կազմվել են մոնիթորինգի զեկույցներ, որոնք դիտարկվել են ֆակուլտետների

ՈԱ մշտական հանձնաժողովների կողմից և քննարկվել ֆակուլտետների ԳԽ նիստերում: Մոնիթորինգի զեկույցները կազմելու համար հիմնականում (95 ծրագրերի դեպքում) հիմք են հանդիսացել ծրագրում ընդգրկված ուսանողների շրջանում իրականացված ֆոկուս խմբային հետազոտությունների արդյունքները: Վերջնարդյունքում կազմվել են այդ ծրագրերի բարելավման միջոցառումների պլանները, որոնք իրագործվելու են մինչև հաջորդ մոնիթորինգի մեկնարկը՝ երկու տարվա ընթացքում: Այս գործընթացի արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքներով՝ ԵՊՀ աշխատողների 66,5 %-ը մոնիթորինգի գործընթացը գնահատել է արդյունավետ կամ մասամբ արդյունավետ, իսկ ոչ արդյունավետ է գնահատել 13,2 %-ը: Վերջիններս որպես հիմնական պատճառ նշել են այն հանգամանքը, որ դասախոսների մի ստվար զանգված հատուկ նախապատրաստում չի անցել մոնիթորինգի գործընթացն անցկացնելու համար:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը[11,12,13] նպատակաուղղված է ԵՊՀ դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը և արդիականացմանը: Ծրագրին մասնակցած դասախոսները կատարելագործվում են ոչ միայն դասավանդման և ուսումնառության նորարարական ինտերակտիվ մեթոդներում, տիրապետում նոր տեխնոլոգիաներով դասավանդման հմտություններին, այլև ստանում են նոր, առաջավոր գիտելիք իրենց մասնագիտական ոլորտի վերաբերյալ: Արդյունքները հաշվի են առնվում դասախոսների առաջխաղացման և նյութական խրախուսման գործընթացներում: ԵՊՀ աշխատողների 64,6 %-ը այս գործընթացը համարում է արդյունավետ կամ մասամբ արդյունավետ, սակայն 31.1 %-ը համաձայն չէ այս կարծիքի հետ: Վերջիններս նշում են, որ վերապատրաստումների ժամանակացույցները հարմարեցված չեն դասախոսների ազատ ժամերի հետ, քիչ են արդիական և գործնական հմտություններ ապահովող վերապատրաստման դասընթացները, չկան դասախոսների վերապատրաստման կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ, դրանք անհատականացված և հասցեական չեն, ապահովված չեն վերապատրաստման հմտությունները լսարանում կիրառության մեջ դնելու պայմանները: Դասախոսները գերադասում են ունենալ նաև արտասահմանից հրավիրված վերապատրաստողներ կամ, հնարավորության դեպքում, վերապատրաստվել նաև արտասահմանյան բուհերում:

Ներկայումս ԵՊՀ-ում գործում են դասախոսների նյութական և բարոյական խրախուսման երկու մեխանիզմ, որոնցից առաջինը[16] գնահատում է դասախոսի գործունեության արդյունավետությունը/ակտիվությունը կրթական, հետազոտական և հանրային ընդգրկման ոլորտներում, իսկ երկրորդի[17,18] նպատակն է նպաստել դասավանդման արդիական մեթոդների կիրառմանը և կատարելագործմանը, ինչպես նաև լավագույն փորձի տարածմանը: Վերջինս գործողության մեջ է դրվել ընթացիկ տարում և դրա արդյունքների մասին դեռևս վաղ է դատել: Իսկ ահա առաջին ընթացակարգը գործում է մեկ տասնամյակից ավելի, և հարցմանը մասնակցած դասախոսների գերակշիռ մասը՝ 65,2 %-ը այն արդյունավետ է համարում, իսկ 29,2 %-ը՝ ոչ արդյունավետ: Որպես այս մեխանիզմի հիմնական թերություն նշվում է հետևյալը. գործընթացն առավելապես կենտրոնանում է գիտահետազոտական ակտիվության խրախուսման վրա, անմիջականորեն չի նպաստում դասավանդման որակի և մոտիվացիայի բարձրացմանը, խրախուսման ձևերը միայն ֆինանսական են, բացակայում են բարոյական խրախուսման ձևերը: Հենց այս թերությունները վերացնելու նպատակով էլ

ընթացիկ տարում ներդրվեց «ԵՊՀ–ում դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը[17,18]:

Վերոնշյալ ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի, ինչպես նաև դրանց արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի միջոցով ստացվող տեղեկատվության առկայությունը վկայում են ԵՊՀ-ում որակի շարունակական բարելավման կայացած համակարգի առկայության մասին, որը, ինչ խոսք, շարունակաբար բարերավվում է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.2. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ԵՊՀ ՈԱ գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորվում է հետևյալ փաստաթղթերով.

- ԵՊՀ ՈԱԿ-ի կանոնադրություն[3], հաստիքացուցակ, պաշտոնների անձնագրեր[19], համապատասխան աշխատանքային պայմանագրեր,
- ԵՊՀ ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի[4] և ֆակուլտետների (ուսումնական ստորաբաժանումների)[5] ԳԽ-երի ՈԱ մշտական հանձնաժողովների աշխատակարգեր և կազմեր[20,21],
- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ[11],
- ԵՊՀ ՈԱ հայեցակարգ[1] և այլն:

ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորվում է հետևյալ փաստաթղթերով.

- ԵՊՀ տարեկան բյուջեի նախագիծը[22] և կատարողականը[23],
- ԵՊՀ ՌԾ-ի իրականացման ժամանակացույց-պլան՝ պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների բաշխումով[24],
- ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմեր[25]:

---

19 ԵՊՀ ՈԱԿ-ի պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին, Հրաման 85/5, 10.05.2018թ.: / http://ysu.am/files/quality/YSU-QA-pashtonneri-andznagrer.PDF

20 http://ysu.am/files/quality/cs.pdf / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/10/voroshum_5-4-3.pdf

21 http://ysu.am/files/quality/YSU_AC_QA_Committees_2020.pdf

22 ԵՊՀ 2020թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվ / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/12/nakhahashiv-2020.pdf

23 ԵՊՀ 2018թ.եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողական / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/Byujei_kataroghakan_2018.pdf

24 ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց պլան / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf

25 ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամթոդական բեռնվածության հաշվարկի նորմերը հաստատելու մասին ԵՊՀ ԳԽ որոշում N11/3, 12.03.2020 / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/03/GX_voroshum_11-3.pdf

ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորվում է ԵՊՀ գնումների պլանավորման ընթացակարգով[26] և գնումների տարեկան պլանով[27]:

ԵՊՀ որակի ապահովման գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատու կառույցը Որակի ապահովման կենտրոնն է (ՈԱԿ), որը ստեղծվել է ԵՊՀ ԳԽ-ի որոշմամբ 2012թ. և 2019թ.-ից անմիջականորեն ենթարկվում է ռեկտորին: Կենտրոնն ունի տնօրեն (1 հաստիք), 2 առաջատար մասնագետ (1-ական հաստիք), 2 մասնագետ (1,5 հաստիք), ընդամենը 5 աշխատող՝ 4,5 հաստիքով, որոնց աշխատանքային նկարագրերը սահմանված են ՈԱԿ-ի կանոնադրությամբ և ԵՊՀ ՈԱԿ-ի պաշտոնների անձնագրերով (տնօրեն, առաջատար մասնագետ, մասնագետ): Կենտրոնը ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում ունի 3 սենյակ, անհրաժեշտ գույք և ապահովված է ժամանակակից կազմտեխնիկայով: Կենտրոնի հիմնական նպատակը համալսարանում ԵՀՈՒ[2] պահանջներին համահունչ ՈԱ ներքին մեխանիզմների և ընթացակարգերի մշակումը և գործադրումն է, ինչպես նաև որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը: Կենտրոնի գործառույթների շրջանակը սահմանված է նրա կանոնադրությամբ, մասնավորապես, ՈԱԿ-ը ԵՊՀ այլ վարչական և ուսումնական ստորաբաժանումների և մարմինների հետ համատեղ կազմակերպում, գործադրում և վերահսկում է ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով սահմանված ՈԱ մեխանիզմները և ընթացակարգերը, որոնք նկարագրված են չափորոշիչ 10.1-ում:

ԵՊՀ ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունեն նաև ԵՊՀ ԳԽ-ի և ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ մշտական հանձնաժողովները, որոնցում ընդհանուր առմամբ ներգրավված են 78 աշխատողներ և 25 ուսանողներ[20,21]: Այդ հանձնաժողովները մասնակցում են ինչպես կրթական ծրագրերի մշակման և հաստատման, այնպես էլ դրանց որակի մշտադիտարկման գործընթացներին: Մյուս կողմից, ԵՊՀ ԳԽ-ն, որն ունի 88 անդամ[28], տարին մեկ անգամ լսում է համապատասխան պրոռեկտորի հաղորդումը ուսանողական հարցումների և շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում կայացնում համապատասխան որոշում՝ ուղղված այդ գործընթացների բարելավմանը, ինչպես նաև լսում է ԳԽ ՈԱ մշտական հանձնաժողովի նախագահի հաղորդումը՝ նոր բացվող կամ վերանայված կրթական ծրագրերի վերաբերյալ և հաստատում դրանք:

ԵՊՀ գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովը[20] ստեղծվել է 2012 թ.՝ ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը ձևավորելու նպատակով: Հանձնաժողովում ընդգրկված է վարչական, դասախոսական և ուսանողական (մեկ ուսանող) կազմերի ԳԽ անդամ 7 ներկայացուցիչ: Հանձնաժողովն ունի իր աշխատակարգը[4] (հաստատված ԵՊՀ ԳԽ-ի կողմից 2012 թ.), որը սահմանում է նրա հիմնական գործառույթները՝

- ՈԱ իրավական ակտերի նախագծերի մշակում,

---

[26] «ԵՊՀ» հիմնադրամի ստորաբաժանումների կողմից ապրանքներ, աշխատանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու (գնումներ կատարելու) կարգ, 2019թ / http://ysu.am/files/quality/Gnumneri_karg_2020.pdf

[27] «ԵՊՀ» հիմնադրամի 2020թ. իրականացվող գնումների պլան, 2020թ./ http://gnumner.am/website/images/original/83c1a0d8.pdf

[28] ԵՊՀ Գիտական խորհրդի կազմ / http://www.ysu.am/uploaded/YSU_Academic_Council_members_2019_new.pdf

- ՈԱ չափորոշիչների, գործընթացների և ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկների տրամադրում,
- համագործակցություն ԵՊՀ ՈԱ այլ կառույցների ու խմբերի հետ (տե՛ս Հավելված 10.1)։

ԵՊՀ ՈԱ հայեցակարգը սահմանում է ՈԱ գործընթացների կենտրոնացված կանոնակարգում և դրանց ապակենտրոնացված իրականացում: Ուստի, տեղերում (ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ, ամբիոն) ՈԱ գործընթացներն արդյունավետ իրականացնելու նպատակով ԵՊՀ բոլոր 19 ֆակուլտետներում, 3 կրթական կենտրոններում և 2 ինստիտուտներում 2012 թ. ստեղծվել են «Ֆակուլտետների գիտական խորհուրդների որակի ապահովման մշտական հանձնաժողովներ», որոնց կազմը[21] փոխվում է հնգամյա պարբերականությամբ (վերջին անգամ՝ 2019թ.): Այդ հանձնաժողովները բաղկացած են 4 անդամից, ներառյալ մեկ ուսանող: Հանձնաժողովների հիմնական գործառույթներն են[5].

- ՈԱ հարցերի վերաբերյալ ֆակուլտետի ԳԽ-ին երաշխավորությունների ներկայացում,
- ուսումնական ծրագրերի և դասընթացների համապատասխանեցում ԵՊՀ կրթական չափորոշիչների պահանջներին,
- ուսումնական ծրագրերի որակի ընթացիկ մշտադիտարկման հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների կազմում և տրամադրում ֆակուլտետի/կենտրոնի ղեկավարությանը,
- ուսանողական հարցումների արդյունքների քննարկում և բարելավող միջոցառումների առաջարկում և այլն:

Հավելված 10.1-ում ներկայացված ԵՊՀ ՈԱ համակարգի կազմակերպական կառուցվածքում ցույց են տրված ՈԱ համակարգում ներգրավված հիմնական կառույցները/մարմինները և դրանց փոխադարձ կապը։

ԵՊՀ-ն համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ է հատկացնում ԳԽ-ի և ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ մշտական հանձնաժողովների աշխատանքի, ուսանողների և շրջանավարտների հարցումների կազմակերպման, դասախոսների վերապատրաստման գործընթացի, ինչպես նաև կրթական ծրագրերի արտոնման և հաստատման, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացների իրականացման համար, որոնցում մարդկային ռեսուրսների ներգրավվածության վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացված են չափորոշիչ 10.3-ում: Ընդ որում, մարդկային ռեսուրսները ներգրավվում են ոչ միայն ՈԱ գործընթացների համար անմիջականորեն պատասխանատու կառույցներից, այլ նաև ուսումնական գործընթացն ապահովող կենտրոնական և կրթական այլ օղակներից:

Օրինակ, դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև ԵՊՀ-ում իրենց ուսումնառությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումները 2002 թ.-ից իրականացվում են Ուսումնամեթոդական վարչության ավելի քան 20 աշխատողների, Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի 4 աշխատաողների և համապատասխան ֆակուլտետների ու կրթական ստորաբաժանումների ուսումնաօժանդակ կազմի համատեղ ուժերով: Այս գործընթացների բարեփոխման արդյունքում՝ 2016/17 ուստարվանից հարցումները կազմակերպվում

են առցանց եղանակով, ինչը նպաստել է հատկացվող մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների էական կրճատմանը:

Դասախոսական կազմի որակավորման բարձրացման և կատարելագործման ծրագրերը[11,12,13] (դասընթացներ, վերապատրաստումներ, անհատական և խմբային խորհրդատվություններ և այլն) իրականացվում են Դասախոսների որակավորման բարձրացման բաժնի 4 աշխատողների և 8 վերապատրաստող-խորհրդատուների կողմից և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ԵՊՀ ՈԱ գործընթացներում ուսանողների և այլ ներքին ու արտաքին շահակիցների ներգրավվածությունն ամրագրված է մի շարք պաշտոնական փաստաթղթերում, որոնք արդեն հիշատակվել են նախորդիվ: Մասնավորապես, այդ փաստաթղթերից են «ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը»[1], «ԵՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը»[4], «ԵՊՀ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգը»[5], «ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը»[14], «ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգը»[15], «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգը»[9], «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը»[10] և այլն:

ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը[1] նախատեսում է ներքին և արտաքին շահակիցների լայն ներգրավվածություն որակի ներքին ապահովման գործընթացներում: Չնայած ՈԱ գործընթացները կանոնակարգվում են կենտրոնացված եղանակով, սակայն իրականացվում են ապակենտրոնացված ձևով՝ ֆակուլտետներում, ամբիոններում, ինստիտուտներում և կենտրոններում: Վերջիններս էլ այդ գործընթացներում ներգրավում են դասախոսներին, ուսանողներին, շրջանավարտներին, գործատուներին և մասնագիտական հանրության ներկայացուցիչներին ու փորձագետներին:

Այսպես, ԵՊՀ գիտական խորհրդի ՈԱ մշտական հանձնաժողովում[20] ներգրավված են ակադեմիական և վարչական կազմի 6 ներկայացուցիչ և 1 ուսանող: ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհրդի ՈԱ մշտական 24 հանձնաժողովներում[21] ընդգրկված են 3-ական դասախոս և 1-ական ուսանող, ընդհանուր թվով՝ 72 դասախոս և 24 ուսանող:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական առցանց հարցմանը[14], որն անցկացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ բոլոր մատուցված դասընթացների համար (միջինում 4,800-ից ավելի), մասնակցում է ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի 14,200 ուսանողների միջինում 30 %-ը (թղթային հարցման դեպքում մասնակցությունը մոտ 75 % էր), ինչը կազմում է մոտ 4,260 (10,650) ուսանող: ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ առցանց հարցումն[15] իրականացվում է ամեն տարի, բակալավրի 62 և մագիստրոսի 120 ծրագրերի շուրջ 4,600 շրջանավարտների շրջանում, որին մասնակցում է հարցվածների մոտ 35 %-ը (թղթային հարցման դեպքում մասնակցությունը մոտ 80 % էր), այսինքն՝ 1,610 (3,680) շրջանավարտ:

ԵՊՀ կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության և հաստատման ընթացակարգը[9] նույնպես ենթադրում է մեծ թվով ներքին շահակիցների (հիմնականում դասախոսական և վարչական կազմերից), ինչպես նաև արտաքին փորձագետների ներգրավում այս գործընթացում: Այսպես, մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերի վերջին վերանայման ընթացքում (2016 և 2017 թթ.) ստեղծվել են ծրագրերի մշակման մոտ 180 աշխատանքային խմբեր, որոնցում ընդգրկվել է ավելի քան 900 դասախոս, իսկ ծրագրերի փորձաքննական հանձնաժողովներում մոտ 600 դասախոս (ներքին փորձագետներ) և 360 արտաքին փորձագետ: Այս գործընթացներում ներգրավված են նաև ԵՊՀ ՈԱ կենտրոնը, ԳԽ-ի ՈԱ մշտական հանձնաժողովը և ֆակուլտետների ՈԱ 24 հանձնաժողովները:

ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման գործընթացները[10] նույնպես իրականացվում են ապակենտրոնացված ձևով՝ ներգրավելով մեծ թվով դասախոսների և հատկապես ուսանողների: Այսպես, 2019 թ.-ին 120 մագիստրոսի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման համար կազմվել են նույնքան թվով մշտադիտարկման խմբեր, որոնցում ներգրավվել է մոտ 600 դասախոս, 120 ուսանող և նույնքան էլ արտաքին փորձագետ/արտադրության մասնագետ: Մոնիթորինգի խմբերին ծրագրի ուսանողների հետադարձ կապը/կարծիքները հաղորդելու նպատակով՝ ԵՊՀ 25 ուսանող-մոդերատորների կողմից կատարվել են ավելի քան 95 ֆոկուսխմբային հետազոտություններ (խորքային հարցումներ) մագիստրոսի ծրագրերում ընդգրկված ավելի քան 750 ուսանողների շրջանում: Գործընթացի արդյունքում կազմվել են մագիստրոսի ծրագրերի 120 մոնիթորինգային հաշվետվություններ՝ համապատասխան SWOT-ով և բարելավման միջոցառումների ծրագրով, որոնք դիտարկվել են ֆակուլտետների ԳԽ-ների 24 մշտական հանձնաժողովների կողմից, քննարկվել ֆակուլտետների ԳԽ-ում, իսկ ֆակուլտետների դեկանները դրանց վերաբերյալ կազմել են համապատասխան զեկույցներ: Այնուհետև, մոնիթորինգի հաշվետվությունների և դեկանների զեկույցների հիման վրա ԵՊՀ ՈԱ կենտրոնը կազմել է ԵՊՀ մագիստրոսի կրթական ծրագրերի մոնիթորինգի համընդհանուր զեկույցը, որը ԵՊՀ ԳԽ ՈԱ հանձնաժողովի կողմից քննարկվելուց հետո ներկայացվել է ԵՊՀ ԳԽ-ի դիտարկմանը: Վերջինս հաստատում է ծրագրերի բարելավման միջոցառումների պլանները և ռիսկային համարվող կրթական ծրագրերի վերաբերյալ կայացնում համապատասխան որոշումներ:

ՈԱ գործընթացներում ներքին շահակիցների ներգրավման մեկ այլ հատկանշական օրինակ է ԵՊՀ ինստիտուցիանալ հավատարմագրման ինքնավերլուծության երկու զեկույցների կազմման գործընթացում դասախոսների և ուսանողների մասնակցությունը: Այսպես, 2013 թ.-ին այդ գործընթացում (համակարգող հանձնաժողովում և 10 աշխատանքային խմբերում) ներգրավվել է շուրջ 31 աշխատող և 7 ուսանող, իսկ 2019 թ.-ին՝ 49 աշխատող և 13 ուսանող:

Վերոնշյալ ՈԱ գործընթացներում ԵՊՀ ներքին և արտաքին շահակիցների լայն ներգրավումը էապես նպաստում է նաև համալսարանում որակի մշակույթի հետագա զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ԵՊՀ ՈԱ ներքին համակարգը ձևավորվել է դեռևս 2012 թ. և դրանից ի վեր պարբերաբար վերանայվել և կատարելագործվել է՝ ելնելով կոնկրետ գործարկվող ՈԱ մեխանիզմի կամ գործընթացի իրականացման արդյունավետությունից, արտաքին և ներքին միջավայրային

փոփոխություններից, ինչպես նաև այս ասպարեզում առաջավոր փորձի ուսումնասիրման արդյունքներից:

Այսպես, ԵՊՀ ՈԱ առաջին հայեցակարգը ԳԽ-ի կողմից ընդունվել է դեռևս 2007 թ.: Քանի որ այն չէր բավարարում ԵՉՈՒ[2] հիմնական պահանջները, ուստի մշակվեց ՈԱ նոր հայեցակարգ[1], որը ԳԽ-ի կողմից ընդունվեց 2012 թ.: 2018 թ. այն համալրվեց ERASMUS+ C3QA նախագծի (2017-2019 թթ.) շրջանակներում մշակված ասպիրանտական կրթության ՈԱ մեխանիզմով՝ «Դոկտորական կրթության որակի ներքին ապահովման քաղաքականության ձեռնարկով»[29]:

Դասախոսական կազմի որակավորման բարձրացմանն ու կատարելագործմանն ուղղված գործընթացները ԵՊՀ-ում իրականացվում են 2002 թ.-ից, իսկ համապատասխան ծրագիրը[12] և դրա իրականացման կանոնակարգը[11] վերանայվել են 2007, 2011, 2016 և 2019 թթ.[13]:

Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումնե-ը[14] ԵՊՀ-ում նույնպես անցկացվում են 2002թ.-ից: Այդ հարցումների իրականացման կանոնակարգը և հարցաշարը բազմիցս ենթարկվել են փոփոխությունների և լրամշակում-ների, մասնավորապես՝ 2003, 2004, 2010, 2014 և 2017թթ.-ին: Հարցաթերթերի բովանդակային փոփոխությունները հիմնականում ուղղված են եղել դասավանդման որակին առնչվող հարցերին և ուսանողների համար դրանք ավելի ընկալելի դարձնելուն, իսկ հարցերի մի որոշ խումբ էլ վերանայվում է ամեն տարի: Հարցման կանոնակարգի վերանայումների արդյուն-քում հստակեցվել են ինչպես հարցման ընթացակարգերը, այնպես էլ արդյունքների մշակ-ման, ամփոփման և օգտագործման ձևերը: Մասնավորապես, 2017թ.-ից թղթային հարցման փոխարեն իրականացվում է առցանց հարցում:

ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցում-ներն[15] իրականացվում են 2008թ.-ից: Այն կանոնակարգվել է ԳԽ կողմից 2010 թ. և սահմանում է հարցումների անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման ընթացակարգերը: Հարցումների հարցաշարը 2008 թ.-ից ի վեր երկու անգամ վերանայվել է, մասնավորապես՝ 2010 և 2016 թթ.: Սկսած 2017 թ.-ից՝ հարցումներն իրականացվում են առցանց:

Համապատասխան կարգով[9] սահմանված կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության և հաստատման գործընթացներն առաջին անգամ գործադրվել են 2014 թ.՝ նոր ստեղծվող մի շարք կրթական ծրագրերի համար: Այնուհետև, այդ փորձի արդյունքներից ելնելով՝ դրանք վերանայվել և այնուհետև գործադրվել են արդեն ԵՊՀ բոլոր 120 մագիստրոսի (2016 թ.) և 60 բակալավրի (2017 թ.) կրթական ծրագրերի լրամշակման համար:

ԵՊՀ ՈԱ մյուս կարևոր գործընթացը՝ կրթական ծրագրերի մոնիթորինգը և վերա-նայումը,[10] մեկնարկել է 2019 թ. և, բնականաբար, դեռևս վերանայման չի ենթարկվել:

Ինչպես արդեն նշվեց, ՈԱ գործընթացների վերանայման համար հիմք են հանդիսանում դրանց արդյունքների վերլուծությունները, ինչպես օրինակ՝ դասավանդման արդյունավետու-թյան վերաբերյալ ուսանողական հարցման, ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտ-ների բավարարվածության վերաբերյալ հարցման, դասախոսական կազմի որակավորման

[29] YSU Internal Quality Assurance Policy Manual for Doctoral Education / https://c3-qa.com/wp-content/uploads/2017/03/YSU_IQA.pdf

բարձրացման ծրագրի իրականացման արդյունքների ամենամյա վերլուծությունները, մագիստրոսի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի արդյունքների վերլուծությունը և այլն:

ԵՊՀ ՈԱ համակարգի ստեղծման և շարունակական բարելավման գործում նշանակալի դերակատարություն է ունեցել համալսարանի ներգրավվածությունը Եվրոպական TEMPUS/ ERASMUS+ ծրագրի շրջանակներում իրականացվող մի շարք նախագծերում, որոնք ուղղված էին գործընկեր բուհերում ԵՁՈ[2] պահանջներին համահունչ որակի ներքին ապահովման չափորոշիչների և համակարգերի ստեղծմանը: Մասնավորապես, «Որակի ներքին ապահովման համակարգ ՀՀ բուհերի համար» TEMPUS ARMQA նախագծին[30] (2007-2009 թթ.) մասնակցության արդյունքում ձևավորվեցին համալսարանի ՈԱ համակարգի այնպիսի կարևորագույն բաղադրիչները, ինչպիսիք են ԵՊՀ ՈԱ հայեցակարգը և կրթական ծրագրերի ՈԱ մի շարք մեխանիզմներն ու ընթացակարգերը: Դրանց համար նախատիպ են հանդիսացել նախագծում ընդգրկված եվրոպական գործընկեր բուհերի, մասնավորապես՝ Գրինվիչի և Միդլսեքսի (Անգլիա), ինչպես նաև Ջենովայի (Իտալիա) համալսարանների փորձը: TEMPUS-ի մեկ այլ՝ «Համալսարանի ինքնագնահատման համակարգերի զարգացում և ինտեգրում» (2011-2013 թթ.) DIUSAS նախագծին[31] մասնակցության արդյունքում ստեղծվել են ԵՊՀ ՈԱ հիմնական կառույցները՝ ՈԱ կենտրոնը, ԳԽ-ի և ֆակուլտետների ԳԽ-ների ՈԱ մշտական հանձնաժողովները, վերջիններիս աշխատակարգերը, ինչպես նաև ներմուծվել է համալսարանի ինքնագնահատման գործընթացը: Որպես հենանիշ դիտարկվել են նախագծի մասնակից եվրոպական Կոբլենց-Լանդաու (Գերմանիա), Լե Ման (Ֆրանսիա), Կամպուս Մալտա (Իտալիա) և Վրոցլավի (Լեհաստան) տեխնոլոգիական համալսարանները: Շատ կարևոր հանգամանք էր նաև ԵՊՀ մասնակցությունը Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Տեխնիկական աջակցություն Հայաստանի որակի ապահովմանը» ARQATA միջազգային նախագծին[32] (2011-2014 թթ.), ինչի արդյունքում Նիդերլանդների և Ֆլամանդիայի NVAO հավատարմագրող գործակալության հետ համագործակցության արդյունքում ԵՊՀ-ում ներդրվեցին ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման գործընթացները, և տեղի ունեցավ համալսարանի և մի քանի կրթական ծրագրերի առաջին հավատարմագրումը (2015 թ.): ԵՊՀ կրթական ծրագրերի չափորոշիչների ձևավորման և ծրագրերի ՈԱ գործընթացների զարգացման համար էական էր ԵՊՀ-ի ներգրավումը TEMPUS «Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում» ARMENQA նախագծում[33] (2014-2016 թթ.), որը, փաստորեն, ստեղծեց ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային (ՈԱՇ) և ոլորտային (ՈՈՇ) մի քանի շրջանակները, որոնց հիման վրա ստեղծվել և ստեղծվում են նորերը: Վերջիններս ուղենիշ հանդիսացան ԵՊՀ կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևավորման և համապատասխանության ստուգման համար: Այստեղ նույնպես եվրոպական գործընկեր բուհերի՝ Լինշոփինգի (Շվեդիա), Գենտի (Բելգիա), Օրհուսի (Դանիա), Օսնաբրուկի կիրառական համալսարանների

[30] TEMPUS JEP-27178-2006 project: "Internal Quality Assurance System in Armenian Higher Education Institutions", ARMQA / http://www.armqa.mdx.ac.uk/home.html

[31] TEMPUS SMGR 510950-2010 project: "Development and Integration of University Self-Assessment Systems", DIUSAS / https://www.uni-koblenz-landau.de/en/cifet/cifet-team/former-employees/serge_chernyshenko/projekte/DIUSAS

[32] World Bank project: "Armenia quality assurance technical assistance", ARQATA / http://arqata.anqa.am/

[33] TEMPUS SMHES 543817-2013 project: "Implementation of National and Sectorial Qualifications Frameworks in Armenia", ARMENQA / http://armenqa.am

փորձը նպաստեց կրթական ծրագրերի ՈԱ գործընթացների բարելավմանը: ԵՊՀ դոկտորական ծրագրերի ՈԱ համակարգը, ինչպես արդեն նշվեց, ձևավորվել է ERASMUS+ C3QA «Եվրոպական օրակարգին համահունչ հետազոտության միջազգայնացման օժանդակում՝ 3-րդ շրջափուլի ՈԱ համակարգ հիմնելու միջոցով» նախագծին[34] մասնակցության արդյունքում (2017-2019 թթ.): Այս ասպարեզում որպես ԵՊՀ ասպիրանտական կրթության ՈԱ համակարգի ստեղծման ուղենիշներ են ծառայել նախագծի եվրոպական բուհերի՝ Լիոն-III և Auvergne-ի (Ֆրանսիա), Ալկալայի (Իսպանիա) և Kielce-ի (Լեհաստան), դոկտորական ծրագրերի ՈԱ համակարգերը: ԵՊՀ դասախոսական կազմի ՈԱ գործընթացի բարելավման գործում էական նշանակություն ունեցավ համալսարանի համակարգմամբ մասնակցությունը ERASMUS+ PRINTeL «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծին[35] (2018-2020 թթ.), որի արդյունքում էապես բարելավվեց դասախոսական կազմի վերապատրաստման համար պատասխանատու կառույցի գործառույթների կազմը[13], կառույցը համալրվեց ինտերակտիվ և տեխնոլոգիապես հագեցած ուսուցման լսարաններով և վիդեոդասախոսությունների նկարահանման ստուդիայով, իսկ գործող վերապատրաստման ծրագիրը համալրվեց դասավանդման նորարարական, ինտերակտիվ մեթոդներ և ՏՀՏ տեխնոլոգիաներ կիրառող նոր դասընթացներով[13]: Այս ասպարեզում ևս էականորեն օգտագործվեց նախագծի եվրոպական գործընկեր բուհերի լավագույն փորձը: Դրանք են Լյուվենի կաթոլիկ (Բելգիա), Բարսելոնայի (Իսպանիա), Պորտոյի (Պորտուգալիա), Լինշոփինգի (Շվեդիա) և Գրացի կիրառական գիտությունների (Ավստրիա) համալսարանները:

ԵՊՀ ՈԱԿ-ը կանոնավոր կերպով մասնակցում է նաև ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող իրազեկման հանդիպումներին և սեմինարներին, հետևում ENQA-ի հրապարակումներին և որակի ամենամյա ֆորումների արդյունքներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.5. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական նպատակներից է նաև համալսարանի նախապատրաստումը՝ արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին[1] (էջ 13): Այդ համակարգը պարունակում է ներքին մեխանիզմներ և տեղեկատվական համակարգեր արտաքին գնահատման գործընթացներն արժանահավատ կերպով իրականացնելու համար:

ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի (ՌԾ) նպատակների և խնդիրների կազմը համահունչ է «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին», ինչը բավարար հիմք է տրամադրում ԵՊՀ գործունեության ամբողջական գնահատման և բարելավող համալիր միջոցառումների մշակման համար: ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման

[34] ERASMUS+ CBHE-SP 574273-2016 project: "Promoting internationalization of research through establishment and operationalization of Cycle 3 Quality Assurance System in line with the European Integration Agenda" / https://c3-qa.com/

[35] ERASMUS+ CBHE 585760-2017 project: "Change in Classroom: Promoting Innovative Teaching and Learning to Enhance Student Learning Experience in Eastern Partnership Countries"/ http://www.printel.am/ ;

ռազմավարական ծրագիրը[36] և դրա իրականացման ժամանակացույց-պլանը[37] այն հիմնական ուղենիշներն են, որոնց համաձայն այժմ իրականացվում է համալսարանի գործունեությունը մակրո մակարդակում: Բնականաբար, արդյունքները նույնպես գնահատվում են ըստ դրված նպատակների և խնդիրների կատարողականի: Այդ նպատակով ԵՊՀ-ն յուրաքանչյուր տարվա վերջում իրականացնում է ՌԾ-ի տվյալ տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի գնահատում և հրապարկում է համապատասխան զեկույց[38]: ԵՊՀ բոլոր ֆակուլտետները և գիտակրթական կենտրոններն ու ինստիտուտները նույնպես ունեն իրենց հրապարակված ՌԾ-ները և իրականացման ժամանակացույցները (տե՛ս Հավելված 10.2), որոնց համաձայն կատարվում է նրանց գործունեության վերջնարդյունքների գնահատում միկրո մակարդակում:

Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման համար հիմքեր տրամադրելու նպատակով՝ ԵՊՀ-ն հնգամյա պարբերականությամբ իրականացնում է նաև ինստիտուցիոնալ ինքնագնահատում՝ համապատասխան վերլուծական զեկույցի[39] հրապարակմամբ (ԵՊՀ ՌԾ, Խնդիր 1.3, գործողություն 5), որը հիմք է հանդիսանում ինչպես որակի արտաքին գնահատման/ապահովման գործընթացների, այնպես էլ որակի բարելավմանն ուղղված ներբուհական միջոցառումների իրականացման համար: Ինքնավերլուծությունը կատարվում է ՀՀ կառավարության կողմից 2011թ. հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան: Այն իրականացնելու նպատակով ստեղծվում է ինքնագնահատման գործընթացը համակարգող հանձնաժողով՝ ԵՊՀ ռեկտորի ղեկավարությամբ, ինչպես նաև ինքնավերլուծություն իրականացնող 10 (7) աշխատանքային խմբեր՝ ըստ ինստիտուցիոնալ (ծրագրային) հավատարմագրման չափանիշների: Այդ խմբերում ներգրավվում են ներկայացուցիչներ ինչպես ԵՊՀ վարչական, այնպես էլ դասախոսական/ակադեմիական և ուսանողական կազմերից: Ինքնագնահատման մշակված զեկույցի նախագիծը տրամադրվում է ԵՊՀ ներքին շահակիցներին և քննարկվում համալսարանի ԳԽ-ում: Զեկույցի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտողությունները ներառելուց հետո այն տրամադրվում է արտաքին գնահատումն իրականացնող կառույցին (ՈԱԱԿ), ինչպես նաև հասանելի է դարձվում լայն հանրությանը:

ՈԱ արտաքին գործընթացների իրականացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծում նաև ԵՊՀ-ում գործող վարից վեր հաշվետվողականության համակարգը, որը ներառում է ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների ամենամյա հաշվետվություններն իրենց գործունեության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ԵՊՀ գործունեության

---

36 ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիր, 2015 / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragir_2016-2020.pdf

37 ԵՊՀ 2016-2020թթ.զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան, 2015 / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/12/EPH_razmavarakan_tsragri_irakanacman_zhamanakacuyc_plan.pdf

38 Զեկույցներ ԵՊՀ 2016-2020թթ.զարգացման ռազմավարական ծրագրի 2015/16, 2016/17 և 2017/18 ուստարիների համար նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/Kataroghakan_2018.pdf ; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2017/12/Kataroxakan-2017.pdf ; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2016/12/Razmavarakani_kataroghakan_2015-2016.pdf

39 ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույց, 2013թ. / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2015/07/YSU_Inst_SER_Final_Arm.pdf

վերաբերյալ ռեկտորի ամենամյա հաշվետվությունը[40] և համապատասխան զեկույցի հրապարակումը[41]: Վերջիններս հրապարակվում են ԵՊՀ կայքում և հասանելի դարձվում ներքին ու արտաքին շահակիցներին: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ՈԱ գործընթացներին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում և տարածվում են ԵՊՀ ստորաբաժանումներում, ինչպես նաև տեղադրվում են համալսարանի կայքում:

ԵՊՀ ինքնավերլուծության և հաշվետվողականության մի յուրահատուկ ձև է նաև «ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների» (ԳԱՑ) կազմումը, հավաքագրումը, վերլուծությունը և պարբերական հրապարակումը, որի օգնությամբ գնահատվում է ԵՊՀ «առողջական վիճակը» և արդյունավետությունը՝ գործունեության կարևորագույն ոլորտներում[42]:

Արտաքին գնահատման նպատակով իրականացվող ստուգայցերի արդյունավետության ապահովման նպատակով ստեղծվել է գնահատման գործընթացում օգտագործվող /պահանջվող պաշտոնական փաստաթղթերի (հիմքերի) վիրտուալ շտեմարան, որը կանոնավոր կերպով թարմացվում է և հնարավորություն է տալիս արտաքին փորձագետներին օպերատիվ կերպով ծանոթանալու դրանց: Բացի այդ, ԵՊՀ ՈԱԿ-ի աշխատողները կազմակերպում և ապահովում են արտաքին փորձագիտական խմբերի հանդիպումները համալսարանի ներքին և արտաքին տարբեր շահակիցների խմբերի հետ՝ համաձայն նրանց կողմից սահմանված ցանկի և ժամանակացույցի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.6. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Արտաքին և ներքին շահակիցների համար ԵՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովելու և հասարակայնության հետ կապերը խթանելու նպատակով ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի[36] խնդիր 3.1-ում (*Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը*) սահմանված են հետևյալ գործողությունները/միջոցառումները, որոնք հետևողականորեն իրագործվում են.

2. *Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը:*
5. *Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:*

---

40 ԵՊՀ ռեկտորի 2017/2018 ուստարվա գործունեության հաշվետու զեկույցը / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/Rektori_zekuyts_2019.pdf

41 ԵՊՀ 2017/2018 և 2018/2019 ուստարիների գործունեության հաշվետվություններ / http://documentation.ysu.am/wp-content/uploads/2019/01/2017-2018_ustarva_gorcuneutyan-hashvetvutyun.pdf ; http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/05/2018-2019_ustarva_gorcuneutyan-hashvetvutyun.pdf

42 ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշներ / http://www.ysu.am/files/quality/od22.pdf (2008-2013); http://publishing.ysu.am/files/The_Key_Performance_Indicators_of_Yerevan_State_University_2010-2015_ARM.pdf (2010-2015): http://publishing.ysu.am/hy/1599641026 (2014-2019)

7. Բարձրացնել ներքին կորպորատիվ հաղորդակցության արդյունավետությունը:

ԵՊՀ գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից կարևոր է շահակիցների տեղեկացվածությունն ապահովող համապատասխան մեխանիզմների առկայությունը: Այդ նպատակով ԵՊՀ-ում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք համակարգեր և մեխանիզմներ, որոնցից են.

– ԵՊՀ գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը[41], որում ամփոփվում են հաշվետու ուստարում համալսարանի ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները (տե՛ս, օրինակ, ԵՊՀ 2018/2019 ուստարվա գործունեություն: Երևան, 2019):
– ԵՊՀ ռեկտորի ամենամյա զեկույցը[40] համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստում, որտեղ ներկայացվում են համալսարանի գործունեության արդյունքները բոլոր հիմնական ոլորտներում, ներառյալ հաշվետու տարում բյուջեի կատարողականը[23], ներկայացվում է ԵՊՀ ՌԾ-ի տարեկան կատարողականը[38]՝ ըստ իրականացման ժամանակացույց-պլանի[37], ինչպես նաև հաստատվում է ԵՊՀ հաջորդ տարվա բյուջեի նախագիծը[22]:
– ԵՊՀ ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների (ինստիտուտներ, կենտրոններ) գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները (տե՛ս Հավելված 10.2):
– ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմը[42], որը պարբերաբար հրատարակվում է: Այս ուսումնասիրության նպատակն է քանակական ցուցանիշների օգնությամբ ներկայացնել համալսարանի գործունեության արդյունքները և «առողջական» վիճակը բոլոր հիմնական ոլորտներում վերջին 5 տարիների համար, ինչպես նաև տրամադրել համապատասխան հենանիշեր ԵՊՀ ՌԾ-ի իրականացումն ուղղորդելու նպատակով:
– Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների[14] և ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների[15] արդյունքների[43] ամենամյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են ԵՊՀ ԳԽ քննարկմանը:
– Ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող “SuperVision” համահամալսարանական ցանցային տեղեկատվական համակարգը, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան: Այն ապահովում է ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական և որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը, վերլուծությունն ու հրապարակումը ներքին շահակիցների համար:
– Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները և դասընթացների տեղեկագրքերը[44], որոնք ամեն տարի թարմացվում և տեղադրվում են ԵՊՀ կայքում և էլեկտրոնային տարբերակներով հասանելի դարձվում ուսանողներին և ներքին ու

---

43 Օրինակ՝ http://ysu.am/files/YSU_ANALYSIS-Final-2014.pdf (2011-2013թթ), http://documentation.ysu.am/wp-content/uploads/2020/05/YSU_ANALYSIS_comparative-2018-19.pdf (2017-2019թթ.):

44 http://www.ysu.am/education/:

արտաքին այլ շահակիցներին: Այն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում ԵՊՀ-ում ուսուցման կազմակերպման, իրականացվող կրթական ծրագրերի ու առանձին դասընթացների վերաբերյալ: Այդ նպատակին են ծառայում նաև ԵՊՀ կրթական ծրագրերի մասնագրերը:

– ԵՊՀ կայքէջում (http://doc.ysu.am/) տեղադրվող տեղեկատվությունը, որն առնչվում է ներքին գործընթացներին և կանոնակարգային դաշտին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահեկիցներին՝ ծանոթանալու համալսարանի և նրա տրամադրած կրթական և գիտահետազոտական ծառայություններին: Կայքն ապահովում է նաև հետադարձ կապի (հարց ու պատասխանի) հնարավորություն:
– ԵՊՀ կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով՝ 2019 թ.-ից իրականացվող մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները և զեկույցները, որտեղ ներկայացված են նաև կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացմանն ուղղված բարելավող միջոցառումների պլանները: Այս փաստաթղթերը քննարկվում և հաստատվում են ֆակուլտետների (ինստիտուտ, կենտրոն) և ԵՊՀ ԳԽ-ներում:
– ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցը[39]:
– Դիմորդի[45] և առաջին կուրսեցու[46] ուղեցույցները:

2015 թ.-ից գործադրվել է ԵՊՀ աշխատակիցների համացանցային ներքին տիրույթը՝ Intranet[47], որի նպատակն է ավտոմատացնել և առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ տեղեկատվության փոխանակման հոսքերը, հաշվետվողականության գործընթացները և աջակցել ԵՊՀ միասնական տեղեկատվական համակարգի ձևավորմանը: Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ ԵՊՀ-ն 2019 թ. ներդրել և արդեն օգտագործում է Mulberry[48] վարչական տեղեկատվական համակարգը, որն էապես ընդլայնել և օպերատիվ է դարձրել տեղեկատվության տարածումը և այժմ ապահովում է դրա մատչելիությունը համալսարանի բոլոր աշխատողների համար:

ԵՊՀ գործունեության ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները՝ ըստ 10-րդ չափանիշի

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
1. ԵՊՀ-ն ունի ՈԱ հայեցակարգ և համապատասխան ռազմավարություն, որոնք հետևողականորեն իրականացվում են: 2. ԵՊՀ-ն ունի ուսանողների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, որոնք կանոնավոր կերպով գործադրվում են (ուսանողների և շրջանավարտների հարցումներ	1. Որակի ներքին մշակույթը դեռևս լիովին ձևավորված չէ, ինչը պայմանավորված է դասախոսական կազմի և ուսանողների մի ստվար հատվածի ցածր մոտիվացիայով, ինչպես նաև ՈԱ գործընթացներում նրանց փոքր ներգրավվածությամբ:

[45] http://www.ysu.am/entrant/ ; http://www.ysu.am/files/Dimord-2020.pdf
[46] http://1course.ysu.am/
[47] https://intranet.ysu.am/
[48] https://mul.ysu.am/am/

և այլն)։ 3. Գործում են կրթական ծրագրերի արտոնման, մշակման, փորձաքննության, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման չափանիշներ և ընթացակարգեր, որոնք ուսումնական ստորաբաժանումներին անմիջական մասնակից են դարձնում ՈԱ գործընթացներին և ապահովում ծրագրերի որակը ինչպես դրանց մշակման, այնպես էլ իրականացման փուլերում։ 4. ԵՊՀ գործունեությունը թափանցիկ դարձնելու համար առկա են հաշվետվողականության մեխանիզմներ, ցանցային տեղեկատվական համակարգեր, ուսումնառության կազմակերպման ուղեցույցներ և տեղեկագրքեր։ 5. Ապահովված է ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում և կառույցներում (ԵՊՀ և ուսումնական ստորաբաժանումների ԳԽ-ների ՈԱ մշտական հանձնաժողովներ, ինքնավերլուծության հանձնաժողով և աշխատանքային խմբեր, կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման աշխատանքային խմբեր, կանոնավոր հարցումներ և այլն)։ 6. Առկա է դասախոսների որակավորման բարձրացման և վերապատրաստման ծրագիր, որը պարբերաբար արդիականացվում է, ինչպես նաև համապատասխան տեխնոլոգիական ենթակառուցվածք։ 7. Առկա են դասախոսների գործունեության արդյունավետության խրախուսման նյութական և բարոյական մեխանիզմներ (լրավճարներ, դասավանդման գերազանցության մրցանակներ և այլն)։ 8. Առկա են տեղեկատվության հավաքագրման և վերլուծման ներքին համակարգեր (ԵՊՀ գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշներ, ԵՊՀ աշխատողների գործունեության տվյալների հավաքագրման Intranet, ուսումնական գործընթացի կառավարման SuperVision էլեկտրոնային տեղեկատվական, փաստաթղթաշրջանառության Mulberry	2. Անցումը ուսանողների և շրջանավարտների հարցումների առցանց եղանակին՝ հանգեցրել է դրանց մասնակիցների թվի նվազմանը։ 3. Դեռևս լիարժեք կերպով գործադրված չեն ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց ՈԱ ներքին մեխանիզմները։ 4. Դասախոսական կազմի անբավարար վարձատրությունը՝ պայմանավորված պետական ֆինանսավորման խիստ ցածր մակարդակով, հանգեցնում է բարձրորակ կադրերի հոսունությանը։ 5. Դեռևս ցածր է հիմնական գործատուների և աշխատաշուկայի այլ ներկայացուցիչների ներգրավվածությունը կրթական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքների/կոմպետենցիաների սահմանման և ուսանողների կողմից դրանց ձեռքբերման գործընթացներում։ 6. Ձևավորված չեն կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովները՝ հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար։

համակարգերը և այլն)։ 9. Առկա են ռազմավարական պլանավորման և հաշվետվողականության մեխանիզմներ համալսարանի և ֆակուլտետների (ինստիտուտների, կենտրոնների) մակարդակում։	
Հնարավորությունները	**Վտանգները**
1. Բարձրագույն կրթության նոր օրենքի ընդունումը կնպաստի կրթական ծրագրերի որակի բարելավմանը՝ պայմանավորված ծրագրերի բովանդակային արտոնագրման և պարտադիր ծրագրային հավատարմագրման պահանջով։ 2. Միջազգային համագործակցության հնարավորությունների ընդլայնումը կարող է նպաստել կրթական ծրագրերի առավել արդյունավետ բենչմարքինգի իրականացմանը, դասախոսների վերապատրաստումների բարելավմանը և ՈԱ այլ գործընթացների արդյունավետության բարձրացմանը։ 3. Բաց կրթական ռեսուրսների ընդլայնումը կարող է էապես նպաստել դասավանդման և ուսումնառության գործընթացների արդիականացմանը և հեռավար ու համակցված ուսուցման տարածմանը համալսարանում։ 4. Համալսարանի ակտիվ ներգրավումը եվրոպական ERASMUS+ և միջազգային այլ ծրագրերում՝ լայն հնարավորություն է ստեղծում համալսարանում լավագույն փորձի ներդրման և տարածման համար։	1. Որոշ մասնագիտությունների գծով ցածր է պրակտիկաների իրականացման արդյունավետությունը՝ պայմանավորված բուհ-աշխատաշուկա թույլ կապով։ 2. Հասարակության և պետության կողմից դասախոսի դերի ոչ բավարար արժևորումը վտանգում է բարձրորակ կադրերի ներգրավումը դասավանդման գործընթացում։ 3. Որոշ մասնագիտական ոլորտներում դեռևս չձևավորված աշխատաշուկան ունակ չէ առաջադրելու հստակ պահանջներ (կոմպետենցիաներ) մասնագետների պատրաստման համար։

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

1. Զարգացնել համալսարանում սկիզբ առած կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման գործընթացը՝ գործադրելով այն նաև բակալավրի ծրագրերի համար և ներգրավելով ավելի մեծ թվով ուսանողների և դասախոսների։
2. Ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար։
3. Ստեղծել և ներդնել ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ։

4. Խթանել պրակտիկ գործունեությամբ զբաղվող մասնագետների ներգրավումը ուսուցման գործընթացներում՝ համագործակցելով գործատուների և աշխատաշուկայի այլ ներկայացուցիչների հետ:
5. Բոլոր կառույցներում և գործընթացներում ամրապնդել և զարգացնել ՊԻՄԲ շրջափուլով աշխատելու պրակտիկան:
6. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում:
7. Բարձրացնել դասախոսների և ուսանողների իրազեկվածության մակարդակը ԵՊՀ-ում ընթացող որակի ապահովման գործընթացների վերաբերյալ: